



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*



ԱՐԴՅՈՒՆՎ

ԵՐԵՄԻ

ԺԱՌԱՎԱՐԻ

Բ

ՀԱՅՈՒՆԻ

ՀԱՅՈՒ

1

ԲԱԿԱՆԱԳՅԱՆՎԱՅՐ

ՀԱՅԱՍՏԱՆ.. ԳՐԱՄԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆՎ

ԵՐԵՎԱՆ 1972

Կազմող՝ Ս. Վ. Արիստակեսյան

Խմբագրական կողեզրիա՝

Մ. Հ. Դավթյան

Լ. Վ. Միրիջանյան

Վ. Ա. Մկրտչյան

Վ. Մ. Մնացականյան

Հ. Ս. Սահյան

ПАРУЙР РАФАЕЛОВИЧ СЕВАК

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ  
В 6 ТОМАХ

Том I

Стихи

(На армянском языке)  
Издательство „Айастан“  
Ереван, 1972



## ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ

### ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայ քնարերգության գեղարվեստական զարգացման արդի էտապը նշանավորվում է այնպիսի մեծ անհատականություններով, որպիսիք են Նաիրի Զարյանը, Գեղամ Սարյանը, Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը: Գրական առաջարեզ մոռելով 40-ական թվականներին և առեղծագործելով շուրջ երեք տասնամյակ, Պ. Սևակը անցավ որոնումների բարդ ճանապարհ և, լուրացնելով ազգային բանաստեղծության բազմադարյան ավանդներն ու համաշխարհացին պոեզիայի հարստությունը, արարեց մի ինքնառիկ ու անկրկնելի գեղարվեստական աշխարհ և հաստատուեց ներ նվաճեց հայ գրականության դասական գերի շարքում:

### I

Պարույր Սևակը ծնվել է 1924 թվականին Զանախի (այժմ Սովետաշեն) գյուղում: Միջնակարգ կրթություն ստանալով տեղում, եռա 1940 թվականին ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանակիրական ֆակուլտետը, որն ավարտում է 1945-ին: Նույն թվականին ընդունվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ հայոց հին գրականության մասնագիտությամբ: Համարարտանական և առափիրանուական ուսուցման տարիները

վճռական նշանակություն են ունենում Պարույր Սևակի հայացքների և ինսցույցների ձևակիրարան գործում։ Նա կարդում է հանաշխարհային գրականության դասականներին, առավելապես նախամիրում Պուչկինի, Լերմոնտովի, Ուխտենի, Հայնեի, Բոլիի, Մայակովսկու, Լորկայի, Էլյուարի բանաստեղծական արվեստը, տառացիորեն կրանում հայ քնարերգությունը՝ նարեկացուց մինչև Դորյան և Թումանյան, Միամանթը և Վարուժան, Տերյան և Չարենց։ Ապա ուսումնաակիրում է փիլիսոփայություն և պատմագիտություն, մասնագիտանում հայագիտության մեջ, ունկնդրում գիտական մորթի հայություններին։ Այս տարիներից է Սևակի ստեղծագործական հակումները դրվում են երկու սկզբի վրա՝ բանաստեղծ և գիտական, հաճախ հոգեբանորեն հակական ու իրարակերծ, բայց եւսկեւ ուժեղ ու պարտադրող։

1951 թվականին Պարույր Սևակը մեկնում է Մուրկա, սովորելու Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտում։ Ավարտելով այն, նա 1957—1959 թվականներին աշխատում է նոյն ինստիտուտում որպես գեղարվեստական թարգմանության ամբիոնի դրասախու։ Այդ տարիներին հարստանում են բանաստեղծի աշխարհը ունենալու դրամական գործակում նրա տեսահորիզոնն ու կրանքի ճանաչողությունը։ Արդեն լուրջ վաստակի տեր և լայն ճանաչում ստացած, Սևակը 1960 թվականին վերադառնում է Երևան։ Ակրպում է գրական, գիտական ու հանարակական գործունեության արգասավոր ու բովանդակալից մի շրջան։ Աշխատում է Ս. Արենյանի անելան գրականության ինստիտուտում, որպես ավագ գիտաշխատող, վարում է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղարի պաշտոնը (1968—1971), 1967 թվականին պաշտպանում է դիմերուացիա և ստանում բանասիրական գիտությունների դրվագորի գիտական աստիճան։ Սովորական գրականությանը մասուցած ծառացությունների համար Պարույր Սևակը 1967 թվականին պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրաշն շքանշանով։ 1968 թվականին նա ընտրվում է ՍՍՀՄ Գերագույն սովետի դրաստական։

Ու մինչեւ նա իր ստեղծագործական հնարավորություն-

ների փայուն վերելքն էր ապրում, և նրա խնասոնացած միտքը ակնկալում էր նոր թոփքներ, մտահղացուներ ու ծրագրեր, տեղի է ունենում ծանր ողբերգությունը՝ 1971 թվականի հունիսի 17-ին Պ. Սևակը զոհ է գնում ավտովթարին։ Նոյն աղետից զոհվում է նաև նրա կինը՝ բանատերաբարգևանից և այնքան համակրելի նեղի Մեմադրացվիլին։

Պարույր Սևակի բանաստեղծական հակումները դրսորդել են վաղ տարիներից։ «Բանաստեղծություններ սկսել են գրել մանկական հասակից, — խոստվածել է նա, — տասնմեկ տարեկանից, բնակ որևէ իմաստ չընելով դրանց մեջ»։ Ժամանակի ընթացքում ներշնչումների տարերային թրթինները տեղի են տալիս գիտակցված որոնումներին և ձև տալիս գրական ուրույն նախամիրությունների։ «Ես նորից սկսեցի ուսանակորներ գրել և տեսա, որ բոլորովին որիշ որակի են։ Եվ իմ առաջին լուրջ փորձերը գալիս են Զարենցից, ապս՝ Միամանթոյից ու Վարուժանից...»<sup>1</sup>։ Այդ փորձերի նմուշներով էր, որ առաջին անգամ բանաստեղծ Սևակը հանդեւ եկավ մասովի էջերում և իր վրա բնելոց գրական շրջանների հետաքրքրությունը։ Այդ տարիների բանաստեղծությունները, որոնց մի փոքր մասն է միայն լույս տեսել հետագա ժողովածուներում, իրենց վրա կրում են ժամանակի տրամադրությունների կմիջը։ Պատերազմի ծանր օրերն են՝ տաճարակներով ու զրկանքներով, հույսի ու հավատի արատուններով, որոնք արձագանք են գտնում բանաստեղծի խոհուն հոգում, առաջ թերու մերժին դեգրադացուներ, իրարամերժ խոհեր, կրանքի, աշխարհի, մարդկության ապագայի թախծու մտորումներ։

Եվ շիշեն՝ բախուը այս աշխարհի,  
Զիշեն երգ ու մեր, երշանդություն, կանանց.  
Թովությունները սին... երք որ պիտի  
Այդ անենք արյան ուսաբով կուլ տազ,  
Երբ նախամիրով պիտի, մամով, պատերազմով,  
գեներերով նոխորտա  
Եվ գրեալ կնոշը մի կտրված յօսով,

1 «Սովորական գրականություն», 1971, № 2, էջ 11:

Այս է երե, երե, բախտը երե ժպտա...

Լավ չէ՝ արդյոք լուել, լուել համեստ  
Եվ չինել այդպես մոտիկ ու մերձ  
Այս աշխարհի բախտին, այս մարդկության:

Բայց կար նաև սեփական «եսի» ինքնորոշման տագնապը, «լինել-չինելով» նաև առաջարական վճիռը: Նրա էությունը համակվում է ոռմանուիկական մեծության մտորումներով, դեմ առնում անհայտին ու անորոշությանը, վերապրում վարանումի ու կառկածանքի ներքին դրաման, մերժ գլուխում գաղտնիքը և ինսաստավորում խորհրդությունը, մերժ կորցնում ուղեցուցը և խաղաղվում հաշուությամբ: «Նշանավոր 1942-ին եր դա,— գրում է բանաստեղծը,— այն թվականին, երբ թեկում սկսվեց պատերազմի մեջ: Իմ սեփական բեկումն էլ կատարվեց նոյն թվականին: Առաջին լուրջ բանաստեղծությունն, որ առնիպ է, ինչպես այդ տարիներին գրած իմ համարյա բոլոր բանաստեղծությունները, ինչ այդպես էլ կոչվում է՝ «լինել», որ չինել»: Ես գիտակցաբար որոշել եի «չինել», իմ «եսի» տակ գտնվող «եսը» վճուել եր «լինել»:

Քննում, վերլուծում է ինքն իրեն, իր «եսը» չափում մարդկության ու աշխարհի անամենան մեծությամբ, թախանձում մեռած հանճարենքին իրենց «ոգու ցղքը» շնորհելու իր երգերին, գրուցի բռնվում մուսաների արքայի հետ, կարծես գուշակելով իր բանաստեղծական առաքելությունը՝ «գուցե աղոթող պառանին դառնա, ինչ վաղը թեկուց, երգի նոր Արքա...» և ձևակերպում իր գեղագիտական հավատամբը՝ «Դիտի որ դառնաս կյանքի բանաստեղծ»:

Սեակի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Անհանձները հրամայում են» լուս տեսավ 1948 թվականին, իսկ երկրորդը՝ «Միրո ճանապարհը»՝ 1954-ին: Հայրենական պատերազմի հայրական ավարտին հաջորդած տարիները խաղաղել են բանաստեղծի ներաշխարհը: Կեցելումները տեղի էին տվել գաղափարական նվիրումին, և առ քաղաքացիական խանդով արձագանքում է ժամանակի

Ճայնին: Ներքին մաքառումները լուծվում են գալիքի հանդապ պայծառ հրավառությունների, գարնան շուալ պարզաների, միրու և կարուտի նվիրական մաքրության մեջ կյանքի հրապարայն է գգում, ոգեշնչվում շահելության շախսաված ուժերի հրուվ.

Թարմությամբ է շնչում մեր մարմինը կրատառ,  
Տանջում է մեզ հաճախ ավելցուկ կորովից.  
Մկանների խաղից սուր խոտս են զգում  
Մեր բազուկներն առողջ...

Կիրում ենք մենք կարդաց  
Սղջիկների հայացքը խոռվիչ,  
Նրանց ժայռները, որոնք անքառ բառով  
Զրուցում են մեզ հետ  
Երազներից, միրուց և գորովից...

Ուրիշ այր ո՞ր դրաբում,  
Ուրիշ ո՞ր աշխարհում  
Կա՞ր, կարո՞ն էր լինել մի այսպիսի աերման —  
Հավերժուն կազտա՞ն, երիտասա՞րդ,  
Եվ միևնույն պահին՝  
Ինսաստեցյամբ, փորձով, տառապանքով հարուստ...

Սակայն պամբարի, արյան գնով նվաճած երեկոյա հաղթանակը երջանկության անհոգ հանգրվան չեր խուսանում: Պատմությունը դեռևս իր խորհրդուն ունի, իր մեծ մաքառումը: Դեռ աշխարհը բզկույլում է ներքին հակասություններից, ինչ-որ տեղ դեռ ուսմբեր են պայծառում, մուշ ամպերը դեռ գուշակում են ամեն փոթոթիկներ, գաղափարի մի սուր կոիկ դեռ շիկացնում էր երկրագների մթնոլորտը: Կիսվել է դարը, կիսվել է աստմը, կիսվել է և երկրագումը՝ սահմանագծերով «Աներներ և նրանք»: Սենք ապագայի պատգամն ենք կրում և պատմության գալիքն է մեր խորհրդատուն:

Կիսվել է դարը,  
Եվ դարամիջան այս տարիներին  
Ի՞նչ քաղցր է զգալ, գիտակցների հիմն,  
Որ նա կիսվում է ո՞չ գրքի ներան.

Ինչ քա՞ղցր է զգաց, որ ազատնու մեծանկ  
Մենք ընթացքն ի չենք,  
այլև մեղմանկ,  
Որ անօդի գիտի երկրորդ հասորի  
Ընթացքն ու վեցչը,  
Եվ որ հասորն այդ մեր խև ձեռքերով  
Լոյս ընճապեղու ընթացքի մեջ է...

Պատմության համաշխարհային ասպարեզի վրա բանաստեղծը լենինյան գաղափարների հասդառակով է հարարտանում, հավատում ուսում ժողովրդի ասպագս առաքելությանը և Մովսեսան խորհրդանշում որպես «մարդկության վառ գալիքի» հանգրվան։

Մովսես Բինս դարձել է մի հավահանգիստ  
Ո՛չ թե միայն Բինգ ծովերի գոռ աղիքի,  
Ո՛չ թե միայն Յաների ու Յավակների,  
Այլև Բին մայր ցամաքների,  
Այլև մարդու և մարդկության վառ գալիքի:  
Ու երես դեռ ուսանց հանեա  
Մովսես Բինս  
Մի փարոս է միայն անմար,  
Վաշն ինքանեա պիտի դառնա  
Հանդիվան ու հայահանգիստ,  
Ուր պատմության նաևն անհագին  
Մորկի միջից ու փորձանքի  
Խորդախները պիտի ճգի  
Այս ափերում,  
Որ աշխատուն իր արշավը շարունակի  
Ների լուս կոմունիզմի կապուտ թոռուն։

Սևակի այս շրջանի պահպիան նըրառելիորեն կրում է շրանեափուսական շեշտըր։ Որքան էլ բանաստեղծը ցուցադրում էր պատկերների, բառերի, լնկապումների ինքնառիսա երանքներ, այնուամենայնիվ, դրանք դեռևս չեն հասնում որպակական փոխակերպության։ Հարցերի, արծարծուների, մոտորուների նրա հոլովանմերը տեղակայվում են ժամանակի գեղարվեստական մուածողության ողորտներում, բա-

նաստեղծը տակավին չի անջատել իր «եռը», չի գտել իր փիլիսոփայական աշխարիչ։

Այն տեղաշարժները, որոնց ընդառաջ գնաց մեր հասարակական գարգացումը 50-ական թվականների կեսին, որոշակի բեկում նշանավորնեցին Սևակի ստեղծագործական կենսագրության մեջ։ Բանաստեղծը կարծես միանգամբց հայրնարերում է այն, ինչը միայն զգում էր ներքնապես։ Ստեղծագործական շրջադարձի առաջին արտահայտությունը՝ նանդիսացավ «Նորից քեզ հետ» (1957) բանաստեղծությունների գիրքը։ «Սուերնույց կարելի է կարձել, — նկատում է բանաստեղծը, — որ խորագիրը վերաբերում է քանդական հերոսություն։ Չեմ ուզում միստած լինել, բայց կուզեի ավելացնել, թե ուս առավելապես վերաբերում է իմ եռորյանը, որ փախառական էր դարձել, և իմ ձայնին, որ փոխել էի ջանացել»։

«Նորից քեզ հետ» գրքում արտեմ Սևակը կրանքի փառական հարաբությամբ է օժոում բանաստեղծությունն, ննդիայնում իր տեսահորիզոնը, հրապարակախոսական շեշտերը կատեցնում երևույթների ուսալիստական վերլուծությամբ։ Մշմարիս է, դեռևս նկատելի է խոսքի գեղարվեստական համարժեքների վրիպանքը, սակայն գոնված է «արտեզյան երակը», հայտնաբերված է տաղանդի ուղղությունը։ Մի շարք բանաստեղծություններ՝ «Մարդ էլ կա, մարդ էլ», «Ուզում են», «Երազում են», «Երգել» և այլն, արդեն կրում են ոճի այն անհաստականությունը, որն իր լիակատար արտահայտությունը պիտի գտներ հետուագա ստեղծագործություններում։ Այսպիս, շուրջ մեկ տասնամյակ որոնումներից հետո, Պարույր Սևակը թևակոխում է իր ստեղծագործության երկրորդ շրջանը, հիրավի արգասավոր մի շրջան, որը գրողի տաղանդը ի հայր բերեց արտակարգ հոգածություն և անսովոր թոփչը։ Գրեց բազմաթիվ արևելեր, բանաստեղծական շարքեր, հանդեւ եկավ գրականագիտական, քննարարական, հայագիտական նորմաներում ու ուսումնաարդիություններով և որպես մուածող ու գեղագետ ուրույն տեղ նվաճեց հայ գրականության և հասարակական մտքի պատմության մեջ։

Պուեմը Պարույր Անակի ճախասիրած ժամրերից է: Նրա գրչին են պատկանում մի ամբողջ շարք պոեմներ, որոնք հարատացնում են ժամրի պատմոթյունը կառուցվածքի ակզրունքներով, թեևնի գեղարվեստական լուծումներով: Առաջին պոեմը, որ հեղինակն անվանում է «չափածո վեպ», լույս է տեսել 1953 թվականին «Անհաջող մուտքմություն» վերնագրով: Գյուղական իրականությունը պատկերող ժամանակի գրականության առանդարտ պյուտեով գրված մի երկ է դա, որը ձև էր տարիս «անկողմիկալուսանության» տեսությանը և այս ասմաններում էլ լուծում գյուղում կատարվող փոխակերպությունների առցիալական ու հոգերանական ընթացքը:

Հաջորդ պոեմ՝ «Ուշացած իմ սեր» (1956) բացում է անձնական խոհերի մի աշխարհ, որը սերը բախվում է բարոյական սկզբունքին և ստեղծում դրաման: Մերը կշռամբանք չի ճանաչում, բայց պոեմի հերոսությունը հանդեպ է ընտանիքի հանդեպ, ու թեև ինչ-որ տեղ կատարվել է միայն, սակայն հեշտությամբ չեն լուծի այն զգացմունքի քննչքով: Բանատեղը փորձում է բանականությամբ լուծել դրաման, բարոյական օրենքով չափել «ուշացած սիրո» եթիկական իրավունքը, բայց զգացմունքի բնական գեղեցկությունը հանդում է ամեն մի պայմանականություն: Վերինչերի գեղեցիկ մոռապատկերներում նաև վերապրում է շերմ խոսքերի, հոգու թրթումների կառուց և երկրպագում այն, ինչ ամենազդր է, անփոխարինելի ու հավիտենական:

«Նախանշ երգով» (1961) և «Երգ երգոց» (1960) պոեմներում սիրո եթիկական պրամը տեսի է տարիս փիլիսոփայականին: Լիրիկական խոհերի վերինչերում հյուվում է գեղեցիկ ամփունիան՝ ապրումների հոգագործավ ալիքներով՝ մերթ զգացմունքի ոռմանուիկական գեղեցկությամբ, մերթ անջատուի ցավով, մերթ որպես իրական ու մերթ որպես պատրանք: Վերացումի վայրկյանները, որ թեթև ու անհոգ են այնպես և հերքում են առեղծվածները համ-

դերձյալի, չքանում են առհավետ և երազմերի գեղեցկությունը մշուշում մերժումի անամոք տվյալուանքներով: Բայց երջանկության վայրկյանները հավերժության խորհուրդն ունեն, ու թեև տեսի է ունենում անջատումը, սակայն հարատուում է անը որպես անամոք հիշողություն:

Բայց խկասեն սերը իր հանդերձակն ունի՝  
Ուրիշ—անորոշական—երկրորդ, մի կյանք,  
Որ կոչվում է կարծեան միշտություն,  
Եվ չի գնում փութանց,  
Ինչպես առաջննը,  
Այլ տնում է ամերան,  
Որքան ինքը կյանքը:

Այդ կյանքով է ապրում իմ սերն արդեն՝  
Նորից նորոգելով,  
Ապրեցնելով՝  
Այն առենք, որ կա՞ր և չի լինի...

Երբ անցյալն արդեն անդարձ է, խակ անջատումն՝ իրական, բանատեղծը կշռամքանքի խոսքն է կատեցնում, որպեսզի հույզերի մեղեդին հնացի, և առ փառարանում է սերը, խաղաղում իր հոգին և հոգու խոռվը փարատում հաշտության երգով:

«Երգ երգոց» պոեմում Անակը հյուստամ է սիրո հավերժության լեզենդը: Բանատեղծը կարծեան առեղծում է սիրո մի նոր բիբլիական, նույնական խնասուն ու փիլիսոփայական, նույնական գեղեցիկ ու հերանուսական: Նորից վերինչերի երանությամբ է հատնում այդ լեզենդը, զգացմունքի թրթիներն այրող կարու են դարձել, և առ պատրանքի մեջ վերապրում է վայրկյանների երջանիկ հավերժությունը.

Դու կարծես չկառ  
Ու չես լինեցու,  
Այլևս ինձ հանար մեռած ես կարծես:  
Անկազն ես գիտես,  
Որ դու անենահ ես,  
Ինչպես անենահ է կրամի աշխարթում,  
Այստեղ կրանեցի  
Կվասովի այցոր:  
Եվ դու—ինձ հանար—ցե՛ս մեռմի երթը,

Անձանու շի մեռնեց  
Քո հայրական-հայրականացիկը,  
Որ քո սիրեցի ամուսնն էր կրում,  
Իմ Սովորման:

Անակի սիրո պուսմները գեղարվեաստական հմայք են տառնում խոհերի ու զգացմունքների հարատությամբ, հոգերանական նուրբ շարժումների զգացողությամբ և պատկերի բանաստեղծական գեղեցկությամբ:

Անակի առեղծագործական տարերքը իր լիակատար դրսորում գտավ «Անդրեյի զանգակառուն» (1959) պուտում, անկրկնելի մի գրական կոթող, որ նոր աստիճանի քարձրացրեց հայ բանաստեղծական արվեստը: Պուեմը նվիրված է հայ հանճարեղ կումպովիսոր Կոմիտասին: «Գրել Կոմիտասի մասին, — մենքնարանուն է բանաստեղծը, — հավասարազոր էր գրել հայ ժողովրդի վերջին հարյուր տարփա պատմությունը, ժողովրդի կյանքով ու երազանքներով, կենցաղով ու գոյանարտով, երգով ու լացով, եվրոպական դիվանագիտությամբ ու թուրքական քարքարությամբ, ազգագրությամբ և ազգագիտությամբ, անցյալով և արագոյն»: Այն խոստվանանքը, թե «իմ գիտակցական ամբողջ կյանքում ես տառապել եմ... «կոմիտասաւիրությունց», թե «իմ ողջ կյանքում ես մտքիս մեջ գրել եմ «Զանգակառունը», անոք է պայմանակիրեր այն հզոր ներշնչանքը, ներքին այն հարատությունը և կառուցվածքի այն քարդ սիրենը, որով գեղարվեաստական արժեք է առանում «Անդրեյի զանգակառունը»»: Անակի բանաստեղծական տարերքը զարմացնում է իր շոայլ հնարավորություններով: Խնամերեկուուալ հարատությունը, պատկանականի ու գեղարվեաստականի հիմանադիր միասնական մուշտը, բարդ վերաբերությունը և պատահական անսարքությունը, բարձրագույն ուժությունը և այլն:

Պատմա-գեղարվեաստական բարձր արժեքի համար պուտուն շնորհվեց պետական մրցանակ:

Պուեմի սյուժեն խորսիակած է պատմա-կենսագրական առաջնական վրա: Ակրպում է մի կյանքի պատմություն՝ երազ-

հերով, որոնուամներով, ձգուանձրով լեցուն, որը խեաստ պիտի տար մի մեծ հայտնության և խորհրդավորեր մի աստվածային առաքելության: Այդ առաքելության խեաստն արտահայտում է Կոմիտասի հարցադրություն՝ ունենալով մենք սեփական ազգային երաժշտություն: Այսուեղ է նա զուակ իր կյանքի մարտիրոսական նվիրությունը: Գևաց Եվրոպաս, որպեսզի ստվորի համաշխարհայինը և որոնի հայեականը: Նու իր կյանքը ձուլեց ժողովրդի պատմությանը. պեղեց այդ պատմության հոգեսոր արժեքները, տարալուծեց դրանց բաղադրությունը և զատեց այն, ինչ իրենն է, սեփականը: Հայկական մեղենին ստու երաժշտական զյուտ չէր, այլ ծողովրդի ոգու թաքնված գանձերի հայունություն: Եվ այդ հայունությամբ, թրթուուների, խոհերի, ասկրուսների հոգին աշխարհով նա ապշեցրեց Եվրոպան՝ մարդկային ոգու հանճարեղ, անառվոր, ինքնաստիա Կերուվանքով:

Հջուսն է ազգային մեղենին, և կոմիտասյան երգերի մեջ ժողովրդին իր ամբողջ պատմությունն է վերամերտում՝ աշխատանքի ու վասառակի, կարտոի ու տիսրության, հնուացումի ու պանդասության, մաքառումի ու գոյության երգը, որպես դարերի խմառության եսթիլական լեզեն, որպես պատմության հարատությունը: Բանաստեղծական պատման մեջ կերպարը է Անակը առեղծել երգ-ժողովուրդ: Կոմիտաս հավաքացությունների ծովվածքը: Այս միասնության մեջ ամրողանում է Կոմիտասի կերպարը, իր անհնատականության մեջ թեկում ժողովրդի նակառագիրը: Մինչդեռ ժողովուրդը իր հոգու գանձերն է բացահայտում, ձուռ մեկնում ապագայի գեղեցիկ երազանքին, ճակատագրի դրժան արհավիրքները նյութում են քարքարութական սպանությունը: Մարդկության, աշխարհի առաջ կառարվում է սարսափեցի ոճիրը և այն, ինչ իրական էր, գեղեցիկ ու հավիտենական դասնում է անցյալ ու անվերադառն կորուստ.

Ամեն՝ պիտի,  
Որ բորբ ներկվեց ո՞չ արևով,  
Այլ մեր արյամիք.  
Ու կողաստօց խորանները հայ կանաչի,  
Խորանները հայ դարբարդական ստոր ռասապի,

Բողոք ճյուղերը կտրատեց

Հայ համեմարի

Շատկուն ծառի,

Ու հաւայածից հայ մեղեդու

Սևենավա՛ն էջը հաստեց...

Եվ ամուննե՞ր, որոնք երևէ

Հնուու էին փայտաքական մասնիկներով

Մերձաւորի ու մտերիմ բարեկամի աիրող շրթից,

Ու հիրավի հպարտության տրոփ պոկուս

Մի բռնամդակ ժողովորի լեցուն սրտից,—

Թե կյանք էին հիմա համեկարծ դարձան անգո,

Մի գիշերում, բարբարոսի կամք ու շանքով

Ու մղուսով անզատիք.

Ապրոյ մարդուց հանկարծ դարձան

Մի մտովին կերտված արձան...

Սարսավուս է մի ժողովորդ, սպանվում է երգը, սպանվում է և իր կյանքի իմաստը և նրա երևակայությունը մեռվից նշխարում է ամրող սպասավիշ անկասելի ոճաբարձության, ամայացած մի երկիր, ուր ազդուսվերն են կոնչում չարգուչակ, և գայլերն են հագենում դիահոշուման նախօրից.

Հիմ Ծովասարի բարերի վրա

Գտանարած Դավիթի երկար տրեխի թողած մետքերում,

Ինչպես խաղաղիք—փոքրիկ գույն մաշ,

Անձրևաջորն է քմիթաղ տախին

Տառ կիւսպուանի եւրում ակնարկող բառերի վրա...

Սպանն վիարամն Մարտութա վանքում

Ուխտավորի տեղ բուերն են տնքում՝

Այս փուշ աշխարհի բանը խորհեղով...

• • • • •

Մշո խայն դաշտում,

Մայրից մինչն ծայր,

Ամվարծ կրտուս կարույալ բաւերն

Եվ մեն-մի հաստիկ երդիկ չի գտնի,

Որ դուրս պորբեկացող ծովոս խլելով՝

Վայրի կատվի պես քինուս գօգի կծիկը օրս...

— Են ե՞կ, Վարդապետ,

Եկ ու մի՛ գժվիր...

Սևակը տաղանդի հզոր ուժով մի անգամ ևս ատիպում է վերապրելու Սիրանանթոյի «ուներգության» սարստուները:

Զգալուն հանճարը՝ Կոմիտասը ցնորիի մեջ վերապրում է ժողովրդի ողբերգությունը, երեկովա իրավանի մասապարտանքը մթագնվում է հետապնդող ուրվականների չարագուչակ տեսլիներով և խախտում նրա հոգեւերան հավասարակշուղթյունը։ Տառապանքի մղձավանշում նա երևակացում է իրեն որպես անցած կյանքի ու ընդհատված պատմության մի վերջին հուշիկ։

Դակ այնուն, մայր հայրենանիքի մի բեկորի վրա իր ժողովորդն է հարատևում, երգում իր միրած մենելոյին, լուծերով անհայտ առեղծվածները պատության և հերթելով նախատինքը կործանում։ Այսուեղ էլ մեծ առաքյալը գրտնում է իր փառքի պահետանը և ապրում իր սրբագրութված կյանքը որպես հավիտնենության խորհրդանիշ։

«Անլուելի զանգակատուն» այնուը վերջանում է պայծառ հավատով հայ ժողովորի ապագայի հանուեա։ Բանատեղծը դիմերամբ է ձունում ժողովորի վերածնությանը, «նոր հավատի» մեջ որոնում նրա հավերժական գոյցության հանգըլվանը.

Դու չինացար, որ աշխարհով

Կազմակեցին ամեն շանթեր,

Եվ ազգը քո որը ու անուեր,

Բայի՝ Կ-բայի՝ Կ,

Ծվա՛տ-ծվա՛տ,

Լրկած աստծուց և մարդկանցից,

Զրկված անգամ հուսու գանձից,

Դ դեմ ամեն բարեկարտի

Լոկ տեսնելով ծախու կապաս,

Մինչն մրուր դառարկելով

Վհաստության գավ ու գայլաթ,—

Նոյն ազգը քո համեկած-մեկնեն

Վերստացավ նոր մի հավատ.

Հոգեւերքի իր մամիճում

Հոգեւարձը վերածնվեց,

Մի նոր կյանքի նոյսով գինելեց...

«Անլուելի զանգակատունը» չափանց բանատեղծի առելիքը ազգային եղեռնի վերաբերյալ և նոյն թեմային նա

XVII

անդրադարձավ «Եռաձայն պատարագ» (1965) պոեմում:  
Մն ներկալով հայոց պատմոյթյան ողբերգական թվականը,  
և ճշգրով ազգային բողոքը տիեզերական անարդարության  
դրամ, բանաստեղծը նորից հափառի պատգամ է ձևում ժո-  
ղովրդի վերածնությանը, առեղծագործ ներկայի մեջ գու-  
շակում պայծառ գալիքը:

Սևակի եսիկական առեղծագործությունների շարքում  
գեղարվեստական բացառիկ արժեք է ներկայացնում «Եղ  
այր մի՝ Մաշտոց անուն» (1962) պոեմը: Զարմանալ կարե-  
լի է միայն, թե ինչպես է բանաստեղծը կամուրջ ձգում  
պատմության դարերի վրայով, մի տեսանելյի հարցության  
վրա իրար կապակցում անցյալը, ներկան ու ապագան և  
պատմության բառուղիների հանգույցում ուրվագծում այն  
մարգարիթներ, որը կոչված էր խորհրդանշելու մի ամերուշ  
ժողովուրդ: Սևակի բանաստեղծական երևակայությունը  
զարմացնում է ապշեցուցիչ անակնկալներով. մոտքի ինչպի-  
սի՝ թոփք, երևակայության ինչպիսի՝ պացք, ինչպիսի՝  
անշափելի տեսահորիզոն և այս ամենի մեջ գիտելիքնի  
և բանաստեղծականի ինչպիսի՝ միահյուսում.

Այո՛, մեճք կատիճք նրամից առաջ:

Սակայն աշխարհի լայնքի վրայով  
Մի չուտամբիած մրգին էր անցել:

Հրեա մի գունառ՝  
Քշված իր երմրից,  
Օտարականի և հյուրի տեսքով,  
Ինքը իրեն տարավ աշխարհից-աշխարհ:

Չորսավոր էին աստվածները հին,  
Այնքան գորսավոր,  
Որ անկեղծ էին ու չին սսում:

Իսկ ինեճ ու աղքաս այդ երրայնքին  
Եկալ շատ տարու խուսումներ օրուն,  
Եկալ՝ զինական գեղեցիկ ստով...

Միամիտ էին աստվածները հին,  
Միամիտ ապրուն:

Որ ծարտավն իրենց հազնեցնում էին լոկ արյամբ գոմի  
Եվ իրենց քաղցը՝ նոյն գոմի մսով:

Իսկ երրայեցին եկավ ասեզու.  
«Այս է մարմինն իմ. առեք ու կերեք:  
Այս է արյունն իմ. ըմպեցեք այրով!»:

Մենք մերիյաններ ենք կատուցել, երկրպագել հին աստ-  
վածների, կործանել ենք հին աստվածներ և երկրպագել  
Նոր աստծու՝ հավատալով արա առաքելությանը: Բայց հին  
աստվածների կործանումը շի պատկանում ճակատագրի:  
Յամանամ պատահին. Արանք պիտի կործանվեին, որովհետև  
Կորցրել էին իրենց ամենազորության գեղեցիկ հավատը.

...Չորսավոր էին աստվածները հին,  
Այնքան գորսավոր,  
Որ անկեղծ էին ու չին սսում:

Իսկ պատմության մեջ կան ժամանակներ,  
Երբ ով չի սսում՝ պիտի կործանվի...»

Եվ կործանվեցին աստվածները հին:

Նոր աստծու առաքելությունը, սակայն, Հայաստան աշ-  
խարին փրկություն չըերեց: Նրա քարտզած պատվիրան-  
ները նույնափառ գեղեցիկ առատ էին, որ մարգարեն նրանց  
գործություն տվեց անառույց հանդերձալում, իսկ պատմու-  
թյունն իրենն անում էր: Ուժի և բռնության, օրենքի և իրա-  
վումքի գոյամաքառումը գործում էր դաժան անհրաժեշտու-  
թյամբ, որեմն պետք էր որոնել ճշմարիտ զենքը՝ դիմագրա-  
վելու պատմության գալիքը փորձություններին: Անորոշու-  
թյան, սպասումի, բայց և լինելության այս լարումի պահե-  
րին է, որ ժողովուրդները ծնում են իրենց առաջալին.

Նրանց ծնումնը միշտ է թվում է անսպասելի  
Եվ նետու մարդկանց դարեր շարտունկ զարդաներ պատճառում,  
Բայց նրանք կրամքում միշտ էլ ծնվում են լոկ այն պատճառով,  
Որ անշափ շատ են սպասել նրանց:

Նրանք ծնվում են, որ ապացուցեն,  
Թռն իրաշք չկո՞,  
Կա միայն կարի՞ք:

Նրանք ծնվում են, որ ապացուցեն,  
Թռ այսուհետ է լոկ սխրանքն սկսվում,  
Ուր վերջանում է ամեն մի ժնար...

Եվ այսպես, մենք լուսավորչի քաղաքակրթական հայութացյալներ՝ գրեթի գյուտը՝ խորհրդանշում է հայոց պատմության իմաստությունը, շնորհիում նրան հոգևոր հանճարի այն ներքին տրվածքը, որով նա ոյինագրավում է դարերի փորձությունը, նորոգվում հավատով և մոռավոր իր թռիչքը հասցնում բանականության համաշխարհային հայտնություններին:

Կանգուն առ կանգուն թաղվերով հողում՝

Հառնեցինք դարձաք,

Մնացինք կանցուն.

Անվերջ ընկերություն՝

Վերաթունեցինք.

Մեռնելով անվերջ՝

Գոյառուեցինք...

Հասնելով ուրիշ ժամանակների,

Եր մենք՝ տառապած միշտ քանակներից,

Հարար ենք արդեն մեր նոր որակություն.

Մենք՝ բնականակած արրանցակրության,

Հարար ենք մինև այն արքանցակրություն,

Որի ծիրի մեջ կա և վազքը մեր.

Եվ հարարն՝ նաև հրթիռով այն նոր,

Որի թիրի մեջ կա հրաշքը մեր...

«Եվ այր մի՝ Մաշտոց անուն» արեմը հզոր տաղանդի ստեղծագործություն է, ուր գեղարվեստական մոռածողությունը հասնում է փիլիսոփայական անսովոր խորացնեան:

### III

Պոեզիայի իմանեան օրենքների ժամանակակից որոշ տեսական պաշտպաններ մի վրիսանք անշուշտ թույլ են տալիս, բանաստեղծության ստորատանցիան դիտելով որպես հավիտնական ու անհորիոի մեծություն, որպես թե քնարերությունը թիշ է համբած իր ինքնավարությանը ենթար-

կելու տեսանիկական առաջնորդացի գիտական բանաձևումները: Այս ազգբունքի վրա Սևակի առեղծագործական ընթացքը մշտապես ուղեկցվել է կրորու բանավեճերով: Տեսակեւներ են արտահայտվել, թե Սևակը բացառում է պոեզիայի ոգին՝ զգացնունքի առաջնորդյունը, թե նա կրորու է ազգային ավանդույթների հետ միացնող կապը, վերջապես, թե նա ջնջում է սահմանը բանաստեղծականի և ոչ-բանաստեղծականի միջև, պոեզիայի թեման ու բառապաշտը մեջելով օտարությունը ուղրուներ: Բանավեճերն անարձագանք չեն մնում բանաստեղծին: Նա հանդես է գալիք թե՛ տեսական հոդվածներով, թե՛ ստեղծագործությամբ և հաստատում իր գեղագիտական ակզրունքները: Ու մինչդեռ գրական ասուլիսներում շարունակվում էր հարց ու պատասխանը, 1963 թվականին լույս է տեսնում «Մարդը ափի մեջ» ժողովածուն: Հայ պոեզիայի պատմության բացառիկ երևույթներից մեզն էր դա, գեղարվեստական մի խական հայտնություն, որ լուծեց Սևակի ոճի փիլիստիվայությունը և ուղղություն տվեց գրական շարժմանը: Ինչո՞ւմն էր գաղտնիքը, ի՞նչ հասկանիչներ են Սևակի քնարերգությունը բարձրացնուած դասական կատարելության: Սևակնից առաջ դարաշրջանի ոիթսի մեծ զգացողությամբ: Բայց արդի դարաշրջանի ոիթօմը բարդ ոիթը է, որքան անդրադարձում է ինտելեկտուալ անհատի հոգեբանական ու փիլիստիվական աշխարհի բարդ կառուցվածքը: Այս իմաստով Սևակը ընդլայնում է հայ պոեզիայի գեղարվեստական հնարավորությունները, բանաստեղծական մոռածողությունը դնում համարձակ ու աներևակայելի փորձության առաջ, ստիպում նրան ընկալելու երևույթներ, նկատելու իրողություններ, վերապելու տրամադրություններ, որոնք սովորապես բանաստեղծական չեն համարվում: Նա համարձակորեն փոխաներպում է բանաստեղծականի ավանդական պատկերացումները, վերանայում պոեզիայի առարկայական առորիբուսները, վերաձևում իրերի, երևույթների թիվն ու դասավորությունը պոեզիայի գեղարվեստական համակարգում:

Այս տեսակեսուից «Մարդը ափի մեջ» գիրքը ուղղակի  
XXI

զարմացնում է բովանդակության անհամատելի լայնությամբ, բանաստեղծական աշխարհի խոր և տարածական չափումներով։ Չարքերը հաջորդում են միմյանց, որոնցից յուրաքանչյուրը բացում է կյանքի մի նոր անկյուն, լուծում գեղագիտական մի նոր սկզբունք, «Նոյն հասցեովը»՝ սիրո, կարոտի, ձգուոսի և երազանքի փիլիսոփայական աղեկոծումները։ «Ըոռուցիկ երգերը»՝ կյանքի անակնկալների խորհրդավոր հանդիպումները։ «Մարդը ափի մեջ»՝ անհատի եթիկական կառուցվածքի վերլուծումները։ «Ականջդ բեր ասեմքը»՝ մարդու եռուժունից պոկված հազարավոր անհայտ ինչուների իմաստավորում։ «Անձրևային տնատը»՝ տիեզերական ազդանշանի մղձավանշային առեղծվածի մեկնություն։ «Վերնաօդիրը վերջումը»՝ ենթագիտակցությամբ կուսիվող պատրանքների հանելովային լուծումներ։ վերջապես «Հարկ հոգեկանը»՝ հավատի ու նվիրուսի երգը առ հայրեմին։ Խորիշի, մտորումների, առարկաների ու երևոյթների այս անահման կապերի ու բարդ շարժումների մեջ Սևակի բանաստեղծական մտածողությունը զարմացնում է անկըրների գյուտերով, բառերի ու պատմեների անսպառ հավելումներով, երևակայության հեռածից թոյիշքներով։

«Մարդը ափի մեջ» շարքը ուրույն արժեք ունի Սևակի գեղագիտական սիատեմում։ Այդ շարքի մտահղացումը արդեն տասնամյակի պատմություն ուներ, և նրա բանաստեղծական նմուշները լույս են տեսել «Նորից քեզ հետ» գրքում։ Հետագա տարիներին Սևակը լրացնում է այն, տալով նրան թեմատիկ ավարտվածություն և գեղարվեստական ամրողացյուն, արատեղ իսկ լուծերով պոեզիայի առարկայի, իրականի ու բանաստեղծականի իր նոր ըմբռնումը։ Եվ որքան էլ առաջին հայացքի տպագրությունը կարող է նշմարել բանաստեղծական խոսքի հասարակացումներ, այնուամենայնիվ, Սևակը գեղագիտական նոր խնդիր է լուծում՝ պուգիան հանձնելով կյանքի անհայտ ոլորտների քննությանը։ Այսուղեւ Սևակի ոճի էական առանձնահատկությունները թելադրվում են առջևադիտական ուսաղիզմի պահանջներից և ներշնչված են քաղաքացիական ազնիվ պաթուով։ Եթե ճշնարիտ է, որ Սևակի գեղագիտական իդեալը եղանում է

հասարակության պատմական օրինաչափությունների գիտական ըմբռնումից, ապա ակներև է նուև, որ նա հակված չէ գաղափարը հանգեցնելով մերկապարանց ներրողի կամ թմրեցնող գոհության։ «Հոգևորական համար չեմ ծնվել և դեմ եմ հիմար լավատեսության», այս շիտակ, ուղամիտ և ազնիվ սկզբունքի վրա է Սևակը կառուցում իր քաղաքացիական հավատամքը։ Մարդուն առնելով «ափի մեջ», բանաստեղծը բափանցում է նրա հոգու խորքը, տարրապուծում նրա կառուցվածքի բաղադրությունը և, նրա շահախնդրությունները դուրս բերելով «եսի» սահմանափակ հետաքրքրություններից, չափում այն կյանքի մեծ շարժումներով, այրում է այն ամենը, ինչ մանր է, չճշին, կաշկանդող և վեհացնում բարձրն ու ազնիվը, պոետականացնում ճշշտ ապրելու բարյալամբ։ Եթեն սեր է, ապա պետք է լինի անձնազոհ, եթեն հայրենասիրություն է, պետք է լինի համոզումներ, եթեն քաղաքացիություն է, ապա՝ ազնիվ ու մարդափրական։ Ինեալ-մարդու և մարդ-իդեալի տեսակետից Սևակը և՛ դրվում է, և՛ հրաժարվում, և՛ ցաւկում է, և՛ անողոք, և՛ ասում է, և՛ արհամարհում, ամենուրեք մարդու եռույթունը չափում ճշմարտության գաղափարով։ «Անում եմ», «Չեմ հարգում», «Վիճում եմ», «Ոլդում եմ», «Խուսափում եմ» և նման բերթվածներում Սևակը հանդես է գալիս որպես պատգամախոս-բանաստեղծ։

### Ասում եմ ձյունը՝

Թե նա տեղում է անսովու կեսին,

Եվ մահն եմ ասում՝

Թե հյուր է գալիս աղջկատեսին, —

Մահից ոչ պակաս՝

Եվ ա՛յն բողաքրիմ մենատղնեսին, —

Նրան ու նրանց,

Ովքեր որիշի շեմ տուն են քանորում՝

Իրեմց պետք եկած գերամի հանուր,

Ովքեր որիշի ծառերն են զարդում՝

Մի բուն շիտամ ծիրանի հանուր,

Ովքեր հանայնքի ծովից են խոսում,

Բայց դեպի իրենց լճակն են Բունում...»

Եթիկական սկզբունքի տեսակետից բանաստեղծը տար-

որոշում է կյանքի լույսերն ու ստվերները, վեճ բացում այն ամենի հետ, ինչը շեղում է իր բնական էությունից, ինչը խարսխի է կամ վրիպանը.

Ես վիճում եմ,  
մե՞ն է՝ ո՞ւ հետ,  
ինքը ի՞նձ հետ,  
թե՞ ուրիշի...

Ես վիճում եմ և աստղերից լաւերի՝ հետ,  
Եթե նրանք տալիս եմ մեզ աղո՞տ մի լոյս,  
Բայց ո՞չ կրակ...  
Ես վիճում եմ կանաչների ծովերի՝ հետ,  
Եթե նրանք դաշտում փտում,  
Բայց չեմ մտնում  
Ո՞չ մի մարագ...

Մարդը հոգու իր բոլոր շարժումներով ու բնավորության դրսորումներով կանգնում է բանաստեղծի քննախույզ հայացքի առաջ, և նա տեսնում, ունի ներքում է ամեն բան, չափում ամեն ինչի իմաստն ու խորհրդողը, մերժում ատորն ու արգահատելին, վեհացնում ազնիվն ու գեղեցիկը, կասկածում է ու տարակուսում, բայց և հաղթանակում փիլիսոփայական հավատով.

Ինչո՞ւ թաքցնեմ.  
Ես ճանաչում եմ ու գիտեմ մարդուն:  
Ի՞նչ առան չկա նրա փակ սրտում:  
... Ես նրան հաճախ դատափետում եմ,  
Երբեմն նրան նոյնինկ առում եմ,  
Բայց, ամենից շատ, խոր հավաստ՝ մ եմ:  
... Ես հայստում եմ հավատի՛ն մարդու՝  
Իյ այս հավատին...

«Մարդը ափի մեջ» գրքում նոր ուժով դրակորվեց Սևակի բանաստեղծական մտածողության փիլիսոփայական լարվածությունը: Բանաստեղծության մեջ նա համատեղեց բոլոր գգայությունների գործակցությունը, ուր ոչ միայն գիտելիքն է ի սպաս դրվում պոեզիայի ծառարությանը, այլև նուսողական ու գգացական եներգիան: Այսպես, նա ատեղ-

ծնց բանաստեղծական մթնոլորտի այն թանձրացումը, որը ձև է առնում մտքի և գգացմունքի ինտելեկտուալ բաղադրությամբ:

Ետ-եւ եմ գնում պատերը հանկարծ,  
Անվերջ հեռաւեռում,  
Դառնում հորիզոնն,  
Թե՞ հորիզոնն է այնքան մտունում,  
Որ եթե ուզեմ,  
Որպես նոր կախարդ,  
Իյ զոյզ ձեռքերով կարող եմ հունցել  
Նրա կապույտ՝  
Խմորի հնան...

Աղմուկ ու ժխոր ողողում են ինձ,  
Բայց ինձ չեն կպչում,  
Ինչպես ձկանը ջորը օվկիանի...

— Իմ... լուույսն են է:

Հոգմած լուույսն բանաստեղծական մտասպատկերը, ուղղակի կաշչած չէ առարկայական հասկացության և ենթակա չէ տրամաբանական ապացույցի, սակայն եասես ստեղծում է այն պատրանքը, ինչը առերևույթ թվում է անհականացի:

Սևակի պոեզիան չի որոնում գգացմունքի պահը, այլ նրա պատությունը, չի վերապրում տրամադրության անփոփոխ դրույթունը, այլ նրա շարժումը, չի ապառում հոգերանության ավարտվածությունը, այլ նրա դիալեկտիկան.

Հանգստացրո՞ւ ինձ,  
Հանգստացրո՞ւ...  
Օգմի՞ն, որ ցալը...  
Չի՞ անցնի ցալը:  
Գուցե պետք է չէ, որ անցնի ցալը:  
Նա էլ է ծնունդ,  
Ինչ-որ երեխա  
Եվ... իր ապրելու իրավունքն ունի...  
Օգմի՞ն, որ ցալին ետևո՞ւմ պամփան.  
Հանգստացրո՞ւ ինձ,  
Հանգստացրո՞ւ...

Թվում է, թե սա և այլիքը է, և այլարտ, գուցե ևս մի բանաստիցում, կամ մի թախանձանք.

Ինչի՞ բանար է այս նրկմառամբը,  
Չէ՞ որ տաճչվել եւ եւ ազնիդրե՞ն:  
Թո՞ն որ ամե՞ն բան բաց պատկերված չէ,  
Սակայն ամե՞ն բան պատկերացված է:  
Ինչ-որ հնարքով կողպի՞ր մտքերս.  
Հանգստացրո՞ւ ինձ,  
Հանգստացրո՞ւ...

Բայց սա էլ դեռ ավարտ չէ. այնուեղ, որ վերջանում է բանաստեղծական կառուցվածքի մի որոշ ըմբռնում, Աևակի համար ակավում է որոնումների ասպարեզը: Եվ տարածվում է բանաստեղծությունը՝ մտորումներ են հաջորդում, որությ փոխվում է հակադրույթի, ապա հանգուցվում համադրություն, նոր խորհեր ու հարցումներ են ծագում, որոնք մտքի ու երևակայության այլքնները տանում են դեպի փիփուփայական անափի հորիզոնները:

Հանգստացրո՞ւ ինձ  
Զգիտե՞մ ինչո՞վ:  
Գուցե՞ ոչնչով:  
Էլ չկա՞ հրաշք:  
Նոկ դու կարող ես հրաշք ստեղծե՛ք  
Թարուն երազված կետկետուն քայլիդ հնչում նազանքով՝  
Նմ շրջակաբքում,  
Փոշով խափապատ հայելու վրա՝  
Քո փորագրիչ-նկարիչ մատի մի խզքանքով,  
Որ անմա լինի անհայտ մի նեզին հզանագրի:  
Ինկ սա մի՞շտ ունի թալիսմանի ուժ...

Տո՞ւր ինձ մի խորհուրդ,  
Խորհրդուր աշխախի՛,  
Որ ո՞չ մի քառով չի բռնադառվում:  
Էլեկտրագրի՛ մի գալարագիծ կամ մի լուսայիք,  
Ինչպես անուա են ճշգրիտ կոչված տարքերը միայն:  
Թարգմանությունը մի՞շտ սպանում է:  
Քն՞ո մի թարգմանիր.  
Ի՞նձ հանգստացրու,  
Հանգստացրո՞ւ...

Աևակը համարձակորեն փոխակերպում է պոեզիայի գեղարվետական պեյզաժը: Խախտելով կառուցվածքային համաշափության սովորական օրենքները, բանաստեղծը նոր ստուգության է ենթարկում աշխարհի իմանալիության ու

անիմանալիության բանաձները, երևոյացների օրինակուիվ կառուցվածքի մեջ նոր նշանակություններ հայտաբերում: Բանաստեղծական մտորումների ոլորտն են առնվուում հակացույցուններ, որոնք ենթակա չեն չափանան, կասկածող հարցումի են ենթարկվում առարկայական աշխարհի մշտապես սահմանված իմաստները:

«Արդի բանաստեղծության հիմնական տիպարը,—գրում է Աևակը,— երածշտական տերմինով ասած, ես համարում եմ ո՞չ թե երգային մտածողությունը, այլ համանվագրայինը (սիմֆոնիզմը): Ո՞չ թե մենաձայնությունը, այլ բազմաձայնությունը... Ինկ սիմֆոնիկ զարգացած երածշտությունը ոչ թե բացառում, այլ ենթադրում է նաև այն, ինչ կոչվում է դիստնանս, որ բանաստեղծության տիտղոսավոր և անտիւդուն գնահատողները հաճախ կոչում են «կոպիտ տեղեր» կամ «արձակայնություն»...

— Ինկ ինչո՞ւ և անպատճառ ախմֆոնիկ, — կարող են հարցնել իրավամբ: Պատասխանի համար պեսոք է դիմել ո՞չ թե ինձ, այլ դարին, ավելի ճիշտ՝ դարի ժամանակակից պատգամախոսին, որ կոչվում է բվանուային տեսություն, հարաբերականության տեսություն, աստմային էներգիա, նրգին, կամ արրանքակ, ինչպես կուգեք<sup>1</sup>:

Այս անիրամեջտությամբ է Աևակը «խախտում» բանաստեղծության դասական համաշափությունը, տրամարանական ուղղագծությունն ու առարկայական հաջորդվածությունը ենթարկում բարդ ու «անկանոն» դասավորության.

Լույսոյն է: Խորումն, Խորմիրակոր:  
Ամե՞ն ինչ է լուե: Եվ լուէ է այնպես,  
Ինչպես բառարանում բառն է լուու:

Եվ գիշերը չումի տառներկու ժամ,  
Այլ կրկնակի: Խոսի թարմ բուրմումք է գայիս  
Այս ասֆալտի՛ց արդյոք,  
Թո՞ւ այս տըրամվայից,  
Որ ձգմել է հիմա լուո փողոցում՝  
Ինչ-որ հեքիաթական թրթուի պես:  
Ուրեմն անշառված է հուանքն էլեկտրակամ:

<sup>1</sup> «Գրական թերթ», 1986, № 2:

Բազմաթիվ համացույթուններ են կուտակվում մի պահի ընկադրություններում, երևոյթներում, են համատեղվում, որ գուցե կարողանան պատասխան որոնել ինչ-որ անհայտի:

Ոչ մի համացույթուն պատեղ վերջավորված ու բացարձակ թվաբանական մեծություն չէ: Եվ եթե առկա են տրամաբանական հավասարություն, ապա դրանք միայն անհայտներով հավասարություններ են, որ մեկ անհայտը պատասխան է որոնում մի այլ անհայտի մեջ, իսկ առեղծվածների կուտակվություն իմաստավոր պարադրսների.

Ֆուտբոլանք չեմ ես: Բայց աչքերին դիմաց ինչ-որ մի գնդակ է անմիջականություն: Խենանում եմ պայման: Գնդակն ի՞նչ գործ ունի ի՞նձ մեն, լուրջան մեն և մեր անշատնան մեն...

Եվ այս անը կոչվածք գուցե սեր չէ բնավ, Այլ շատի ձայն է, կայսրանի աղմուկ, Եվ կամացի ձեռք է՝ ճյուղի ներան ջարդված...

Տեսնեմ թե աշխարհում կա՞ գեր մի կենու լեզու, Որ չունենա իր մեջ այս «անշատվել» բայց: Թե կա՞ ես փոխում եմ ազգություններ...

Կա՞: Պատասխան չկա՞: Լուրյուն է: Ծիշու է, որ պատասխան իրոք չկա, Բայց և լուրյուն չէ: Համատարած զի՞շ է: Համատարած կա՞նչ է: Համատարած գոռո՞ց...

Ինչպիսի անակնելիալ զուգադրություններ. և ո՞վ գիտեն, ենթագիտուսկցական ինչ հետավոր գործիններ են առիթ տալիս ֆուտբոլի գնդակը խորհրդանշելու «լուրյան» ու «անշատման» գաղափարով, անը համացույթունը համարելու «շակի ձայնին» ու «վայարանի աղմուկին», կամ բառարանի լուրյան մեջ ունկնդրելու «համատարած միշ» և «համատարած գոռոց»:

#### IV

Սևակը պատկանում է այն բացարիկ տաղանդների կարգին, որոնց յուրաքանչյուր նոր գիրքը նախորդի «Բներ-  
XXVIII

քումն է» հանդիսանում, ասել է թե առեղծագործական ինքնահաղթահարություն: Եվ այն, ինչ գրական շրջաններում աներևակայտի եր թվում «Մարդը ափի մեջ» գործից հետո, Սևակը լուծեց այնպիսի համարձակության օրենքով: «Եղիցի լույս» (1969) ժողովածուն ոչ միայն որակական նոր առաջնանի է բարձրացնում Սևակի բանաստեղծական արվեստը, այն մի յորօրինակ ծրագիր-բնագանակ է առաջարդում հայ քնարերգությանը: Իր գրական-պատմական նշանակությամբ դա թերևս նախօրինակ կարող է ունենալ միայն Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին»: Ինչպես Չարենցի գիրք-պատվիրանը, Սևակի «Եղիցի լույսը» նույնական իր հարցափրություններով դուրս է գալիս պոեզիայի լոկալ շրջանակներից և ակնկալում հասարակական ու իմացարանական համապարփակ ողբրտները, բանականության որոնումները նեստելով դեպի տիեզերական անհայտը: Այստեղ նույնական խաչարենկում են պատմական ու փիլիսոփայականը, չափում երկրագնդի կշռույթն ու «դարի հիվանդությունը»: Կարծես արարիշը բանաստեղծի ճակատին խարսնել էր կիլոպայան աչքը՝ տեսնելու աներևությանը, կուանիդու անհայտը, քննելու իրերի բնությունը: Հղացումների որախսի՝ համարձակություն, մտածողության ինչպիսի՝ զանգվածային կուտակումներ, թափանցումների որպիսի՝ անհատակ խորոշություն: Մտքի և զգացմունքի տարերքն անենուուք բանդում է չափի ու ձևի ամեն մի առանդարտ, առեղծում «անբանաստեղծական պարադրաներ», որպեսզի ի հայտ բերի ճշմարիտ բանաստեղծության հնայքն ու գեղեցիկությունը: Երևակի այսուղի որոնել հայ քնարերգության արդի էտափի այն խորհուրդը, որ Սևակը բնորոշում է որպես «անցման հասակ» գրանաստեղծական բանաստեղծությունից: Դեպի «անբանաստեղծական անքանաստեղծություն»: «Եսկ բանաստեղծական անքանաստեղծության մասին խոսելիս,— գրում է նա,— ես մկանի ունեի հույզի ու մտքի այն արտադրությունը, որ տասնամյակներ շարունակ թագավորել է մեր բանավոր ու գրավոր խոսքում՝ առեղծելով պարտանքը այն բանաստեղծությունը»

թյան, որ փաստորեն բանաստեղծության հետ ոչ մի կապ չուներ... «Անբանատեղծական բանաստեղծության» իմ պահանջը, ախսպիտվ, այլ բան չէ, քան ճշմարիտ բանաստեղծության պաշտպանություն, ընդունմ փուշ և ճնշուան, գանգրահեր ու ուսուցիկ բառերի ուսանավորչության»<sup>1</sup>:

Մեկ անգամ չէ, որ Սևակը բանաստեղծի իր կոչումը խմաստավորել է պատմաբանի խորհրդով: Նա, հիրավի, պատմաբան էր և իր պոեզիայում արտացոլել է «հետպատերազմյան աերնոյի» ճակատագիրը՝ բարդ ու հակասական որբումներով, եթիւկական ու հոգեկան կառուցվածքով, աշխարհայացքի անկատելի առաջնորդությունը: Լինելով մեծ անհատականություն, նա իր մտորումների ոլորտն առավ ժամանակի մեծ անդրադարձումները և դարձավ դարաշրջանի բանաստեղծը՝ այս հասկացության և՝ գորական-գեղարվեստական, և՝ քաղաքացիական նշանակությամբ: Գեղագիտական իր հանգանակը Սևակը ճնակելու է դեռևս «Անմահները հրամայում են» գրքում՝ «Կյանքին նայել միայն բարեկ մեկնարանել Սևակի պուտակիայի ֆիզիկական ու քաղաքացիական անհամարանը»: Այս տեսանկյունից միայն կարելի է մեկնարանել Սևակի պուտակիայի ֆիզիկական ու քաղաքացիական բարտեզը: «Եղիցի լույս» գրքում Սևակի ներաշխարհը, ցուցադրում է անհամաշափություններ, լույսերի ու ծագումներ, սակայն դա բացառությի է այնքան, որքան մեծ տարածությունների վրա անխոսափելի է ուելեքի անհամաշափությունը, իսկ ալիքների անսահմանը տարերքը՝ օվկիանոսաներուն: Սևակը դեմ առ դեմ և ամրող հասալով է անկյուններ ու հովհանքական եզերներ, ուստի և արտաքին աշխարհի ազդակները կրում է իրենց անհնախիստ, անհամատեղ, անմերժաշնակ, հակասական գույններով ու շարժումներով:

Բանաստեղծն ասոված չէ, որևէն և արարող, բայց ասովածները նրանց կարգել են իրենց քարտուղար, որպեսզի բարգնանեն խորհուրդները տիրելութական: Այսպես

է Սևակը հատկանշում բանաստեղծի կոչումը: «Աստծո քարտուղարը» շարքում նա խոստվանություններ է անում, ինչ-որ տեղ գտնում բանաստեղծի ծնունդը՝ «փրկություն հայցող» այն երկուողի ավանդուվ, «որ ծով է նետում հավորդը մեռնող», կոչում նրան «ժողովրդի ինքնական ծառու» և «սուտը մերքող» ճշմարտության մունեւիլիկ: Բայց բանաստեղծները նաև նրանք են՝ «ութ հազար և ութ հարյուր տարի» ճառագայթային ախտով այդ հիվանդները.

Ովքեր մենակության մեջ

Միանգանեցից են ողջ մարդկության մետ նատուալ գրուցի:

Լոկ կրաք,

Ովքեր այս երկրագնդի պտույտն գգում են կրումկով՝ իրենց եվ արմբուիթիք աճումն են գգում իրենց ափերով...

Ճառագայթային այս ախտով էր հիվանդ Պարույր Սևակը: Նրա բոլոր գգայարանքները գործում են գերագույն լարումով, և բնազդական սուր ուեակցիայով, երևակայության բորբոք հասնում է հայտնատեսության («Ես՝ անվավեր խլիրտների թվացուց և մասնագետ նոգեհարցման»), փորձում վերծանել անքննելին («Ես՝ մեղինակ պարականու գրքերի, և չգրված օրենքների վերծանող»), գուշակել մեծությունների հարաբերական կախվածությունը («Ես՝ նոր գուշակ ըատ սովերի և շուրթի») և հավաստիանալ որպես արդարության ավետաքեր («Ես՝ այդ սոի պալների սքրագիր և ուշացող արդարության խմբագիր»):

Որպես մոտածող ու գեղագետն Սևակը բարդ երևոյթ է և անշուշտ հակասական: Նրա հայացքների սիստեմը երբեմն դեմ է առնում փակուղիների, անորոշ դեգերումների, վարանումների ու կասկածների: Սակայն Սևակը կյանքի փիլիսոփան է և ոչ նրա տարեկիրը, ուստի և նրա ներքին հակասությունները կարելի է բացառել միայն նոյն փիլիսոփայական տեսադրաշնուրի վրա: Սևակի գեղագիտական իդեալն ու եթիկական կոնցեպցիան պատասխաններ են որոնում արտարակցիայի ենթարկված կատեզորիաներում: Ահա թե ինչո՞ւ նրա գեղարվետառական մուսածողությունը առարկաները հանում է իրենց իրական լինելիությունից և ներքարկում այնպվոլիկ նշանակության, երևույթները դիտու

<sup>1</sup> «Ալուտուկան գրականություն», 1971, № 2, էջ 20—21:  
XXX

բնապատճելան մեծ տարածության վրա, ձեռք մեզնում բիրլիային և նորակերտում հոգու արժեքների հազարամյա ավանդները:

Սևակը զինված էր հասարակական ֆորմացիաների պատմական օրինաչափությունների վերաբերյալ գիտական աշխարհայացքով և խորապես նվիրված էր կոմունիզմի գաղղափարին: Այս իդեալի տեսակետից էր նա վերլուծում կյանքը, քննում իրերի բնությունը, բաժանում լույսերն ու առվերները: Այս իմաստով «Դիմակներ» և «Դարակեսի պարզները» շարքերը բանալի են տալիս բացահայտելու բանաստեղծի հայացքների ուղղությունն ու գեղագիտական կոնցեպցիան: «Դարակեսի հիմնը» բանաստեղծական մի ինքնատիպ էաքիզ է, որ Սևակը ուրվագծում է մեր հասարակության կենարյա պատմությունը: Պատմական հեռանկարի մեջ բանաստեղծը հպարտությամբ է խոսում իր մերնի անցած ճանապարհի մասին, սերունդ, որ դժվար փորձություններում իր լինելությունը հաստատեց բարոյական մաքրությամբ ու գաղափարական հավատում:

Մենք ծնվել ենք, աշխարհ եկել  
Ո՞չ թե թվայ — երևալու խարեւությամբ,  
Այլ լինելու՝,  
Այն լինելու, ինչ կանք իրոք:  
Մենք ծնվել ենք, որ մարդկության  
Հազար ու մի «Փնջու»-ներից գոնեն մենքի  
Հարցապերդ աշքում մինենք  
Մեր գոնեն մենք պառավանք  
Եվ դրանով գոնեն մաս-մաս վերաբարձենք  
Օտարացվող եռոյունը մեր մտքերի,  
Որ շամբեն սրանք այնպէս, կարծես խկոյս  
Չորսնում են ծծողական կոչվող թյուռ  
Եվ մեզ տրված մեծությունից  
Թողնում միայն մի ճմբրօված թղթի կտր,  
Որ կոչվում է «Ստացական»...

Սևակի գեղագիտական իդեալը որոնում է բանահան մարդուն: Իր սերնի հաղթանակը նա դիտում է որպէս բանականության հաղթանակ, այն բանականությունը, որ հերքեց երկնքի աստվածների առասպելը և հեգնեց եղի-

XXXII

րային կուռքերի ամենազորությունը: Բայց նույն բանականությունը երկրագննի մակերեսի վրա տակավին ենթակա է բռնադատության: Սևակի հոգու մեջ բեկվում է անհանգիստ, ամենօրյա հակասություններից ցնցվող մարդկության ճակատագիրը: Հակասությունների, կրքերի, նյութապատճ մըղումների աշխարհը խախտում է բանաստեղծի հոգեկան անդրբը, համակում նրան ծանր թափիծով.

Մի ժամերավոր քախիծ էլ հիմա  
Միմել է իմ մեջ, ինչպես անձակում,  
Եվ հողոտում է իմ եռոյունը:

Իրեն ու առարկաները դեֆորմացիայի են ենթարկվում, և բանաստեղծը փորձում է վերստին ստուգել նրանց կառուցվածքը, բացել երևույթի ու էության, արտաքինի ու ներքինի համաշափությունը, փարատել իրերի իոացիոնալ կակածությունը և կարդալ նրանց ճշմարիտ բնությունը.

Իրերի դեմքը:  
Իրերի դեմքը...

Իրեն ապրում են մի բոլորովին անծանոթ կյանքով,  
Լոկ իրենց համար:  
Մի՛միայն իրենց:  
Մինչդեռ մե՞զ համար  
Նրանք պարզապես քատրու են խաղում  
Հե՞նց որ, քանի դե՛ռ նայում ենք նրանց:  
Իսկ երբ չե՞նք նայում,  
Հենց որ չենք նայում  
Նրանք հանում են դիմակներն իրենց  
Ու ծաղրում են մեզ՝ լեզու համելով:

Իմացության հարաբերական ու բացարձակ սահմանները ինչ-որ մի տեղ դեմ են առնում անհասկանալիությանը և առիթ տալիս առեղծվածային ինչունների, որոնց հանդեպ անզոր է դառնում նույնիսկ բանականության հրաշքը՝ «հաշվիչ մեքնաներն» ու «ճշգրիտ սարքերը», չե՛ որ սրանք տակավին անկարող են չափելու սիրած աղջկա շիկնանքի «Ճերմամիջուկային բռնկումը», մայրական գգվանքի էներգիան, կարուի բաղադրությունը, հիասթափության գիծը և այն խորհուրդը:

XXXIII

• Ենք բերնովենյան խլությունն արդյոք  
Չի կապվում բնակ  
Այն ահագնացող պայթյունների հետ,  
Որ կատարվում են Բիմա աշխարհում  
Ֆէ վե՞ր աշխարհից:

«Ի՞նչ է սպասվում այս մոլորակին», «Ի՞նչ է լինելու արք  
աշխարհի հետ», այս տագնապալից հարցերի հանդեպ հու-  
մանիստ բանաստեղծը Էթիկան արդեն ցուցադրում է իր  
անզորությունը, և ապավիճում ինչ-որ ձանձրույթի ու հոգ-  
նածության.

Եվ ամենքս ենք Բիմա կիսով մենակ,  
Եվ ամենքս ենք Բիմա կիսով տխուր՝  
Հոգնած մեր իսկ բոլոր շարժումներից,  
Եվ ձներից ամեն  
Եվ մոքերից բոլոր...

Սևակի Էսթետիկական իդեալը, սակայն, գտնում է ելքը:  
Պատմության, դարերի փորձի մեջ բանականության հաղ-  
թանակը խորհրդանշող բանաստեղծը կառուցում է մի ու-  
րույն փիլիսոփայական սիստեմ և ազդարարում աշխարհի  
վերածնունդը: «Եղիցի լույս» շարքում բանաստեղծը լույսի  
ու խավարի նոր արարչության է կոչում տիեզերքը և «նոր-  
օրյա աղոթքով» ավետում նրա վերստին նորոգությունը.

Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի  
Են վախենում եմ,  
Ծա՞ն եմ վախենում  
Բյուրավոր ու բո՛յա հավատացյալից,  
Բյուրատեսք ու սո՞ւտ հավատացյալից:  
Եթե ասոված եք՝  
Փշեցեք նրանց բոլոր մումերը,  
Մարեցնք նրանց կամքեղթերն ամեն,  
Հանգցո՞ք նրանց շահերն այլազան,  
Որ... Եղիցի լո՞ւս:

Արարողի իրավունքով բանաստեղծը վերակերտում է մի  
նոր աշխարհ («Եվ նոր աշխարհ եմ ստեղծում Բիմա»),  
ներդաշնակ ու բարի, բարբառում մարդկային բանականու-  
թյան առաջին կապը՝ «Այք բեն», միացնում մարդկանց  
xxxiv

սուրբ հավատով և «շահատոն առավոտի» գվարք լույսի  
թարմությամբ ողջունում արեգակի ծագումը:

Լո՛յս, լո՛յս գվարք,  
Ծաղվի՛ր,  
Մաղվի՛ր,  
Թաղվիր այնպես և այնքան խո՞ր,  
Որ մենք շապրենք՝ ինչպես ձուկը  
Իր մշտամուր — անլուսամուս պետության մեջ,  
Որ քո հմուտ-ամենամուս շղթերի տակ  
Մածկամիտ ջուրն անգամ դառնա անկեղծ-հստակ,  
Եվ անաղմուկ քո զարկերից ու քո տաքից  
Չքրծված ամեն երազ խկույն ճաքի  
Ու վերերգի մինչն անգամ այդ ճաքոցով  
Այն եղանակը պարզ ու բարդ,  
Որ հնչել է աստվածների ծննդի հետ.  
«Լո՛յս, լո՛յս գվարք»...

«Ժղույնի քմայքները» շարքում բանաստեղծը մաղթանք-  
ներ է շնորհում աշխարհին, միացնում մարդկանց սուրբ  
մտերմությամբ: Հնչում է «բարև» աշխարհը ներդաշնակող  
բարության շաղկավը, ծագող արշալույսների հավիտնեա-  
կան առասպելները հաստատում «բարի լոյսով», բնության  
հարաշարժ և ինքնակերտվող նորոգումը պսակում «բարի  
աշողումի» մաղթանքով: «Բարի իրիկունք» արձագանքում  
է հեռավոր մտերմի կարուք, «բարի գիշերն» ավետում  
այնուո՞ս ու անհանգիստ հոգիների խաղաղությունը, երա-  
գանքների ու սպասումների տվյալանքը փարատում «բարի  
գալուստով», հավիտնեալույսն անդարձ ուղևորի անհայտը  
խաղաղում փիլիսոփայական «բարի ճանապարհով»:

Լույսի, բարության շոայլ պարզներով նորոգելով տիե-  
զերքը, Սևակը մաքրության է կոչում աշխարհը, այն մար-  
րությունը, որ ժպիտի ջերմությամբ է գեղեցկացնում, թար-  
մանում մեխակի բուրձունքով և լոկ մի այրութենով երկնա-  
յին ազդանշանի առեղծվածը թարգմանող սոխակի պարզու-  
թյամբ.

Մաքրություն է պե՞տք,  
Որ բարերն անգամ  
Ներքնասպես գգան

Մրենց երեսնի մողոկ վիճակում,  
Որ արտաշնչել բոլորը էլ... արև՝  
Եվ ո՞չ թե միայն անտես թթվածին,  
Որ մարդն է իրեն լավ զգա այնպես,  
Խնչպես մողողին՝ վստ տաճարում,  
Գույքը՝ հաճարեղ կտավի վրա,  
Եվ խաղալիքը՝ մանկան ձեռքերին...

«Նորից չեն սիրում, սիրում են կրկին» շարքում Սևակը ամփիփում է իր սիրո քնարերգության մատյանը: Նախորդ շրջանի պոեմներում ու բանաստեղծական շարքերում նա արդեն կերտել էր իր սիրո բիբլիականը: Այս նոր շարքում բանաստեղծը արտասանում է չառված խոսքը, որոնում անհայտ մնացած թթիողը, չափում նրա ներքին սեյսմիկ շարժումները, ձգուում է պարզ տեսնել այն, ինչը սովորական է բվում, բայց մեռն է անբացատրելի, ինչը բնական գրգիռով է արտահայտվում, բայց լուծում է «հոգեկան ժամանակի» անհայտ առեղջվածը.

Իմ ուզածք...

Իմ ուզածք կարծում եք թե մի մեծ բա՞ն է:  
Ես չեն հայցում երշանկություն,  
Զե՞.  
Տանչում է ինձ հասարա՞կ մի ցանկություն՝  
Պա՞րզ տեսնելու,  
Պա՞րզ տեսնելու ցանկությունը...  
Եվ ո՞չ միայն խավարի մեջ պարզ տեսնելու,  
Այլ մինչև իսկ կրքի պարին  
Պա՞րզ տեսնելու ա՞յն ստվերը,  
Որ հինավոր արևային ժամացույցի պարի պես  
Պարի օչի ժամանակը մեր հոգեկան՝  
Այշշտամին հաստատելով կամ ներքեղով:

Բանաստեղծը սիրով է շաղկապում տիեզերքը, առարկաների շարժումը գոյանում է սիրով, նայատակը սկիզբ է առնում սիրուց, ձգուումը ինքը սերն է: Այն, ինչ տիեզերական է և ծնունդ է առել բնության հետ, որպես հյուկեի ներքին բաղադրիչ, ինքնին հավիտենական է ու մշտահոլով, ուստի և «Նորից չեն սիրում, սիրում են կրկին».

Միշտ, ամեն անգամ պաշարում է թեզ  
Դոյցն զբացումը անձեղը ու անդուու,

XXXVI

Եվ նաևկանում ես, որ մարդն, ի վերջ,  
Նորից չի սիրում, սիրում է կրկին,  
Քանզի կա մթին մի կափայալություն  
Զոյի և արյան, հոգու և կրքի...

Բանաստեղծը ձգուում է սիրո մեջ որոնել հավիտենականը, գտնել այն իր նախնական, բնական թրթիռի մեջ. Առ թախանձում է սիրած էակին թողնել քնայքները, վանել իրենից այն, ինչ պայմանական է, միացնել 40-ը 4000-ից բաժանող տարածությունը և վերստին զգաց նախնականի ամենահայր մտերմությունը.

Բացմի՞ր:  
Բացվե՞նք,  
Որ արթնանա  
Մեր հոգու մեջ դարեր Շիրոն  
Մունքմությունն ամենահայր,  
Եվ մենք՝  
Բունած իրար նեռքից,  
Եւ ու ճամփորդենք ներիարի պես՝ դեպի այստեղ,  
Որուն էինք մի 40 կամ... 4000 տարի առաջ,  
Եվ այնտեղից նո՞ր սկսենք  
Շնանապարհը մեր նո՞ր սիրու,  
Վերադառնանք մենք... դեպի մեզ,  
Մենք... դեպի մեզ....

Բանաստեղծը նորից դիմում է բիբլիային: Մի ժամանակ Սուլամիթան էր անձնավորում սիրո իր տեսչանքը, այժմ նա որոնում է Մարիամին՝ որպես սուրբ զգացմունքի և հավերժական ձգուումի տիպար: Ու նա թախանձում է Մարիամին՝ սփոփել իրեն, խաղաղել իր ալեկուծ եռլրյունը հոգու հաշտությամբ.

Դժգոհությունից ես շա՞տ եմ դժգոհ:  
Օգնի՞ր ինձ, Մարիամ,  
Եվ ասեմ ինչո՞վ.  
Բարեխոս եղիր ի՞մ և ի՞մ միջն,  
Որ բան ավարտվի ինքնանաշտությամբ:

Ես խոռվել եմ նաև աշխարհից.  
Ե՞կ ու վերստին հաշտեցրո՞ւ դու մեզ,  
Թե չէ ես այսպես ապրել շեմ կարող:

XXXVII

Պարույր Սևակը նաև բանասեր-հայագետ էր: Մի հանգստանք, որ առանձնահատուկ նշանակություն է ստանում նրա անհատական կարողություններում, դա հայոց լեզվի հմուտ իմացությունն է: «Նա գիտեր մայրենի լեզուն ո՛չ միայն գեղարվեստորեն, այլև գիտականորեն, գիտեր նրա պատմությունը, կառուցվածքը, զարգացման օրենքներն ու օրինաշափությունները»: Դասական գրաբարին, միջին հայերենին, արևելահայ և արևմտահայ գրական լեզուներին նա տիրապետում էր կատարելապես, որը նրան հնարավորություն էր տալիս անդրադառնալու հայագիտության ամենատարբեր հարցերի, տեսակետներ առաջադրելու ամենատարբեր խնդիրների վերաբերյալ: «Բաց նաև ակադ բառարար կազմողներին», «Հայ լեզվի մաքրության մասին», «Պահանջներ և հարստացնենք մայրենին», «Արժեքավոր, թե՝ խոտեի դասագիրք» և այլ հոդվածներում Սևակը արծարծում է հայոց լեզվի տերմինարանության, բերականության և բառապաշտի գիտական մշակման հարցերը:

Սևակի գիտական հետաքրքրությունները առավել արգասական եղան հայոց հին և միջնադարյան գրականության սոսպարեզում: «Հանձարեղ սիրերգներ», «Եղավ, որ լինեմ», «Թրի դեմ գրիչ», «Գրիգոր Նարեկացի» հոդվածներն ու «Սայաթ-Նովա» (1969), ծավալուն մենագրությունը, «Սայաթ-Նովան և միջնադարյան տաղերգուները» անավարտ հետազոտությունը ցույց են տալիս Սևակի խորիմացությունը հայ միջնադարյան մշակույթի բնագավառում: Գրականագիտական բացառիկ արժեք է ներկայացնում «Սայաթ-Նովա» ուսումնասիրությունը, որը հետազոտություննամասիրական ու գեղագիտական քննության է ներարկում հանձարեղ բանաստեղծ-աշուղի ստեղծագործությունը:

«Որքան Արևմտութքում, առավել Արևելքում, — գրում է Սևակը, — սկսած անհիշելի ժամանակներից, բոլոր դասերի ու դասակարգերի հասուն սերն էին վայելում ժողովրդական երգիները: Հունական ուսպատճերի ու ֆրանսիական տրությունների, գերմանական մայստերգինգներների ու կելտա-

կան բարդեթի արևելյան բահուսակիցներն էլ իրենց սրբաւորություն ու շերմ, սուր ու խայթիչ, ինչպես նաև արդար ու իմաստուն խոսքն էին տարածում սեփական երգ ու նվազովում մրցում էին իրար հետ ժողովրդական հանդեսների ժամանակ, հրապարակներում ու հասարակաց վայրերում, խրճիթներում ու պալատներում: Արևելյան համարյա թե բոլոր երկրներում էլ ուշ միջնադարում նրանք կոչվում էին մի շատ հատկամշական բառով՝ աշուղ, որ նշանակում էր սիրահար:

Հանրահայա է, որ սերն էր նրանց երգերի հիմնական մոտիվը: Հիմնականը, բայց ոչ միակը Այդ «սիրահարները» սիրահար էին նաև հշմարտության և արդարության, բարու և գլուխելիք: Ժողովրդի լեզուն ու բերանն էին նրանք՝ անարդարությունների և չարությունների: այն ժամանակաշրջանում, որ մի բառով միջնադար է կոչվում, բայց որ երկարաձգվեց հագարակամշակից ալեյի»<sup>1</sup>:

Այս տեսադաշտի վրա Սևակը լուսաբանում է Սայաթ-Նովայի ստեղծագործությունը՝ պատմական, հոգեբանական, փիլիսոփայական ու էսթետիկական հայարժեների միանությամբ, առաջադրելով սկզբունքներ ու ընկալումներ, որոնք գիտական կարևորություն են ստանում հայ միջնադարյան պոեզիայի ուսումնասիրության տեսակետից:

«Սայաթ-Նովա» մենագրությունն արդեն կրում էր գիտական մի առաջադրությութեան՝ որը պիտի ստիթ հանդիսանար մի նոր հետազոտության՝ «Սայաթ-Նովան և միջնադարյան տաղերգուները»: Այդ հետազոտությունը մնաց անավարտ, սակայն առկա հատվածները ցույց են տալիս, թե ինչպիսի խորակը կիտությամբ էր գրողը տիրապետում միջնադարյան պոեզիայի հանցությանը և ինչքան բարս և ինքնատիպ ձևով է ընկալում նրա ոգին ու արթեստը:

Սևակը բազմիցս անդրադարձել է հայ դասական և սովորական գրականության հարցերին, հոդվածներ ու հետազոտություններ նվիրել գրողներին, բնույթագրել նրանց սույն-

1 Թ. Սևակ, Սայաթ-Նովա, էջ 131—132:

Ժագործությունը: «Տերյանը պահանջում է», իսկ բնարեր, գուրյան Վահագնը» (Դուրյանի մասին), «Հայ նոր բնարեր, գուրյան հիմնադրին ու առաջին դասականը» (Պեշիկուաշլյանի մասին), «Սսպետորեն անկրկնելին» (Սիամանյոյի մասին), «Թումանյանի հետ», «Չարենցը և արդիականությունը», «Բանաստեղծունու սրտաբաց զրույցը» (Ս. Կապուտիկյանի մասին), «Գիրք լինելիության» (Վ. Խեցումյան, Շի մասին) և այլ հոդվածներում նա խոր և գիտակրանորդն ըմբռևած մեկնարանություններ է տալիս հայ գրականության անվանի դեմքերի սրենծագործությանը, առաջադրում ինքնատիկ տեսակետներ, բնորոշում նրանց արվեստի աշխանահատկությունը:

Բացադիկ հետաքրքրություն են ներկայացնում Սևակի հրապարակախոսական ու տեսական-քննադատական հոդվածները: «Անենաերշանիկ մարդը» (Լենինի ծննդյան 90-ամյակի առթիվ), «Ինչպես մի կաթիլի մեջ», «Դեպի մեծ ուղենիր», «Ազգային ոռմանտիզմը և իր մեկնարանը», «Ազգային սնապարծություն և ազգային հապարտություն», «Հանու և ընդդեմ «ուեպիզմի նախահիմքերի», «Քննադատությունն այլևս հավելված չէ», «Ինչը, ինչպեսք և որպեսք» և մի շարք այլ հոդվածներում ու ելույթներում Սևակը արծարծում է կյանքի ու գրականության, գրականության պատմության ու տեսության, գեղարվեստական ձևի ու բովանդակության, տաղանդի ու արդիականության խնդիրներ, հանդես բերելով հարցերի խոր ըմբռնողություն, ճիշտ կողմնորոշվածություն և ձևակերպումների ստուգվածություն: Արժե թեկուզ վկայակոչել մեկ դիտարկում, թե ինչպես է Սևակը հնամատեղում ազգայինն ու համազգայինը գրականության մեջ. «Անկարենի է չպատկանել որևէ ժողովրդի և դառնալ միջազգային: Եվ անկարենի է երևակայել որևէ ազգային մեծ գրող, որը չունի միջազգային արժեք: ԶԵ՝ որ սա նոյն ինքնակենսագրության ու դարի «հիվանդության պառումության», նոյն անձնական գաղտնիքի և արխիվային գործի հարցն է: Եվ ինչպես փոքր են մնում կամ բնավ բանատեղծ չեն դառնում այն օժուված մարդիկ, ովքեր իրենց անձնականը չեն հասցնում համընդիանուր հինձնության:»

XL


Թիշն նոյն ձևով էլ չի կարող միջազգային հեղինակություն վահել այն ազգային գրողը, որ իր ազգային ինքնակենսագրությունը չի բարձրացրել միջազգային կենսագրության<sup>1</sup>:

Բնությունը գարմանալիորեն շոայ կարողություններով էր ձևակերտել Պարուց Սևակի անհատականությունը: Նա ինքնատիկ և անկրկնելի էր որպես անձնավորություն, ինչ հանդուրժելի էր իրեն, անհականալի շեղում էր ուրիշների համար: Սևեռումների ու ծայրահեղությունների արտաքին արտահայտության տակ նա պահպանում է հոգու մեծությունն ու մտքի ներդաշնակությունը:

## ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՑԱՆ

<sup>1</sup> «Սովորական գրականություն», 1971, № 2, էջ 14:

**ԱՎԱՀՆԵՐԸ**  
**ՃՐԱՄԱՆԻՒՄ Են**



## ԱՆՄԱՀՆԵՐԸ ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆ

~~~~~

Նրա'նք, որոնց հետ ես պայքարել եմ մարտում,  
Ապրել նահանջ, գրոհ և հաղթություն պայծառ,  
Նրա'նք, ովքեր սակայն, ավա՛զ, չդարձան տուն,  
Երբ աղետը կանխվեց, ու վտանգը անցավ,—

Նրա'նք — բազմակերպար, նրա'նք — բազմակղու,  
Տարբեր հողով, ջրով, տարբեր գույնով անզամ,  
Սակայն որոնց շրթից նույն գալիքն է խոսում,  
Որպես սրտագիտակ և հարազատ թարգման,—

Նրանք ներս են զալիս առանց բախմա՛ն, անձա՛յն,  
Երբ հյուրընկալ, ծանոթ իմ սենյակում  
Լոռությունը, իբրև անձեռակերտ արձան,  
Կիսաբաց գրքերի նիրհն է հսկում:

Երբ նստած եմ լինում հոգնատանց ու տինուր,  
Ինքս ինձնից դժոռն, չվաստակած,  
Երբ տենչած երդի տեղ՝ հովն է դուռս բախում  
Ու կորչում է, իբրև ծաղը ու կատակ...

Իբրև շերմ ներշնչանք և հղացում հարուստ  
Այցելում են նրանք հենց այդ պահին հանկարծ,  
Իրենց ներկայությամբ անխոս հրամայում,  
Պահանջում են ինձնից իրենց երդը չերգած:

Երգն այն, որ ծնվել է ինոնավ խրաժատում,  
Զերմել հայրենի տան հրդեհներից,  
Աչաղնացել նրանց հաղթական ու հատու՝  
Ողջ Եվրոպան շափած ոտնաձայնից...

\* \* \*

Նրանց փառքով, ինչպես իմով փառավորված,  
Աշխատած նրանց անցած ճանապարհին՝  
Ես ապրում եմ թեկուզ տենդով ամենօրյա,  
Անհախաղեալ կյանքով ու խնդությամբ գալիք:

Թեկուզ մաքրվում է, սիրտս սրբագործվում  
Նրանց թափած արյան անեղծությամբ,  
Եվ չծնված երգս նրանց արյամբ օծվում,  
Նրանց արյան նման դառնում է թանկ,—

Բայց դժվար է դառնում մարմին տալ այդ երգին,  
Անժահության երգին տալ հնչյուն ու բարբառ,  
Եվ ես տվայտելով՝ մոայլվում եմ կրկին  
Անդորության տանջող գիտակցությամբ:

Իսկ այդ պահին նրանք այցելում են զվարթ.  
Ինչպես հաղթանակած մարտից հետո,  
Եվ հայացը՝ ժամանակակից մարտից համար  
Փարատում են հոգիս կասկածներից պղտոր:

Ասես ասում են ինձ եղբայրորեն զվարթ.  
— Եղիր նույնքան համառ, որքան մարտում,  
Մի՛ վարանիր, ընկեր, մի՛ երկմտիր բնավ,  
Այլ կերպ չէինք հաղթի և չե՞ն հաղթում:

Զգա շունչը դարի երակներով՝ արյամբ,  
Մեր արյան պես եղիր վառ ու անմեռ,  
Հիշի՛ր, որ միասին մենք փրկել ենք համայն  
Աշխաբհի բախտը և կփրկենք գեռ:

Հիշի՛ր և փա՛ռք տուր մեզ, ընկածներիս բոլոր,  
Փա՛ռքը երգիր նաև ապրողներիդ,  
Եղիր երգի մեջ էլ, ինչպես մարտում՝ հերոս,  
Սիրի՛ր, բայց թշնամուն մտարերի՛ր:

Երգիր խրո՛խտ ու վե՛հ, ինչպես մարտի պահին  
Եվ փիսրո՛ւմ՝ տուն հղված նամակի պես,  
Եվ որդուն սպասող մոր պես մեղմ ու բարի,  
Եվ զինվորի նման պարզ ու անկեղծ...

Երգի՛ր, բայց կովե՛լը... շմոռանա՛ս, ընկե՛ր,  
Այդ են մեռածները...

Այստեղ ահով  
Ընդհատում եմ նրանց այս խոսքը բոցարյուն,  
Եվ գոշում երդումի նման հանդիսավոր.

— Ո՛չ, այդ անմահներն են հրամալում,,

25. I. 46

Երևան

## ՄԵՐՈՆՔ

Այդ բառը արդյոք ե՞րբ ծնվեց կյանքում: —

— Դուցե այն պահին, երբ անակնկալ  
Վերեկց յի արկ աննկատ ընկավ  
Եվ անմեղ խաղով տարված մի մանկան  
Սպանեց մթնում:

Դուցե այն պահին, երբ վառվող մի տուն,  
Զայրելու համար տունը դրացի,  
Սեփական ցավի մոխիրը սրտում՝  
Հրի շշուկով շշնչաց տրտում.  
— Այդ օտարներն են, ոու զգուշացի՞ր:

Եվ գուցե այն ժամ, երբ թշնամին ժանտ,  
Հարրած իր արյամբ և մեր բերքերով,  
Նահանջի մատնեց մեզ ծանր մի ժամ  
Եվ այրված տունը դրացուն ասաց.  
— Դեռ կդա՞ն մերոնք...

28. III. 47

ԵՐԿԱՆ

## ՀԱՐԱՉԱՏՆԵՐ

Հարազատնե՞ր,  
Ես չմեռա, ես մնացի նորից կենդան,  
Ես ապրեցի ձեզնից հետո...  
Հարազատներ, որ թաղված եք մայր հողի տակ,  
Հարազատնե՞ր:

Ես տեսա այն, ինչ դուք տեսաք —  
Դեմքը մահի,  
Բայց ընկնելով անժամանակ,  
Դուք չտեսաք՝ ինչ տեսա ես —  
Մարտից հետո եկավ ապրի՛լ, եկավ Մայի՛ս,  
Եկավ Մայի՛ս ու հաղթանակ:

... Հարազատնե՞ր,  
Ես ի՞նչ երգով ձեզ ետ կոշեմ,  
Ի՞մ զինվորի ձայնը խուզ է, մինչ սիրտն է խոր...  
Հարազատնե՞ր,  
Կրկին ստեպն է կանաչել,  
Որ խեղդվել էր թնդանոթի թանձր ծխով:

Կրկին հիմա խարտիշաճեր կազակուհին,  
Ծրչելով նույն ստեպներով,  
Հանկարծակի հիշում է սուր կատակ մի հին,  
Որ ձեզանից մեկն է ասել նրան մի օր,

Ու ինձ նման՝

Չի իմանում ժպտա՞», թե՞ լա...  
Եղ շանջում է միմիայն.

Հարազատնե՞ր...

30. V. 47

Երևան

## ԼԵԳԵՆԴԸ

Նա ծնվել էր այնտեղ, ուր կան լեռներ ժայռում,  
Ուր քարափներ, կիրճեր, անսառներ կան,  
Ուր ամեն քար այնպես մտերիմ է, ծանոթ,  
Ամեն խութ՝ ժպտադեմ, ամեն թուփ՝ բարեկամ:

Ուր միակ թշնամին զարնան սելավն էր ժանա,  
Որ սրբում էր — տանում զրազացը հացի,  
Զթողնելով ձորում ուրիշ այլ մի նշան  
Քարաշեղից կախված նավախելից բացի:

Նա ծնվել էր այնտեղ — լեռնաշխարհում հայոց,  
Ժայռաքարից կերտված մի հին տնում,  
Բայց մարտնչեց, ընկավ — ընկավ իբրև հերոս  
Ռուսական անափ տափաստանում:

Նույն հեղեղն էր վայրի, նույն սելավը դաժան,  
Որ ուզում էր ողջը սրբել, քանդել՝  
Հեռավոր թեղինից մինչեւ Կովկաս հասած,  
Հեղեղ, որ ո՛չ ջրով, այլ արյամբ էր հորդել:

Նա մարտնչեց, ընկավ անափ տափաստանում,  
Ուր քար չկա և ուր հողն է ավագ,  
Որ այստեղ, քարաշատ, ժայռոտ Հայաստանում  
Նրա շրազացը հայոց ցորենն աղա...

Հայոց ցորենն ողս, աղա հատի՛կ-հատի՛կ,  
Առատ — սաևպների ավազի շափ,  
Եվ ջրերի՛ն, ժայռի՛ն, նավախելի՛ն պատմի  
Նրա կյանքի մասին... արդեն լեզենդ զարձած...

24. I. 47

Երևան

## ՈՐԴԻՆ

Նա անգո՛վթ էր կռվում, գոտեմարտում՝ դաժան  
Մոլեգնորեն էր նա ոսոխներին ջարգում,  
Թշնամու գեմ շուներ խղճմտանքի նշան,  
Ու բարովթյան նշույլ շուներ սրտում։

Եվ նա մի օր ընկավ մահով հերոսական,  
Թշնամու շարքերում — մեր դիրքերից հեռու...  
Սակայն մահից հետո նրա մայրը, երկա՛ր,  
Գեռ շարունակ որդուց նամակ էր ստանում...

... Պառավն ինչպե՞ս զգար, ո՞նց հասկանար արդյոք,  
Որ զինվորը դաժան, նո՞ւյն իր բարի որդին,  
Գոտեմարտից առաջ իր սեփական ձեռքով  
Բացիկներ էր գրել ու նամակներ անթի՛վ...

Եվ մինչ ուրախության զուալ իր արցունքով  
Սփոփովամ էր մայրը, որ ապրում է որդին,  
Ռուս մուժիկ մի ծեր, դողդողացող ձեռքով,  
Վշտի արտասուրը քթարմատին,—

Սրարների վրա նո՞ւյն հասցեն էր գրում,  
Միայն... միշտ դնելով նոր ամսաթիվ...

II. IX. 47

Երևան

## ՀՐԴԵՇՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Ես բոցերի լեզուն չեմ մոռանա բնավ,  
Հրդե՛ային քառի հրե լեզուն,  
Երբ երկինքը իր լայն անեղբության վրա  
Փոխանցում էր խոսքեր հասկիրճ ու սուր:

Մարտի թոհ ու բոհում, շառափի մեջ կովի,  
Երբ խոսքն անկարող էր, անզոր՝ լեզուն,  
Երբ ֆնդանոթն անզամ իր որոտով հեռվից  
Աշխե խոսո՞ւմ էր պարզ, այլ կակազում:

Երբ նահանջում էինք մենք մի ծանր պահի  
Եվ սկսում էին շան պես հաշել  
Թշնամու զենքերը, որ մեզ մատնեն ահի,—  
Երկինքը հայտնում էր. «Կանգնե՞ք, քաշե՞ր»,

Այդ՝ մի գյուղ էր գուցե—կերոնի պես այրված,  
Գուցե մի գործարան՝ քուրայի պես,  
Գուցե անտառ վայրի, գուցե մի թանգարան՝  
Իր գույների փայլի պերճության մեջ:

Այդ՝ հրդե՛նի խոսքն էր երկնի վրա լազուր,  
Հասկանալի, սակայն և անթարգիման,  
Հրի հրամանը, բոցի անզուսպ լեզուն,  
Անխախտ մեր դեվիդը՝ կամ կյա՞նք, կամ մա՞ն:

Իսկ երբ երթի փոշին լուսածիրի նման  
Արդեն թշնամական հորիզոնի վրա՝

Ելնում ու ծածկում էր ամենայն ինչ,  
Ազդարարում էր նա — ռԱռաջ, դեպ ինձու:

Եվ երբ անցնում էինք բաղաքներից-բաղաք,  
Մեր հաղթության ուրախ ժխորի մեջ  
Նա մի վերջին անգամ հորիզոնում շողաց,  
Կայծագրեր. «Դադա՛ր: Հաղթություն, Վե՛րջ»:

Այդ՝ վերջին բոցի մեջ պատերազմն էր այրվում,  
Սոխրանում էր կովի մոլուցքը թեժ՝  
Իր իսկ հրախաղով իր մահն ափդարարում,  
Իր երկնքի ներքո, իր որդի մեջ...

Ես բոցերի լեզուն չեմ մոռանա բնավ,  
Հրթիռային խաղի թովիչ լեզուն՝  
Լենինի դամբանի հավերժության վրա,  
Հրապարակում. Կարմիր, Կրեմի շուրջ...

\*

Խաղաղության հուրը վառվում է մեղմուրախ  
Հիմա ամեն տան մեջ մեր աշխարհում:  
Մենք բոցերի լեզուն չենք մոռացել, բնա՛վ —  
— Զգաստությունն է նա թեղադրում:

Տ. Ա. Ը

Երեսն

## ԴԱՐԸ

Դարն այս, ուր ամեն ինչ գիտակցված է, օ՛, Աթոռ,  
Եվ ընթանում է միշտ ո՛չ ակամա,  
Ուր գոյության համար չկա միշտն ուղի,  
Ուր միմիայն պետք է ընտրել կամ ա՛յս՝ կամ ա՛յն, —

Դարն այս և ի՛մ մեջ է, և քո՛ մեջ է — մե՞ր մեջ.  
Նրա ծնունդն ենք մենք, նրա արյունն ենք թանկ,  
Եվ չենք կարող երբեք մեր հոգու մեջ մեղմել  
Ա՛յն, ինչ ժառանգել ենք մենք սրությամբ:

Թեթևության համար գարը մեզ չի ներում,  
Ինչպես որ չենք ներում ինքներս մեզ.—  
Սո՛ւր է գրված հարցը լինել-ցինելու...  
Մենք, որ լինելու ենք՝ լինենք ծա՞նր և մե՛ծ,

Եվ հասկանանք, սի՛րտ իմ, ինչ մե՛զ է վիճակվել:  
Արքան ծա՞նր է, դժվա՛ր, նույնքան թա՞նկ է, անգի՞ն,  
Եվ եթե մեզ պահենք թեթևամի՛տ, անգե՛տ,—  
Առա՞նց խնայելու դարը մեզ կապտակի...»

Տ. Խ. 47  
Երևան

## ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ

Ճերմակել է նորից աշնան դաշտը գեղին —  
Կրին ձյունն է իշնում անհունորեն խաղաղ,  
Ամեն աղմուկ ու ճիշ թվում է անտեղի,  
Անհարիր է թվում ամեն մի աղաղակ...

Սակայն գիտես, որ այս խաղաղության ներքո —  
Անհարազատ, օտար աշխարհներում,  
Ինքն իրենից հոգնած, ինքն իրենից դժգոհ  
Մի մութ փոթորիկ է գաղտնի հնում:

Գիտես, որ աշխարհում — քո աշխարհից հեռու,  
Որքան էլ որ ձմռան երկինքն է անկայծակ,  
Կայծակներ են սակայն պահվում մութ ամպերում,  
Որպես գալիք կովի բոցահարուց կայծհան:

... Սակայն գիտես նաև, որ ձմեռից հետո  
Իր հաղթական տոնով միշտ մայիսն է գալիս,  
Որ արկերով դաժան և վառողի ծխով  
Զի ընդհատվում երբեք շունչը դարի:

[1947]  
Երևան

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

### I.

Մավալվել ես, գարո՛ւն, ողջ աշխարհի վրան  
թացել ես ինքդ քեզ, բացվել ինքդ քո դեմ  
նման մի խոր երփի — անհղացում գրված —  
Որ միշտ նո՞ր է թվում, թեպետ անգիր գիտեմ:

Քո պարզեած պայծառ ու խոր խլրտումից  
Հողը հիմա ծա՞նը՝ գոլորշով է շնչում,  
Գետերն են գուրս ելել իրենց նախկին հունից,  
Մինչդեռ թոշունները՝ հին բներն են թոշում:

Թացել են ծառերը իրենց թերթերն ի լույս,  
Կանաչներն են ծփում անսահման ու անծիր,  
Եվ քո տաքուկ շնչից, քո ներշնչած սիրուց  
Աղբյուրներն են երգում նման քա՞ղցր լացի:

Մափալվել ես այսպես ողջ աշխարհի վրան  
Թացել ես ինքդ քեզ, բացվել ինքդ քո դեմ.  
Նման այն խոր երփին — անհղացում գրված,  
Որ ինձ նո՞ր է թվում, թեպետ անգիր գիտեմ...

### II

Սաղարթների վրա ծիծառներ կան հիմա,  
Գարնան շունչ կա հիմա, բուրմունք անուն,  
Սաղիկներն են լուս, իբրև մի խոր իմաստ,  
Որ զուալ աղբյուրն է լոկ թարգմանում:

Ու արոտներում խլրտում կա հիմա,  
Փողոցներում խայտանք ու եռուզեռ...  
Տարբեր հուզանք ունի հիմա ամեն մի մարդ,  
Բայց միենույն պահն է ողջը հուզել:

Վարարումով վայրի սիրտս լի՞քն է հիմա,  
Սիրտս լի՞քն է հիմա, լի՞՛ լալու շա՞փ...  
Եվ պահում է լեզուս մի անթարգման իմաստ  
Իր խո՞ր, հուզումնավո՞ր լուսիթյան տակ...

### III

Փողոցների վրա քո խայտանքն է կախվել,  
Լո՞ւ տարածվել ամեն մայթի վրա,  
Փակ պատուհանները քո տաք շնչին բախվել,  
Երկինքների են, գարո՛ւն, սրտի՞ս նման:

Այնպես քա՞ղցր է զգալ թեածումդ, գարո՛ւն,  
Այնպես քա՞ղցր է ապրել հուզանքդ պերճ,  
Որ խայտում է իմ մեջ իբրև բոսոր արյուն,  
Շարժվում սրտիս խորբում, երակիս մեջ:

Ես ուրա՞խ եմ, գարուն, ուրա՞խ՝ խնդալո՞ւ շափ,  
Բայց սրտիս մեջ ցավ կա՝ լուռ լացի՛ պես...  
Բախվել է քո շնչին պատուհանը իմ փակ  
Ու երկինքների վրա, գարո՛ւն, իմ սրտի՞ պես...

### IV

Գարո՛ւն, նույնն ես նորից, նո՞ւյնն է խայտանքդ անուզ.—  
Նորից զգում եմ ես ծանրությունը սրտիս...  
Դու հուզում ես, գարո՛ւն, իբրև ծանոթ անուն,  
Որ մոռացվել մի պահ, արդ հիշվում է կրկին:  
Բայց է սիրտս հիմա, գարո՛ւն, քո շնչի դեմ.  
Ե՞կ, ողողի՛ր սիրտս քո խնդությամբ պայծառ,

Ե՛կ, մոտեցի՞ր, որ քեզ մոտի՞կ զգամ, դիտեմ  
իբրև մեռած ընկեր՝ կրկին կենդանացած...

Այնպիս ծա՞նր է հիմա առանց նրա ապրել,  
Գարո՞ւն, քո խայտանքը այն աշխարհի վրա,  
Որի գարնան համար նա իր կյանքը գրեց՝  
Իբրև մի երգ սիրո — կարմիր արյամբ զրված...

Նո՞ւյն ես նորից, գարո՞ւն, նո՞ւյն է խայտանքը անուշ. —  
Նորից զգում եմ ես ծանրությունը սրտիս...  
Դու հուզում ես, գարո՞ւն, իբրև ծանոթ անուն,  
Որ արցունք է կորզում՝ երբ հիշվում է կրկին...

## V

Բայց այսուհետ կգաս, գարո՞ւն, ո՞չ այն հերթով,  
Որով եկել ես դու ձիգ դարերից...  
— Այսուհետեւ կգաս իբրև ո՞չ լոկ զարթոնք,  
Այս իբրև չեղած մի տարելից:

Կգա՞ս, կգա՞ս իբրև փառարանում ու փառք  
Նրա՞նց համար, որոնք դյուցազնորեն,  
Ներկա կյանքով հարուստ և գալիքով հապարտ,  
Նահատակվե՞լ են, մեռե՞լ, բայց չեն կորել:

Նրանց համար, որոնք ձմռան ցրտերի մեջ  
Գիտեին որ, գարո՞ւն, նորից կգաս,  
Որ չի կարող կյանքում լինել հավերժ ձմեռ  
Եվ մահվան դեմ կյանքը՝ թույլ ու տկար:

Նրանց համար, որոնք գիտեին, որ կգաս  
Եվ սինելով կյանքում փայլ ու ժաղիտ,  
Կլինես նրանց գործած հերոսության վկա  
Եվ կորստի համար, վերքի համար՝ սպի:

Կգա՞ս, բայց ոչ իբրև լոկ բնության զարթոնք,  
Ինչպես որ եկել ես ձիգ դարերից,  
Այլ թշնամուն՝ զենքով, մահին մահով հաղթող  
Հերոսների համար մի տարելից...

Կգաս, բայց ոչ իբրև լոկ նորարաց կակաչ,  
Ո՞չ իբրև վարդ, շուշան, «սիրի-սիրի».—  
Իբրև փառաբանում, հիշատակում կգաս,  
Իբրև Հաղթովթյան Տոն,  
Մայիսի ինն...

85. 1. 47  
Երես

## ԿԱՆՑՆԵՆ ՕՐԵՐՆ ԱՅՍ

Կանցնեն օրերն այս և մենք նրանց հետ,  
Մեր կյանքն ու դարը անցյալ կդառնան,  
Եվ ինչ որ մենք ենք անվերջ անրջել  
Մեր երազանքին մեր կյանքը խառնած,  
Ինչի համար մենք տառապել ենք խիստ  
Եվ պայքարել ենք ու ձգտել արյամբ,  
Կտրվի նրանց անարյուն, հանգի՞ստ,  
Կդառնա կենցաղ ու պարզ առօրյա...

... Ես տեսնում եմ պարզ — մանուկ մի արթուն,  
Թիքված պատմության իր գրքի վրա,  
Վերացած դեմքով իր դասն է սերտում:  
Մեր դարն է փոփել նրա աշքի դեմ —  
Գաղտնիքները՝ բաց և վերքերը՝ փակ...  
Նա մեղ տեսնում է մշուշի միջից  
Իր խոր աշքերի հայացքով վճիռ  
Եվ սարսում է զարմանքից մի պահ:  
Անուններն է մեր նա սիրով սերտում,  
Մտքում պահում է հին թվականներ. —  
Երբ շահել ենք մենք մի դաժան մարտում  
Եվ թշնամուն ենք մեր հողից վանել...  
Երբ մաքառել ենք հավատով անմար.  
Զանացի՛լ, տքնել կամքով մի խորին,  
Եվ կործանել ենք՝ կառուցման համար,  
Եվ կառուցիլ ենք անկործանելին...

Նա ապրում է մեր լարումը կրկին,  
Եվ հավատում է, և չի հավատում

Մեր այս օրերի պատմության գրքին  
Եվ գոյությանը, կյանքին ամենքի,  
Որոնց անունն է նա սիրով սերտում...

\*  
Անցյալ կդառնան մեր օրերն այս թեժ,  
Ու մենք — այսօրվա պարզ քաղաքացի —  
Կթվանք այն ժամ պաշտելի հերոս...  
Եվ մանուկներին, նորածիններին  
Կմկրտեն մեր պարզ անուններով...

Տ. VI. 47  
Երես

## ԽՈՀ ԶԱՅԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խ հաստիկիցներին

### I

Թարմությամբ է ջնշում մեր մարմինը կայտառ,  
Տանջում է մեզ հաճախ ավելցուկ կորովից.  
Մկանների խաղից սուր խտուտ են զգում  
Մեր բազուկներն առողջ...

Սիրում ենք մենք կարդալ  
Աղջիկների հայացքը խոռվիշ,  
Նրանց ժպիտները, որոնք անբառ բառով  
Զրուցում են մեզ հետ  
Երազներից, սիրուց և գորովից...

Քայլից մեր կորովի — մայթերը ժպտում են,  
Ժպտում՝ մերթ ծառերի կանաչ կատարներով  
Ու մերթ խանութների ցուցափեղկով մաքուր.  
Ժամի պես թոշում է, անէանում տարին,  
Մինչ պատրաստ ենք կառշել ատամներով  
Ուրախության անցնող ակնթարթից թեկուզ...

— Զահել ենք մենք, այո՛,  
Ինչպես որ շեն եղել տարեկիցները մեր  
Ո՛չ մի երկնքի տակ, ո՛չ մի դարում...  
Բայց լինելով առուց, երջանիկ և առողջ,  
Մենք անփուլթ չենք եղել  
Անգամ մեր մանկական տարիներում այն վառ.—

— Հանգահանքները մեզ հասուն են գարձրել  
Կարծես մեր տարիքից ավելի վաղ...

### II

Մեծ Հոկտեմբերն էր, որ մեզ սերմանեց,  
Եվ առաջին ճիշը,  
Մեր առաջին ճիշը  
Անլսելի գարձավ այն խոլ կոհվներում,  
Ուր թշնամին իրբև դժմատեսիլ անեծք  
Կախվել էր մեր անմեղ օրոցքների վրա,  
Մինչդեռ, իրեն բարի և փրկարար հուսովթը,  
Հնգձյուղանի աստղը  
Եր բախտի հետ նաև մեր կյանքն էր պաշտպանում...

Մենք առաջինն էինք, որոնց մկրտեցին  
Ո՛չ մյուսոնով թթված,  
Այլ ունույուցիայի ավազանում,  
Եվ առաջին բառը, որ սերտեցինք,  
Չեր կրկնված անուն,  
Որով մորը, հորը, եղբորն են անվանում.—  
Դեռևս բայլելով շորերթաթիկ,  
Մենք նախ շշնչացինք.

— Լենին պապիկ...

Մենք առաջինն էինք, որ մեր մոր ստինքից  
Ներծծեցինք կարծես  
Սոր կաթի հետ նաև հասուն խելք ու բնազգ,  
Ու մեր մանկությունը անցավ և՛ մանկաձե,  
Բայց յուրովի՛ այնքան,  
Այնքան տարբե՛ր սակայն,  
Որ հին սերունդներին թվար գուցե  
Ո՛չ մանկություն բնավ...

Ի՞նչ էր հեքիաթների կրտսեր ու քաջ որդիկն  
Նրա քեռու, իմ հոր և քո եղբոր առաջ...

Ի՞նչ էր հեղիտաթերի լուսավոր ու մթին՝  
Իրար միշտ հակառակ աշխարհների  
Ներհակությունը պարզ և հասարակ —  
Իրական աշխարհի ներհակության առաջ...

...Մեր խաղերն իսկ կարծես  
Զեվսած էին օրվա ահեղ անց ու դարձի  
Եվ իրական կյանքի ներհակության վրա,  
Երբ մենք փոշիներում նեղ փողոցի,  
Այգիներում բերրի, արոտներում անբերք  
Ո՛չ թե խաղում էինք «պահմացին»,  
Այլ «մարտնչում» էինք «քուրժուի» գեմ...

Այսպես մենք մեծացանք ու ապրեցինք կյանքում,  
Բայց դեռ շպիտեինք, թե ի՞նչ է «կյանք», «ապրել»,  
Երբ ահավոր մահը մեզ հանդիպեց. —  
...Տուն դառնալով «կովից», փոշիներով աարնոտա,  
Դեռ առաջին անգամ մինչ այդ մեզ անծանոթ  
«Ռուրախություն» բառը նո՞ր միայն հասկացած  
(Կոհիվ — խաղում տարած մեր հաղթության պատվին), —  
Ո՞վ չտեսավ արդյոք դառն արցունքի կաթիլ  
Իր հոր արեախիանձ քթարմատին,  
Ո՞վ չլսեց արդյոք հեկեկանքը իր մոր.

— Ինչո՞ւ  
— Մեռել է...  
— Ո՞վ...  
— Լենին պապին...

...Այսպես մեր հոգու մեջ կյանքը իրար խառնեց  
Մեր առաջին վիշտը և առաջին խինդը,  
Մեր առաջին վիշտը, որ մատներով քարե  
Կմձտեց մեր սիրտը... սակայն բերեց նաև  
Եվ առաջին միտքը.

— Ապրել ու պալքարել  
Ինչպես լենինն ինք...

### III

Իսկ նա պատվիրել էր նախ սովորել:

— Դպրո՛ց, ուսումնարան, գիրք ու հրա՛շք...  
Մեր աշքերի առաջ միանդամից  
Հանկարծակի իրեն դրսեռորեց  
Մի անծանո՞թ աշխարհ նո՞ւյն աշխարհի վրա:

Գալիքը մեր կյանքի  
Հեռո՞ւ-հեռուներից մեղ երեաց արդեն,  
Դրսեռորեց իրեն պարզ ու որոշակի,  
Երբ մեր առաջ կանգնեց անցյալի դեմ:

Մենք իմացանք արդեն,  
Որ քարն իր ծավալով է ջուր արտամդում,  
Ուստի հարկավոր է լինել ո՛չ թե թեթև,  
Այլ մե՛ծ, ծանրաբարո՛ և ծավալո՞ւն:

Մենք իմացանք արդեն  
Օրենքը հակաղարձ բաղդատության,  
Գու թո՛ւլլ լինես եթե՝  
Ուժեղ պետք է լինի չար թշնամին քո տան:

Մենք իմացանք նաև,  
Որ մենք ծնվել էինք, աշխարհ եկել  
Ո՛չ լոկ մեր մայրերի արզանդից մերկ,  
Այլ խավարից խարխուկ հին աշխարհի. —

Ուստի՝ նախ և առաջ մեզ օթեա՛ն էր պետք,  
Հարկավոր էր կերտել դաստակերտնե՛ր քարից,  
Հարկավոր էր կերտել գործարաննե՛ր քաղում  
Եվ քաղաքնե՛ր շինել պայծառ ու քաղմամբոխ,  
Քամել ու ամբարել բերք ու քարիք փարթամ,  
Որ այնուհետ միայն մեր բերանում լեզո՛ւն

Եկ մեր կրծքի ներքո արդարացի խանդով  
Մերը, ցանկությունը և տեսչանքը խայտար...

Եկ առաջին սերը մեզ շա՞տ ուշ այցելեց —  
Պատանության փակվող դարպասների առաջ.  
Քանզի կառուցման ու կերտման մոլուցքի մեջ,  
Աննախաղեալ մի նոր կյանքի համար  
Պայքարի դիրքերում,  
Կարծես ո՛չ ժամանակ և ո՛չ էլ ցանկություն  
Ունեցանք մենք՝  
Հույզերը անձնական,  
Մեր զգացումները տեսնել և դիտելու...

Իսկ մինչ այդ, մինչ այն —  
Նա մեր կրծքի ներքո միանգամից աճեց,  
Հսկայացավ իրեն առասպելի մանուկ:  
Բայց շատերը մեզնից  
Մեկ ուրիշի առաջ դեռ այն չէին բացել,  
Երբ անխուսափ դարձավ կամ այն կրկին գոցել,  
Կամ նրա հետ մեկտեղ և միասին —  
Մերթ այն իրեն ամուր զրահ հագած,  
Մերթ զրահի ներքո՝ մեր կրծքի տակ փակած,—  
Ելնել մեզ փրկելու շար օրհասից...

Ենգ թշնամին արդեն մեր դռանն էր հասել  
Խաղաղ մեր շենքը այրող իր առաջին ինքնաթիռով...  
Ու մենք լուր փակեցինք դասագիրքը մեր բաց,  
Թողած դպրոց, դասեր,  
Կիսատ թողած նաև խոստովանքը սիրո,  
Ելանք ի մարտ, զրո՞չ...

#### IV

Զահելությունը մեր  
Վրա հասավ կովի թեժ դիրքերում,  
Խրամատում խոնավ,

Մեր հայրենի տնից հաճախ այնքան՝ նեռու,  
Փրկության ու մահվան ակնթարթի առաջ

Նա ծովերում թրչվեց և շխեղվվեց հագիվ  
Ալիքներից գոռող և կատաղի,  
Դուրս ելնելիս բերած մեջքի վրա  
Ջրականի սպին, իսկ կոպերի վրա՝  
Քարացած մրմուռը օվկիանոսյան աղի. Ն

Թրչվեց, օ, նա թրչվեց և ցամաքում՝  
Քրտինքից ավելի իր արյունով,  
Եվ շորացավ եթե՝ նա շորացավ անգութ  
Թոցերից այն, հրից այն խոր հրդեների,  
Արոնք իր հայրենի տունն էին ճարակում...

Զահելությունը մեր...  
Գնդակն առավ նրան և խոցոտեց,  
Վառողի ծուխն անգամ  
Կարծրացավ կիսախանձ նրա թարթիշներին...  
Տանկը նրան ոտնեց  
Եվ արկերի անթիվ բեկոր-պատիճներից  
Կերպարանքը նրա  
Ա, այն է թե կարծես նոր ծաղկատար դարձավ,  
Ոչ այն է թե հանկարծ ընդմիշտ պեպենոտպեց...

Այս՝ տեսավ նա մահ, կործանում և ավեր  
Սպրեց անկում, արյուն և արհավիրք,  
Բայց ինքն իրեն երեց՝ բրբեք նա շղավեց  
Եվ ինքն իրեն փրկեց օրհասական ժամին...

#### V

... Այսպես, պատերազմի սարսափները ապրած  
Սպրած զրկանքների, լարման պահեր,  
Իրանց չեր դիմանա

Աւրիշ ոչ մի մկան, ուրիշ նյարդ ու զիզ, —  
Մենք բայլում ենք հիմա նորից առուց, շահներ,  
Մենք բայլում ենք հիմա  
Կեցվածքներով հպարտ և հայացքով վճիռ:

Մենք բայլում ենք հիմա  
Եվ աշխատում, գործում և երազում նորից,  
Եվ ժպտում ենք խաղաղ՝ նման մանկան,  
Ու պատրաստ ենք անգամ  
Մարող վերջալույսի երփներանգ գույներից  
Նորից գծել շահնել կնոշ ու աղջկա  
Կերպարանքներ թովիշ —  
Հանդերձներով շքեղ, երերածուփ...  
Ու պատրաստ ենք անդամ,  
Առանց հարցընելու վաճառման դներից,  
Նրանց համար գնել երկինքներ ու ասաղիք,  
Եվ դղյակներ՝ սիրո խորհուրդներով լեցուն...  
Այս, շահնել ենք մենք,  
Մեր մարմընով կայտառ, մեր սրտերով արի,  
Մեր աշխարհով, հողով, ապագայով.  
Զահել ենք մենք, սակայն և միւնույն սահին  
Կրած տառապանքով, մաքառումով, ցալով,  
Անցած և գեղ դալիք փորձանքներից  
Ավ կարող է ասել՝ քանի՛ հազար դարի  
Իմաստություն ու փորձ, զգոնություն մի սառն  
Եվ տաք բոցկլտումներ ու ժայթքումներ դիզած...

Դո՛ւ, որ դարեր հետո  
Փորձես պիտի կերտել մեզ արժանի արձան,  
Դո՛ւ, որ լոկ զրբերի անկյանք արահետով  
Կուգես մեր զեմքերը տեսնել պարզ ու պայծառ,  
Հազարամյակների փոշիների տակից, —  
Ուզում եմ քեզ օգնել, արվեստակի՛ց:  
Գե՛տք շն հղացումներ, պյուտեր տաղանդավոր,  
Սլացումներ ըմբոստ ու կեցվածքներ խրոխտ,  
Նույնպես անթեք գլուխ, համառ ծնոտ պետք չէ՛:

Աշակերտի նոման  
Դուք մեր դեմքը միայն... պատճենեցե՛ք  
Նա ամե՞ն ինչ կասի իր գծերով —  
Եվ այնքա՞ն հասարակ,  
Եվ այնքա՞ն անսովոր:

Պատվանդանի վրա  
Պետք չէ փորագրել ո՛չ մի անուն:  
Առանց այդ էլ պիտի մեզ ձանաշեն նրանց:

Ուրիշ այդ ո՛ր զարում,  
Ուրիշ ո՛ր աշխարհում  
Կա՛ր, կարո՛ղ էր լինել մի այսպիսի սերունդ —  
Հավերժորեն կայտա՛ռ, երիտառա՛րդ,  
Եվ միւնույն պահին՝  
Իմաստությամբ, փորձով, տառապանքով հարուստ... .

14-24. VIII. 47

Նավալու

16. IX. 47

Երեան

## ՄԵՐ ԲԱԽՏԸ



### ՏՈՒՆԸ

Հայրենադարձ հայերին

Ա.

Եվ Եփրատի ափին իմ տնակը այրվեց,  
Մի բուռ մոխիր դարձավ հիմքի վրա,  
Նրա միակ սյունը ծնկի նման ծալվեց,  
Եվ գերանը շարդվեց՝ մեջքի նման։

Զեղունը՝ Եփրատի եղեգներից անթիվ,  
Իբրև սկ սուր՝ մնաց սեմին փարված,  
Լոկ մի ելուն մնաց կիսակործան պատից,  
Աղոթող ձեռքի պես վեր կարկառված։

Շունը, շիմանալով այլևս ի՞նչ անի՝  
Ունա՞ց, քինով հաշեց երկնքի դեմ,  
Որտեղից նայում էր մի արյունոտ մահիկ՝  
Հրաշքով սպասվող փրկության տեղ։

Շունը ոռնա՞ց գեռ տաք մոխիրների վրա,  
Եվ Եփրատի ծանօթ եղեգնուտում,  
Իմ հայրենի քամին ցավով սուրե՞ց, նվա՞ց  
Աստանդական կյանքի երգը տրտում։

Բ.

Հետո ես փորձեցի տունս շինել գարձյալ  
Իմ հրդեհված հոգու մի բուռ մոխրով։—

Մերթ նեղոսի ափին, սֆինքսի աչքի տակ,  
Ում գաղտնիքից անդամ իմ վիշտն էր խոր։

Մերթ հեռավոր Հինդում, Մեռյալ ծովի հանդեպ,  
Ամեն մի ցամաքի, կղզու վրա —  
Դամասկոսից Թեյրութ և Թեյրութից Աթենք՝  
Ու Աթենքից մինչև Կալիֆորնիա։

Ես փորձեցի կրկին տունս վերաշինել,  
Թայց... հայրենի հողից, չըից հեռու  
Ողջն անապատ թվաց... Զո՞ւր էր տան հիմք դնել  
Անապատի փխրուն ավազներում։

Թայց ի՞նչ... Դարձի ճամփան փակ էր, երկիրն՝ հեռու,  
Ամեն քայլափոխում — սահմանագիր,  
Ամեն ծովի վրա — կապույտ փականք՝ նեղուց  
Եվ բաղարից — բաղաք՝ նոր անձնագիր։

Իսկ ես մի մարդ էի անտո՞ւն, անանձնագիր  
Անանձնագիր մի մարդ, պանդուխտ մի հայ,  
Իր մարմնից զատված մի գեգերուն հոգի՝  
Անկարող իր մարմնին կրկին դառնալու...»

Գ.

Դադարել էր հոգիս հավատալուց վաղուց  
Ամեն մի հրաշքի՝ այն օրից դեռ,  
Երբ սեփական տան մեջ, իր հայրենի հոգում  
Ամբողջ մի ժողովուրդ սրով մորթվեց։

Երբ մազապուրծ սրից և մահերից ամեն,  
Պանդխտելով ափեր խորթ ու հեռու,  
Վերադարձի հույսը երկնքի շափ անմերձ  
Եվ փրկության հուսը միֆ էր թվում։

Բայց... արդ տուն եմ շինում փեշերի տակ Յասյաց.

Հրազդանի ափին, Արտաշատում...

Նա հառնում է իբրև պատանեկան հասակ,

Իբրև վերադարձած երջանկություն:

Նա հառնում է այստեղ... Զեմ հավատում բնաւ

Որ իմ տան դեմ այսպես երջանկորեն խրոխտ

Մասիսներն են կարծես ձուլվում եղբոր նման,

Մասիսները — վաղուց դատված օտար թրով...

Նա հառնում է այստեղ — պապերիս այն հոգում,

Ուր ամեն ինչ այնքան նո՞ր է, աննախադի՛պ,

Որի վրա բախտի արեգակն է շողում

Հին աշխարհի մթան ու խավարի հանդեպ,

Որ թանկ է ինձ համար և հայրենիք իբրև

Ե՛վ օթեան իբրև նոր մարդկության...

— Այդտեղ է դարավոր երազն իմ առնում կերպ,  
իմ մայր Հայաստանում, Կրեմլի լույսի տակ...

Տ. Ա. 47

Երևան

## ՄԱՅՐԱՆԵՐԸ

Ջրայ ուս ճակատուին բարեկամու եւս

1

Հիշո՞ւմ ես,

Մարտերի և արյան մեջ մեր իսկ,

Երբ մենք մեր հողն էինք

Ճենքով, ատամներով ու արյամբ պաշտպանում,  
Հիշո՞ւմ ես,

Վարձատե այն պահերին,

Մազմադաշտն էր երբ գեթ մի վայրկյան լոռամ

Ահեղ զոտեմարտի աղմուկներից դաժան,

Գտնում էի պահեր, որ բեզ պատմեմ նորից  
Իմ աշխարհի մասին արևաշատ...

Սա՞ է իմ քազաքը — երիտասարդ և ժեր —

Որ ծնվել է թեպետ ձիգ դարերի հեռվում,

Բայց հասակ է առել, հասունացել ինձ հետ,

Հասունացել ինձ հետ՝

Հոկ մի քառորդ գարում:

Աս' է Աքովյանը,

Այն փողոցը ահա,

Ուր ամեն սալաքար,

Եվ ասֆալտի փոշու յուրաքանչյուր հատիկ

Հազար գազոնիք ունի իր շերտերում պահած,

Այս՝

Թեկուզ մաշված այս քարաշեն պատից

Դու գարող ես թագել պատմովյանը մեր ողջ՝

Մընշաղից անտիկ

Մինչեւ այս օրերը հարատեսց...

Նայի՛ր, ահավասիկ,  
 Տե՛ս — նա՛, որի մասին  
 Պատմել եմ քեզ այնքան ստեպներում անլեռ...  
 Սա՛, այս լեռը մթար,  
 Որին մենք կոչում ենք Արարատ կամ Մասիս,  
 Սա, որ երկիեղկված է, ճեղքված երկու մասի...  
 Խորհրդանշանն է սա մեր գոյության,  
 Եվ ոչ թե սոսկական ձյունոտ մի լեռ.—  
 Այսպես երկու մասի  
 Ճեղքված էր մեր սիրտը և հայրենիքը մեր...

## II

Մենք հայ էինք ծնվել այս երկնի տակ, այստե՛զ,  
 Մինչդեռ երկնքի տակ հայրենիքը հայի  
 Ամեն ծնվողի հետ ստանում էր նոր տեսք,  
 Փոփոխվում էր ընդմիշտ նա ամենի  
 Այն թշնամու ձեռքով դաժան ու բազմագեմք,  
 Որ մերթ մի արքա էր ասորական,  
 Եվ սեպի պես մեր սիրտն էր մխրճվում,  
 Կրծում մեր քարերն իսկ՝ սեպագրով...  
 Մերթ մի հույն էր անտիկ —  
 Մագաղաթի ետև թաքցըրած իր թրով,  
 Մերթ փղերով զինված կրակապաշտ պարսիկ,  
 Որը քանի՛ անգամ ջանաց մոխրացնել  
 Մեր ինքնության հուրը իր ատրուշաններով...

Դարեր ի վեր այգական բզկըտեցին նրանք,  
 Կլեցին մեր հողը, մեր հայրենին,  
 Առան մեր օջախից անձողներ ու կրակ,  
 Այրեցին մեր տունը նույն այդ հրով,  
 Եվ նույն հրդեհների — որպես կուռքի առաջ -  
 Գլխատեցին նրանք մեր հայրերին,  
 Երկիրը դարձնելով մի անտերոն այրի...

Բղկտված ու բոկոտ, ծվատված ու վհատ —  
 Արյուն էր ծործրում նրա ամեն քայլից.  
 Արյո՛ւն, որ իր հետքը, իր դրոշմն է թողել  
 Մեր անցյալի՛, անվա՛ն, մեր պատմությա՛ն,  
 Եվ արնագույն մեր այս տուֆ քարերի վրա...

Բայց վերջում էր բախտը պահել սարսափելին.

Վերջում արևելյան մի բռնակալ  
 Բավական չէ նրա բարիքները տիրեց,  
 Բավական չէ նրա բորբ արյունը հագավ,  
 Իբրև սովորական բորբ ծիրանի, —  
 Մի գիշեր էլ հանկարծ՝  
 Ննջող ներքինու պես կեսպիշերին զարթնած  
 Օշարակի, օ՛, ո՛չ — ալ արյան ծարավից, —  
 Ուղեց մորթել սղջին, ջարդել և սպանել...

Ո՞վ է հարցնում՝ ինչո՞ւ. —

Թրովչետե նրան, այդ սուլթանին,  
 Տերովթյունը իր ողջ —  
 Բալկաններից Աթենք և Աթենքից Հալեպ,  
 Եվ Հալեպից Մասիս — թվում էր մի հարեմ,  
 Ուր կարող էր շրջել կեղտոտ ու տարփալից,  
 Ուր կարող էր տիրել և սպանել...

Այդպես մի խոլ գիշեր  
 Նրա կնքահայրը — գերմանական արքան,  
 Իր մուսուլման սանին հասկացրեց,  
 Որ Հայաստանն, իբր, վեհափառ սովորականին  
 Կամեցել է... մտքով դավաճանել  
 (Ակնարկել էր արքան ոուս ջահել ցարին),

Կյանքո՞ւմ, թե մտքի մեջ — միւնույն էր արդեն  
 Եվ որոշվեց նրան,

Ի շահ Վիլհելմ կայզեր, ի շահ մեծ սուլթանի,  
Յաթաղանով մորթել...

...Այդ մենք էինք, ընկեր, այդ ժողովուրդն էր ի՞ն,  
Որին իր իսկ տան մեջ, իր սեփական հողում  
Մորթում էին մի խաչ և մի կիսատ լուսին,  
Մինչ միենույն պահին ամբողջ Եվրոպայում  
Դիվանագետները «ի ֆառը Հիսուսի»,  
«Հայկական հարցն» էին — իրրե մեծ պաս՝  
Անլուծելի պահում...

Այդ մեկն էր Մասիսի զույգ կեսերից...

Մյուս կեսը սակայն —  
Նույնքան անուժ, անհույս և վտանգված նույնքան,  
Ապաստանեց Կարմիր Հոկտեմբերին,  
Ի՞նչ իմանամ — զուցե հենց քո հայրը, ընկեր,  
Իր լայնարձակ ազատ ստեպներից  
Եկավ և իմ հորը, որ մեռնում էր, փրկեց...

Սակայն նայիր հիմա  
Նրան, որ իշնում է հանդիպակաց մայթից:—

Նա զավակն է նրա,  
Այն խեղճ հայի որդին,  
Որին սպանեցին իր անկողնում և կամ  
Խաչեցին սեփական իր տան պատին,  
Թաղեցին իր հերկած  
Գարնանային ցանքսի ակոսի մեջ դեռ տաք...

Իսկ սա — հանձնվեց իր անօգնական բախտին,  
(ինչ որ նրա մի զույգ ոտներն էին վտիտ),  
Եվ — մինչդեռ ես այստեղ  
Նորից հայ հողն էի հերկում արդար խոփով  
Եվ ակոսին հանձնում վաղվա հունձքը մեր թանկ, —  
Օտար և տոթակեղ երկնքի տակ

Անհույս պանդխտելով տարիներ ու դարեր,  
Ջալլամի պես նա իր ձուն էր զնում.  
Օտար անապատի ավագներում,  
Ավագներում և տաք,  
Եվ... անարեւ:

Մինչդեռ ես մա՛րդ էի, քաղաքացի և հայ,  
Նա մարդ չէր, այլ պանդուխտ —  
Մի բառ, որ չեմ կարող  
Քո մայրենի լեզվով ճիշտ թարգմանել...

Պանդուխտ էր նա երեկ:—  
Այդ՝ Մասիսն էր ճեղքված,  
Այդ՝ մեր բախտի աղետն էր դարավոր,  
Երբ ժողովուրդը մեր  
Ամենուր էր թեկուզ, ամենուրեք սակայն  
Ժողովուրդը չէր, այլ հայ, որ ահավոր  
Տառապանքի. վշտի ծանրությունը սրտում:  
Լոկ մի երազ ուներ անմարելի —  
Վերադառնալ ի տո՛ւն,  
Ի հայրենի՞ք...

Իսկ հայրենիքը մեր — նոր հայրենիքը մեր,  
Ար փոկած է ազատ այս երկնի տակ.  
Ար փրկված է ընդմիշտ, որ փրկված է հավետ  
Քոլոր ոստիններից և սրերից մթար, —  
Ընդունեց իր կորած, իր հալածված որդուն՝  
Հողը խնդությունից համրացած մի մոր պես,  
Իսկ զրերը խայտող, —  
Եվ փոխարեն նրա՝, և իրե՛նց տեղ նույնպես, —  
Կարկաշներով ուրախ և ինքնագոն ցայտով...

Այժմ հաշտ են թվում  
Մեր հողն ու երկինքը, մեր բախտն ու ապագան  
Մեր նոր և մեր միակ Հայաստանում,

Եվ ձուլված է թվում ճեղքված Մասիսն անգամ  
ինդությունից այս խոր ու բարձրանուն:

Այժմ քա՛ղցր է շրջել, մարտի ընկե՛ր, քեզ հետ,  
Երջել իմ հայրենի այս աշխարհի վրա,  
Եվ հացի հետ նաև քեզ հետ սիրով կիսել  
ինդությունն այս վարար...

Շրջել խնդությունից շիկնած երեանում,  
Այգիներում մեր ճոխ, մեր արտերում անափ՝  
Գալիք սպասումի երազներով հարուստ  
Ու հույսերով կանաչ,

Շրջել Մասիսների հայացքի տակ հողե,  
Այս ներգաղթած հայի աշքի առաջ,  
Որ փրկված է ընդմիշտ արհավիրքի հողմից,  
Եվ ընկե՛ր իմ, քեզ հետ Ռուսիային հղել  
Երախտապարտ խոսքեր՝  
Սաղկած Հայաստանի, փրկված հայի  
Եվ մտախոհ մեր այս Մասիսների կողմից...

28. XII. 46  
Երևան

## ՎԵՐՋԻՆ ՓՈՍՏԻՑ

Բաց եմ անում օրվա լրագիր-թերթերը.  
— «Հեռագրեր», «Հուրեր» և «Վերջին ժամ»,  
Նորից հաղորդումներ «Վերջին փոստից»:

— Ամերիկացիք անվերջ  
Զինում են թուրքական և հումաց բերդերը,  
Արյան մեջ ճողիկում է ինդոնեզիան,  
Գներն են բարձրանում Անգլիայում սաստիկ:  
Ֆունտ ստերլինգն այստեղ  
Ճգնաժամի պարագ ժանիքների ներքո  
Բղկտվում է արդեն,  
Մինչդեռ Ելլոպայի ավելի քան կեսում  
Ահազանգի պես գոռ  
Հնչում է զնգոցը զոլարների...  
Ամերիկացիք իրենց երկիրն են լրտեսում,  
Որ բաց անեն ատյան  
«Անհնազանդ անձանց» գոյության դեմ...  
Գյորգել է գովկած «դեմոկրատիան»,  
Ել զուապ, ներողամիտ մի ժայիտով  
Կանգ է առել լինչան դատաստանի հանդեպ...

Իսկ ատոմյան ոռումբը,  
Որով կամենում են ահաբեկել, անդարձ  
Թաղել նոր խաղաղված աշխարհի հանգիստը,  
Իսկ նոր պատերազմի ուրվակա՞նը...

Փակում եմ թերթերը զայրույթով մի արդար.  
— Լսեցեք դուք, միստը,

Լոեցե՛ք դուք, միստըր,  
Բավակա՞ն է,

Ճիշտ է, մեր մարդկային բնությունը հաճախ  
Կարծես մոռացկոտ է,  
Մի՛ մոռացեք սակայն, որ խոսում է ձեզ հետ  
Պատերազմում հաղթած ուղմիկը  
Եվ ո՛չ թե վախկոտը:

Մի՛ մոռացեք սակայն,  
(Այստեղ մոռացումը լուրջ վտանգ է),  
Եվ հիշեցե՛ք, եթե մոռացկոտ եք,  
Որ այս՝ նա է խոսում,  
Ում հաղթական ձայնի արձագանքը  
Դեռ չե մարել այնուեղ —  
Գոթական շենքերի կամարների տակ սուր...,

Մի՛ մոռացեք սակայն,  
Որ այս՝ նա՝ է խոսում,  
Որի ձեռքով վառված թեժ խարույկը  
Տաք մոխիրի ներքո մխում է լուս,  
Եվ պահպանում է դեռ կայծեք հրի  
Սաքսոնական թալլուտ անտառներում,  
Ալպիական լեռանց կատարներին:

Այդ հիշելով, միստըր,  
Մոռացե՛ք ատոմյան ձեր արկերը,  
Մոռացե՛ք արկերը, բավակա՞ն է...  
Մենք, որ պատերազմը  
Իր ողջ կենդանությամբ ճաշակել ենք,  
Հաճույքով շենք դիտում  
Կրկին մարմնավորվող նրա ուրվականը...

Ընդունեք այս, միստըր,  
Ո՛չ թե սպառնալիք,

Այլ իբրև պարզ նոտա նրանց կողմից, որոնք  
Մաքրեցին աշխարհից գերմանական արնոտ

սվաստիկը...

Ընդունեցեք նաև այս խոսքերով՝  
Հարկ լինելու դեպքում կրկին մարտնչելու  
Եվ հաղթելու մեր վառ հավաստիքը...

17. II. 47  
Երես

## ՔԱՐՏԵԶԻ ԱՌԱՋ

Ահա քարտեղն իմ դեմ —  
Հողագունդը համայն,  
Որ շգիմտես ինչից, ինչ խոլ ուժից, ահա  
Սեփվել, տափակվել է իմ տան պատին.  
Եվ իմ մատն է շարժվում նրա երկայնքն ի լայն,  
Քաղաքներ է մտնում նա բազմաթիվ.—  
Չի' մոտենում ոմանց,  
Կարծես թե ինքն իրեն շանարգելու համար,  
Իսկ ոմանցից հեռու,  
Երբեք հարգ ու պատիվ,  
Մի պահ ակնածանքով անշարժանում...

Ահա քարտեղն իմ դեմ —  
Սարդոստայնի նման  
Սարֆած խաշմերուկներ ու գծերի հանգույց,  
Ուր ամեն գույն կարծես ունի տարբեր իմաստ  
Եվ ամեն մի երկիր՝ ուրիշ մի գույն.—  
Մեկը դեղին՝ դեղնած կարծես ներքին մաղձից,  
Մյուսը գորշադույն՝ մոխրի նման,  
Մեկը դգույն, գունատ,  
Կարծես իր դարավոր ճնշումից ու քաղցից,  
Մյուսն՝ օտար փայլով շառագունած...

Այս քարտեղն է ահա իմ աշքերի հանդեպ,  
Ուր գույների, բոլոր երանգների ծովում  
իմ երկիրն է շողոսմ,  
իմ երկիրը բոսո՞ր, կարմրահանդերձ...

Եվ իսկապես, արդյոք չունե՞ն ներքին իմաստ  
Այս գույները բոլոր, նշաններն այս թաքուն:  
Բարբաջա՞նք է անմիտ,  
Սակայն ահավասիկ իմ աշքերի դիմաց.  
Գծով ցանկապատված այս վանդակում,  
Կարծես թե պահված է մի գայլ պոշատ,  
Որ թաթերը խրած Հոնոսից այն կողմ,  
Երախը լայն բացած,  
Դեպի մեզ է նայում վայրի ախորժակով:

Եվ գծերն այս...  
Մի՞թե ձեզ չեն ասում ոչինչ,  
Չեմ հարգում գծերն այն, շոշափուկներն այն չիւ,  
Որ երկիրն այս ծերուկ  
Տարածում է հեռու —  
Եռտլանդիայից մինչև Ցելլոն ու Հնդկալին,  
Նա, որ Լամանշից վեր,  
Սովային մի հոկա հիդրայի պես,  
Յցել է իր մեջքը շրերի մեջ վճիտ:

Եվ կամ թե սա, կարծես  
Լինի մի կենտ կոշիկ երկայնաճիտ  
(Մյուս թաթը իր հին փառքի հետ կորցրած),  
Որ թաղվել է կիսով ծովում Միջերկրական  
Եվ չի սուզվել սակայն...  
Է՛՛, թող և չսուզվի,  
Ու թող ապրի, մնա, որքան ինքը կուպի,  
Մյայն թե թող ապրի խղճով մաքուր  
Եվ անառիթ, կամ թե պատրվակով մի սուս  
Խաղաղ հարեանի տուն ձխուժի...

...Հենց այստեղ է հատվում այն ծովալին ճամփան,  
Որով կարող եմ ես ամենուրեք հասնել,  
Ամենուրեք, ուր որ սիրտս ուզիր,  
Բայց միտք ունի՞ արդյոք ձանձրույթից սիրտ մաշել,  
Անցնել մյուս ափը անծայր օվկիանոսի

Եվ այն հողը մտնել, որն իբրև պարզ կշնոր  
 Պանամայի քարակ կշռափայտից  
 Կախած իր հակամետ նժարներով երկու՝  
 Դոլլարների վարկով,  
 Եվ նորագյուտ արնոտ ատոմային արկով  
 Երկրագնդի բախտը կշռել է հավակնում...  
 Եվ ավելի լավ չե՞ անցնել փոքր-ինչ կուզիկ  
 Դարավանդը այս թեք, որից փոքր այն կողմ  
 Էզեյանն է նազում անփոփոքե՞ն անփոքթ...  
 Ցուցամատս է դողում լարման ուժից,  
 Առանձին չափով է այստեղ սիրտս խփում...

Սովն է կապո՞ւյտ, կապո՞ւյտ —  
 Նման մարուր խղճի՝  
 Հանցապարտ ափերի քարե սրտին փարված,  
 Իսկ մաքրաթույր ծովի երկու ափում,  
 Իբրև խարխուլ մեջիթ,  
 Մի երկիր է փոված...

Իր չըերով ծովը երկիֆեղկել է նրան,  
 Կիսել անհավասար երկու մասի,  
 Բայց այդ իրավունք է մի՞թե տալիս նրան,  
 Որ իր օրինակով միշահատի, կիսի  
 Մի հոգաշերտ (ծանո՞թ և հարագատ անուն),  
 Ուր ազգյուրն այս մասի  
 Այնտե՞ղ է լիճ դառնում,  
 Եվ այն, մյուս մասում միքոք առած գետը,  
 Չուզենալով օտար ծովերի մեջ թափվել,  
 Մոլորվում է այնտեղ ու ճահճանում...

... Օ, դժվա՛ր է ապրել մեզ արտասահմանում  
 Թեկուզ միա՛յն մատով...  
 Հեռվից իմ երկիրն է հմայռամ և քերում  
 Եվ ես, ասես ծանոթ արահետավ,  
 Կամենում նմ գառնալ, գառնալ նրա՛ն փարվել,  
 Փարվել նրան, իբրև արդարության,

Փարվել նրան, իբրև այս աշխարհի խղճի՝  
 Ցուցամատիս վրա թերած հայցումնագիր հաղար նոռա՛,  
 Բոլոր նրա՛նց կողմից, ովքեր չունեն կյանքում,  
 Այս՝ չունեն կյանքում այլ իրավունք,  
 Բացի քե՛զ, իմ երկիր, հավատալուց...  
 Թերած և այն հուզոր, և այն հո՛ւսը նաև,  
 Թե շտկվեն պիտի այն շեղումնե՞րն ամեն,  
 Որ դեռ մնացել են, քարտեզ, իբրև ու բիժ,  
 Իբրև բռնակալի յաթաղանի սպի  
 Քո անտարբեր դեմքի  
 Եվ... պատմության պղտոր հայացքի մեջ,

7-9. II. 47.  
 Երկան

## ԻՐԻԿԱՍՅԻՆ

### I

Երբ իրիկունն է վար իջնում, մութն է խայտում ալիք-ալիք  
և աշխարհի վրա խաղաղ,  
Լապտերները երբ վառվում են, ասես իրրե զգոնություն,  
Ու լուս թարթվում նվիրական սրտադողով,  
Մինչդեռ կարծես թե զգալով խոսքի կարիք,  
Խռովահույզ մի տագնապով սկսում է սիրտս խաղալ,  
Ես թողնում եմ թուղթ ու գրիլ  
Ու ելնում եմ կրկին փողոց,

### II

Հորդում է լույսն ամեն տնից, ամեն բացված լուսամուտից,  
Անկյունամերձ ձիգ սյուների կենտ աշքերից մետաղակոպ,  
Խսկ մայթերում — լուսավարա՛ր, կիսամթի՛ն —  
Կանա՛յք, մարդի՛կ և աղջիկնե՛ր  
Զբոսնում են ժպտուն ու գոհ,

Սիրում եմ ես իրիկնային պահն այս գերիշ,  
Երբ շրջելով ամենքի հետ,  
Քեզ թվում է, որ մենակ ես — ինքդ քեզ հետ..  
Երբ փողոցը, մայթերն առած ամեն տարիք,  
Ամեն ժպիտ, ամեն ճաշակ,  
Հարազատ են դարձնում հոգուդ  
Անծանոթին և օտարին...

... Փլվում է սիրտ բեռան տակ շեղած բառի,  
Որով ուզում ես ողջունել, օ՛, ինքդ էլ լզիտես ո՛ւմ...  
Եվ այդ պահին,

Նմանվում է սիրտ խորին մի անտառի,  
Որի խորքում անհայտ, սակայն սիրող մի աշք.  
Քո մտածումը զեռ թերի

Ու երազներդ է լրտեսում...

### III

Ժամն է հնչում...  
Ժամացույցի տակտերի հետ  
Տրոփում է սիրտս անկանգ:  
Վաղո՞ւց էի քեզ սպասում, իրիկվա հետ,  
Եվ գու եկար:  
Եվ գու եկար, վարսերը քո —  
Իրիկնային լույսերի պես հարուստ ու շեկ,—  
Գիրդ ծոծրակիդ վրա խրձած,  
Այն քայլվածքով,—  
Երերածուի, բայց և հանգիստ,—  
Որով նավը ծովից արձակ  
Ներս է մտնում նավահանգիստ...

Սիրում եմ ես այս պահերին քեզ հետ լինել,  
Խաղաղության այս պահերին,  
Ինչպես որ գու ինձ հետ էիր կովում երեկ՝  
Ինձ սպասող շերմ հայացքով քո աշքերի:  
Սիրում եմ ես քեզ հետ լինել այս մայթերում իրիկնային,  
Այս փողոցում,  
Եվ քո առաջ սիրտս բացել, ինչպես — նայի՛ր,  
Կայտառ քամին,  
Մեղմ խաղալով հանդերձիդ հետ իրիկնային,  
Քո ուսերն է իմ դեմ բացում:

Այս փողոցում...

Այստե՛ղ եմ ես պատանությունն իմ կորցրել,  
Դարձել հասուն,  
Եվ այն, ինչ որ շոայլորին ընությունն է առատ ցրել,

Գոտել եմ ես, այս փողոցում:  
Գոտել եմ քեզ...  
Գոտել եմ քեզ, ինչպես այս մայթն՝ այս փողոցին  
Եվ այս սյունին՝ այս լապտերը — մեղմ կկոցված  
Իր մետաղի կենտ կոպի տակ կանաչավուն,  
Արի շերմին սարսողից  
(Քո աչքերի թարթուններին այնքա՞ն նման)  
Իմ մարմինն է փշարադվում...

Կուզես՝ թատրո՞ն, կուզես՝ ա՛յգի,  
Կուզես՝ կինո՞—  
Մրտիս տակտով բայլերս ահա քոնն են հավեռու  
Կուզես շրջենք իրարու հետ՝  
Լույսերի մեջ — թարթիներիդ ստվերի տակ,  
Մտվերի մեջ — բո աչքերի լույսով հստակ,  
Եվ կամ, եմի կուզես, անդի՞ն,  
Նստենք թեկուզ ամոան շոգից ապարինող  
Այս արծաթի ավաղանի հարթ պոռոնկին...

#### IV

Նստիր մոտի՞կ,  
Արդյոք երե՞կ կոիվն անցավ,  
Եվ հենց այսօ՞ր բո սիրելի կերպարանքով  
Հաղթանակը մեղ հանդիպեց...  
Հաղթանա՞կր...  
Նստիր մոտի՞կ:  
Ես ուզում եմ նրան զգա՞լ,  
Նրա՞ն զգալ՝ քեզ գրկելով այն մատներով,  
Որոնցով ես քանի՞ անգամ  
Եղափել եմ բունքը մահի՝  
Հանոն այս խո՞ր, պայծա՞ռ պահի  
Նրան իմ կյանքը մատնելով...  
Ե՞ս, որ երբեք չեմ դողացել մահվան առաջ,  
Չե՞մ սարսափել երբեք մահից,  
Ե՞ս, որ գիտեմ —

Կյանքն էլ ձե՞ղ պես — կանանց նման —  
Անհուն սերն իր խիզախներին է լոկ տալիս...

Այո՞, սիրում եմ այս պահերն իրիկնային,  
Ինչպես պոետն իր նորագյուտ  
Քնարական տողն է սիրում,  
Երբ ուզում է քեզ նմանին  
Երգով սիրող սիրտը բանալ,  
Կրկի՞ն սիրո՞ւմ եմ այս պահերն իրիկնային  
Արպես կարմիր բանակային  
Ար մեկընդմիշտ իր արյունով շահել է քեզ —  
Շահել է սեր ու հաղթանակ...

#### V

Շեռ շեմ ասլրել հուզումներդ կրծքիս վրա,  
Խպասումի իմ կարոտը իր դիրքերը դեռ չի թողել,  
Կոկորդիս մեջ դեռ կովում է խեղդիչ ծուխը սուր վառողի  
Քո սեփական բուրմունքի՞ հետ...  
Բարուն ցավից դեռ տնքում է վերքը ոսիս,  
Մինչ սրտիս մեջ բողբոջում է մի ցանկություն  
Ե՛վ մարդկային, և՛ բնական —  
Ինձ հայր տեսնել ե քո գրկում տեսնել որդի, —  
Այնտեղ սակայն,  
Ատլանտյանի մյուս ափում,  
Կոլլարներով և արյունով ճարպակալած  
Ինչ որ անհագ կֆնդանիներ, որ — ի՞նչ արած —  
Սովորույթով դեռ կոչվում են նույնակե՞ս մարդիկ,  
Զանում են, որ շապրե՞նք մեկտեղ,  
Չղգա՞նք իրար...

Մի՛ սարսափիր լուտանքներից,  
Կալիք կովի ուրվականից ալդ թերթային...  
Հիշի՞ր, որ դեռ իմ ոտքերին  
Փոշիներ կան, բերած հեռու  
Ազիներից մարտաերթի,

Եվ հաղթողի իմ աշքերում —  
Հաղթության ցոլք, լույս ու հրթիռ...

Հիշի՛ր, որ իմ սիրող սրտին  
Խորթ է ամեն ահարեկում,  
Որ պատրաստ եմ ելնել կրկին  
Պաշտպանելու իմ հո'զն ու քե՛զ...  
Պաշտպանելու իմ հո'զն ու քե՛զ  
Այն վա՛ռ սիրով, որ իմ հոգում  
Երշանկությա՛ն, խաղաղ կյանքի՛  
Խոր արմատներ է արձակել...

Հիշի՛ր դու այդ և թույլ տուր ինձ,  
Իմ՝ զինվորի կոշտ ափերում  
Քո զաշինքի ձեռքը զգալ,  
Զգալ, այնքա՞ն, այնքա՞ն մոտիկ,  
Որքան հեռո՞ւ է թշնամու  
Ցանկությունը օտարութի...

9. V. 47

6. IX. 47

Երևան

### ԱՆՁՆԱԿԱՆ <ԱՐՅԱԹԵՐԹԻԿ

Հարցաթերթի՛կ,  
Խնդրեմ այսպե՛ս լրացրեք —  
Կուզեք՝ ձեր մտքի մեջ, կուզեք՝ ձեր թղթերում.

— Երբ ողջ աշխարհը մեր  
Առաջնորդի ննջող շիրմի առաջ  
Ամբողջ հինգ րոպե համրացավ ու լոեց,  
Ինչպես վշտահորձանք փոթորիկից հետո  
Անտառներն են լոռւմ խորախորհուրդ, —  
Մայրս գալարվում էր... երկունքի մեջ...  
Եվ առաջին ճիշը, որ կրծքիս տակ ծնվեց,  
Իմ առաջին ճիշը — անգիտակից ցավով —  
Անլսելի դարձավ սգո համազարկի  
Ահեղ բռմբյունի մեջ...

Այնուհետև խնդրեմ լրացրեք այսպե՛ս.

— Նախնիքս — հողագործ,  
Գաղթած Պարսկաստանի ինչ-որ գյուղից,  
Հայրս, որ գեռնս աշխատում է՝ նույնպե՛ս,  
Մայրս — տնտեսուհի:

— Ազգությո՞ւնը: — Հայ եմ՝

Ավելի քան ամբողջ երկու հազար տարի:

— Մասնագիտությունը: — Կյանքին հայել  
Միայն բարձունքներից ապագայի:  
— Սովորել եմ կյանքից,  
Թեպետ ավարտել եմ համալսարան:

— Վաշը աշխատանքիս. —  
Դեռ ուսանող էի, երբ ինձ բանակ տարան:

— Բարեկամներ ունեմ ես արտասահմանում. —  
Որքան որ կամենաս, որքան շուրթդ բերի:  
Երկրագնդի բոլոր գոտիների վրա,  
Կան, տանչվում են նրանք,  
Որքան էլ որ մերոնք  
Հեռու Պորտ-Արտուրից հասնելով մինչ Թեոլին,  
Իրենց անցած ուղու հաղթական հետքերով  
Նրանցից շատերին աղատություն բերին:

— Դատի տա՞կ, Քավլիցի, ո՞չ, չեմ եղել,  
Չհաշվելով լոկ այն, որ երեք թե շորս օր  
Ընկել եմ թշնամու օղակի մեջ  
Իմ թեկուղ և փոքրիկ զորամասով:

— Չորս լեզու եմ, այո՛, տիրապետում —  
Հայերենից բացի նաև երեք... զենքի,  
Որով կարող եմ ես գալիք գոտեմարտում  
(Հակառակ մեր կամքի եթե մի օր նա գա),  
Ինչպես հարկն է խոսել  
Լեղվազարների հետ ամերիկական:

— Ես արտասահմանում: Կասկածում եք միթե.  
Ինչ խոսք, որ եղել եմ, կովել և ոչ դիտել. —  
Բուղապեշտում, լոձում, Վարշավայում  
Գարեզուր չեմ ըմպել, այլ թափել եմ արյուն,

Իսկ վայժարում,  
Մոռացած, որ արդեն կորցրել եմ մի թե,  
Երկու թեսվ կարծես  
Մորս պես զրկել եմ հաղթական Մայիսը...  
Չկա՞ն ուրիշ հարցեր,  
Իսկ խառնվածքի՞ մասին,  
Իսկ այն մասին, թե ես ի՞նչ եմ նախասիրում:

Իսկ այդ առթիվ, խնդրեմ, հաղորդեցեք այսպես.

— Սիրում եմ ես ապրել պայծառ, խնդրումնասի՞րտ,  
Ապրել առօրյայով, երազներով,  
Հորիզոնով հեռու:  
Չեմ զլանում երբեք  
Ընթերցել այն, ինչ գրվում է ինձ համար  
Կանանց՝ գորովանքից մշուշված աշքերում:

Սիրում եմ ես նաև  
Իմ սեփական սրտին այն հայացքով նայել,  
Որով նայում եմ ես դեռ անմշակ,  
Բայց արյունով գրված իմ երգերին...

Սիրում եմ ես նաև  
Այս ամենից ավել,  
Իմ սեփական բազկի երակներով  
Զգալ շոնչը դարի,  
Շոմշու նրա շնչին միշտ համաշափ պահել,  
Եվ վերջապես՝ ապրել այնքան տարի,  
Ու չմեռնել այնքան,  
Մինչև որ աշխարհում՝ Հիմալայից — Անդեր


Եվ Անդերից — Մասիս,  
Իմ սեփական և իմ հաղթ ձեռքերով  
Պարզեմ մի բորբ դրոշ...

Սակայն եղեք ներող...  
Ճիշտ որ ես մի գայրկյան  
Մոռացա, որ գալիք օրվա մասին  
Հարցաթերթիկի մեջ կետեր չկան...

5. IX. 47

Երևան

## ԱՐԲԱ ՃԱՆԱՊԱՐՀ



## ՊԱՏԵՐԱՁՄ ԵՎ ԽՍՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Եանրանում է իրիկունց:  
Մեր մանկիկը քնեց արդեն՝  
Փոքրիկ ձեռքը աղավնու պես  
Դրած բարձին։  
Իմ սեղանի վրա ափտոն  
«Վթարումից» փրկվել հազիվ՝  
Զույգ ակերով դեմ է առել  
Լերմոնտովի մեծ հատորին։  
Իսկ անկյունում՝ նրա սև ձին,  
Թամբը զցած բաշի վրա,  
Շունչ է քաշում՝ ուրախացած,  
Ար աղատվեց շարաճճի  
Իր հեծյալից։

Ես կարդում եմ թերթը օրվա,  
Կարագույրն ես դու արդուկում  
«Չինար ես»-ի դանդաղ տեմպով։  
Այնպես լո՞ւ է, այնպես խաղաղ մեր սենյակում,  
Այնքան սե՛ր կա այդ լուսիթյան թերի տակ։  
Այնքան երաշղ, սպասելի՞ք։

Օրվա թերթն եմ ես ընթերցում։  
«Չինար ես»-ը ընդհատելով,  
Դու խնդրում ես բարձր կարդալ՝  
Գանգատվելով կնոջ բախտից,  
Որ լրագիր ընթերցելու  
Ժամ չի գտնում։  
Կարդում եմ ես.  
«Վիետնամում արյան հեղիղ...  
Մայր ու մանուկ անօթևան...»

Եվրոպական բանակներն են վերազինում...  
Պատերազմի ուրվագանն է առնում մարմին»...

Եվ արդուկը մի կողմ թողած՝  
Դու նայում ես մեկ ինձ և մեկ  
Նրան, որ արդ քուն է մտել  
Իր բուրավետ մահճակալում:  
Դու նայում ես մի տագնապով,  
Որ հատուկ է լոկ մայրերին:  
— Ի՞նչ են ուզում, — ասում ես դու.  
Ասում ես դու այնպես կամաց,  
Մինչդեռ կարծես ճշում ես դու:

Ու խոսում ենք՝ ես իմ թերթը,  
Դու արդուկդ մի կողմ դրած:  
Դու խոսում ես և վախենում,  
Ինչպես մայրերն են վախենում:  
Ես լսում եմ ու լուս մնում,  
Ինչպես այրերն են լուս մնում:

Թե ինչքան ենք խոսում այդպէս,  
Ո՞չ ես, ո՞չ դու չենք իմանում,  
Մինչև հանկարծ տեսնում ես դու.  
Որ երեխան բացել իրեն՝  
Տոտիկներն է ներքն կախել  
Մահճակալի ցանցաթելից:  
— Սկսվեցին շոգերն արդեն.  
Պետք է տանել ամառանոց...  
Եվ քո ձեռքերը մայրական  
Տոտիկներն են ծածկում նրա:  
Եվ քո հայացքը մայրական  
Լճանում է նրա վրա.  
— Երբ մեծանա՝ տեսնես թե նո  
Ի՞նչ կդառնա, տե՛ր իմ աստված՝  
Ու մանկացած՝ մանկան առաջ,  
Երազում ենք մանուկ դառած:  
... նա մեծանում, դպրոց գնում,

Նա վազում է «Կազբեկ» գնում:  
— Ո՞չ մի վազել, ո՞չ ոմի «Կազբեկ»:  
Մենակ... փողո՞ց... Գծվե՞լ ես դու, —  
Հարձակվում ես դու ինձ վրա:  
... նա գնում է համալսարան,  
Սիրահարվում, ուշ տուն գալիս:  
Հասկանում ենք անխոս նրան  
Եվ, իհարկե, ցույց շենք տալիս:  
— Սիրահարվո՞ւմ, ո՞ւշ տուն գալիս...  
Ի՞նչ է, ուրիշ բան շգտա՞ր, —  
Մաստում ես ինձ լեղապատառ,  
Քո մայրական խանդի վրա  
Սիծաղում եմ ու թույլ տալիս,  
Որ երազը շարունակես՝  
Որ նրան շուտ շպսակես,  
Որ նա դառնա դաշնակահար,  
Որ նա դառնա մեծ գիտնական...:

Եվ չենք գտում, որ աննկատ  
Ուրվականը պատերազմի  
Կյանքի առաջ նահանջելով  
Հեռանում է, չքվո՞ւմ, կորչո՞ւմ:  
Ու մնում ենք ե՛ս, դո՞ւ, տղա՛ս,  
Մեր տնակը մեղմ ու խաղաղ —  
Ես՝ զինվորը անցյալ օրվա,  
Դու՝ մայրությունն իմ աշխարհի,  
Իմ աշխարհ՝ իմ տան նման  
Լեցուն սիրով ու երազով,  
Լեցուն սիրով ամենազոր,  
Եվ մեր տղան՝ մեր ապագան,  
Որ բնել է քնով մանկան,  
Այնպես հանդի՞սու, խաղա՞ղ այնպես՝  
Փոքրիկ ձեռքը դրած բարձին —  
Աղավնու պես...

{1915}  
Օրեան

## ՓԱՌՔԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ

Նահանջի ճամբան էր մեր ոտքի տակ ընկել,  
Վտանգված էր հողը մեր գեղեցիկի...  
Մենք միասին էինք այդ վայրկյանին, ընկե՛ր,  
Մենք միասին, մեկտեղ նահանջեցինք:

Հողը կառում էր մեզ իր գորշ կպչուն կավով,  
Խրամատն էր կարում դարձի ուղին:  
Բայց մենք զինվոր էինք, և իր հրամանով  
Հաղթանակն էր սաստում՝ զատկե՞լ հողից:

... Նայում էին հեռվից, ովքեր ծնել էին,  
Ովքեր սնել էին և մեզ սիրել կյանքում...  
Շուրջը՝ սառնամանիք, շուրջը՝ ծյուներ էին,  
Մերթ՝ անարատ, ճերմակ, մերթ՝ արնագույն:

Ու մենք քայլում էինք, ու մենք սողում էինք:  
Ոչի՞նչ, սողում էինք, որ շողա՞նք կյանքում:  
Մեր հողն էր մեզ կրում, մենք մեր հողում էինք:

Ահա ինչո՞ւ նրանք ցրտից դողում էին,  
Իսկ մենք այրվո՞ւմ էինք, մենք ողողվո՞ւմ էինք  
Մեր բրտինքով ցաման...  
Ինչպես ես՝ իմ ջանգուն,  
Անցանք քեզ հետ մեկտեղ քո Դոնք և Վոլգան:  
Խաղաղությունն էր դեռ մեր ականջին զնդում.  
Դեռ յուրձն էր քո ձեռքին, գրիչն էր իմ ձեռքում—  
Դեռ մենք կիսո՞վ էինք զինվորական:

Դու այդպես էլ ընկար — կիսով՝ արդեն մարտի՛,  
Կիսով՝ շափ դեռ զարքին կոլխոզային,  
Միտքդ՝ թողած մուրձիդ, ձեռքըդ՝ ավտոմատիդ  
Եղ՝ ականջդ՝ մոտիկ հաղթանակի ձայնին:

Իսկ ես դեռ ապրեցի: Թողած թուղթ ու մատիտ,  
Հեծած պատերագմի աստծուն պողպատ թամբով.  
Մուքով նորից բեղ հետ, միշտ քո կողքին մոտիկ.  
Առաջ արշավեցի մեր նահանջի ձամփով:

Մենք միասին անցանք այն ճանապարհն ամրապջ,  
Ուր մենք ապրել էինք ցալ ու վտանդ:  
Շուրջը այնժամ գարո՞ւն, վաստ կանա՞շ էր, բողբո՞ջ.  
Արև՛ն էր հաղթության, արյան ցո՞լքն էր քո թանկ...

Ու մենք թեոլին մտանք...

Ու ես իմ տուն դարձա,  
Արդարությունը երբ հաղթանակեց կյանքում:  
Իսկ դու արձանացար,  
Դու հուշարձան դարձար  
Մայր Վոլգայի ափին, տափաստանում անժայր,  
Բուզապեշտո՞ւմ:  
Լոձո՞ւմ,  
մարդկանց հոգո՞ւմ:

... Խաղաղությունն է արդ մեր ականջին զնդում  
իրեն մանգալ՝ արտից, իրեն մանուկ՝ տնից:  
Եվ մենք նորից կիսով մեզ զինվոր ենք զգում.  
Խաղաղությունն ենք մենք օր ու գիշեր հսկում,  
Ես՝ իմ երգերի մեջ, դու՝ քո պատվանդանից...

[1948]  
Երևան

## ԹԱՐԻՈԾՆՈՒՆԻՉԻ ԱՌԱՋ

Կախարդական տուփն է հեքիաթների...

Ես կոճակն եմ սեղմում,

Եվ սլաքը՝

Հլու իմ մատներին,

Որոնում է,

Ժխո՛ր:

Տհաճ սուլո՛ց:

Աղմո՛ւկ:

Խոխոռում է մեկը՝

Կարծես մեռնում,

Մեկի ձայնալարերն են կտրվում կարծես:

Մի ճիշ է խեղղղվում մառախլապատ հեռվում,

Օդում խոնըվում են պատասխաններ-հարցեր:

Եթերների բոլոր շերտերն եմ ես վարձել:

Ե՞ս եմ այսօր տերը...

Նայած մատներիս տակ սլաքն ուր է դառնում՝

Նայած ինչ ընթացք եմ տալիս նրան,—

Մերթ զանդակուտ, ծույլ-ծույլ և մերթ՝ արագ,

Նա ինքն իր շուրջ դառնում,

Հանգըրվանում է նա կայան-կայան:

Ինչպես ձուկ որսալիս հահախ օձ ես բռնում,

Այնպես՝ ահավասիկ.

— «Խոսում է Անկարան»...

Բայց ես տեր եմ այսօ՛ր և առհավե՛տ:

Արդեն ինձ չեն կարող

Ո՛չ երեկվա խարդախ թյուզանդիոնը դավել,

Ո՛չ այսօրվա Պոլիսն ու Անկարան,

Ինչպես որ վարվել են դարեր նրանք

Իմ պապերի և իմ հայրերի հետ:

Իմ բախտի տերն եմ ես այսօ՛ր և առհավե՛տ,

Եվ տերն եմ ես հիմա նաև եթերների...

Ու կոճակն եմ շրջում:

Մի վալս խելակորույս,

Ռոմանս, որ երգում է՝

Մարմնով ծանըր, վարքով թեթև ինչ-որ Մերի...

Հետո՝ ինչ-որ մի ձայն այն մասին է գոռում,

Որ անկարելի է, անհնարին

Իրենց պես մարդ հաշվել և նեգրերին...

... Կանգնել ենք մենք հիմա

Իրար գեմ հանդիման՝

Ողջ աշխարհը և ես:

Ասենք՝ ես նստել եմ.

Ես նստել եմ հիմա ընդունիչի առաջ,—

Եվ սլաքը հլու իմ մատներին,

Կայաններ է որսում:

Ոստնում են ստերը,

Ինչպես աղանձացուն՝ բովի վրա:

Այդ՝ խոսում են նրանք.

Այդ՝ նյոււ-Յորքն է խոսում՝

«Ամերիկայի ձայնը»,

Այդ՝ կոնդոնն է խոսում՝

Իր «Թի-Թի-Մին»:

Ամաշում է անշուշտ

Ազատության հայտնի այն արձանը,

Եվ պսակն այն ծանըր,

Որ պանում է նրա ճակատը սին,

Ամոթանքից փոխվում-փոխարկվում է

Փշերը ցից ողնու...

Սլաքն է ոստոստում

Ասես արգելքների,

Ասես թվացոյցի հետև պահպան

Սղոցների վրա.

Նոր կետեր է որսում

Իմ ձեռքը անվարան:

Նվազում են, երգում և առավել՝ խոսում,

Հաճախ լեզուներով ինձ անծանոթ:

Ինքը

պատմությունն է ալիքների վրա

Ալիքների նման կարծես հոսում:

Եվ ա'յդ, և մի՛միայն այդ պատճառով

Բոլոր, բոլո՞ր խոսքերն եմ հասկանում,

Ինչ լեղվով էլ ասված լինեն նրանք:

Հասկանում եմ.

— Հիմա

Ապրում ենք մի դարում,

Երբ ուղիներն ամեն կոմոնիզմ են տանում:

Այդ մասին են ահա

Բոլոր կայաններն ու կետերը բարբառում՝

Ամանք սարսափահար, իբրև անեծք,

Ոմանք ուրախությամբ՝ որպես հարցադրում:

... Ում համար պարզ չէ դեռ,

Ես չեմ հարկադրում,

Կարող է նա անշուշտ

Բաղիողնդունիշը դեռ միացած պահել,

Ինձ համար որ պարզ է.

Ես ուղում եմ հիմա այն անջատել

Եվ այս տողերի տակ վերջակետ, ո՛չ,

Դնել ... կախման կետեր:

Սակայն ևս մի պահ:

Եվ այս անգամ արդեն

Ո՛չ միայն կայանը —

Ես ալի՛քն եմ փոխում ընդուժ մի շարժումով:

Եվ ձիշերի, սորի, աղմուկի տեղ

Մավալվում է, փովում ալիք մի նոր՝

Խաղաղության ալի՛քը ոսկեթել:

Եվ ծանոթ ու բաղցը՝

Իբրև ողջույն սիրած ու լավ բարեկամի,

Հանդիսավոր՝ իբրև երդումի խոսք,

ահա՝

— Խոսում է Մասկըվան...

27. XI. 48

Երեան

Թվում է՝ ոչինչ չփոխեց կյանքում  
Եվ չպարզեց ոչինչ աշխարհին:

Թայց օրը ունի իր լիցքը ներքին,  
Իր լիցքը անտես՝ ատոմի նման:  
Զամակցում են ի՞մ, քո՛ գրած երգին  
Ամբո՞ղջ մի աշխարհ, ամբո՞ղջ մի երկիր,  
Եվ — նա հնչում է աշխարհում համայն:

## ՕՐՎԱ ԵՐԳԸ

Մենք հասկանալով՝ հաճախ չենք զգում  
Մեր ապրած օրվա իմաստը խորին.  
Հաճախ մեզ օրը թվում է անգույն,  
Թվում է՝ ոչինչ չփոխեց կյանքում  
Ու չպարզեց ոչինչ աշխարհին:

Նա ի՞նչ է արել. այսի է զրել,  
Առու է հանել, քաշել է ածու:  
Մա՛ ի՞նչ է արել. լոկ սերմ է ցրել,  
Ե՛ս ի՞նչ եմ արել. մի երգ եմ գրել,  
Մի երգ եմ գրել, ո՛չ ժողովածու:

Ամեն օրվա պես պաստառ է գործել  
Ամեն օրվա պես աղջկն այս ժպտուն:  
Ամեն օրվա պես դրել է փորձեր,  
Ո՛չ գյուտ է արել, ո՛չ հրաշք գործել  
Այս գիտնականը իր փորձադաշտում:

Ամեն օրվա պես քաջ վիետնամցին  
Կոիվ է մղել դիրքերից խոնավ,  
Իր ատամներից, բռունցքից բացի  
Այլ բան չի սեղմել դեռ հգիպտացին՝  
Տեսնելով զինված թշնամու նոր նավ...

Մենք հասկանալով՝ հաճախ չենք զգում  
Մեր ապրած օրվա իմաստը խորին.  
Հաճախ մեզ օրը թվում է անգույն,

Զահել աղջկա պաստառը գործած  
Առաջաստ դարձած՝ նավեր է վարում,  
Նավե՛ր, որ հացի հակերը բարձած,  
Խեղճ հնդիկներին սոված ու բաղցած  
Հացի հետ նաև հավա՛տ են տանում:

Ոռոգված այգին իր բերքն է տալիս.  
Եվ բերքից բացի՝ նույն այգում դրած  
Համեստ փորձերով. գեռ շանցած տարին  
Ցուրտ հյուսիս անգամ նույն բերքն է տալիս  
Աշխարհի ապշած աշքերի առաջ:

Մենք հասկանալով՝ հաճախ չենք զգում  
Մեր ապրած օրվա իմաստը խորին,  
Հաճախ մեզ օրը թվում է անգույն,  
Թվում է՝ ոչինչ չփոխեց կյանքում  
Եվ չպարզեց ոչինչ աշխարհին:

Բայց շմոռանա՛նք, հիշե՛նք հավիտյան,  
Որ օրերով է դարն ամենազոր,  
Եվ որ ամեն օր մեր կաթքով հզոր  
Ատամնանիվը համառ պատմության  
Առաջ է գնում և՛ս մի խազով:

20. II. 52

Սոսկվա

- Թեթև է հադեւ...  
 — Միջանցուկ քամի՛...  
 — Օղանցքը փակե՛ւ...

## ԸՆԿԵՐՈՒՅՀՈՒԹՅ

Ահա և իմ տան նոր բնակի՛ր՝  
 իմ առաջնեկը, նորածին որդին,  
 Որի մանկական առաջին ճիշը  
 Այնպես ներդաշնակ ու քաղցր է հնչում  
 Խաղաղության մեջ իմ ժողովրդի.

Քնել է հիմա իմ փոքրիկ որդին:  
 Այնպես խաղաղ է այդ անմեղ քունը,  
 Կարծես մանկական լույս զեմրի վրա  
 Շառագունել է և անդրադարձել  
 Նույն ինքը երկրիս խաղաղությունը:  
 \* \* \* \* \*

... Հենց այս վայրկյանիս,  
 Ասես շորված իմ հրամանով.  
 Արթնացավ ահա նա միանցամից:  
 Մայրը խոսում է նրա հետ հիմա  
 Մայրական բոլոր խոսքերով ձանոթ:  
 Վախենում է նա.

— Բարձրացավ քամի,  
 Օղանցքը փակե՛ք, փակեցեք դո՛ւռն էլ...  
 — Այս փաթաթանը կոպիտ է կարծես...  
 — Փոշտա՛ց:

— Հաղա՛ց:  
 — Ասովա՞ծ իմ, մըսե՛ց...  
 Եվ անվերջ նո՞ւյնը, միշտ նո՞ւյնը, նո՞ւյնը.  
 — Փոշտա՛ց...  
 — Մըսե՛ց...

Կարող է այսպես տեսել ողջ տարին,  
 Կարող է այսպես տեսել կյանքը ողջ:  
 Ես հասկանում եմ, որ մայր է բարի,  
 Բայց անվերջ նո՞ւյնը, միշտ նո՞ւյնը, օ, ո՞չ:  
 Եւ հա ժպտադեմ դիմում եմ նրան.

— Միրելի՛ս, լսի՛ր.  
 Դու ի՞նչ ես անում իմ միակ որդուն:  
 Թո՛ղ որ բաց լինի և օդա՛նցք, և դո՛ւ,  
 Միջանցիկ քամին թող որ ներս խուժի,  
 Իսկ դու լավ հիշիր,  
 Դու մի՛ մոռանա նորից ու նորից,  
 Որ այս մանկիկը պիտի չմրսի,  
 Որ այս մանուկը պիտի չսարսի  
 Համաշխարհային.

սպասվո՛ղ,  
 ներկա'  
 Բոլո՛ր միջանցիկ սուր քամիներից:  
 /1948/

Երես

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

### I

Ետ ես գնում մի պահ երկու տասնյակ տարի,  
Նորից քեզ զզում ես աշակերտ ու մանուկ:  
Թվում է, թե նույնն է տեսքը դասարանի՝  
Նույն նստարանները, գրատախտակը նույն:

Եվ նույն ուսուցիչը — բարի, ամենիմաց՝  
Փիրուն ձերմակ կավճից մատները միշտ փողոտ,  
Որ ինչպես քեզ մի օր՝ այս պատանուն հիմա  
Օրվա դասն է հարցնում բարտեզի մոտ:

Սակայն շատ բան այսօր այլ է դասարանում,  
Եվ ամենից առաջ՝ քարտեզը աշխարհի...  
Այս պատանին իրեն դաս է պատախանում  
Այն, ինչ որ մեզ համար երազանք էր բարի:

...Մեր օրերի բոլոր քարտեզների վրա  
Արևմուտքն էր նայում մեզ մոլուցքով ահեղ՝  
Ֆինլանդիայից մինչև Բրիտանիան զառամ,  
Իսպանիայից մինչև Բուսֆոր ու Դարդանել:

Մեր օրերի բոլոր քարտեզների վրա  
Դեռ մեզ օտար, զեղին Զինաստանն էր գծվում,  
Եվ նրա դեմ՝ հսկա շնաձկան նման,  
Ճապոնիան էր ծովից սպառնալից ցցվում...

Բայց պատմոթյան դասը մենք լավ էինք սերտել.  
Գիտեինք, որ մերն է գալիքը հաղթական,  
Գիտեինք, որ երբեք մեզ չեն կարող հաղթել,  
Ոչ բուրվա՛ոք պապի, և ոչ սվաստիկան:

Գիտեինք, որ երկար միայնակ շենք մնա,  
Գիտեինք, որ կուլին չի մնալու կուլի...  
Եվ այն, ինչ մեզ համար երազանք էր միայն  
Իրոք դաս է սերտել այս պատանին:

### II

Մեկ ուրիշն է հիմա դասը պատասխանում:  
Ծովի կապուլտի մեջ ասես թանաքոտած՝  
Նա իր փափլիկ մատը երկրից երկիր տանում,  
Ծովից ելնում է լեռ, լեռից իջնում է ցած:

Ցույց է տալիս գետեր ու քաղաքներ անթիվ,  
Ինչ որ ուսուցիչն է հարցնում նրան:  
Ահա Կերչը...

Այդտեղ մեր հետեւակ գնդից  
Քանի՛-քանիսները հերոսարար մեռան:

Ահա և Դնեպրը: Այս պատանին գիտի՝  
Քանի՛ խրամատ ու խորշ եմ փորել այնտեղ,  
Թրչվել իմ քրտինքով ու զրերով գետի  
Եվ շորացել մոլի հրդեհի դեմ:

Լվո՞վն է ցույց տալիս: Իսկ ես հիշում եմ պարզ,  
Թե ինչ ավաններ են նրան շրջապատում,  
Որտեղ թիուտ կա մի, որտեղ՝ քանդված մի պատ,  
Որի ճեղքից էր իմ հրանոթը թնդում:

Նա սահմանն է անցնում հիմա հեշտ ու հանգիստ,  
Զի էլ ուրախանում այս պատանին կարծես,  
Մինչդեռ պարզ հիշում եմ, որ մի տարեց տանկիստ  
Հրճվո՞ւմ էր այդ պահին մանուկի պես:

Հիմա շրջում է նա Եվրոպայում մատով,  
Մայր քաղաքներ մտնում, անցնում վարար գետեր.

[1950]  
Երևան

Ահա Բուխարե՛ստը, Սո՛ֆիան գեղեցկաթով,  
Ահա Դանո՛ւրը, Վի՛պա, Է՛լբա, Օդե՛ր:

Սանո՞թ անուններ են, բայց ո՛չ դասագրքից,  
Ո՛չ քարտեղից տափակ, զլորուսից կլոր...  
Իմ սերունդը ինձ հետ գիտի այսօր անգիր  
Կիսադունդը՝ նրա բոլո՞ր մանրութներով:

Կիսադունդը՝ նրա բոլո՞ր մանրութներով:  
Գիտի իր ռաքերո՞վ, որ գոփելով անցան  
Ամբողջ կիսազնդով, որ մանուկն այս պայծառ  
Խաղաղորեն այսօր իր գասերը սերտի:

### III

Ժամը վերջանում է, Եկ դասատուն անցել՝  
Հիմա վաղվա համար մի նոր դաս է տալիս,  
Խսկ ես մտածում հմ.  
Վաղո՞ւց է վերջացել  
Այն դասը, որ տվինք մենք մեր ոսոխներին:

Խսկ թե մոռացել է, վատ շէր լինի գուցե  
Հիշեցընել նրան՝ ամերիկյան քեռուն.  
— Թե հանգնեք նորից, ևթե նորից փորձեք  
Պատերազմ ու հրդեհ սփոռել ողջ աշխարհում:  
Այն ժամանակ... նաև մեր այն սերունդը նոր,  
Թր աշխարհը գիտի միայն իր զրբերո՞վ,  
Լոկ քարտեղո՞վ տափակ, զլորուսո՞վ կլոր,—  
Մյուս կիսագունդն էլ այնպե՛ս անգիր կանի,  
Ինչպես մենք այս մեկը —  
իր ռաքերո՞վ:

### ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Խաղաղություն ամենքի՞ն և ամենո՞ւր, —  
Այդ ենք միայն մենք աշխարհին կամենում:  
Խաղաղություն, որ խաղողը բաղցրանա.  
Որ նորատունկ այզին տա բերք ու բարիք:  
Խաղաղություն, որ աշիկներն իր բանա  
Դաշտում մի տուղտ, օրորոցում՝ մի բալիկ,  
Մի ծով ցորեն՝ գարնանային արտի մեջ,  
Անդիր մի երգ՝ բանաստեղծի սրտի մեջ,  
Մի երեքնուկ՝ բացատի մեջ անտառի,  
Անխոս մի սեր՝ սրտի խորքում պատանի... .

Խաղաղություն ամենքի՞ն և ամենո՞ւր, —  
Մեզ հետ նույնը բնությունն է կամենում:

Խաղաղություն, որ տատիկները բոլոր  
Երգեն իրենց թունիկներին մեղմ օրոր.  
Որ մայրերը և արտերը ծոցվորվեն,  
Որ դաշտ ու ձոր հասունություն վար ձորեն,  
Որ բանվորը գոհանա իր վաստակով,  
Ծինարարը երկինք ելնի լաստակով,  
Սերմնացանը ափին իր խփի ու բանա,  
Այգեգործը գեռ շնմած՝ արբենա...

Խաղաղություն ամենուրե՞ք, ամենքի՞ն. —  
Այդ են ուղում ամե՛ն մերդ ու ամեն կի՞ն:

Խաղաղություն Կորեայի՞ն արնարամ,  
Չինաստանի հերոսներէ՞ն առնական.

Խաղաղություն օվկիանոսին այն խաղաղ,  
Որ իսկապե՞ս լինի հանգիստ ու խաղաղ:  
Խաղաղություն բռլո՞ր նրանց, ում համար  
Մանր է տեսնել սղավոր կին, քույր ու մայր,  
Մանր է տեսնել իր քաղաքը մոխրացած,  
Այգին դարձած խրամատի անել ցանց...

Խաղաղություն: Ո՞վ է կոիվ կամենում,—  
Լոկ այս հարցն է, որ հնչում է ամենուր:

Պատասխանը միևնույնն է ամեն տեղ:  
— Ո՞ւ— ասում է ամեն երկիր, ամեն ցեղ:  
— Ո՞ւ— հնչում է ամեն լեզվով՝ մի բառով:  
— Ո՞ւ— հնչում է կերտող մուրճի բարբառով:  
Այգին ջրող բահը նույնն է պահանջում,  
Նույնն է տենչում զուլալ հոսող ամեն ջուր,  
Նույն է ճշում ամեն մանուկ նորածին,  
Նույնն է ասում լուռ հպումը սիրածի...

Խաղաղություն ամենքի՞ն և ամենո՞ւր,—  
Ողջ աշխարհն է ողջ աշխարհին կամենում:

{1949/}  
Երևան

## ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Բառեր չկան կարծես քեզ երգելու համար,  
Եվ ես որդու նման անվանում եմ քեզ «մայր»:

«Հարազատ» եմ ասում և այնուհետ լուսմ.  
Սիրող սիրուն է այդպի՞ս խոսքը շուտ սպառում:

Իսկ թե ոնց եմ սիրում՝ գու գիտենաս պիտի,  
Բայց քեզանից առաջ՝ քո թշնամի՞ն գիտի...

14. XI. 50

Երևան

### III

Անմահ լենինը սկսեց դարը —  
Գրելով ծանոթ «Ինչից սկսելն» ու «Ինչ անելը»:

Կիսվել է դարը:  
Տիսավ աշխարհը.  
Մեր սկսելն ու մեր ինչ անելը:

### ԴԱՐԱԿԵՄԻ ԵՐԳԸ

#### I

Կիսվել է դարը:  
Կիսվել է դարը  
Ո՞չ նոան նման,  
Ար քաջցրությունից, Հյութից է ձարում  
Ծոգ արեի տակ կիղող հարավի:  
Կիսվել է դարը, ինչպես ծարավից  
Հույն հերոսների շրթունքն է ճարում  
Անմարդաբնակ ինչ-որ կղզյակում...  
Կիսվել է դարը նազիմ Հիքմեթի  
Մեծ սրտի նման,  
Արի մի կեօր իր հայրենի տան  
Իր նորածինի օրոցքի մոտ է  
Թփրտում հիմա...

#### II

Կիսվել է դարը:  
Այս դարն է կիսվել,  
Որ կարողացավ առո՞մը կիսել,  
Որ կարողացավ աշխա՛րհը կիսել  
Ոչ միջօրեական-զուգահեռական  
Գծերով, ինչպես քարտեղի վրա:  
Կիսվել է դարը ըստ մի պայմանի —  
Մերո՞նք  
և

Նրա՞նք:

Արգել կհան է դարի:  
Հիմա աշխարհին  
Ուրիշ մի հարց է լրջորեն հուզում.  
Այս ահեղ դարը ինչո՞վ ավարտել:

#### IV

Կիսվում է դարը,  
Իսկ մեր ուժերը  
Ոչ թե կիսվում են, այլ բազմապատկվում:  
Կիսվում է դարը,  
Իսկ զոռով կիսված ժողովուրդները  
Զովվում են նորից մի ընտանիքում:  
Եվ այստեղ արդեն չեն կարող լինել  
Մասնակի հերքում  
Ո՞չ Կորեան, որ իր կիսված մարմնով  
Իր հողն է ներկում,  
Եվ ո՞չ Գերմանիան՝ յասերով երկու  
Եվ նրա՞նք, ովքեր մոլի նախանձով  
Ուզում են կիսել, բաժանիլ նրանց,  
Իրուն շահավետ մի կովախնձոր,  
Թող շմոռանա՛ն, թող հիշե՞ն, որ երբ  
Սիրած սրտերն են բաժանում զոռով՝  
Նրանց կապում են առավել սիրով:

V

Կիսվել է դարը:  
 Եվ դարամիջյան այս տարիներին  
 Ինչ քա՞զը է զգալ, գիտակցե՛լ հիմա,  
 Որ նա կիսվում է ո՛չ գրքի նման.  
 Ինչ քա՞զը է զգալ, որ այստեղ մենակ  
 Մենք ընթերցն՝ զ շենք,  
 այլև հեղինա՛կ,  
 Որ անգիր գիտի երկրորդ հատորի  
 Ընթացքն ու վերջը,  
 Եվ որ հատորն այդ մեր իսկ ձեռքերով  
 Լույս ընծալվելու ընթացքի մեջ է... .

11. II. 52  
 Մոսկվա

## ՍՊԻՆԵՐ

### ԳՈԽԼՊԱՆ

Արկը սառնասիրտ շառաչեց օդում  
 Եվ պայթեց մոտիկ՝ լերկ հողի վրա,  
 Արկի բեկորը սրի պես հատու  
 Կտրեց ու տարավ ոտքերը նրաւ,

Իսկ այդ նույն պահին, մայրն՝ աշքում արցունք,  
 Պահելով նրա գալուստի ճամփան,  
 Համբուրում էր ու արցունքով թրջում  
 Իր որդու համար նոր գործած գուլպան...

28. VIII. 1943  
 Զանախչի

## ԶՈՀՎԱԾԸ

— Ախ, որտե՞ղ է, ո՞ւր է, ինչո՞ւ լուր շի տալիս,  
եթե անգամ... Ո՞ւր է սև ծանուցաղիրը:  
Արդեն լրանում է ուղիղ երկու տարին,  
ինչ չիմ տեսել նրա ձեռագիրը...

Պառավն ինձ էր դիմում ամբողջ երկու տարի,  
իր հայացքով հարցնում ավելի՛, քան խոսքով:  
Բայց ես նրան ինչպե՞ս, ի՞նչ պատասխան տառի.  
Ո՞նց բերեի որդուն, ի՞նչ հրաշքով:

Ո՞նց ասեի, թե նա էլ չի դառնա իր տուն,  
Ու չին հղում եթե սև ծանուցաղիրը,  
Միայն նրա՛ համար, որ նույն խրամատում  
Ընկել է և գնդի գրագիրը...

29. IV. 46

Երևան

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱԾՄԱՆԴԱՄԸ

Տաք կոփվ էր ու ցուրտ ձմեռ,  
Երբ, վեներա, իմ սիրելի՛,  
Անակնկալ — այն էլ ինչպե՞ս,  
Ի՞նչ զրությամբ ես քեզ տեսա,  
Մեզ զարերով քո պարգևած  
Ու ներշնչած բյուր սերերից  
Եվ ոչ մեկից այդ վայրկյանին  
Քեզ օգնության ձեռք չհասավ:

Ցուրտ էր, ձմեռ, ու ցրտի մեջ  
Տաք ու դաժան մարտ էր գնում,  
Եվ կույր մի արկ՝ իբրև ծաղըը  
Չեզվ այնքա՞ն նման սրաի,  
Ներս սպրդել ու պայթել էր  
Քաղաքային թանգարանում՝  
Պատվանդանից քեզ զցելով  
Ածիւացող ու սև պարկետին:

Թալկացել էր ու մարել էր  
Այն հայացքը քո աչքերի,  
Որ դարերով պարգևել է  
Սիրո խայտանք ու սիրո ցավ,  
Քո ձեւերը մարմարացած  
Եղծվել էին ալ շիթերից.  
Թե ի՞նչ արյան և ո՞րտեղից.—  
Ծանր պահ էր՝ չհասկացաւ:

Ես հերհն քեզ մոտեցա՞  
Մոռանալով մահ ու կոփի,  
Ես ուղեցի ավերիս մեջ  
Քո մարմարի թևը բռնելի  
— Կփրկե՞մ քեզ, — շշնչացի. —  
Միայն թե մեղ սիրի՛ր, սիրի՛ր.  
Հեշտ չի հաղթել առանց սիրո  
Եզ դժվա՛ր է, ծա՞նր է մեռնել:

Գրկիր՝ հանեմ այս մարմնակուլ,  
Սեր շծնող այս հրդեհից...  
Դու խնդացիր կարծես ցավով  
Ծիթի միշից կարմիր արյան:  
Ես նո՞ր տեսաս... Զրկվել ես դու  
Քո մի հատիկ, միա՞կ թևից,  
Դու, թևավո՞ր սիրո աստված,  
Հաշմանդա՛մ ես մի կատարյալ:

Օ վենե՛րա — գթության քո՛ւրա  
Օ վենե՛րա — մարտի ընկե՞ր,  
Ես մոռացա, թե երբեմէ  
Դու եղել ես աստվածուհի.  
Ես մոռացա, որ դարերով,  
Քո մարմինն են միայն երգել,  
Կանչել են քեզ շշուկներով  
Եվ խոսքերով ասված ու հին:

Եվ այնժամ քեզ, որ իմ սիրած  
Թովիշ բոլոր աղջիկների  
Դողդողագին բազուկներով  
Գրկել ես ինձ բանի՛ անգամ,  
Ես դրկեցի եղբայրաբար,  
Դուրս հանեցի պաղ ձյուներից՝  
Ո՛չ թե իբրև աստվածուհու,  
Ո՛չ էլ իբրև կնոշ անգամ:

Այդ վայրկյանին դու ինձ համար  
Զինվոր էիր մի ահավոր՝  
Եռվի ելած հանուն սիրո,  
Հանուն նրա անհաղթ ուժի,  
Հայրենական պատերազմի  
Մի հաշմանդա՛մ, մի վիրավո՛ր,  
Իսկ թե նորից աստվածուհի՝  
Ո՛չ թե սիրո, այլ վրեժի՛...

Տ. II-47

## ԸՆԿԱԾՆԵՐԸ

### ԱՆՀԵՏ ԿՈՐԱՇՅԸ

Գրեցին, որ նա անհետ կորիլ է:  
 — Ինչպե՞ս թե... — ոչ ոք չ'արցրեց այնժամ:  
 Ժամանակը՝ խառն, ծանրը՝ օրերը,  
 Հասկանալի էր այդ միաբը դաժան:

Իսկ հիմա դա շար կատակ է թվում,  
 — Ինչպե՞ս թե անհետ, — ուզում ես գոռալ  
 Երբ արկերը մեղ է՛լ շեն վրդովում,  
 Կրակ չի թափվում մեր հողի վրա.  
 Երբ շենք չի բանդվում, տուն չի փուլ գալիս,  
 Արդին չի դոհվում, մայրը չի լալիս.  
 Երբ հրդեները արտը շեն այրում,  
 Երբ առանց քողի՝ լույսերն են փայլում.  
 Երբ հուշ է դարձել գրքույյօք հացի,  
 Երբ կյանք չեն կշռում համակ ու բացիկ.  
 Երբ չին զինվորը հնձվոր է այսօր.  
 Երբ իմ աշխարհի երանզը բոսօր  
 Եր գույնն է տվել աշխարհի կեսին.  
 Երբ հողագնդի տանջված երեսին  
 Հույսի, հաղթության ժպիտն է շողում.  
 Երբ մեր թշնամին ցրտից չի դողում,  
 Այլ շարությունից, անզորությունից,  
 Իմ մեծ աշխարհի անդորրությունից, —  
 — Ինչպե՞ս թե անհետ, — ուզում ես գոռալ —  
 Ով՛ ով, բայց նրանք անհետ չկորան...

9. 11.47

ԵՐԵԱՆ

Կոկվներում ընկան նրանք,  
 Ամեն մեկը՝ մի տան ձրագ,  
 Ամեն մեկը՝ մի մոր որդի,  
 Ամեն մեկը՝ մի աղջկա  
 Երականքը անապական,  
 Անոշ՝ սերը, հոր՝ ապական...  
 Ամեն մեկը՝ անզիր մի վեպ,  
 Ամեն մեկը անզին մի կյանք...

Ամեն մեկը ընկան ա՛յլ կերպ.  
 Մերթ՝ զրի մեջ, մերթ՝ հողի առակ,  
 Մեկը սրով, տասը՝ հրով,  
 Մեկը՝ արդեն հայտնի հերոս,  
 Տասը՝ հերոս դեռ շդարձած,  
 Մեկը՝ իր մոր արցունքներով  
 Թաց նամակը դեռ չընթերցած,  
 Տասը՝ նամակ սպասելիս,  
 Կարոտելիս, երակելիս...

Բայց զոհի՝ պես չընկան նրանք,  
 Ընկան նրանք իրրե մարտի՛կ,  
 Ընկան նրանք իրրե մարդի՛կ,  
 Որ սովոր են մահը վանել  
 Իրենց կյանքով՝ հանուն կյանքի,  
 Որ սովոր են զրկանք տանել՝  
 Ընդդեմ ցավի ու զրկանքի.  
 Որ պատրաստ են հանուն սիրո  
 Սիրուց առնել ատելու թափ.  
 Եվ անպարտ են ատելությամբ,  
 Որ հզոր են հենց այդ սիրով.

Զոհի՝ նման չընկան նրանք:  
 Ընկան նրանք իբրև մարտի՛կ,  
 Որ փուլ շգա էլ ապարանք,  
 Խաղաղ մնա ամեն երդիկ,  
 Եվ ծխանի ծուխը բարակ  
 Վե՛ր բարձրանա պրա՛կ-պրա՛կ,  
 Քամուց թերթվի լուրի երկնքում.  
 Որ էլ ոչ մի ընտանիքում  
 Անտերացած ոչ մի աթոռ  
 Չաղաղակի գատարկությամբ  
 Թեյի ժամին, ճաշի պահին.  
 Որ արկերի դլրոցին  
 Ու հրդեհի ահեղ բոցին  
 Փոխարինեն արծաթ բահի  
 Ջրնգոցը երկնքի տակ  
 Եվ կարոտի շշուկը տաք:

Նրանք ընկան կոփվներում,  
 Բայց ապրում է հոգին նրանց  
 Ապրողների հոգիներում.  
 Չի՛ մեղմացել ցավը կրած,  
 Աւելությո՛ւնը փրփրած  
 Եվ հաղթության տե՛նչը խորին՝  
 Ի գիտություն ա՛յն բոլորի.  
 Որ նայում են շիրմին նրանց  
 Միայն իբրև մի բլուրի,  
 Որ հարթվում է կամաց-կամաց,—  
 Անմիտի պես մոռանալով,  
 Որ եթե շար թշնամու դեմ  
 Ապրողները իրենց ուժով  
 Ու զենքով են անպարտե՛ի,  
 Ընկածները իրենց հուշո՛վ,  
 Վրեժո՛վ են սարսափելի...

[1947]  
Երևան

## ՄԱՅՐԸ

Կանգնել է մայրը սեղանի առաջ,  
 (Ի՞նչ ծանրություն են ուսերը կրել)...  
 Աշխարհի խղճի կերպարանքն առած.  
 Աշխարհի ազնիվ Կոշին ընդառաջ,  
 Կանգնել, ուզում է ստորագըրել:

Կանգնել է, Մենա՛կ, Ու, նրա կողքին,  
 Ասես կենդանի, հարություն առած.  
 Կանգնել են նրա գավակներն անգին.  
 Հառնել է նրանց հաղթական ոգին  
 Ու կանգնել մոր մոտ, սեղանի առաջ:

Կանգնել են ուազմի հին հանդերձանքով,  
 Աստիճաններով, տարիքով տարրեր,  
 Բայց սրտերը լի նույն երազանքով,  
 Կիսատ մնացած, բայց անմեռ կյանքով  
 Եվ սիրով, որով դեռ չէին հարթել:

Կանգնել են մոր մոտ ո՛չ իբրև ոգի,  
 Ու իբրև տեսիլ անդրշիրմական.  
 Միայն մայրը չէ զգում իր կողքին.  
 Տեսանելի են նրանք ամենքի՛ն,  
 Նրանք, որ ընկան,

և չկա՛ն,

և կա՛ն.

Ու երբ որ մայրն է ստորագըրում,  
 Իզուր չի թվում, թե նույն այդ Կոշին  
 Իրենց անունն են նրա հետ գրույ  
 Եվ որդիները — արյա՛մք են գրում,  
 Որ թափված արյունն իզուր չկորչի...

29. XI. 51  
Մոսկավ

Թայց դարձել են ո՛չ թե միայն  
Նքան, որ մեր դեմքի վրա  
Անցյալ փառքի ցոլքն է փռում:

Ում որ պետք է՝ թող իմանա՛,  
Որ վերքերն այդ սպիացելու  
Փակվել են,

Թայց...

՚իբրև բռո՞ւնցը

22. ՎԻՒ. 51  
Նազեալու

## ՍՊԻԱՅԵՐԸ

Վերքերն արդեն սպիացել  
Ու նշան են միայն դարձել  
Անցյալ փառքի ու խոյանքի —  
Ա՛յն ամենի, ինչ անցել է,  
Ինչ ապրել ու զգացել են  
Մեր ժարմինը ու մեր հոգին:

Վերքերն արդեն սպիացել,  
Ու կսկիծն է նրանց անցել,  
Թայց և այնպես բավական է  
Օրվա թերթը նորից բացել,  
Տեսնել՝ այնտեղ ինչ են գտում  
Ատլանտյանի այն ափերից,  
Բավական է, որ արկերից,  
Ամենակով կրակներից,  
Պատերազմից, մահից խոսեն.  
Բավական է ստվեր մի սե  
Մոտենա մեր ժաքուր խղձին,  
Բավական է մի ցուրտ փշի, —  
Սկսվում է սպին նվալ,  
Եղ այն կսկիծն է արթնանում,  
Որ ստիպում էր մորթ լալ,  
Կրոհի էր որդուն տանում:  
Այն կսկիծը, որ հինգ տարի  
Ամեն տան մեջ իմ աշխարհի  
Աներեռյթ հյուր էր դարձել...  
Այդ կսկիծն է վաղուց անցել՝  
Մեր վերքերն են սպիացել,

## ՄՈՍԿՎԱՅԻՑ

### ԵՐԳ ՄՈՍԿՎԱՅԻՑԻ ՄԱՍԻՆ

Մոսկվա՝... Եվ չե՞ն ճարվում այն բառերը, որով  
Պիտի հյուսվի երգը նրա մասին.

Ե՛րգ, որ արյուն դառնա, մարդկանց երակներով  
Արյան նման խայտա, արյան նման հոսի,

Ե՛րգ, որ ծանոթ լինի մանկութ երգի նման,  
Եվ նոր լինի ու թարմ՝ ինչպես գարուն.  
Ե՛րգ, որ հուզի, ինչպես հեռվից եկող նամակ,  
Եվ կարկալ՝ ինչպես հայրենի տան առուն:

Որ Աինի նման այն երգերին, որտեղ  
Խինդի փրփուրի տակ հուզման գետն է կորչում:  
... Սակայն դու էլ, իմ սի՞րտ, այդ դու էլ ես հորդել...  
Զկրկնված նոր ե՞րգ... Դու իզո՞ւր ես փորձում:

Հիմա ես հասկանում. Հապա ինչպե՞ս իրար  
Չնմանվեն երգերն այս քաղաքի մասին,  
Երբ նույն այս հուզմունքն է պատել նաև նրանց,  
Ինչպես որ քեզ պատեց ահավասիկ:

... Երգն է տուժում գուցե, բայց շահում է Մոսկվան,  
Որի անունը հենց, եթե կուղեր,  
Հենց այդ շգրված դեռ, չեղած երգի նման  
Համայն աշխարհին է կարողանում հուզել:

23. XI. 51  
Մոսկվա

### ՄՈՍԿՎԱՅԻՑԻ

Ո՛չ մի բարձունք մերձաստեղ,  
Ո՛չ մի Մասիս, Հիմալայի,  
Բայց Մոսկվայից, բայց այստեղ  
Շատ պվելի հիմա լայն  
Ու պարզ, ու լավ ես տեսնում  
Չորս ծագերը աշխարհի  
Եվ ծագերը այն գալիք,  
Որ աննկատ են հասնում,  
Ինչպես մանուկն արգանդում,  
Աղատությունը՝ բանտում:

Ո՛չ մի բարձունք մերձաստեղ,  
Եվ Հիմալայ կամ Մասիս,  
Բայց Մոսկվայում, բայց այստեղ,  
Ինչպես բարձր անհասից,  
Ավելի սուր ես դիտում,  
Ավելի խո՞ր հավատում,  
Որ չի կարող շղթայվել  
Ու փականքի տակ պահվել  
Ինչպես մանուկն արգանդում  
Աղատությունը բանտում:

Ժխո՞ր, աղմո՞ւկ, եռուզե՞ռ  
Մի մարդկային ժիուն ծո՞վ:  
Բայց ժխորի՛, ժփանքի՛,  
Եռուզեռի՛ հենց միջով  
Այս եղակի քաղաքի  
Փողոցներում է լսվում

Քաղցր զնդոցը բահի  
Զինաստանի զաշտերում  
Եվ ոտնաձայնը մահի  
Վիտնամի վաշտերում.

Եվ այն խռովքն ահարկու,  
Որ խլրում է անգամ  
Եգիպտական համբ ու կույր  
Սֆինքսների հոգում քար...  
Հենց այստեղի՛ց, հենց այստեղ՛ո  
Լսում ես պարզ ու հստակ.  
Երկիր կոչված այս գնդում  
Դարրասներն է բախում փակ  
Ինչպես մանուկն արգանդում՝  
Ազատությունը բանտում:

25. II. 52  
Մոսկվա

### ՄՈԽԱՌՎՅԻՆ

— «Սովորական բան է, մանրուք է սա», — արագ  
Պիտի ասի իսկույն  
Նա, ով գեթ մի օրով այս քաղաքն է մտել:

Այո՛, մանրուք է սա,  
Սովորակա՞ն այնքան և հասարա՞կ,  
Որ կարող ես անգամ չնկատել:

### Այսպիս՝

շտապում ես և կամ ման ես գալիս  
(Անկարեսը է սա, երկրորդական):  
Եվ դու թուխ ես, ինչպես մի հնդկական Վալի,  
Եվ աշքերդ շեղ են՝ կիրգիզական:  
Եվ աշքերդ սե են — սե խաղողի հատիկ,  
Բերանդ է ընդգծված՝ ինչպես արար,  
Քիթը ուղիղ, ասես ֆրագմենտ է անտիկ,  
Եվ դու ման ես գալիս քո ժամերին պարապ:

Հանկարծ դեմից, կողքից,  
Միշտ ռներեցեք խոսքով,  
Մեկը դիմում է քեզ  
և դու կանգ ես առնում:  
Նա շեկ մազեր ունի,  
ասես զօծված ոսկով,  
Աշքեր՝ կապո՞ւյտ-կապո՞ւյտ,  
Բիլ երկինքն է կարծես այնտեղ անդրադառնում:

— «Խնդրեմ ասեք, ընկեր,  
Ո՞նց կարող եմ ընկնել»...  
Եվ նա տալիս է քեզ մի փողոցի անուն,  
Ասենք նիկիտսկու և կամ Կոլորովի:  
Եվ հարցնողի մտքով գեթ մի վայրկյան  
Չի էլ անցնում անգամ,  
Որ գու մոսկովցի շես,  
Թուրովի՞ն:

Ռուս է ոտից-գլուխ,  
Գուցե և մոսկովցի,  
Ռուս է Ռյազանից,

Դռնից

կամ Վոլգայից,

Եվ կանգնեցնում է նա, հարցնում է — Հասկացի՞ր —  
Մոլդավացուց,

օսից,

չուկոտացուց,  
Հայից:

Եվ շի անցնում մտքով  
Ոչ մի վայրկյան անգամ,  
Որ ում դիմել է նա  
Թե նման չէ ոռւսի,  
ուրեմն մոսկովցի չէ:

Սա մանրութ է, անշուշտ, սովորակա՞ն այնքան,  
Որ պոետի մտքով չի էլ անցնի անգամ  
Նստել ու երգ գրել...

Երգ շի սա է՞ւ, օ չէ՞ւ:  
Սա հենց այն է, ինչով Մոսկվան Մոսկվա մնում,  
Ինչով նա հաղթում է և ինչով նա հիմա  
Աղնիվ մարդկանց սրտում,

Երկրագնդում համայն  
Այն անխորտակ,  
անտակ,  
իսոր հավատն է ծնել,  
Որ գալիք է Մոսկվան ողջ աշխարհի համար  
Եվ իսկական բոլոր ազնիվ մարդիկ այնտեղ՝  
Վաղվա մոսկովցիներ...

25. 1. 52

Մոսկվա

## ՄՈՍԿՎԱՆ-ԴԱՎԻԼՀԱՐԴԻԱՏ

Առանց գրքի ու քարտեզի,

առանց թերթի:

Ի՞նչ է, մի՞թե ես տուրիստ եմ կամ օտար եմ:

Յուրաքանչյուր իմ երակով

Եվ տրոփով ջահել սրտի

Ես զգում եմ,

Ես տեսնում եմ խուսի աշքերով

Իմ աշխարհը

և իմ դարը:

Այս՝ առանց քարտեզների,

առանց գրքի,

առանց թերթի:

Ես տեսնում եմ.

Իմ հոր ձեռքով

Եվ քո եղբոր աշխատանքով,

Անքնոպթյամբ իմ ընկերոջ

Մեր կառույցներն են բարձրանում երկնի ներքու

Մեր կառույցները վիթխարի,

Որ աշխարհի

Եվ մարդկության զարմացական ճիշն են կորզում.

Անապատով հանկարծ հսկա գետ է վազում,

Իմ Սկանա կղղին այսօր հայացքիդ դեմ

Փոխարկվում է թերակղղու,

Իսկ վաղն արդեն

Կղղու եթե՝

Կղղու ոչ թե կապույտ լնում,

Այլ օրեցօր անտառացող ալգիների

Թունդ կանաչում:

Իսկ անտառի կանաչի տեղ,

Ուրիշ մի տեղ,

Հանկարծ կապույտ ծով է բուսնում,

Սովոր որ հլու չորեքթաթ է ինքը տալիս,

Խոնարհար ինքը զալիս

Եվ ցանկացած քո բաղաքի դուռն է հասնում:

Իսկ ցանկացած քո բաղադրը...

Ուրիշ էլ ի՞նչ,

Այդ ինչ բաղաք է ցանկալի,

Քան առաջին հերթին ինքը

Մոսկվան կարմիր:

Ուրիշ բան է փայտը կայմի

Եվ ուրիշ բան՝ նավը ծովում

Եվ ծովն ինքը:

Այբողջ կյանքում ամեն տեսակ ծովից հեռու

Բաղված եղել ու թաղված է

Մոսկվան թավուտ անտառներում,

Որտեղ որքան սիրտը ուզի

Գու կձարես և թի՛, և կա՛յմ,

Բայց ոչ երբեք ծով կամ օվկիան,

Առանց շեշտի, առանց հանգի,

Առանց ինչ-որ մակղիրների փնտռութիւն:

Ո՛չ ծնվում է այս երգն այնպես,

Ինչպես մորից առաջնեկն է ծնվում անգին,

Ինչպես հանկարծ սրտիդ խորքում,

Հաճախ նույնիսկ քեզնից թաքուն,

Մերն է ծնվում հանկարծակի:

Իսկ նման է թե սա երգի՝

Այս է պահված նրա խորքում.

— Մոսկվան հիմա դարձել է մի նավահանգիստ

Ո՛չ թե միայն հինգ ծովերի գոռ ալիքի,

Ո՛չ թե միայն նավերի ու նավակների,

Այլ հինգ մայր ցամաքների,

Այլև մարդո՞ւ և մարդկության վառ գալիքի:  
Ու եթե դեռ ոմանց համար  
Մոսկվան հիմա  
Մի փարոս է միայն անմար,  
Վաղն իսկապես պիտի զառնա  
Հանգրվան ու նավահանգիստ,  
Ուր պատմության նավն ահապին  
Մրրկի միջից ու փորձանքի  
Խարիսխները պիտի ձգի  
Այս ափերում,  
Որ այնուհետեւ իր արշավը շարունակի  
Դեպի լուսե կոմունիզմի կապույտ հեռուն:

{1952}

Մոսկվա

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

\* \* \*

Իմ հայ' ժողովուրդ, ոու փոքր ես եղել,  
Ազբյո՞ւր ես եղել և ո՛չ թե հեղեղ,

Դու փոքր ես եղել, եղել ես մի բուռ,  
Բայց մեծ է եղել ափդ լիաբուռ,

Դու փոքր ես եղել այն մուրճի' նման,  
Որ ձեւ է տվել ժայռերին համառու

Փո՞քը, բայց նման այն կշռաբարին,  
Որ միշտ դըրքել է բարու նժարին

Եկ այդ նժարը ներքեւ է տարել...  
Եկել են դարեր, անցել են դարեր,

Քեզ մատնել սրի, ավերի, զաղթի,  
Բայց տիրացել ես այսօր մի բախտի.

Որ մեծ է քո հին վշտերից անզամ,  
Եկ լա՞վ է որքան, ինչ քա՞ղցը է զգալ,

Որ այսօր, երբ որ աշխարհը համայն  
Կշռքի երկու թաթի է նման,

Դու քո պատմության դասերով բոլոր,  
Քո երջանկությամբ ու բախտով քո նոր,

Քո հին անունով, կյանքով դժվարին՝  
Սանր կանգնած ես այն մեծ նժարին՝

Որ ծանր է կշռում ո՞չ թե արկերով,  
Ո՞չ թե վառողի, զենքի հակերով,

Ո՞չ թե ավերման կրքով կատաղի,  
Ո՞չ թե մայրերի արցունքով աղի,

Այլ երջանկության մշտավառ հրով,  
Խաղաղ ծերությամբ, շիկնանքով սիրո,

Հպարտ մայրությամբ, ժիծաղով մանկան,  
Զեռքի սեղմումով բարեկամական...

Այն մեծ նժարին, որտեղ ապագան  
Ու պատմությունն նն գարձել կշռաքար:

1950, Կոյեմբեր  
Երևան

\* \* \*

Դու քո խաղողի նման ես եղել.  
Կոտրատել են քեզ, հողի մեջ թաղել,  
Բայց երբ անցել են ցրտերը ձմռան,  
Հողի մեջ թաղված վաղերիդ նման,  
Դու նոր մի ուժով նորից ընձյուղել,  
Կորված ճյուղերդ ես վերստին ուղղել,  
Եվ եթե կրկին կորվել ես՝ արդեն  
Ողկույզների տակ այն աղամանդե,  
Որ ճաքհըքել են քո քաղցրությունից,  
Մինչ դառնությունդ... դարձել է զինի...

{1950}  
Երևան

\* \* \*

Ինչ լա՞վ է, որ դու աշխարհի մեջ կաս,  
Ինչ լա՞վ է, որ դու քո ծանր բեռով  
Քո ծանր անցյալից հասար այս ներկան  
Կենաց ու մահու ճանապարհներով,

Ինչ լա՞վ է, որ դու լոկ պատմություն շես,  
Ընկած սյուն, խոյակ կամ հին ձեռագիր:  
Պատանու նման տաք է քո շունչը,  
Շիկնել է դեմքդ ներքին կրակից:

Ինչ լա՞վ է զգալ՝ դու մի կամուրջ ես,  
Որ շաղկապում է անցյալն ու ներկան,  
Եվ որ խոսում է նորից քո մուրճը  
Իր հասկանալի լեզվով անթարգման:

Որ դու աշխարհի տված հարցին էլ  
Ինձ նման ունես քո պատասխանը.  
— Ես սովետական քաղաքացի եմ,  
Ես՝ Սովետական նոր Հայաստանը:

[1950]

Երևան

\* \* \*

Ախ, ինչպես եմ սիրում ժեռ քարերի վրա  
Ինքնամոռացումը մեր խենթ զրվեմների,  
Մեր ձորբեր անտակ, մեր ծերպերը մոալլ,  
Կենդանակերպ տեսքը մեր ապառաժների:

Մեր կեռ կածանները, որ անջուր առվի պիս,  
Մերթ՝ միայնակ, խոռվ, մերթ՝ խճողուն,  
Գլորվում են սարից, գալիս ու վերջապես  
Զուլվում գետի նման լայն խճուղուն:

Զորերն ի վար խուժող մեր մշուշը կապույտ՝  
Ներշնչման պես ցնդող, հղացման պես անձե,  
Մեր ամպերի լողը, մերթ ցաքուցի՛ր, անփույթ,  
Ու մերթ՝ հանդիսավո՞ր թափո՛ր լինի կարծես:

Մեր սարերը ձյունոտ, արոտները կանաչ,  
Կարռոտը երգեցիկ՝ կոմիտասյան,  
Մեր հարսների քայլը, նազանքը մեր կանանց՝  
Ամեն մեկը խոյակ միայն մի սյան:

Մեր հին պատմությունը՝ մի փառահեղ վիպերգ՝  
Հյուսված կրկներզներով սիրանքների, ցավի,  
Ու մեր ներկան՝ իբրև և անցյալի վերջերգ,  
Ե՛վ նախերգանք վաղվա, ապագայի:

14. IV. 51

Երևան

## ԵՐԵՎԱՆԻՆ

Ա

Նա փոխվում է ամեն վայրկյան՝  
Արբունքահաս պատանու պես,  
Ե՛վ դեռ մանուկ, և առնական,  
Արբունքահաս պատանու պես:

Երեկ՝ խաղում փոշիներում,  
Լվացլում է այսօր նա, տե՛ս,  
Հայելակերպ ավաղանում  
Արբունքահաս պատանու պես:

Ինքն իր աչքում երեկ տգեղ,  
Ինքն իրենից դժողով այնպես,  
Հիմա հրձվում է իրենով՝  
Արբունքահաս պատանու պես:

Արբունքահաս պատանու պես  
Նոր է միայն նա կյանք մտնում,  
Նա ինքն իրեն նոր է զտնում  
Արբունքահաս պատանու պես:

Բայց և հիմա պա՛րզ է այնպես  
Նրա գալիքն ու ապագան՝  
Երբ որ դառնա նա առնական  
Արբունքահաս պատանու պես:

6. VII. 46  
Գանախը

Բ

Սա պատմելու բան չէ.  
Սա զգալո՞ւ բան է...  
Ա՛խ, ինչքա՞ն է տանջել  
Ինձ իմ երեանը:

Շենքերին ես նայում,  
Պալատներին վսեմ,  
Եվ ուղում ես անվերջ  
Խոսե՞լ, խոսե՞լ, իւսուե՞լ:

Եվ ուղում ես խոսել  
Ինչ-որ ուրիշ ոճով,  
Բայց կորչում է ասես  
Հայերենը քո ճոխ:

Մի «չքնաղ» է մնում.  
Մի «հոյակապ», մի «պերճ»,  
Մի մեծ «չնաշխարհիկ»,  
Մի «վեհ» փոքրիկ և՝ վե՛րջ:

Ու ծով հիացումը  
Քարանոսմ է, լռում:  
Քարանում է այնպես,  
Ինչպես հեքիաթներում:

Լեզուղ համբանում է,  
Լոկ հայացքդ է խոսում,

Կարծես մոռանում ես  
Քո մայրենի լեզուն...

Սա պատմելու բան չէ,  
Սա դժալո՞ւ բան է,  
Դրա համար պիտի  
Տեսնել Երևա՞նը,

¶

[1946]

Քաղաքամերձ անտառն իր կանաչին  
Դասդադ և աննկատ  
Դեղին ոսկեթել է ընդելուզում:  
Նորքի կտուրներին դդում ու շիր  
Արեգակի վերջին  
Լիցքերն են ծուլորեն կորպել ուզում:

### Յածում՝

Սրարատյան տաք հովտի մեջ,  
Հորդ անձրեկից հետո, Երևանն է շողում  
Աշնանային շոյող արեգակի ներքո,  
Եվ կամարնե՛րը կոր,  
Եվ լորինե՛րը մայթամերձ  
Շողշողում են, զինվում մի նոր կախարդանքով՝  
Անձրեաթաց փողոցների հայելու մեջ  
Ճանաշելով իրենք իրենց  
Ու մնալով խիստ գոհ:

Յածում Երևանն է,  
Որ թռչելով Զանգուն և անցնելով այն կողմ՝  
Կանգ է առել մի պահ,  
Որ շունչ առնի, ապա  
Նորից ձգվի դեպի էջմիածին, Փարպի.  
Նաև, որ իր մի ձեռքը Քանաքեռին հպած,  
Սյուս թիւ իր բաց  
Տարածում է դեպի այն լեռը, որ

Հին լեզենդից բացի՝ հայտնի է նոր  
 Մեր հայկական գերրից:  
  
 Երևանն է շողում իբրև հսկա մագնիս,  
 իր կողերից կախած բաղում նոր ավաններ՝  
 Փոքրիկ երևաններ,  
 Արոնք իրար հանդեսի, իբրև հարևաններ,  
 Նախանձո՞ւ չեն, սակայն նախանձախնդի՞ր են.  
 Ասֆալտ ու տուֆ հագներ,  
 Երևանի կողքին ինքնավայել կանգնել—  
 Նրանց համար ահա թե ո՞րն է խնդիրը,

Իսկ այդ ավանների անուննե՞րը խոսուն.  
 Նոր Կիլիկիան ահա,  
 Ահա Նոր Արեշը,  
 Նոր Զեյթունը,  
 Յուրաքանչյար ավան  
 տարբեր մի երկիր է,  
 Եվ ամեն մի երկիր  
 Արժանացել հարկի,  
 Հոկ այստեղ է գտել  
 Վերջին հասցեն,  
 Մոռնը:

Կարելի է կարծել, որ աշխարհը համայն  
 Սեղմվել ու փոքրացել  
 Եվ ձգվելով թովիշ այս բաղաքից՝  
 Նրա շուրջն է սիրով խմբվել հիմա,  
 Ի՞նչ է, արտառո՞ց է, զարմանալի՞։  
 Մի մոռացեք սակայն, որ այս հարցում  
 Քար զարմանքի բոլոր փակ դռներն է բացում  
 Տիսուր մեր անցյալը —  
 • Հին բանալին:

Մինչդեռ նորը, խնդրե՞մ.  
 Իբրև արվեստագետ և իսկական, և մեծ,  
 Խոսում է ո՛չ այնքան, որքան ցույց է տալիս.  
 Երևանն է շողում  
 Արարատյան բեղուն տաք հովտի մեջ:  
  
 Երևանն է շողում  
 իբրև հսկա՝ մագնիս...  
 [1946]

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱՆԴԵՍՈՒՄ

Մտնում ես ներս:

Նե՞րս ես մտնում կարծես շեմքից ապագայի,  
էկրաններ են պատերն ասես, որոնց վրա, մոտ ու հեռու,  
կինոկադրերն են համրացել այն նկարի,  
Որ հայրենի իմ բաղաքի վաղվա օրն է քո դեմ փռում:

Խայտում է սիրտ անհանգիստ: Խենթ հրճվանքի  
Ալիքներն ես կարծես զգում քո տաքացած երակներում,  
Շունչ ես քաշում ազատորեն, ասես կուրծքը երգ է զրում,  
Ռիթմիկ մի երգ՝ ազատ չափով, առանց ճնշիլ բռնահանգի:

Կա՞նգ առ այստեղ: Այստեղ բոլորն են կանգ առնում:  
Տե՞ս տողանցող այս շենքերը և աշտարակն այս նիզակվող:  
Դու կանգնած ես երեանի վաղվա շքեղ կայարանում,  
Եվ այս՝ սրահն է յյուրընկալ,  
Որ հյուրերին ձեռքով անում  
Մոտ է կանշում իր երկնաքեր աշտարակով:

Այսօր սակայն

Նույնիսկ շքեղ կայարանում  
Գնացքը քո ծով հրճվանքի  
Կանգ է առնում չափազանց քիչ:  
Զգում է քեզ իրրե մագնիտ  
Եվ հայացքը շքնաղ տեսքին է իր գամում  
Մտադիոնը «Դինամո»-ի:  
Այնտեղ, նայի՞ր  
Ոչ ֆուտբոլի խաղ կա ալսօր, և ո՛չ մրցում.

Տուֆքարի մեջ լոկ խաղում են ճառագայթներն արեգակի,  
Եվ զարդերն ու խոյակներն են շքամուտքի վրա մրցում,

Ահա և նոր Ակադեմիան,

Ուր մեր անցյալ պատմությունը

Ազատվում է իր կեղեկից փոշեթաթախ:

Ուր միգամած ոլորտներում

Աստղերի լույս գաղտնիքներն են դեռ բաց անում,

Եվ ուր սերմը միշուրինյան այգիների՝ հասունանում

Եվ աճում է նախ՝ մտքի մեջ,

Ապա՝ մեր լուրթ երկնքի տակ...

Շենքե՞ր, շենքե՞ր գեղաքանդակ,

Եվ կամարնե՞ր աղեղնածկ կորընթարդով,

Եվ փողոցնե՞ր, պողոտանե՞ր ճառագայթող,

Գործարաննե՞ր, ֆարորիկանե՞ր, որոնց մարկա'ն

Վաղը պիտի իմ հայրենի լեզվով խոսի

Վերածնված իմ եկերքի աննախադեպ կյանքի մասին,—

Եվ, վերջապե՞ս,

Իբրև լույսի, շնչող հույսի գրավական՝

Թղյակի պես ծանր նստած կայանն ահա գյումուշգէսի...

... Կինոկադրերն են փոփոխվում արագորեն,

Ահա վաղվա Ալավերդին,

Ահա Վեդի'ն,

Արտաշատը, Դվինն ահա, որոնք հիմա հպարտորեն:

Թարձրանում են մեր կապուտակ երկնքի տակ՝

Պատմությունից ժառանգելով միայն իրենց անունը թանկ...  
Խայտում է սիրտը անհանգիստ,

Խենթ հրճվանքի

Ալիքներն ես կարծես զգում քո տաքացած երակներում,

Շունչ ես քաշում ազատորեն — կարծես կուրծքը երգ է

Ռիթմիկ մի երգ՝ ազատ չափով, առանց ճնշիլ բռնահանգի:

## ՀԱՐՍՈՂԵՏԱԿԹՅԱՆ ՀԱՄԱՎԱԻՅԱՌԻՐԸ

Սովետական Հայաստանի  
30-ամյակի առթիվ

I

Բեղուն չէր այն տարին մեր սեգ լեռնաշխարհում,  
Վերից մի կապարե երկինք էր ծանրացել,  
Սրբունը՝ ջուր դարձել, ջուրը՝ դարձել արյուն,  
Մոր սրտի պես փիրուն հողն էր պղնձացել:

Խաղողի վազն անթաղ ինքն իրեն էր սգում՝  
Իր ավշային գուլալ արցունքները կոպին,  
Մարավ շրթունքի պես մեր հողն էր ճաքճրում՝  
Կարոտ հորովելին, կարոտ արծաթ խոփին:

Բարբաշանքի սովոր ջրաղացը ձորում  
Առեղծվածի նման համրացել էր կրկին.  
Աղուն բերող սայլիրն անուշ շէին ճռում,  
Եվ ալլուրի փոշին մեղմորեն չէր թառում  
Չարեաշ շինականի թավ մորուրին:

Բեղուն չէր այն տարին: Տնօրհներին շրջող  
Տերտերի պես սովը բախում ամեն գարբաս  
Աւ կյանքը դարձնում էր անհունորեն տանջող,  
Անհունորեն երկար անլուծելի մի պաս:

Մոլեգնում էր սովը ու ժանտախտը դեղին,  
Աւ Մահն էր քրքրջում անողորմ ու դաժան,  
Ֆղ ոչ լեգենդական այդ ժանտախտի պահին,  
Հայից քրքրջոցով ձայնակցելով մահին՝  
Երախճանք էր սալրել մի աղզաղագ խուժան...

Բեղուն չէր այդ տարին: Թրոցքները գյուղի  
Քիչ նորածին տեսան օձորքի տակ մթար.  
Բաժակներում շեռաց աշքալուզի օղին  
Եվ հազվադեպ երգվեց. «Նանի՞կ արա, մատաղ»...

II

Բեղուն չէր այն տարին սուրբ արգանդը հողի,  
Եվ հազվադեպ հնչեց կնունքի երգ ու տաղ,  
Բայց ժամանակն ուրիշ ծնունդով էր հղի  
Եվ հարկի տակ ամեն խավարամած հյուղի  
Մի նոր արշալույս էր հասունանում դանդաղ:

Եվ նա ծնվեց՝ ինչպես արշալույսն է ծագում.  
Մեռնող լեռնաշխարհը վերածնվեց կրկին,  
Երբ նևայի նման ալեկոծվեց Զանգուն,  
Մասիսն արձագանքեց «Ավորուայի» զարկին...

Մեր հեքիաթի նման՝ անմահական պարտեղ,  
Դրախտավայր դարձավ մեր շորացած այգին:  
Մի նոր գեղեցկությամբ փթթւց այնպես, կարծես  
Հրաշք երգն էր հներ մեր Հաղարան հավքի:

Աչքի նման զուլալ՝ նորից հոսեց առուն,  
Հորովելը ծորաց մեր արտերում բերրի,  
Եվ հավիտյան փրկված մեր սեգ լեռնաշխարհում  
Հնչեց դվարթ ձիչն ու կանը մանուկների:

III

Իմ երկրի հետ մեկտեղ՝ նրանք արդեն հիմա  
Բոլորել են իրենց երեք տասնյակ տարին:  
Հարցաթերթիկ պետք չէ նրանց կյանքի համար,  
Նրանց կյանքը կյանքն է իմ նոր Հայաստանի:

Մեծացել են նրանք՝ մայր ու մանուկ մնկաւեղ,  
Մեկը մեկով՝ հպարտ, մեկը մեկով՝ կանգունէ:  
Նրանց ձեռքի, մտքի հետքը հրաշագեղ,  
Լի անցյալը նրանց և ապագան շքեղ  
Երեսւ է հիմա ամենուրեք կյանքում:

Մեր Ականյան ջանգուն լույսի ծով է, դարձել  
Նախ և առաջ նրանց բազկի երակներում.  
Նրանց երազներն են դարձել նոր ոճ, նոր ձեւ  
Եվ վեհացել մեր լայն հրապարակներում:

Վերածվում գինու շգալարվող բոցի  
Նաև նրանց ափի մարմանդ ջերմությունով.  
Նրանց լույս քրտինքն է, որ փոխարկվում հացի,  
Վերածվում է գինու շգալարվող բոցի  
Եվ մեր հոգին լցնում կայտառ արբեցումով:

Ուր էլ լինեն նրանք՝ գործարանում, հանքում,  
Եվ բանաստեղծ լինեն, թե դիտհակա՞ն չահել,  
Նույն մարտիկն են նրանք մեր փոթորկու կյանքում,  
Նույն մարտիկն են նրանք, ինչ երեկ են եղել...

Զէ՞ որ նրանք միայն չեն կառուցել շնորհը  
Ու բարիքներ քամել հողից ու երկաթից,  
Այլև հողագնդի ապագան են փրկել  
Բարբարոսի դաժան ու արյունոտ թաթից:

Զէ՞ որ նրանք, իբրև ապատության զավակ,  
Զինված նախ խոր սիրով, հետո մեայն՝ զենքով,  
Թշնամու դեմ ելան խիզախ ու անվարան  
Եվ ուր հասան կովով՝ աղատություն տարան  
Երենց զինվորական շինելների ներքո...

\*

Ճերմակ մաղերին է փառքը սիրում նստել,  
Իսկ այս սերունդն իրոք արժանի է փառքի,  
Դրա համար գուցե նրանց քունքերն արդեն  
Անժամանա՞կ այնպես՝ ճերմակել են կարգին:

26. XI. 50  
Երեսն

# ՍԻՐՈ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Любви все возрасты покорны  
А. С. Пушкин

## ՆԱԽԵՐԳԱՆՔԻ ՓՈԽԱՐԵՆ

Դու մի՛շտ ինձ համար եղել ես կյանքում,  
Մի՛շտ, թեկուզ հաճախ ուրիշի տեսրով —  
Այսօր աղմբկոտ այս մեծ քաղաքում,  
Երեկ՝ հեռավոր ինչ-որ զյուղակում՝  
Աշքերիդ պես բիլ երկնքի ներքու։

Ես հենց քեզ հիտ եմ խաղացել «տուն-տուն»  
Ու դշյակ շինել կավից ու քարից։  
Թեզնով է լցված մի մե՛ծ մանկություն,  
Երազներով լի մի պատանությո՞ւն  
Եվ շահելությո՞ւն մի փոթորկալից։

Տասնյա՞կ անուն ես ունեցել կյանքում,  
Տասնյա՞կ ձեւերով կանգնել ես իմ դեմ  
Եվ միշտ ներշնչել այն սերը մաքուր,  
Որ և իր տասնյակ էսքիզներն արդեն  
Թու պատկերով է այսօր ավարտել։

1953 թ. հունիս  
Նավազլու

Ա

## ԱՆՍՈՒՌԻԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ

I

Ժայռերն ի վեր դանդաղ մազլցում է ճամփան  
Ու հասնելով լեռան սեղ կատարին՝  
Հոգնած ճամփորդի պես կանգ է առնում մի պահ,  
Պառկում շվաքի տակ ծեր անտառի։

Եվ բացվում է իմ դեմ, իմ աշքերի առաջ  
Իմ հայրենի գյուղը — այնաեղ՝ ցածում։  
Քնաթաթախ գյուղի տանիքներից ելած  
Երդիկների ծուփն է ծո՞ւլ հորանջում։

Գետակն, աղբյուրների շարաձճի որդին,  
Թագալվում է ձորում ու փրփրում.  
Նրա ժայռոտ ափին ավերակը բերդի  
Իր հին պաշարումն է մտաբերում...։

Նախիրը բառաշելով դաշտ է գնում հիմա,  
Այգիներում, հոգնա՞ծ, ջուրը հուն է գտնում...։  
Թաց է մեր դռնակը կարոտ գրկի նման,  
Եվ ես — կրկի՞ն մանուկ — մեր հին տունն եմ մտնում։

24. V. 46  
Երես

II

Չոր մասրենու մի հին չափար,  
Որ այգին է շրջապատում,  
Չափարի տակ առյուժաբար  
Մրափում է մեր շալ կատուն։

Չափարի տակ մի շար եղինջ  
Շուլալվել է փշատենուն  
Եվ մերթ ընդ մերթ դաղում է ինձ,  
Երբ նրան եմ ես մոտենում։

Եղինջի մոտ՝ մի թո՛ւփ խոնարհ,  
Թփի վրա՝ մի վառ զատի՛կ,  
Թփի երը՝ թա՛ց, կիսախոնա՛վ,  
Շաղփած շողով կաթիլ-կաթիլ։

... Թփի վրա մի վառ զատի՛կ՝  
Մանկությունս է թռե՛լ, ցնդե՛լ  
Ինչպես ցողի մի շինչ կաթիլ  
Տարիների արևի դեմ։

Մանկությունս է թռե՛լ, ցնդե՛լ,  
Բայց իմ սրտում մինչեւ հիմա  
Մի մեղմ կոկիծ մնում է դեռ  
Այն եղինջի խայթի նման...

21. v. 46  
Երևան

III

Խաղա՛ղ-խաղա՛ղ իրիկոմն էր ողջը պատում,  
Դրսում մովին էր իջնում խաղաղ:  
Սիրում էի ձեր տան բակում խաղալ «տուն-տուն»,  
Միայն քեզ հե՛տ, քեզ հե՛տ խաղալ։

Աստղերն էին ելնում մեկ-մեկ, լուսինն արծաթ  
Լեռան ժայռոտ պունդին էր հոգնած նստում։  
Մովիք՝ լուսնից հալածվելով՝ իջնում էր ցած,  
Բայց զո՞ւր էին, իզո՞ւր էին կանչում մեզ տուն։

Վառվում էին ճրագները մեկ-մեկ գյուղում,  
Ըներն էին մեկ-մեկ տալիս լուսնահաշի։  
Ես շեմ հիշում՝ ինչպե՞ս էինք մթնում խաղում,  
Բայց զո՞ւր էին, իզո՞ւր էին կանչում հացի։

Ինձ մի մթին իրիկուն է կարծես պատում.  
Մոռացել եմ, ես շեմ հիշում շատ բան հիմա,  
Բայց հիշում եմ՝ սիրում էի խաղալ «տուն-տուն»,  
Միայն բեզ հետ՝ ձեր տան բակում, մեր տան դիմաց։

2. v. 46  
Երևան

## IV

Մեղ ստիպում են, որ խռով մնանք.  
— Չպետք է մեկտեղ խաղալ ու խռուել,  
Ա՞յս այդ մեծերը... Կովել են նրանք  
Եվ իրար ծանր խռոքեր են ասել:

Զեն խռում նրանք հենց երեկվանից,  
Մեղ էլ են սաստում.— Չպե՛տք է խռուել,  
Ա՞յս, ես ի՞նչ ասեմ քո պառավ նանին,  
Ա՞յս, ես ի՞նչ ասեմ հորթուկին ձեր սեւ,

Ամուր չի կապում հորթուկին նաև,  
Ու պառավն ինքը քնում է շողին:  
Եվ անմիտ հորթը՝ այդ անդիտանը,  
Գալիս է մատում մեր ջրած այդին,

Ուտում է նա մեր անմոռուկները,  
Վարունգի մատղաշ տնկերն է ոտնում.  
— Գառնանա՞ն պիտի մեր վարունգները,—  
Խեթում է հայրը ու տեղ չի գտնում:

Ես չեմ հասկանում հորս մտքերը  
Եվ այս մեծերին չեմ սիրում էլ ես.  
Լավ չէ՝ զառնանան մեր վարունգները,  
Քան թե ես ու դու դառնանանք այսպես...

17. V. 46

Երեան

1953, հունիս

Հանախակ

## V

Ա՞յս, ես գիտե՛մ, չէի՛ր սիրում,  
Հիմա գիտեմ ես անկասկած...  
Վազվղում ենք մենք սեզերում,  
Խոտերի մեջ խոնավ ու թաց:

Հետո նստում ուրախ ու գոհ,  
Երեքնուկի թուփ ենք քաղում  
Եվ այդ ծանոթ երեքնուկով  
«Սիրեմ-սիրեմ» անվերջ խաղում:

Անուններում երեք հոգու  
Եվ զո՞ւ կաս միշտ, և ե՞ս միշտ կամւ  
Քո անունն եմ ես միշտ պոկում,  
Իսկ դու իմը՝ ո՞չ մի անգամ:

Որբա՞ն անգամ եմ ես վանել  
Տխուր մտքերն ինձնից հեռու  
Եվ վախեցել եմ միտք անել,  
Որ դու... որ դու ինձ չես սիրում:

Չէ՛, ինձ չէի՛ր, չէի՛ր սիրում...  
Թե չէ՝ ի՞նչ է, բա՞րդ էր այդքան  
Գտնել երեք անուններում  
Իմ անունը գեթ մի անդամ:

1946 թ. Ժայիս

Երեան

18. VII. 53

Նալեւու

## ՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՂԻԿՆԵՐԸ

VI

Այն առուն, որ ձեր բակով է հոսում,  
Անցնում է անվերջ մեր պատի տակով,  
Ողջ օրն աղմբկում, ուրախ վաղվըզում,  
Տանջում է նրան լուրջ ու կատակով.

Մերթ հրում է նա, մերթ՝ խտուտ բերում  
Ինձ նման հլու-հնաղանդ պատին,  
Պատը սիրում է, ուստի և՝ ներում  
Այդ շարաճճի խաղերը անթիվ:

Եր առուն շատ է երբ երես առնում,  
Երեն մոռացած՝ պատն էլ, ինձ նման,  
Ստվերով զգո՞ւց ցած է կռանում,  
Ուզում է գրկել-համբուրել նրան:

Փախչեիս, դիտմամբ, առուն սայթաքում,  
Ընկնում է հանկարծ գիրկը մեր պատի,  
Ստվերը պատի իշնում է թաքուն,  
Բայց առուն շտապ ելնում է ոտի:

Շիկնանքը պահած իր պաղ հատակում՝  
Մի պահ վարանքով նախում է առուն  
Եվ ալիքներով... շրջ՝ իսկ,— ապտակում,  
Քրքքո՞ւմ, քեզ պես, փախու՞մ է հեռու...

10. V. 46

Երեան

20. VII. 53

Չանախչի

Ես գիտեի, որ դա չէր կարելի.  
Կծեծեր մայրս, եթե իմանար...  
Դու, նստած բակի սալաքարերին,  
Գուլզա ես գործում եղբորդ համար:

Իսկ եղբայրդ ու ես ռտափուկս ենք խաղում՝  
Հոգնած քարտեղից, թիվ ու գծերից:  
Եվ ես՝ հաղթողս ցանկացած խաղում,  
Ես՝ ճանաշվածս նույնիսկ մեծերից,

Պարտվո՞ւմ եմ այսօր, ես ամեն անգամ  
Տանով եմ տալիս ու... չեմ ամաշում,  
Եղբայրդ էլ, պա՛րզ է, խնդում է քահ-քահ  
Եվ ամեն անգամ ինձ կույր է կոչում:

Ես կո՞ւյր... կո՞ւյր էի մինչկ այդ կյանքում  
Ու բացվել էին աշքերըս արդեն.  
Գարնան գիծ քամին, քեղանից թաքուն,  
Քո կուրծքն էր բացում ու փակում իմ դեմ:

Ես գիտեի, որ դա չէր կարելի,  
Բայց նալո՞ւմ էի — կո՞ւյր չէի արդեն,  
Այդ կյանքն էր բացվում իմ գեմ, սիրելի՛ս,  
Եվ արժե՛ր խաղում կույր լինել, պարտվել...

21. V. 46

Երեան

17. VII. 53

Չանախչի

## II

Աշնան եղյամն է իշել ձորերին,  
Քարին ու թփին-ամենուր իշել։  
Մեր ջահել, մատղաշ մեր խնձորենին  
Սպիտակել է, ինչպես տատն իմ ծեր։

Գոյում երինջն է բառաշում տխուր,  
Մինչդեռ մարագում խուրձն է առվույտի։  
Երդիկն ու հայրս շիրովս են ծխում։  
Ծունը կլանչով ելնում է ոտի։

Դու, չստեր հագած, վազում ես բակով,  
Թռչում ես առուն, ինձ ես որոնում,  
Ես, ոտարօրիկ, ձեռքիս մահակով  
Եղյամն եմ թափում մեր խնձորենու։

Ուրախ բառաշ է բարձրանում զոմում՝  
Պահածո դարձած խուրձի հոտերից,  
Ա՛խ ալդ հայացը, որ դու ես զամում  
Եղյամից սառած բորիկ ոտերիս...։

Յուրատ է! Թոնիրն է բորբոքվում ներսում,  
Ախ այդ հայացքը... Զմեռ է արդեն,  
Մինչդեռ շգիտես, չէ՛, ի՞նչ եմ ասում,  
Քիտես՝ արբունքի զարունն է մեր դեմ...։

21. V. 46

Երեան

21. VII. 53

Նաւալու

## III

Մեր թոնիրն այսօր բորբոքուն է։  
— Եկ մեր տո՛ւն, եկ խաղանք միասիննէ  
Երազկոտ ու տաք է մեր տունը։  
— Եկ խոսենք մեր զալիք տան մասին։

Կրակը բորբոքվում է ներսում,  
Եվ ծովի է դուրս փշում երդիկը։  
— Առանց քեզ, ա՛խ, իմ սիրտն է մրսում,  
Առանց ինձ չի տիրում սրտիկրդ։

Մայրս, տե՛ս, խմոր է նա հունցում։  
— Կարիի, թե լինես իր հարսը։  
Այդ մասին դու ի՞նչ ես մտածում։  
— Թե մերժես՝ կատի՛ քեզ, այդ պարզ է։

Խմորը հորդում է տաշտից դուրս։  
— Կարոտս հասել է կատարին։  
Ռուխը, որ ելնում է երդից դուրս,  
Այդ քեղ է նա կանչում. — Մո՛տ արի։

Սակայն դու իմ կանչը չես լսում.  
— Չե՛ս լսում, թե՛ քնքուշ ստում ես...  
Ա՛խ, ինչո՞ւ մեծացար այդպես շուտ,  
Որ այդպես ո՞ւշ-ո՞ւշ զաս մեր տունը...։

10. V. 46

Երեան

## IV

Ինձ թվում էր նա գեղեցիկ,  
Ինձ թվում էր նրա նման  
Ուրիշ աղջիկ գյուղում չկա:  
Այս չի խոսում սիրո մասին՝ ձեր կարծիքով:  
  
 Մինչև հիմա կա այն հացին,  
Որի բնին մինչև հիմա  
Նրա անվան փորվածքը կա:  
Այս չի խոսում սիրո մասին՝ ձեր կարծիքով:  
  
 Նա ինձ համար թանկ էր, անգին,  
Ես առաջին անգամ հանգին  
Նրա անվամբ ծանոթացաւ  
Այս չի խոսում սիրո մասին՝ ձեր կարծիքով:  
  
 Կարծես ինքս էլ ինձնից թաքուն,  
Կարմըրելով թունդ ամոթից՝  
Ես գողություն արի կյանքում.  
Նրա նկարն անհետացավ  
Մեր ջոկատի պատի թերթից...  
Արժե՝ արդյոք շարունակել՝ ձեր կարծիքով...  
 1. ՀԻ. 52  
Սոսկա

## V

Սաղկանկար շալը ուսիդ՝  
Ձեր տան կտրին նստում ես դու.  
Սով աշքերով կանչում ես դու  
Տղային ձեր հարկանի:  
Բայց նա ինչպե՞ս և ո՞ւր գա նա,  
Երբ հոնքերով սաստում ես դու,  
Խեղճ տղային տանջո՞ւմ ես դու:  
Նա շպիտի, թե ինչ անի:

Իսկ հետո էլ՝ ուսերիցըդ  
Շալը ահա առնում ես վար,  
Խաղում ես դու ծովերի հետ,  
Մեկ էլ նրա՝, նրա՝ հոգու,  
Որ շգիտի՝ գա՝, թե շգա,  
Եվ մոլորված խեղճ ու շվար՝  
Քեզ պես ծաղկած իրենց այգու  
Գոնակն է լոկ բացում-փակում:

Երբ աշքերով կանչում ես դու  
Ու հոնքերով սաստում նրան,  
Դու շգիտե՞ս, չէ՝, շգիտես՝  
Ոնց ես հանում նրա հոգին,  
Անս, ի՞նչ անի, դե ի՞նչ անի  
Հարկանի ձեր խեղճ տղան,  
Փոքրիկ էլ չի, որ վեր կենա,  
Մոր մոտ գնա

ո՞ւ բողոքի:

23. VI. 46

Երես

17. VII. 53

Նազարետ

իմ արցունքները թեպես չեն հոսում,  
Բայց ինքը սիրտս արցունքով է թաց՝  
ինչպես մանկության օրերում անցած,  
Երբ լալիս էի ես անարտասուր  
եվ մորըս ասում.

— «Քաղցա՛ծ եմ, քաղցա՛ծ»...

Բռնում էր մայրս հարցերի ճամփան,  
Որ սիրտս շահի իր ունեցածով.  
Չի՞ր, շամի՞շ, փշա՞տ, թե՞տանձ ու խնձորէ  
Իսկ ես մտքիս մեջ ունեի մի բան  
Եվ մյուսները մերժում էի շոր:

Հարցնում էր էլի իմ մայրը շահել.  
Ու թվարկելիս և այն էր հիշում,  
Ինչ որ ես էի մտքումըս պահել  
Կուզեի, որ նա մեկից կուաներ,—  
Եվ այդ էլ էի գառնացած մերժում:

Արցունքով է թաց իմ սիրտը կրկին...  
Գիտե՛մ, թե ինչով կհանգստանա.  
Աչքերը նրան հանել են խելքից.  
Նա թունդ է առնում քո տանջող քելքից:  
Բայց ինչպե՞ս քո դեմ նա իրեն րանա:

Տեսնում եմ ես քեզ, երբ ոսկեհանդերձ  
Քո հաղուստներով շորոր ես տալիս,  
Երբ սափորն ուսիդ աղբյուր ես գալիս:

Բայց ես քեզ՝ սիրո ծարավով հանդերձ  
Չտեսնելու եմ վերստին տալիս:

Թե խոստովանեմ՝ զուցե չմերժես,  
Բայց ցավալի է, որ միանգամից  
Դու չես կուահում և մի անգամ ինձ  
Այնպես չե՞ս նայում, չե՞ս ժոտում այնպես,  
Որ այսպես լցվա՛ծ, լքվա՛ծ շպամ ինձ:

23. V. 46

Երեսն

21. VII. 53

Նավշալու

## VII

Մառերն են բացվել, բողբոշել նորից,  
Մայիսն է կրկին իջել ձեր այգում.  
Բուրժունք է ելնում տամուկ հողերից,  
Մանթի խայտանքով սիրտս վարակում:

Գանգուր բաղեղն է աճել վերստին,  
Փարվել շափարին ծաղկած ձեր այգու,  
Կարոտդ է այդպես փարվել իմ սրտին,  
Գաղտնիքդ սակայն... լեզուս է փակում:

Գարո՞ւմ: Աշխարհում նորից հիմա նա  
Ինչ ունի՝ փոե՞լ, բացել է ինքը:  
Ինչ լա՞վ է գարնան գաղտնիքն իմանալ,  
Երբ թաքուն է մեր... սիրո գաղտնիքը:

ՀՀ. V. 46

Երևան

Տ1. VII. 53

Նավալու

## VIII

Մեր տնից ձեր տուն՝ կալաշեն մի պատ,  
Եվ այգուց այգին՝ մի բարակ առու,  
Մեր հին տանձենու ճյուղը մրգապատ,  
Մեր փշատենին մեջքով իր սապատ  
Զեր այգու մեջ են մրգերը փոռում:

Մեր տնից ձեր տուն մի պատ է միայն,  
Իմ սրտից սիրտը՝ պարիսպ աճաղին,  
Որ ինձ օղակեց այս երեկոյան,  
Ինչպես նշանի մատանին քո այն՝  
Զվարթ աղմուկում նշանդրերի:

Մեր այգին ցավից կուշ եկել հիմա,  
Ցանկապատվել է փշով մասրենու,  
Եվ ամոթահար՝ քո դրժյան համար՝  
Զեր ասող-խոսող առուն էլ հիմա  
Թփերի մեջ է անվերջ թաք կենում:

Զարմանքից ապշած՝ մեր հին տանձենին  
Թարի գլուխն է թափ տալիս ցավով.  
Մեր անուրջներին, շշուկին սովոր՝  
Ուսն է թոթափում և ձեր հացենին —  
Իրավունք ունի, նա՝ չէ հանցավոր:

Հիմա ի՞նչ անել, ի՞նչ է հարկավոր,  
Թո՞ղ որ ժողովը քո հարցը քննի,  
Թո՞ղ որ բեր առաջի կունեն «բալբեր»,

Թո՛ղ որ հորջորջվեն ռոկսակ ու քավոր», —  
Սերը չես ծածկի փրփուրով քենի...

Մեր տնից ձեր տուն՝ լոկ ցածրիկ մի պատ,  
իմ սրտից սիրտը՝ պարիսպ ահագին,  
Քո մատի վրա դեռ թանաքալատ  
Այդ դու ես կրում մատանիդ հպարտ,  
Բայց նա սեղմում է ի՞մ սիրտն ու հոգին:

14. Վ. 46  
Երևան  
20. VII. 53  
Նավալու

## IX

Հիմա ողջն ասես մի հերիաթ լինի, այնքան է հեռու,  
Հիմա ողջն ասես լինի մի ծանոթ, մի անցած երազ:  
Հերանցդ տնից, որ դեմի սարի լանջին է թառում,  
Իշնում ես դու ցած՝ գլխարկդ թեքած մի կողքի վրա:

Քո ափսեաձեկ գլխարկը դեղին միշտ թեքած մի կողմ,  
Ինձ այնքան ծանոթ քո կանաչավուն զգեստը հապիդ,  
Երբ անցնում էիր դարրոցի շենքի ու մեր տան կողբով,  
Դու նման էիր, շատ էիր նման արեածաղկի:

Չէ՛, այդ ե՛ս էի, ե՛ս էի նման արեածաղկի,  
Արտեղ դու՝ այնտեղ ե իմ գլուխն է ակամա հակվում,  
Արտեղ որ դու ես՝ միշտ նույն գլխարկը ու շորք հագիդ,  
Ինձանից անկախ, ուրիշից թաքուն՝ այնտեղ եմ թեքվում:

Շատ զուր է հոսել — անցել են արդեն տարիներ քանի,  
Մեծ քաղաքների մայթերում արդեն՝ ես նույնիսկ հիմա  
Երբ հանդիպում եմ քեզ նման մեկին՝ միշտ շուր եմ գալիս,  
Միշտ ետ եմ դառնում՝ արեց սիրող այն ծաղկի նման...

23. I. 47  
Երևան  
20. VII. 53  
Նավալու

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻՐԾԸ

I

Իմ օրորանն էր հեռու մի գյուղակ,  
Սապատ տանիքով ծխոտ մի հյուղակ,  
Ուր մանկությունն իմ ոչ ոք չի խաբել  
Խաղալիքներով:

**Պաղ ալիքներով**  
Լվացվում անփուլթ, դեմքս էի սրբում  
Ինչով պատահեր, մեծ մասամբ թերով,  
Եվ, լցուն սիրով ու անրջանքով  
Ու մի կարոտով, որ անուն չունի,  
Պաշտ էի ենում զառների հետքով,

Իմ գառներն էին մուշ-մուշ արածում,  
Իսկ գարնան հովը շվի էր ածում  
Վայրի հացենու փշակում խորունկ,  
Ուր ծաղկել էր մի սիրո անմոռուկ:

Իմ ուսին էիր մեղմորեն փարվում,  
Չեռքս էիր բռնում ափերով քո տաք...  
Ողջը աշխարհում իմ շուրջն էր փռվում,  
Իսկ ես՝ ողջի հետ՝ քո ոտքերի տակ...

Գառներն՝ իմ ձայնին, ես քո հայացքին  
Հնապանդ այնպես և այնպես խոնարհ,  
Շրթներիս վրա խոսքը հիացքի,  
Երջանկությունից աշքերս խոնավ՝  
Տուն էի գառնում իրիկնապահին,  
Եվ այդժամ միայն, միայն այդ պահին

Հասկանում, որ մի մեծ բան է պահաս.՝  
Որ ես մենակ եմ և որ գու չկաս,  
Որ գու եղել ես իմ երազներում,  
Որ ես խարվել եմ երազանքներով:

... Իսկ գու այդ պահին ինձանից հեռու,  
Խաբլած ես եղել խաղալիքներով.  
Տարված ես եղել նույն այն գրքերով,  
Որտեղ հերոսի-ասպետի գերում  
Ես էի կրկին քո սիրտը գերում...

... Անուն շունեիր գու այն ժամանակ,  
Զէ, որ սիրելի՛ս, դեռ այն ժամանակ  
Ո՛չ երջանկություն, ո՛չ կարոտ, ո՛չ սեր  
Եվ ո՛չ տիրություն շունեին անուն:

Ես հիմա եկել ու քեզ եմ հասել  
Ո՛չ երազանքով, այլ իրականում,  
Ես սիրում եմ քեզ նույն սիրով հիմա  
Եվ պատանեկան նույն երազանքով:  
Այժմ սիրելի անունիդ համար  
Շրթներս են դողում մի գորովանքով,

Որ նույնիսկ հիմա գեռ անուն շունի,—  
Թայց ես, փոխարեն քո թանկ անունի,  
Երգերում դարձյալ քեզ «սեր» եմ կանչում,  
Անվանում եմ «բախտ», «կարոտ» ու «թախիծ»,  
Կուշ գալով ցավից և ոչ թե վախից՝  
Մերթ ընդ մերթ նաև տահնչանք» եմ կոշում:

21. VII. 53

Նազարե

## II

Թե ողջն այս էր նույնիսկ՝ լոկ մի գիշեր անցած,  
Այդու շափարն այն հին, այն կարկաշող առուն,  
Ու մեր սովերները մթնում արձանացած,—  
Ես քեզանով դարձյա՛լ այնպես լի եմ, հարուստ,

Թե ողջն այս էր նույնիսկ՝ ողջը քի՛շ չէր, անդի՛ն.  
Այնտեղ տաք շշուկից ձմռան ձյունն էր հալլում,  
Ասես մեղ էր լսում կիսաբնած այդին,  
Մինչ մեր խոսքերի տեղ աղբյուրն էր կարկաշում:

Թե ողջն այս էր նույնիսկ՝ կյանքը քաղցր է հավետ  
Եվ ապրելու համար արժե մեռնե՛լ անգամ,  
Միայն թե դու կրկին կախարդես ու թովես,  
Միայն թե քեզ նորից իմ մատներով զգամ:

Միայն թե այն կավե շափարը շեն մնա,  
Այգին ու գեղձենին ծաղիկ հազնեն նորից,  
Եվ գեղձենու ծաղկի առէջների վրա  
Մնա թեկո՞ւղ մի շունչ քո տաք շշուկներից:

21. III. 46  
Երևան

## III

Քուն եմ մտնում և արթնանում նույն կարոտով,  
Թե միզուցե անց ես կենում իմ տան մոտով,

Թե միզուցե դու թեքում ես ճամփադ հանկարծ,  
Որ բորբոքես հին հրդեհը դեռ չհանդած,

Որ բորբոքես քո հայացքով շվերծանվող,  
Քո ժպիտով և վարակիլ քո ծիծաղով.

Այն շերմությամբ, որ չի այրում, այլ խորովում,  
Այն մեղմությամբ, որով հաշտվում ես, խռովում:

Այն ձեռքերով, որ խոսում են իմաստալից,  
Չասված խոսքից ասված խոսքի իմաստ տալիս

Այն նազանքով, որ նազանքից շատ է հեռու,  
Այն բաժանքով, որ բաժանքից շատ է հեռու...

Ահա ինչո՞ւ ես ապրում եմ այն կարոտով,  
Որ նե՛րս կղաս, ո՛չ թե կանցնես իմ տան մոտավու

[1953]

## IV

Աղջր այս է. մի չերմ հայացք անբարբառ ու անհանգիստ,  
Որ փնտրում է ու քեզ գտնում փողոցների մայթերում,  
Աւղեկցում է հեռվից-հեռու ինքնավստահ քայլվածքիդ,  
Որ փոշու մեջ հետքն է թողնում, իսկ գրոշմը՝ սրտերում:

Այնուհետև՝ փակ կոպերս քեզ ծածկում են իրենց տակ...  
Կոպերիս տակ այնքա՞ն ծանոթ քո քայլվածքը զգալով,  
Քեզ հետ մեկտեղ, քեզնից հեռու ես քայլում եմ գլխահակ,  
Քեկուզ մի բառ քեզ ասելու փորձությանը անկարող:

Աշնան օրը ծանրանում է իմ հայրենի քաղաքում,  
Իրիկվա հետ ստվերները երկարում են մայթերին:  
Ստվերի պես՝ դու-օրորո՛ւն, դու-շորորո՛ւն, քեկրեկո՛ւն՝  
Մերթ՝ մոտենում, մերթ ինձանից հեռանո՞ւմ ես, իսուլու  
տալիս:

Մոտենում ես կիսամթնում, ծածկերի տակ խանովի.  
Հեռանում ես՝ լապտերների մոտիկովթյունն զգալով,  
Ահա այսպես՝ ես քայլում եմ քեզնից հեռու և մոտիկ՝  
Եղուկով իսկ քեզ կանչելու փորձությանը անկարող...

Եվ ինչ լա՞վ է, ինչ լա՞վ է, որ բանաստեղծ եմ ես, անգին,  
Եվ շակնարկած անգամ թեթև, մի խոսք շասած քեզ կյանքում,  
Ես կարող եմ երգեր գրել ստվերների՛, պատրանրի՛,  
Կոպերի տակ լուս ամփոփված սիրո՛ մասին այս թարուն:

## V

Խոստովանանք լինի՛ ես քեզ մոտ եմ դալիս,  
Խղճի թեթև խայթից հոգուդ գուռն եմ բախում,  
Ուրախության լացս քո գրկում եմ լացիս,  
Քո գրկում եմ լինում մարդկայնորեն տխուր:

Քեզ եմ ապավինում դաժան հողմի ժամին,  
Հաջողության քամին ինձ քո ափն է հանում,  
Քեզ հետ ահավոր չէ վտանգ ու թշնամի,  
Ամեն մի ծանրություն քեզ հետ հեշտ եմ տանում:

Երբ բացում ես գուռը և ինձ դիմավորում,  
Թվում է, թե իմ դեմ ո՞չ մի փակ գուռ չկա.  
Երբ իմ հանցանքներն ու զանցանքներն ես ներում,  
Թվում է, թե դրանք չեմ էլ գործել անգամ:

Դու ինձ համար կյանքում կյանք ես կնոշ տեսքով,  
Կնոշ տեսքով մայր ես և մոր տեսքով՝ ընկեր —  
Ա՛յն, ինչ անհնար է արտահայտել խոսքով,  
Ա՛յն, ինչ անհնար է մաշված տողով երգել:

## VI

Զմեռ է, Եվ ցուրտ է, Թրսում ենք:  
Քեզ հետ եմ, չերմում ու մրսում ենք:

Քեզ հետ եմ, և կարծես ինձ հետ է  
Աշխարհի մեծագույն պոետը:

Մեծագույն պոետը աշխարհի,  
Որ առանց խոսքերի ու բառի

Երգերն իր քո առաջ փռում է,  
Երգում է, երբ անդամ լոռում է:

Աշխարհի մեծագույն պոետը,  
Բայց այնքան, որքան ես քեզ հետ եմ.

Որ պիտի շքանա, երբ որ դու  
Բաժանվես ու նորից դնաս տուն...

Եվ մնա՛, և մնա՛ խեղճ տղան  
Առանց քե՛զ,  
առանց ե՛րգ  
ու տաղա՛նդ...

8. III. 52

Մոսկվա

## VII

Ոչի՞նչ, ոչի՞նչ չի պատահել արտասովոր.  
Դու նույն աղջիկն ես հմայիչ, ես՝ նույն տղան,  
Միայն՝ ժպտում են աշքերդ կարծես ցավով,  
Եվ այս ճամփան էլ չի թվում այնպես խաղաղ:

Ոչի՞նչ, ոչի՞նչ չի կատարվել նկատելի.  
Ո՛չ խարդավանք, ո՛չ խանդ, և ո՛չ կասկած մի կույր.  
Էռկ զգում եմ ես համրախոս քո մատներից,  
Որ ինձ այսօր նրանք ինչ-որ սա՛ռն են զգում.

Եվ չի փոխվել ոչինչ նաև կյանքում կարծես,  
Ամառային նույն արևն է և նույն փոշին:  
Ես զգում եմ՝ ինչ չզիտես ինքդ էլ զուցե,  
— Դադարե՛լ ես ինձ սիրելուց,  
Բայց... չես սիրում դեռ ուրիշին:

3. II. 47

Երևան

VIII

Ա՛խ, քեզ ինչպե՞ս ասել, որ քեզ հիշում եմ դեռ,  
ինչպե՞ս շասել, որ դու գեռ թանկ ես ինձ համար,  
ինչպե՞ս մեզ բաժանող արգելակը քանդել,  
ինչպե՞ս շգալ քեզ մոտ, ինչի՞ համար,

ինչպե՞ս շասել, որ՝ դու, միայն դո՞ւ շես թախծում,  
ինչպե՞ս ասել, որ ես ծնվել եմ քեզ համար,  
ինչպե՞ս շասել, որ ես միշտ էլ քեզ եմ տենչում.  
Սակայն ինչպե՞ս ասել, ինչի՞ համար:

Չէ՞ որ բաժանվեցինք կարծես մեր ցանկությամբ,  
Եվ այսօրը պարզ էր և ի՞նձ, և քե՞զ համար...  
Հիմա ինչո՞ւ ցավել անցած երջանկությամբ,  
Եվ շավել, ինչո՞ւ, ինչի՞ համար:

ինչպե՞ս, ինչպե՞ս ասել՝ նորից արի՛, արի՛,  
ինչպե՞ս շասել, որ ես ապրում եմ քե՛զ համար,  
Գեթ շնուտովանե՞լ ցավը մեր սրտերի,  
Խոստովանե՞լ, ինչո՞ւ, ինչի՞ համար...

22. VI. 46

Երևան

IX

Անծանոթներ ենք մենք իրար,  
Եվ փողոցում հանդիպելիս  
Ես շեմ տեսնում դեմքիդ վրա  
Քո ժպիտը այն լուսերիզ,  
Որով զիտես դու ողջունել  
Մանոթներին քո բախտավոր.  
— Ես այդ թովիչ բախտը շունեմ,  
Անծանո՛թ ենք և հեռավո՞ր:

Բայց երբ հանկարծ այգում, մայթում  
Հանդիպում ենք, ամեն անգամ  
Կեռ թարթիշներդ ես դու թարթում  
Ու նայում ես ինձ մի վայրկյան  
Այնպե՞ս, կարծես պատահարա՛ր,  
Եվ... հիշելով ինչ-որ մի բան  
(Իբր մի բան ես ստուգում),  
Պայուսակդ ես բացում-փակում:

Անծանոթ ենք իրար: Սակայն  
Հանդիպում ենք երբ մենք հանկարծ,  
Ես էլ մի պահ, գեթ մի վայրկյան  
Կանգ եմ առնում, որ իբր թե  
Գլանակս վառեմ հանգած  
(Գլանակս՝ վառվա՛ծ արգեն)...  
Եվ... բայցում ենք այնուհետև  
Առերևույթ սառն ու թեթև:

Այս, զա խաղ է մի սրտակեց,  
Որով տենչանքն իմ շնանգամ  
Բորբորվում է կրկին անգամ՝  
Գլանակիս կրակի պես,  
Իսկ դու, իսկ դու... Փնտրում ես դու,  
Որոնում ես ինչ-որ մի թան  
(Պայուսակո՞ւմ, թե՞ բո սրտում)  
Որոնում ես համառաբար,  
Եվ... չես գտնում հավանաբար...

{1952}  
Մասկա

## X

Прошла любовь, явилась Муза..  
А. С. Пушкин

Հիմա, երբ ոզքը անցած է թվում,  
Երբ առաջվա պես դու ինձ շես թովում,  
Երբ երևալըդ, քայլվածքը խոսուն  
Ինձնից շեն խլում իմ ճարտար լեզուն,  
Երբ ես կարող եմ քեզ հանգիստ նայել,  
Սրամտելով՝ ժպիտդ շահել,  
Կատակով ասել ա'յն, ինչ որ անցավ,  
Ա'յն, ինչ ես ասել չկարողացա  
Ու խոսքո՞վ, ո՞չ էլ մի հատիկ երգով,—  
Հիմա կը եմ տողերիս ներբու,  
Եկ բո փոխարեն հիմա էլ նրանք  
Դարձել են զլիխս պատիժ ու կրակ,  
Ինձ՝ բո փոխարեն շեն տալիս հանգիստ —  
Մերթ՝ քո անունը կպչում է հանգիստ,  
Մերթ՝ ձայնըդ ինչ-որ բառ է շշնջում,  
Երբ ես շգրված թղթեր եմ շրջում.  
Մերթ քո քայլվածքի լոկ հիշողովյամբ  
Զափեր եմ ընտրում — մեկ՝ բորեյ, մեկ՝ յամբ.  
Անցյալում լոկ ինձ հասցեազրված  
Քո մի ժպիտդ չերմությամբ զրված  
Քանի՛ երգ ունեմ կիսատ ու լրիվ...  
Բայց ի՞նչ դուրս եկավ: Զէ՞ւ, երգ իմ, լոկ' բ:  
Այսպես որ գնա, զե ի՞նչ դուրս կզաւ:  
Հանկարծ դուրս կզաւ, որ սերը կրկին  
Հետապնդում է... հիմա էլ երգին:  
Երդից էլ երդիչն ինչքա՞ն է —  
մի բա՞յլ:


19. XII. 52

Մասկա

15. VII. 53

Նավալու

ԱՐԲԻՑ ՇԵՇ ՀԵՏ



### ՆԱԽԵՐԴԱՆՔ

Ես լեռներից իշնում եմ ցած՝  
Պղծուրությունը պարզելով,  
Ինչ-որ շափով հարստացած,  
Ինչ-որ շափով նվազելով:

Եկման գետն իմ ջահելության  
Սահանքները իր փորսւկուն  
Փօխարկում է մի մեղմության,  
Որ խոռվն է պահում խռովում:

Իեմըս դաշտն է, նովիտն արձակ,  
Կանաչապատ և ծառալի:  
Զօւր վատնումն է արդեն նանցանք,  
Աղմբկելը՝ ծիծաղելի:

20. II. 52  
Մոսկվա

## ԾԽԱՆԻ ԾՈՒԽ



### ՀԱՅԱՍՏԱՆ

իմ քաղցրանո՞ւն,  
իմ բարձրանո՞ւն,  
իմ տառապա՛ծ,  
իմ փառապա՛նծ:  
Հների մեջ՝ դու ալեհեր,  
Նորերի մեջ՝ նոր ու շահել.  
Դու՝ խաղողի խշմարված վազ,  
Վշտերը՝ ջուր, ինքը ավաղ.  
Դու՝ բարդենի սաղարթաշատ,  
Առուն ի վար փռված փշատ.  
Դու՝ կիսավեր այրոց ու բերդ,  
Մագաղաթյա մատյանի թերթ.  
Դու՝ Զվարթնոց — ավեր տաճար,  
Կոմիտասյան Սիրանի ժառ.  
Դու՝ զրադաց խորոնկ ձորում.  
Դու՝ հորովիկ անուշ ծորուն,  
Փայլ գութանի արծաթ խոփի.  
Դու՝ նե՛տ, նիզա՛կ, մկո՛ւնդ կոպիտ,  
Դու՝ հայրենի ծխանի ծուխ,  
Դու՝ անգի՛ր վեպ, դու՝ Սասնա ժո՛ւռ...

իմ փառապա՛նծ,  
իմ տառապա՛ծ,  
իմ բարձրանո՞ւն,  
իմ քաղցրանո՞ւն:

Դու՝ մրգերի շտեմարան,  
Ոսկեվազյան գինու մառան.  
Դու՝ թավշե ղեղծ, դու՝ փրփուր հաց,  
Արտաշատյան խաղող սկաշ.  
Դու՝ Սևանի վառվող կոհակ,  
Երևանի սյուն ու խոյակ.  
Դու՝ հանգրվան, կանչող փարոս,  
Դու՝ հայկական գերբ ու դրոշ.  
Խոսուն վկա կոտորածի  
Ու վճիտ ալք ցամքած լացի,  
Արդարովթյան ահեղ ատլան,  
Սրի պատյան,  
Սիրո մատյան —  
Միշտ հի՛ն ու նո՛ր իմ Հայաստան:

11. XI. 50  
ԵՐԵՎԱՆ

## ԽՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Զարմանքով եմ ես միշտ նայում քո անցյալին,  
Քո անցյալին և' տանջալից, և' պանծալի:

Ինչպէ՞ս ես դու կտրել այդքան երկար ճամփա,  
Երբ նա՝ խճոտ, ու երկինքդ է եղել ամպած:

Ինչպէ՞ս ես դու, մեղվի նման, անգամ թույնից  
Նեկտար քաղել, մեղըր քամել դառնությունից՝

Պանդխտության քո կսկիծը դարձրել «Կոռոնկ»  
Եվ «Հորովել» դարձրել վերքդ, ցավը խորունկ,

Երբ հեղեղներն անց են կացել հոխորտալով,  
Ինչպէ՞ս ես դու քո աղբյուրի մի բա՛ ջրով

Միշտ շեն պահել ջրաղացը ձորի խորքում,  
Նոր կյանք տվել ծեծված արտին, ջարդված այգուն:

Հազար անգամ դու ընկնելով՝ ինչպէ՞ս ելար,  
Ո՞նց ապրեցիր՝ հազար անգամ երբ դու մեռար:

Ի՞նչ հրաշքով շմարեցիր, ինչպես նրանք,  
Որ մե՛ծ էին, հրդե՛մ էին, իսկ դու՝ կրա՛կ:

Բայց գիշերվա մթության մեջ ահաղարհուր  
Դու այնպիսի կրակ էիր, այնպիսի հուր,

Որ վառվում էր պաղած քարին գրակալի,  
Եինականի ցուրտ հյուղակին կրակ տալիս,

Որ վառվում էր քո գուստրերի մութ աշքերում,  
Արյուն դառնում որդիներիդ երակներում.

Որ օջախ էր, խաղաղ կյանքում խաղաղ օջախ՝  
Թոնրի կրակ, ծխանի ծովիս, կերոն ու ջաճ,

Բայց վրեժի ահեղ բոց էր ահեղ մարտում  
Եվ հրախաղ, որ հաղթանակ՝ էր ավետում...

Եվ չի մարել նա զարերում մահամնա,  
Մնացել է, որովհետեւ մի հուր էր նա,

Որ չի մարում օտար հողմից, այլ արծարծվում,  
Եվ ավերիլ հրդեհի պես չի տարածվում...

14. XI. 50  
Երևան

## ԴՈՒ ԱՅՍՊԵՍ ԵՄ ԵՂԵԼ

Քո արյան և քո շինարար մուրճի  
Հետքերն է կրում այստեղ ամեն քար,  
Զուլալ ջրերը նման են խղճիդ.  
Քեզ քաջ են կոչել, կոչել են տկար,  
Բայց ոչ... տիրակալ.

Դու մերթ զարկվել ես, մերթ զարկել շարին,  
Քեզ մերթ գերել են, նվիրել իրար:  
Դու մերթ եղել ես անհաղթ ու արի,  
Մերթ դաժան եղել, մերթ մեղմ ու բարի,  
Բայց ոչ... անիրավ:

Քեզ այսպե՞ս գիտի թշնամիդ անգամ.  
Մի ձեռքիդ՝ սուսեր, մի ձեռքիդ՝ մանգաղ,  
Մերթ ճարտար գրիշ, մերթ՝ փորագրիշ,  
Մերթ՝ օրինապահ, մերթ՝ աղանդավոր,  
Միշտ՝ տաղանդավոր...

14. XI. 50

Երևան

## ՀՊԱՐՏ ԵՄ ԵՄ

Հպարտ եմ ես նրա համար,  
Որ փառահեղ՝ պատմությանը,  
Եկ անոնցը այնքան հին է:  
Հպարտ եմ ես նրա համար,  
Որ փլկել է թեպետ տունը,  
Բայց չի խախտվել նրա հիմք:

Հպարտ եմ ես, որ քեզ համար  
Որդիները դարեր ընկան,  
Որ սուրբ պահեն քո անունը:  
Հպիան եմ ես, որ քեզ համար  
Թանկ է եղել թանարն այնքան,  
Որքան կարմիր քո արյունը:

Հպարտ եմ ես քո մատների  
Ճարտարությամբ անհատնելի,  
Քեզ թարգմանող քո գրքերով,  
Հպարտ եմ ես անվամբ քո սուրբ,  
Լեզվով, որով երբ շես խոսում՝  
Նույնն ես ասում քո երգերով:

Հպարտ եմ ես քո անցյալի  
Մաքառումով ու պայքարով,  
Տոկունությամբ, կամքով համառ:  
Հպարտ եմ ես քո պանծալի,  
Քո լուսավոր այս ներկայով,  
Որ... գալիք է այլոց համար:

3. VII. 51

Երևան

Մի պուճուր տղա  
Ու զցում վկին  
Իր ծիրան եղի:  
Իսկ մա՛յրը տղի...  
Պառավին անտեղի,  
Ճո՞ւր է տեղ գցել  
Քնելու հայար.  
Նա, ինձ պես, գուցե  
Չի քնել հիմա,  
Նա՛, որին դեմքով  
Ես շա՞տ եմ նման...

... Քունըս չի տանում,  
Դու էլ մի քնիր,  
Հետս էլ կրկընիր,  
Որ Հայաստանում  
Հիմա գարունը  
Բացվել է արդեն.  
Թողած հին հունը՝  
Գետերը հարգել,  
Պղտոր ու խելառ  
Դես-դեն են խփում:  
Կանալից հարբած՝  
Գառներ ու հորթեր  
Լեռնալանջերին  
Խայտում են, ծիփում,  
Մոշու թփեր են  
Զորս բոլոր աճել:  
Մի մոլոր գառնուկ  
Պճեղն է դաշել  
Ոլոր կածանի  
Կիսաթաց հողին:  
Խաղալի վյա  
Մի բուռ հին կաղին  
Տվել է իրեն  
Լո՛ւ արեկողի:  
Կոճղը դարձըրած  
Իր համար սեղան՝  
Պսակ է դործում

10—11. XI. 56  
Սոսկվա

## ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Քունըս չի տանում,  
Դու էլ մի քնիր,  
Հետս էլ կրկընիր,  
Որ Հայաստանում  
Հիմա գարունը  
Բացվել է արդեն.  
Թողած հին հունը՝  
Գետերը հարգել,  
Պղտոր ու խելառ  
Դես-դեն են խփում:  
Կանալից հարբած՝  
Գառներ ու հորթեր  
Լեռնալանջերին  
Խայտում են, ծիփում,  
Մոշու թփեր են  
Զորս բոլոր աճել:  
Մի մոլոր գառնուկ  
Պճեղն է դաշել  
Ոլոր կածանի  
Կիսաթաց հողին:  
Խաղալի վյա  
Մի բուռ հին կաղին  
Տվել է իրեն  
Լո՛ւ արեկողի:  
Կոճղը դարձըրած  
Իր համար սեղան՝  
Պսակ է դործում

## ՀԱՆԴԻՊՈՒՄ

Իմ քաղաքում հիմա գարնան իրիկունն է իշնում շրջու,  
Հանդիպակաց բոլոր տանիքների վրա  
Մի վիթիարի, բայց անվտանգ հրդեհ են բորբոքել  
Մարող վերջալուսի ճառագայթները հուրհըրան,

Փողոցներում հիմա հանկարծ զարթնած քամին խաղում է  
խենթացած  
Կանաչ սաղարթների, կանանց զգեստների մետաքսի հետո:  
Ջրոսանքի ելած աղջիկների ծիծաղն արծաթաձայն,  
Ճիշտ մանուկների, պուրակների շունչը բուրումնավետ.

Բաց պատուհաններից ներխուժում են իմ սիրտն ու իմ տունը  
Եվ լցնում են հոգիս մի բանաստեղծությամբ, երգով մի վես,  
Որի համար շափ է երջանկությամբ լեցուն սրտի տրոփյունը  
Եվ որը հանգ ունի — ծիծաղի պես:

...Եվ մտածել, որ դո՞ւ, դո՞ւ, որ բանաստեղծ ես և սիրահար  
լույսի,  
Խանտի նկուղներում լույսը մթից հիմա շես տարբերում,  
Որ արյան մեջ ներկված յաթաղանի նման մի կեռ կիսալուսին  
Երկրիդ և քեզ վրա, նազի՞մ, իր պաղ լույսն է արկի տեղ  
փոռած.

Որ դու լոկ մտքով ես զբոսանքի ելնում գերված Ստամբուլում,  
Որ քո մայրն է շրջում՝ սպիտակած վշտից, կորված՝  
տանջանքի տակ,  
Որ քո սիրած մարդկանց միայն բնի մեջ ես դու համբուրում  
Եվ արյամբ ես գրում բանտիդ ռնամակները՝ արյամբ  
քո տաք...»

Իմ տան պատուհանից երևում են ահա մթնում իրիկնալին  
Գերված Մասիսները, որոնք մի ժամանակ կոշվում էին  
«Ազատ»:

Նրանք իմաստալից ինձ աշքով են անում:  
Անցնո՞ւմ եմ սահմանից.  
Բանաստեղծի հայար սահմանը միշտ բաց է — երգն է նրա  
վիզա՞ն:

Խսկ ես բանաստեղծ եմ: Հայոց երկնի տակ եմ իմ կյանքն  
անցկացըրել...  
Նույն աստղերի լույսն է ներս թափանցել ձեր ու մեր  
երդիկից,  
Մեր Տիգրիսի ջուրը մեր այգիների հետ ձեր մարգերն է  
շրել...  
Մենք լոկ գրչակիցներ, պոետներ շենք միայն,  
այլև հայրենակից:

Ստամբուլը որքան քո քաղաքն է, նույնքան իմն է նաև.  
Դեռ հին Թյուղանդիոնից այնտեղ փայլն է մնում մեր  
հանձարի...  
Այնտեղ Պարոնյանն է Պոլսո թաղերի մեջ մի օր  
պտույտ արել՝  
Իր ծիծաղի խեղող սահմանքի մեջ առած մեր ջոջերին:

Այնտեղ ամփոփված է Պետրոս Դուրյանը մեր՝  
մեր պաշտելին.  
Ո՞վ է ձեր թրբուհուն ավելի լավ երգել ողջ աշխարհում,  
Այնտեղ է գեղգեղել Միսաք Մեծարենցի իրիկնային շվին,  
Հանձարն Աղամյանի Պոլսո թաղերից է սկիզբ առնում:

Այնտեղ Կոմիտասն էր — մեր գարավոր երգի մեմբրանը  
թրթռուն,  
Նա՛, որ օտարներին մեր լեփլեցուն հոգին թարգմանում էր  
տաղով.

Այնտեղ Վարուժանը իր եղեգնյա գրշով ցասման խոսք էր  
կոռում,  
Կարմիր մեր արյունն էր Սիամանթոն երգում իր  
սպիտակ տողով...

Այնտեղ... Նույն այն ձեռքը, որ տասներկու տարի քեզ  
պահում էր բանտում,  
Մորթեց մի ժողովուրդ, որ ի՞ր հողի վրա, և ի՞ր երկնքի տակ  
երեք հաղարամյակ օտար ձեռքով քանդվող իր բույնն էր  
կարկատում,  
Աշխատում էր, երգում ու կոթողներ կերտում երեք  
հաղարամյակ:

...Կրած վշտերի չափ լայն ու մեծ է սիրտը իմ հայ ժողովրդի.  
Ներողամի՛տ է նա, բարի՛, անհիշաչա՛ր,  
Սակայն ապարինված, փակված վերքից չէ՝ որ միշտ մնում  
է սպի,  
Իսկ դարավոր վերքի փակված սպին արդեն մորմորում է  
հաճա՛խ:

Ուրեմն իմ ծեր հորը, որի գերդաստանից ինքն է միայն մնում,  
Որի համար է հենց կարծես զրված «Կոռունկն» ու  
«Անտունին»,—  
Ինչպե՞ս հանդիմանել, երբ «օսմանցին» հաճախ նրա  
լեբսիկոնում  
Այսին չար թշնամո՛ւ, միայն արնախումի՛ իմաստ ունի:

Եվ իմ պառավ մորը, որ ոչ մեկը չունի յոթ եղբորից,  
Ինչպե՞ս հարկադրել, որ «Համիդ» լսելիս չհասկանա հրեշ...  
Մեր զոհերի արյան հատուցումն է անցնում որդուն հորից,  
Այդ թվերին ծնված հաղարավոր որբեր զո՞ւր չեն կոշվել  
«Վրեժ»:

Սակայն հատուցումը, ահեղ վրեժն անգամ պարզ է հիշում  
հասցեն,  
Թափված արյան հետքը ամեն տեսակ փոստից անխափան է  
գործում:

Թափված արյան հետքը, որ հորդ անձրեներն իսկ չեն լվացել,  
Նրանց դուռն է տանում, ովքեր բանաստեղծիդ սպանել են  
փորձում:

Եվ լալիս է մայրս քո մոր ծանր վշտից: Նրա համար,  
Նաղի՛մ,  
Կորած եղբայրներից կոտսերագույնն ես գու և կամ  
ավագ որդի:  
Հայրս, կարծես մտքով նորից զնդան ընկած՝ ետ ու առաջ  
քայլում,  
Քայլում է լո՛ւր, խոժո՛ռ, ապա մոլասում է.  
«Ծո՛ւն շան որդիք»:

...Փշում է զով քամին մի հեռավոր ծանոթ նվազի պես,  
Ասես քո երգն է դա, որ սահմանն է անցել առանց վիզա,  
Զրուանքից հիմա վերադառնում ենք տուն՝ մտերմուհիս  
ու ես:

Մեր սիրտն այնպես լիքն է, և մեր քայլերն այնպես  
թեթևասահ:

Նա քեզ անգիր զիտի:— «Սիրել փո՛քր-ինչ ավել և  
փո՛քր-ինչ լավ»,—  
Երգիդ սիրած տողը արտասանում է նա և քեզ հիշում.  
— Տեսնես ինչպե՞ս է նա, տեսնես այս ամենը ինչո՞վ  
կվերջանա,—  
Վախո՛վ հարցնում է նա, հարցնում է նա հույսո՞վ և  
սպասում:

Իսկ ես գիտեմ՝ ինչո՞վ: Մենք նստում ենք գարնան  
կիսախոնակ հողին,  
Ու ես երազում եմ.

— Այդ կինի՛, բայց ո՞ւր՝ Ստամբուլո՞ւմ, Վանո՞ւմ:  
Եթե Վանո՞ւմ՝ ապա խնձորենու ներքո, եթե Ստամբուլո՞ւմ՝  
ափին ծովի  
Իրար հանդիսում ենք, հյուրընկալում իրար, օթևանում:

Չկա ո՞չ մի սահման, ատելություն չկա ու բանտ չկա  
կյանքում,  
Հոկ գրքերն են հիշում կոտորածի՛, մահվա՛ն, բանտի՛ մասին։  
Սպիտակ Տո՛ւն չկա, չկա Սեյմ ու Մեջլի՛ս, կա երկրագո՛ւնք՝  
Ազատ, միասնական, բռնի շրաժանված հազար մասի...»

1950 թ. Ճայիս  
Երևան

## ԿԱՐՈՏ

Կա մի աշխարհ մեր աշխարհում՝ ինձ հարազատ, ձեզ  
անծանոթ։  
Ուր էլ լինեմ՝ կանչում է նա հազար ձայնով ու սրտագին,  
Ապրում է նա իմ հոգու մեջ իրրե անբառ, համր կարոտ,  
Իրրե լեգենդ գեռ շգրված, իրրե մի երգ անսրբագիր։

Այդ աշխարհում կան սեզ լեռներ, որ վիթխարի բուրգերի պես  
Բարձրանում են ու միրճվում ամպերի մեջ հրակարմիր,  
Եվ քարափներ, որոնց վրա հին օրերի կուռքերի պես  
Մութ ժայռերն են արձանանում՝ ցլագլուխ — ձիամարմին։

Այնտեղ լեռան լերկ լանջերին, սալ քարերի արանքներում  
Արեգակն է փշրում իրեն ծիածանվող հայելու պես.  
Գարնանային մոլուցքի մեջ՝ զետն այլնս չի համբերում,  
Եվ պոկելով արմատներից հին բարդենուն խաղաղ ու վես,  
Գերեվարած զրոշի պես ցուց է տալիս իր ափերում։

Ամպերն այնտեղ ոլորվում են այնպես դանդա՞ղ,  
Հանդիսավո՞ր,  
Այնքա՞ն նման հորովելին, որ հնչում է երբ անեկու,  
Վերհիշում ես աշնան յուրտը՝ զուրկ հոտերից, առանց  
սարվոր,  
Երբ ինչպես հոտն աղաքարը՝ մառախուղն է հողը լիզում...»

Եվ գարուն կա այնտեղ շրեղ, որ բացվում է հանկարծակի,  
Ինչպես հանկարծ նորահարսի կուրծքն է բացվում քամուց  
լեռան,  
Խարույկներ կան գիշերներում՝ սերված ասես այն կայծակից,  
Թոք ճայթելով շփոթում է գառան հոտը լեռան վրա,

Կա մի բուրմունք խոտերի մեջ, շաղոտ-ցողոտ թիուաներում,  
Բուրմունք, որից և՛ քաղցում ես, և՛ հագենում՝ միանգամից.  
Կան աղբյուրներ, որ գնչիկով վայրի այծերն են պղտորում,  
Ինչպես հոգին բանաստեղծի պղտորվում է երգի ժամին:

Եվ անտառ կա այնտեղ մթին, խառնագիսա՞կ, ծածկաբերա՞ն,  
Եվ այգիներ, այդ անտառից մոլորվելո՞վ զատված կարծես,  
Եվ ամենից գողտրիկ ու թանկ՝ լեռնալանջին մի հին պարտեզ,  
Որ մասրենու չափար ունի, եղեգնահյուս դռնակ վրան,  
Ուր մի տուն կա, տան մեջ մի մայր...  
և ուր մի օր ծնվել եմ ես...

Ամեն, ամեն ինչ կա այնտեղու Փորձես եթե ասել «Հկա»,  
Ընդուս «կա», կա՛» կարձագանքեն ժայռերն անդամ  
Համը ու հլու  
Կան թանկ հուշեր, որ սիրո պես ուռճանում են լո՛ւր,  
աննկա՛տ,  
Եվ բացվում են միանգամից՝ ինչպես վարդը մի դիշերում,  
ինչպես հուղմունքն իմ այս պահի — սպասված ու անակնկալ:

\*

Ինձ թվում է՝ մեր անտառում, վրա հասնող ձմռան շեմին,  
Հարավ շվող մի բիլ թոշուն իր թոշնական պարզ նախանձով  
Վերջին անգամ կտցեց հիմա աշնանահաս մի զառ խնձոր,  
Եվ նա՛ հասո՛ւն, փիրո՛ւն արդեն՝ կամա՞ց կաթեց թաց  
Խաշամին,  
Փիրո՛ւն՝ ինչպես սիրուս այս ժամին:

22. 71. 46

Երևան

## ՄԱՅՐ ՈՒ ՈՐԴԻ

Նստած հովոսմ ընկուղենու, հագին շորեր հնատարազ՝  
Ճախարակ է մայրս մանում: Թր իսկ ցողած լուս ափերով  
Բամբասաւեր առուն անվերջ քշիչում է, անցնում վռազ՝  
Կասկածամիտ թիերի հետ բացատըրվել խուսափելով:

Ես դեռ մանուկ ու, մանկան պես, բաղցրավենու թունդ  
սիրահար,  
Մեր թարերից, ճարդս հատած, մի կոշտ շաքար եմ գողանում:  
Իսկ շաքարը քի՞շ է այնքան — իմանում է մայրըս ահա  
Եվ սպառնում հորըս հայտնել — հասկանո՞ւմ եք ինչ է  
անում...

Աղքատի բախտը բանում է յոթ տարին մեկ — սուս շի  
ասված,  
Մինչ բրբրված լաշակի տեղ մայրս նորն է զլիսին զցում,  
Ես մեր կալն եմ ոտքով չափում, որ կամենա եթե աստված՝  
Թիվը եթե զույգ վերջանա, ես կին կառնեմ մեր դրացուն:

(Թեպետ և նա՛ մեր դրացին, նշանված է արդեն կարծես —  
Հագին ունի ալ մինթանա՝ խշան փարշա, նախշուն նոր շիթ,  
Ու երբ բակ է ելնում հանկարծ և կամ բակից իշնում  
պարտեզ,  
Թվում է, թե որտեղ որ է պիտի թռչի, պիտի կորչի):

Իսկ երբ որ նա՛ նույն դրացին, մայր է դառնում հանկարծակի  
(է՞՞, երկի կենտ վերջացան իմ բայլերը կալ ու արտում),

Ճերմակում է մայրս դանդաղ — նորից փոխում շորն իր  
հագի,  
Իսկ ես՝ արդեն «ուսումնական» սիրո մասին եմ գիրք  
կարդում...

Ու երբ վարժված «սատանեկան» այդ հրաշքին գիր ու տառի,  
Ես կարդում եմ օր ու գիշեր՝ իր բերանով կիսաբացված,  
Իր հայացքով զարմացական իմ անգրագետ մայրը բարի  
Դնքն է թվում անգիր մի գիրք՝ կիսաբաց ու չկարդացված...

\*

Մի կիսաբաց գրքի նման՝ միայն գրված ոչ տառերով, —  
Ինձ այսպես է պատկերանում և՛ իմ, և՛ քո մայրը հիմա.  
Մի գիրք խորո՛ւնկ, հարո՛ւտ այնքան, որ կարդում ենք  
մենք դարերով,  
Քայլ մինչեւ վերջ շենք հասկանում —  
լոկ մայր է պետք դրա համար:

1955 թ. Հոկտեմբեր  
Մոսկվա

## ՄՈՐ ՉԵՌՔԵՐԸ

Այս ձեռքերը՝ մո՞ր ձեռքերը,  
Հինավուրց ու նո՞ր ձեռքերը...

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
Պսակվելիս ո՞նց են պարել այս ձեռքերը՝  
Ի՞նչ նալանքով,  
Երազանքով՝ վ:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
Լույսը մինչև լույս չեն մարել այս ձեռքերը,  
Առաջնեկն է երբ որ ծնվել,  
Նրա արդար կաթով սնվել:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
Զրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը  
Սով լոռվթյա՞մբ,  
Համբերությա՞մբ:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...  
Երկինք պարզված սյուն են դառել այս ձեռքերը,  
Որ շիլդի իր տան սյունը՝  
Որդին կովից դառնա տունը:

Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը՝  
Մինչև տատի ձեռք են դառել այս ձեռքերը,  
Այս ձեռքերը՝ ուժը հատած,  
Քայլ թռուան հետ նոր ուժ գտած...

Քար են շրջել, սար են շարժել այս ձեռքերը...  
ինչե՞ր, ինչե՞ր, ինչե՞ր շարժեն այս ձեռքերը՝  
նո՞ւրբ ձեռքերը,  
Սո՞ւրբ ձեռքերը;

...Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար  
Մեզ աշխարհում ծնած սնած,  
Մեզ աշխարհում շահած պահած,  
Մեզնից երբեք չկշտացած,  
Փոշի սրբող-լվացք անող,  
Անվերջ դատող-անվերջ բանող  
Ա՛յս ձեռքերը,  
Թող որ ճաքած ու կոշտացած,  
Բայց մեզ համար մետաքսի պես  
հա՛ս ձեռքերը...

30. 8. 55

Մոսկվա

### ԸԱՏ ԲԱՆ Է ՊԵՏՔ ԱՐԴՅՈՔ

Շա՞տ բան է պետք արդյոք երջանկության համար!

Լեռան գլխին իշած կապույտ երկնակամար,  
Սաղկած ափին փարվող մի լեռնային ալիք,  
Տաք հողի մեջ նստած մի փոշոտված բալիկ,  
Հիշողություն մի տաք,  
Տեղին արված կատակ.

Երեկ գեռ անծանոթ աղջկա հետ  
Առանց հոգնածության շրջել ամբողջ զիշեր,  
Ինքնարմուաց այնպես, և — այնուհետ  
Տոնի նման այդ օրն ամբողջ կյանքում հիշել.  
Զերոնց կողմից դրսում շահված մի մրցություն,  
Թող քաղաքում հառնող մի հոյակապ նոր տուն,  
Ուր ձմռանը վառվող վառարանի հանդեպ  
Տղագ պիտի կարդա հափշտակիլ մի վեպ,  
Նա՛, որ խաղով այնքան երջանիկ է հիմա...

Շա՞տ բան է պետք արդյոք երջանկության համար!

25. IX. 53

Մոսկվա

\*

Դու սիրո հետ միշտ հաշտ ապրիր, բայց խույս մի տա  
տառապանքից.

Նա սրբում է աշքը փոշուց, նա մաքրում է հոգին ժանդից։  
Տառապանքից չեն մեռնում, չէ՛, այլ ավելի են պնդանում,—  
Ապարինված սիրտը հետո գալիք ցավը հեշտ է տանում։  
Ա՛յս, մի՛նվա: Հայրըդ երբեք չեր հանդուրժում նվազողին...  
Ծատ ավելի լավ է, տղա՛ս, դառն արցունքով աշքըդ ցողիր  
Ու քո ճամփան շարունակիր, Թո՛ղ որ լինի նա քարքարոտ,  
Բայց քո հոգում եթե լինի բարո՞ւ, լավի՛, սիրո՛ կարոտ,  
Դու չե՞ս հոգնի, դու կքալես, կրաքարանաս դու սարն ի վեր։  
Դրա համար ոգի է պետք, դրա համար պետք չեն թևեր։

\*

Ազնիվ եղիր ամեն ինչում — ո՞վ է կյանքում սովից մեռելւ  
Ճշտի համար աքսոր չկա — ստի հանդեսի ինչո՞ւ լռել։  
Իսկ մեր շուրջը դեռ կան մարդիկ, որ երբ պետք է  
մեջք են ծռում, երբ որ պետք է հոհուամ են, պե՞տք է՝ ժպտո՞ւմ, պե՞տք է՝  
լռո՞ւմ, Պե՞տք է՝ իրենց մատն են տնկում... Դու մի եղիր  
կյանքում տհառ։  
Դու հասկացիր հենց այս գլխից, մի մոռացիր երբեք, տղա՛ս։  
Ազնվությունն այն է միայն, որ չի փոխվում՝ ոնց էլ  
շուռ տաս, —  
Նա մի ճերմակ երես ունի, ոչ թե յոթ-ութ գունեղ աստառ...»

\*

Մի՛ տրտնջա: Դու հիշո՞ւմ ես. «Զախորդ օրեր...  
կուգան-կերթան»...  
Մի՛ տրտնջա: Եթե լավից ետ ես ընկել՝ ինքդ հասիր...  
Մի՛ տրտնջա, բայց և կյանքը գրի նման դու մի կարդա,  
Գրի նման՝ քեզնից հեռու, ինչ-որ օտար մարդկանց մասին...  
Հպարտ եղիր, բայց ոչ գոռող (դատարկ մարդն է գոռողանում,

## ՈՐԴՈՒՄ

Ինձ հետ լինի, թե առանց ինձ, իմ բալիկս, կմեծանաս,  
Իմ օգնությամբ, թե առանց ինձ, դու երբեք կհասկանաս,  
Թե ոնց պիտի ապրել կյանքում, թե ոնց պիտի նայել,  
Կյանքին,  
Թե աշխարհում ինչն է էժան, թե աշխարհում ինչն է անգին:  
Ինքս էլ խրատ կարդացողին ոչ հարզում եմ, ոչ

հանդուրժում,  
Տափակ թե սուր քարոզներից ինքս էլ եմ միշտ, տղաս,  
խորշում:

Ու թե հիմա, իմ բալիկըս, ես քո գլխին ճառ եմ կարդում,  
Ապա միայն նրա համար, որ շատ հաճախ կյանքում մարդու  
եթե իր մեծ բաժինն ունի ժամանակը, ինքը դարը,  
Բայց և այնպես քիշ չի ազդում նաև ընտրած ճանապարհը:  
Կուց քեզ հետ նույնը լինի, որ պատել է հաճախ ինձ է՛լ.  
Հաճախ, շուրջըս աշք ածելով, այն մարդկանց եմ ես  
նախանձել,

Որոնց կյանքը հեշտ է անցնում — ասես կյանք չէ, այլ  
ինձուղի՝  
Անխոշընդո՞ւ և անարգելք, քանոնի պես հա՞րթ ու ուղիղ.  
Դպրոց, հետո ինչ-որ մի թուիշ, մի ազդեցիկ  
դանդա՞հարող, —  
Եվ տաք տեղն է ապահովված...

Այսպես ապրել դու շե՞ս կարող:  
Չէի ուզի, որ քո կյանքը հարթ խճուղու նման լիներ,  
Դու մի՛ անցիր ասֆալտ ճամփով, գերադասիր ճամփա՛  
շինել:

Հայրդ խելոք ու տխմարին դրանով էր զանազանում),  
Հորդդ նշան հպարտ զգա, որ ոչ մեկի տուն չես քանդել,  
Ոչ մի ազնիվ խոսք չես կտրել, ոչ մի աղնիվ միտք չես  
բանտել,  
Որ շիտակ ես քամել կյանքում և լոել ես եթե հաճախ,  
Ապա միայն նրա համար, որ առևտուրը մանրածախ  
Հաճախ միայն զիզի-բիզի զանգուլակ է նետել շուկա,  
Իսկ դու զուրկ ես զիզի-բիզուց, կեզծ դրամ էլ մոտըդ չկա...»

★

Դու փոքր ես դեռ, դեռ չգիտես, թե ոնց պիտի կյանքին նայել,  
Դու փոքր ես դեռ Երբ մեծանաս, դառնաս արդեն հասուն  
ջահնել,  
Խորհուրդներն իմ և՛ հնացած, և՛ ավելորդ թվան գուցե —  
Կյանքում այնժամ էլ շլինեն նման բացեր, նման խոցեր,  
Է՛ս, տա աստված, Ես էլ կյանքում ուրիշ ոշինչ չեմ երազում  
(Կույրը, տղաս, ինչպես գիտես, երկու աշք է միայն ուզում),  
Խորհուրդներն իմ թող հնանան... Սաղիկն է լոկ այդպես

Երբ ամռանը ծառի վրա հասուն միրգ է արդեն դառնում:  
Հանուն գալիք վառ խարույկի ես պատրաստ եմ այսօր ծխաբ,  
Հանուն վաղվա ճշմարտության թող որ այսօր լինեմ սխալ...

24. II. 55

28. I. 56

Մոսկվա

## ՄԱՐԴ ԵԼ ԿԱ, ՄԱՐԴ ԵԼ

Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,  
Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում...

Դու, որ սխալվել, սակայն չես ստել,  
Կորցրել ես հաճախ, բայց նորից գտել.  
Դու, որ սայթաքել ու վայր ես ընկել,  
Ընկել ես, սակայն երթեք չես ծնկել,  
Այլ մագլցել ես կատարից կատար,  
Ելել ես անվերջ, բարձրացել ես վեր՝  
Քո ահեղ դարից առնելով թեր...  
Ելել ես, որ ողջ աշխարհը տեսնես,  
Որ անօրինակ քո դարը տեսնես,  
Բոլոր կերպերով դու նրան զգաս,  
Շահածով խնդաս, կորուստը սգաս...  
Ելել ես իբրև նրա մունետիկ,  
Որ նրա հեռուն զգաս քեզ մոտիկ,  
Որ ճշմարտության ափերը տեսնես,  
Ռպտրված ստի խաբելը տեսնես,  
Որ շվախենաս, որ շվարանես՝  
Անարդարության դեմքը խարանես...  
Ահա թե ինչու դու այսքան տարի,  
Դու, որ հարազատ ծնունդն ես դարի,  
Քայլում ես անդուլ, առաջ ընթանում,  
Քայլում ես այնպես ծանր ու վիթխարի,  
Ասես աշխարհն ես շալակած տանում...

Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում,  
Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի...

Նա, որ ելել է շալակն աշխարհի,  
Աշխարհում երբեք թաց տեղ չի քնում,  
Գիտի, թե ո՞ւմ հետ և ո՞ւր է գնում.  
Ո՞ւմ մեռելին է անարցոնք լալիս,  
Ո՞ւմ խոսքի վրա ստից ծիծաղում,  
Ո՞ւմ հետ դինզ նստած նարդի է խաղում,  
Հարկ եղած դեպքում և տանուլ տալիս...  
Վերից է նայում ցածրում կանգնածին,  
Զի նայում երբեք ներքե ընկածին.  
Վերև կանգնածի աղջրկան, որդուն,  
Սիրունուն անգամ ու քարտուղարին  
Ո՞նց է քսմսվում, ու շողոքորթում...  
Որտեղ մի պատառ շաղ ու յուղալի՝  
Կանգնած է այնտեղ նա երկյուղալի.  
Հեշտ զրպարաւում է՝ երբ տեղն է գալիք,  
Նույն հեշտությամբ էլ իր մեղքն է լալիս...

Ամե՞ն ինչից շատ, ամե՞ն ինչից վեր,  
Հարազատ մորից ու որդուց ավել,  
Աշխարհում նա իր աշխարհն է սիրում...

Սո՞ւտ է: Նա այնտեղ իր շահն է սիրում,

Ամե՞ն ինչից շատ, ամե՞ն ինչից վեր  
Նա պատմության մեջ իր դարն է սիրում...

Սո՞ւտ է: Նա դարի ավարն է սիրում,

Ամե՞ն ինչից շատ, ամե՞ն ինչից վեր  
Մեր կյանքն է սիրում, մեր նորն է սիրում...

Սո՞ւտ է: Նա միայն իր փորն է սիրում,

Ամե՞ն ինչից շատ, ամե՞ն ինչից վեր  
Գուղափարական իր հորն է սիրում...

Սո՞ւտ է: Ո՞ւ հորը, ո՞ւ մորն է սիրում,  
Թանկ չէ ո՞ւ որդին, և ո՞ւ էլ թոռը:

Ամե՞ն ինչից շատ, ամե՞ն ինչից վեր  
Սիրում է կյանքում նա իր... աթոռը,  
Աթոռն է սիրում  
Ու նրան տիրում.  
Ցանկացած գնով ելնում է նա վեր,  
Փորձում է թռչել նա առանց թեր,  
Անվիրց սողալով առաջ է գնում,  
Գնում է այսպես և... տարեց-տարի  
Ելնում է այսպես... շալակն աշխարհի:

Մարդ կա աշխարհն է շալակած տանում,  
Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի...

25. 8. 3. XI, 55

Մոսկվա

Դուք՝ չկեղծո՛ղ, արդա՛ր ձեռքելո,  
Զեզ է երգում ձեր խորթ որդին՝

Ակնածանքո՛վ՝ ձեռքը սրտին,  
Մեծարանքո՛վ՝ երգը շրթին...

30. Տ. 55  
Մռնկլա

## ԶԵՐ ՔԵՐ

Դուք՝ բրտնաթոր, տանջված ձեռքեր,  
Սրեզակից խանձված ձեռքեր,  
Չեռքեր՝ բրից, շոգից ճարած,  
Դո՛ւք, որ հողից քամում բերքեր,  
Ցավն եք անջամ դարձնում երգեր՝  
Վհատության դուռը փակած։

Դո՛ւք, որ հանբից քար եք հանում,  
Որ ձակձրկվում՝ կար եք անում  
Տապակվում եք՝ հալում մետաղ,  
Եվ, հոգնատանց, դառնալով տուն,  
Մեկով թոռին, մեկով որդուն  
Պինդ գրկելով՝ ասում ժմատա՛ղու

Դո՛ւք, որ երեկ բռնել եք զենք,  
Դո՛ւք, որ այսօր շինում եք շենք,  
Կայուրշ զցում, կապում կամար,  
Որ բիշ վերցնում, շատ եք դնում,  
Շատ եք տալիս, բիշ ստանում  
Հասկանալով ինչի համար

Դո՛ւք, որ մթնում լույս եք փոռում,  
Որ խրախույս, հույս եք փոռում,  
Չեռքե՛ր, ձեռքե՛ր, ժողովրդի,  
Դուք՝ ստեղծո՛ղ, ճարտա՛ր ձեռքեր,

Այդպես երեկ մարմիններով իրենց առողջ  
Գնդացրի երախն էին մերոնք փակում:

Իսկ կյանքը մեր... Մենք շապիկով չծնվեցինք.  
Երջանկության այլ շափանիշ է մեզ տրված...  
Մեզ նա՛ միայն կհասկանա, ով գեղեցիկ,  
Բայց հեռավոր մի կնոջ է սիրահարված...

Պ. VII. 51  
Երևան

## ՄԵՐ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Մենք շապիկով շծնվեցինք: Եվ մեզ համար  
Ուրիշ տեսք է երջանկությունը միշտ կրել:  
Մեզ ծնել է, աշխարհ բերել համեստ մի մայր,  
Բայց մեզ ինքը ոլատմությունն է որդեգրել:

Մի աղջիկ է կյանքում սիրել ու մեզ փնտրել,  
Մի ինե՞նթ աղջիկ՝ երաղների հետքով տարված:  
Բայց գիտեինք, որ ապադան է մեզ ընտրել,  
Որ ինչպես մենք՝ նա էլ մեզ է սիրահարված:

Համե՞ստ մի տուն,— բայց գիտեինք, որ հայրաբար  
Լայն աշխարհն է իր զոները մեր դեմ բանում,  
Աշխատանքի, ծառայությա՞ն տանող ճամփա,—  
Բայց գիտեինք, որ գալիք է նա մեզ տանում:

Առօրյական մեր հոգսերում ու մեր գործում  
Կար մի իմաստ, կար մի խորհուրդ անբռնելի,  
Որ գինու պես ուզացումով է ներգործում  
Եվ որ միայն մեզ համար է ըմբռնելի:

Մեր խոսքերում կար մի շշուկ, կար մի հնչուն,  
Ամեն ինչում մի երազ էր վեր խոյանում,  
Որով անդամ թշնամուց ենք մենք ճանաչվում,  
Բարեկամին առանց թարդման ներկայանում:

Անգամ մահը... նա մեզ համար վախճան շեր, ո՛չ  
Նա մեզ համար գործի կես էր, շարունակում,

## ԲԱԼԼՈՒԹ ԼՈՒՅՍԻ ՄԱՍԻՆ

Իրիկունը մոսկովյան թանձրանում է ահա, տե՛ս:  
 Հյուսիսային օրը կարճ աղոտանում է, մարում,  
 Եվ ինչ-որ մի կախարդ ձեռք ե' աննկատ, ե' անտես  
 Այս վիթխարի քաղաքի բոլոր լույսերն է վառում:  
 Լույս է շուրջը ամենուր՝ փողոցներում, տներում,  
 Լույս է վերում՝ շենքերի ճակատներին, կատարին,  
 Երկինք միտքող տների մարմարակերպ պատերին,  
 Լույս է անգամ գետնի տակ՝ մարմարակերտ թունելում:  
 Ու թվում է, թե անգամ անբավ ձյունը հյուսիսի  
 Ինչ-որ ձեռվ խոտացած անհուն պաշար է լույսի...

★

Կարող էինք մենք անգամ չհավատալ այս փաստին,  
 Թե չիներ մեր ձեռքին ահա զիրքն այս հավաստի:

Քսանմեկ թի՛վ:

Դեկտեմբե՛ր:

Մերձմուկովյան իրիկուն:  
 Վլադիմիր Իլյի՛ր աշխատում է սենյակում:  
 Գորկան լոել է ցրտից:

Շուրջը լուս է ու խավար:  
 Երջապատում Իլյի՛ր համեստ լույսն է միայն վառ:

Աշխատում է Իլյի՛ր խորասուղիած ու տարված,  
 Հանկարծ շշուկ ու թակոց:

— Խնդրե՛մ, մտե՛ք:

— Ներեցե՛ք...

Երկու մուժիկ՝ դռներում:

— Խնդրե՛մ, խնդրե՛մ, համեցե՛ք:

Երկում է, թե որքան շփոթված են գյուղացիք.

— Խանգարեցինք...

Բայց բարի այս ժամի տը Իլյիշի:

Որ ընդհատում է նրանց «ներողությունը» իսկույն:

Պավլովսկոյե գյուղի պատվիրակներն են երկու:

Վաղը հավաք կա այնտեղ: Շատ է ուղում գյուղացին

Ականջ դնել մի անգամ Վլադիմիր Իլյիշին:

Խսկ Իլյի՛րը՝ նա նույնիսկ մի վայրկյան չի հապաղում:

— Խնդրե՛մ: Բայց ե՛րբ, ի՞նչ, վաղը ցերեկո՞վ եք մտադիր...

Բթամատերն Իլյիշի թևերի մեջ ժիշտի

Ուշանում են մի՛ վայրկյան, երկո՛ւ վայրկյան, տասներկո՛ւ

Վլադիմիր Իլյի՛րը լուս բայցում է սենյակում:

Դուք չե՞ք տեսնում՝

ակնհայտ վատ է զգում ձեր առաջ

Ինքը կենինը ահա. նա չի՛ կարող, ի՞նչ արած:

— Երեկոյան հավաքվենք, ինչո՞վ է վատ: Գեղեցիկ:

Իլյիշի դեմ այս անգամ վատ են զգում գյուղացիք:

Ինչպե՞ս ասեն: Բայց, ասենք, ինչո՞ւ շասել, հը՛, ինչի՞:

Զի կարելի՞ օտարին, կարելի է Իլյիշին:

— Երեկոյան ավելի լավ կլիներ, խոսք չկա,

Բայց...

— Է ի՞նչ «բայց»:

— Բայց գյուղում լո՞ւս չես ճարի:

— Նավթ չկա...

Հիմա արդեն այս փաստին շատ դժվար է հավատալ,

Թեպետ կարող ես սկսվ ճերմակ թղթին դու կարգալ:

...Բթամատերն Իլյիշի բաճկոնակն են քրքրում:

Վլադիմիր Իլյի՛ր, խորասուղիած մտքերում,

Մտածո՞ւմ է, մտածո՞ւմ, հետո գրում մի բացիկ,

Որ... ինչ-որ տեղ մի լիտը նավթ ստանան գյուղացիք...

Ու հավաքն է կայանում:

Այնտեղ Իլյիշն է խոսում,

ի՞նչ է խոսում, — այդ մասին զիրքն այս ոչինչ չի ասում:

Բայց ո՞վ մեղնից շգիտի, թե մեր ձեռքը չհասած

Իր ելույթում հլյաշը այն հավաքում ի՞նչ ասաց:  
Կոկալվե՞մ միթե ես, եթե ասեմ.

Եթե չգնաց հավաքի ու նախընտրեց երեկոն,  
Որովհետեւ ԳՈԷԼՌՈՒՆ սպասում էր հլյաշին,  
Սպասում էր հլյաշի լույսեր ծնող գրիշին...

\* \* \*

Զարմանալի բան չկա, որ Պավլովկան ու Գորկան,  
Որ ձեզանից, մոսկովցի՛ք, շատ էլ հեռու չեն այնքան,  
Այսօր իրենց լույսերով խառնվում են Մոսկվային:  
Սակայն գյո՞ւղն իմ հայրենի...

Զուր քարտեզին մի՛ նայիր:  
Ոչ մի քարտեզ չի կարող նրա մասին այն ասել,  
Ինչ հեռավոր այդ գյուղում ես ևմ ապրել ու տեսել:  
Բայց դա նյութ է պոեմի...

Այսքանն ասեմ այս անգամ:  
Այդ հեռավո՞ր-հեռավո՞ր իմ գյուղակում հայկական  
Օրեր առաջ, երբ նորից տարեղարձն էր իլյիշի,  
Մի պահ հուզված նայելով հսկայական դահլիճին՝  
Դասընկերն իմ երթեմնի (նա էր այդօր զեկուցում)  
Էլեկտրական լույսերից իր աշքերը կկոցում  
Ու չէր պատմում այն մասին, որ և իրենց կոլխոզում  
Տներից կալ և աղաց լույսի հեղեղ է հոսում:  
Ինչո՞ւ պատմել այն մասին, ինչ տեսնում ես, ինչ որ կա  
Ու հայտնի է բոլորին զեկուցողից ոչ պակաս...  
Եվ ինչպես ես՝ երգն իմ այս, նա իր խոսքը տարածում,  
Այս նոյն փաստի վրա է զեկուցումն իր կառուցում՝  
Եղելություն է պատմում, որ նման է բալլագի —  
Անիրակա՞ն է այնքան, այնքա՞ն հեռու հավատից:  
Նա պատմում է պարզապես, ոչի՞նչ նա չի հավելում:  
Եղրակացնել, ամփոփել ավելորդ է համարում:  
Ինչ ավելորդ է թվում զեկուցման մեջ հարակից՝  
Բանաստեղծի երգի մեջ ավելորդ է կրկնակի:

9. 1. 53

Մոսկվա

184

## ՀԵՐՈՍՆԵՐԸ

Թե Ալիներ՝ ինչ որ եղավ,  
Ի՞նչ իմանաս, հիմա գուցե  
Զրանցքներ էր Զոյան բացել,  
Գորովագին մայր էր դարձել  
Ել ապրում էր հաշտ ու խաղաղ,  
Թե Ալիներ՝ ինչ որ եղավ:

Թե Ալիներ՝ ինչ որ եղավ,  
Թե մեր կյանքը մնար խաղաղ,  
Անշուշտ նրանք՝ կրասնոդոնցիք,  
Դարձել ուսման գերազանցիկ,  
Դարձել էին կամ շինարար,  
Արտիստուհի կամ նորարար,  
Կերտել էին և կառուցել,  
Խորունկ երգեր բանաստեղծել —  
Հայտնի դարձել կյանքում խաղաղ,—  
Թե Ալիներ՝ ինչ որ եղավ:

... Հիմա գուցե մեր աշխարհում  
Արհավիրքից հավետ հեռու,  
Մի նոր Զոյա, անհայտ դեռ մեզ,  
Դեռ դեռատի, համեստ ու հեզ,  
Դասագրքերն է իր թերթում:  
Ի՞նչ իմանաս, գուցե հիմա  
Մեկ այլ աղիկ՝ մի Զայկինա,  
Իր պատմության դասն է թերթում:  
Ատելության հուրը սրտում,  
Աշքերի մեջ մոլուցք ու մեզ՝

185

Գուցե հիմա մի նոր Օլեղ  
Ֆաղենի գիրքն է կարդում...

Հազար Հունան ու Մատրոսով  
Աշխատում են, գործում այսօր,  
Քար են տաշում ու հունձ անում,  
Խաղող ճմլում տաք հնձանում,  
Հնոցների գեմ կատաղի  
Ճե են տալիս շեկ մետաղին,  
Սովորում են, գործում անդուկ,  
Կարոտում են, սիրում, խանդում...

Եվ մեղանից, հավանաբար,  
Շատ շատերը նրանց գիտեն.  
Մեկը մեկի թեռն է մտել,  
Ջրուցել է մտերմաբար,  
Վստահել է, սիրող բացել,  
Եվ մեր մտքով չի էլ անցել,  
Թե աղջիկը այս դեռատի  
Չայկինա է սրտի խորքում,  
Թե կրծքի տակ այս խառատի  
Կոշեվոյի սիրոն է զարկում,  
Թե կոլխոզնիկ այս պարզ տղան,  
Որ անցնում է ծով դաշտերով,  
Մի Հունան է, մի ֆաստելլո...

Մենք չենք հիշում: Հարկ էլ շկա:  
Թայց — երեկվա փառքը վկա —  
Մեր թշնամին թե մոռանա,  
Իրեն վրա թաղ շարանա...

Յ. IV. 51  
Երևան

### «ԵՐԵՒԱՆՑ»

Իմ լուսեղնի'կ, իմ աննման,  
Իմ ապագա', գալի'ք...  
Ի՞նչ ես անում արդյոք հիմա,  
Իմ հեռավո՞ր բալիկ:

Բարձիղ տա՞կ ես թեղ կոխում  
Ու խորամանկ ժպտում,  
Թե՞ վեր կենում ու կիսամերկ  
Մահճակալում պոտում:

Թե՞ մայրիկիդ հյուսը բոնա՝  
Քրբքում ես անմեղ,  
Թե՞ «կարդում ես» բո շըմբոնա՝  
Գրքույզները գունեղ:

Թե՞ երգում ես, արտասանում  
«Բանակային եմ բազ»...  
Բանակային ե՞ս եմ, բալիկ,  
Մայրդ, պա'պրդ անդամ.

Բանակային, որ մոտ շկա  
Ոչ մի գայլ ու զաղան,  
Ոչ թե, բալիկ, բո իմացած  
Հերիաթներից դաժան,

Ո՛չ աշխարհից բո իմացած  
Սկ ու ձերմակ դեխ:

Կա մի ուրիշ՝ դեռ ու աշխարհ՝  
Ամբողջովին դեղին:

Թու չգիտես դեղին դեկին՝  
Գալի ախորժակով:  
Ապրում է նա մեզնից հեռու,  
Օվկիանոսից այն կողմ...

Քեզ այդ մասին կպատմեմ ես  
Հետո՝, հիմա քնի՛ր:  
Այնժամ գուցե դա իսկապես  
Հեքիաթի պես լինի...

29. II. 52  
Մուկա

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Գարո՞ւն է...

Փողոցով անցնում ես ակամա ժպտալով,  
Ժպտալով ալիքվող մայթերին,  
Շենքերին, որ իրենց վարդագույն տուֆքարով  
Թվում են քեզ այսօր անթերի:

Ուզում ես մոտենալ, մի բարի խոսք ասել  
Գլանակ վաճառող ծերուկին,  
Քեզ դիմող կոլխոզնիկ քեռու հետ սկսել  
Մի զրույց սրտառուց-սրտագին:

Թվում է՝ ծանոթ են անծանոթ այս կանայք,  
Մտերիմ՝ աղջիկներն այս շահել.  
Թվում է՝ բոլո՛րն էլ քեզ պիտի հասկանան  
Եվ նույնիսկ... կարող են քեզ սիրե՛լ...

Գարուն է...

31. III. 51  
Երևան

Քողցը է թվում, որ դու  
Եյս կյանքում չես ծնվել օրապակաս,  
Որ ապրո՞ւմ ես, որ կա՞ս,  
Որ շնչո՞ւմ ես...

## ԶՅՈՒՆԸ

Սիրում եմ ես ձյունը:

Սիրում եմ ես ձյունը,  
Երբ որ նա իշնում է  
Անտես երկինքներից այս մայթերին,  
Եվ մեծաքա՞յլ, զանդա՞ղ դու շրջում ես,  
Ինք էլ շիմանալով անրջում ես  
Այն, ինչ կյանքում վեհ է և անթերին

Սիրում եմ ես ձյունը:

Երբ որ նա իշնում է,  
Դու հիշում ես հանկարծ  
Անցած տարիներիդ խայտանքը մանկական,  
Եվ բաղցրորեն սիրտը բեզ տանջում է:  
Դու հիշում ես հանկարծ  
Երբեք չմոռացված այն աղջրկան,  
Որի թարթիներին իշած ձյունը  
Լսելի է դարձրել սրտիդ բարախյունը...

Սիրում եմ ես ձյունը:

Երբ որ նա իշնում է,  
Ինք էլ շիմանալով՝ անրջում ես,  
Որ զալիքը, վաղը, որ ապագան  
Քեզ չտեսած անդամ՝  
Ճանաչում է:  
Եվ հաճույքից սիրտը խենթորեն ուռչում է:

Միրում եմ ես ձյունը:

Միրում եմ ես ձյունը,  
Երբ որ նա իշել է,  
Երբ իշել է նաև լռությունը,  
Եվ մեծաքա՞յլ, զանդա՞ղ, լո՞ւ շրջելով,  
Դու զզում ես նրա  
Փիրունության վրա  
Քո մարդկային մարմնի ծանրությունը...

1955 թ. ֆեռրվար  
Մոսկվա

## ԲՆԱՂԱՎԱՐ

Կինոկադր է կարծես.

Հրդեհվել է բարդին,

Արծաթին է տալիս շաղակրատող առուն,

Կալսիչն է կտկրտում, և մղեղը հարդի

Կանաց, աղջիկների թարթիչներին թառում:

Կարմիր փոխանցիկը ծածանվում է կալում,

Հսկա դեզի շուրջը երկարում է այնպես,

Այդ ստվերն է կարծես շուտով սկիզբ տալու

Իրիկնային մթին: Մինչդեռ հեռվում կարծես

Զարդարվելով հազար ժմիուն դրոշներով՝

Հորիզոնն է զուգում մայրամուտը շռայլ,

Իր լուսավոր ձեռքը հերթով դրոշմելով

Բարդիների, դեզի, բլուրների վրա:

Հետզհետե օրը հանդարտվում է, լուսմ:

Իլիչի լամպերն են թարթում գորովանքով:

Պարզ լսվում է, թե ոնց ծիծաղում են առուն

Եվ սիրահար զույգը՝ փշատենու ներքո...»

17. I. 52

Մասկա

## ԼԵՌՆԱՅԻՆ ԳԻԾԵՐ

Դաշույնաձկ լեռներ, որ չեն խոցում սակայն,

Եվ անդունդներ, վիճեր՝ նման խորունկ վերքի,

Ու սլացիկ բարդի, ասես կանաչ մի կայմ,

Որ նավում է դեպի ծովածավալ երկինք:

Հետո՝ դեղին արտեր, հետո՝ արտեր թառած

Մեկ այս, մեկ այն սարի կարկատանված լանջին.

Հետո՝ լույս ու օջախ, կանաց ձեռքով վառած,

Որ տնովին նստեն իրիկնային հացի:

Հետո՝ մի պաղ լուսին, որ կախվում է ձորից՝

Վայր ընկնելու վախից ամբողջովին ձերմակ.

Եվ աստղազարդ գիշեր, և մի քամի, որից

Կտրին խշխշում է մի ծաղկաշիթ վերմակ...

Ու քնում է գյուղը վաստակաշատ քնով:

Սիայն տակտ են տալիս կալսիչները կալի,

Եվ մի շահել սիրուց, թե խմիչքից գինով,

Երգով երազում է «բարակ բոյով յարին»:

«Բարակ բոյով յարին», որ չի քնել գուցե

Եվ ծաղկաշիթ — նախշուն վերմակի տակ, կտրին,

Նվազկոտ աշքերը երազանքով գոցել,

Վախենում է շարժվել — հանկարծ երգը կտրի...

36. VI. 51

Երևան

39. II. 52

Մոսկվա

## ՀԵՌՆԱԾԽԱՐՀՈՒՄ

Այնտեղ սողում է քիլ շամանդաղը  
Ու կիսով ծածկում ցից թամանդաղը:  
  
Արաքսը անցած վայրի հովազը  
Թաթնահարում է խաղողի վաղը:  
  
Քամին անտառի մաղերն է գզում,  
Կիրճերում ոռնում, փշակում հաղում:  
  
Լեռնային գետը թռչում է տեղից՝  
Կարծես իր անտես որսի ետևից:  
  
Իսկ մարդը... Մարդը քար ու քարափում  
Բովանդակ տարին բրտինք է թափում,  
  
Որ զոր շկորշի և ոչ մի պուտ ջուր,—  
Պուտ-պուտ շոր հագնի աղջիկն իր պուճուր.  
  
Եվ ոչ մի հատիկ չմնա դաշտում,  
Որ հաց ունենա իր տղան տաշտում.  
  
Եվ ոչ մի ողկույզ չմնա այգում,  
Որ մայրն ունենա տաքուկ վերարկու  
  
Որ ընդունիլը ձմեռվա ցրտում  
Դրվատի վաստակն ու շանքը մարդու  
  
Եվ, քացի խինդից և առատ բերքից...  
Մեմ-մեկ էլ մարդու... հոգսերից երգի...  
  
15.VII. 56  
Զանախչի

## ԱՐՏԵՐՆ ԵՎ ԾՓՈՒՄ

Առավոտն այնտեղ կանուխ է այնքան  
Իր աշքը բանում  
Եվ այնքա՞ն հանկարծ, որ միտք ես անում,  
Բայց չես հասկանում:

Մովթը բաշվում է ծմակ ու քերծեր,  
Իսկ հետո՝ շոգին  
Սարատափի տակ, քար ու թփի տակ  
Փոխարկվում շուրջի:

Իսկ լո՛ւսը... կույսը հեղեղի նման  
Վարարո՛ւմ, հորդո՛մ,  
Սարերն է բռնում, երկինք է հառնում,  
Լճանում սրտում:

Իրիկվա քամին զարթնում է հանկարծ  
Եվ միանգամմից,  
Ինչպես բուրավետ իր օրորոցում՝  
Երեխան քնից:

Արտերն են ծփում, ալիքվում այնպես  
Դժորե՛ն, կարծես  
Երբեք չե՛ն զսպվի, երբեք չե՛ն դառնա  
Կաշկանդված խրձեր...

15. VII. 56  
Զանախչի

## ԻՆՔՆ ԻՐԵՆ ՀԵՏ

Քրտնքից խաշված իր հին գլխարկը թեքած աշքերին,  
ինքն իրեն հետ է առնում ու տալիս Մարտիրոս քեռին.

«Ախար, ա՛յ հոգիս, էս ո՞նց կլինի աշխարքի բանը,—  
Ու ջրաղացում տրված օրդերն է կոխում գրպանը:—

Խոսքի օրինակ, ա՛յ, հենց մեր զալում պահեստապետը:  
Մինչև որ ձեռքիդ զոմբախ շունենաս՝ շես խոսի հետքը

Շներին կապել ու բաց են թողել էդ տնավերին,  
ինչ է թե երեկ շրջկոմ է ընկել իր քեռու քեռին:

Բայց դե աշխարքըս ո՞ւմն է մնացել, որ դրանց մնա,  
Անարդար բանը անոթի շանն էլ, չէ՛, կու չի գնա:

Ա՛յ, էսքանն էլ ճիշտ (զույգ փոշտում է Մարտիրոս քեռին,  
Եվ դրանից էլ գլխարկն է իշնում, կախվոամ աշքերին):

Նա — և կոմունի՞ստ: Գիտի-շգիտի մի «ուռուա», «կեցցե»:  
Տո՛, ի՞նչ կոմունիստ... Թե դրան վերցնեա ու թոնիր գցես,

Վրայից անգամ կոմունիստ մարդու մշահոտ չի գա...  
Ա՛յ, ինչ եմ ասել, թողնես՝ ամենքին կացնի «հակա»:

Դեհ, էլ ո՞ւմ ասեմ, որ քսան տարի էդ մարդու տղան  
Զեռքը չի բռնել ո՛չ մանգաղ, ո՛չ բահ, ո՛չ փոցիս ու եղան.

Կա՛մ հանդապահ է, կա՛մ կալի հսկիչ, — ման գալիս էշխով,  
Աւշունց է տալիս — և դրա համար ստանում աշխօր:

Քենզին է տանում արակտորիստին — ինչ խոսք որ ԳԱԶ.ով.  
Մոհ մթերման տավարն է հանձնում — էն էլ ի՞նչ նազով:

Քա լսկա՞ծ բան է. չորս-հինգ փութ ցորեն ջաղաց ես տանում,  
Նա՝ օրդեր գրում, դրա համար էլ... աշխօր ստանում:

Թե իրեն ասես՝ մի բան չես արել էս քսան տարում,  
Կասի՝ ժողովո՞ւրդ, սա մեր կարգերի հիմքերն է փորում:

Թե մեկ էլ ասես, կգոռա՝ բա ո՞նց, պարտիական եմ,  
Է՛հ, ի՞նչ դուրս եկավ. նա՝ պարտիական, ես

պարտակա՞ն եմ...

Քրտնքից խաշված իր հին գլխարկը թեքած աշքերին,  
ինքն իրեն հետ է առնում ու տալիս Մարտիրոս քեռին:

Զգիտի քեռին, որ այդ նույն պահին իրենց շրջկոմում  
Պահեստապետին ու նրա քեռուն պատին են գամում...

15. V. 54

Մոռկա

## ՄԵՐ ԼՈՒՅՍԵՐԸ

### Մարտիմ Տանկին

Ես չեմ տեսել Մինսկը քո, ինչպես դու՝ իմ երկանը,  
Բայց մեզ նման՝ նրանք նույնպես մերձ ու մոտիկ հարևան են:  
Ես չգիտեմ՝ իմ հայկական տուֆքարից չէ՝ քո տունն արգյոք,  
Բայց իմ տունը կառուցված է բելոռուսյան շինափառով։  
Մեր գինին չէ՝ ձեզ խինդ բերում իրիկնային գինարբութում,  
Մեղ քո երկրի գուտարը չքնաղ, հաճախ նա՛ է մատըռվակում։  
Նո՞ւյն երազը մարմնավորվող, նո՞ւյն առօրյան, ավյունը  
նո՞ւյն,  
Նո՞ւյն անբաժան հանապարհն է մեզ գեպի լույս հեռուն  
տանում։  
Իսկ լույսե՞րը... Ինչ փույթ՝ մեկը իր ծնունդը գետից առել,  
Իսկ մյուսը՝ մեր Սկանի պաղ կոհակն է կրակ դառել։  
Մեր լույսե՞րը, կրակնե՞րը... Ամբողջ գիշեր նրանք անքուն  
Հեռվից իրար ձայն են տալիս, իրար անխոս արձագանքում։  
Իսկ մեր երգը նույն լույսը չէ՝, որ խոսքեր է միայն հագել...  
Ու ես երգով, լույսերի պես, ուզում եմ քեզ արձագանքել։

Լույսերի պէս թող մեր երգն էլ ապրի այն լուրի  
Հեռաստանում,  
Ուր այս ահեղ ու մեծ դարի հանապարհներն են մեզ տանում։  
Այնտեղ արդեն ո՛չ միայն մենք, մեր Մինսկն ու Երևանը,  
Այնտեղ արդեն ո՞ղջ աշխարհը ո՞ղջ աշխարհի հարևանն է։

[1951]

198

### ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ փույթ, թե մեզ դպրոցական նստարանից  
Կյանքը նետեց մահասարսուու ուաղմաճակատ,  
Կյանքը պոկեց մեզ մեր զրբի՛ց, մորի՛ց, տանի՛ց՝  
Խոստովանանքը մեր սիրո թողած կիսատ։

Ի՞նչ փույթ, թե մենք մահն ապրեցինք այն ժամանակ,  
Երբ նոր միայն հասնում էինք դեռ արբունքի։  
Ի՞նչ փույթ նաև, որ այդպես շուտ՝ անժամանակ՝  
Ճերմակ թելեր երեացին մեր թուխ քունքին։

Եվ ի՞նչ փույթ, թե յուրաքանչյուրը մեզանից  
Իր անունով-աղջանունով շի հիշվելու,—  
Ի՞նչ փույթ, թե մեզ իրարից չեն զանազանի  
Սերունդները իրենց կյանքում և հուշերում...»

Մենք լա՛վ գիտենք առաջնեկի կյանքը տան մեջ։  
Իսկ մենք չէ՝ որ առաջնեկն ենք նոր պատմության...  
Մենք հինավորց այս աշխարհը այնպէ՛ս մտանք,  
Որ կորչենք էլ՝ մի՛շտ կմնանք պատմության մեջ...»

13. II. 51

Երևան

## ՆԵՐԾՆՉՄԱՆ ՊԱՀԵՐԻՆ

Այս պահերին աշխարհում  
Ես հարուստ եմ բոլորից:  
Ես բարի եմ մանկան պես  
Այս պահերին աշխարհում:  
Այս պահերին թվում է՝  
Փակ դուռ չկա ինձ համար —  
Ուր էլ զնամ՝ կը նդունեն,  
Եվ շեն մերժի՝ ինչ ուզեմ:  
Այս պահերին թվում է,  
Որ հողագունդը համայն  
Ես կարող եմ մի խոսքով  
Լաց լինելու շափ հուզել.  
Ես կարող եմ մի խոսքով  
Թախծոտ մորը սփոփել,  
Իմ մի խոսքով կարող է  
Սիրուը սիրով տրոփել,  
Իմ մի խոսքով կարող է  
Գնալ զինվորը մարտի,  
Իմ մի խոսքը կարող է  
Մարդ դարձնել ուժարդին:  
Ես կարող եմ ձեռք բերել  
Իմ մի հատիկ մի խոսքով,  
Ինչ շեն կարող ձեռք բերել  
Ո՛չ արյունով, ո՛չ ոսկով,  
Ո՛չ հրդեհով, որ տներ  
Ու քաղաքներ է վառում...

Ես զորեղ եմ ամենքից  
Այս պահերին աշխարհում...

[1955]



Նորից երգում, մորմոքում է  
Աստվածային Կոմիտասը,  
Կախարդում է ու մոգում է  
Աստվածային Կոմիտասը...  
Ամենամե՛ծ դու նահատակ,  
Ամենահա՞յր, ամենահա՞յ,  
Քինու կարասն՝ ուրիշներին,  
Մեզ հերիք է քո մի թասը...

18. III. 56

Մոռկը

## ՆՈՒՅՆ ԺԱՄՓՈՎ

~~~~~

### ԱՆԼԵՐՆԱԳԻՐ

Գարնան բուրմռւնքը հիմա  
Սար ու ձորերն է բռնելք  
— ինչոր բան ես ցանկանում,  
Թե ինչ՝ չես էլ հասկանում  
Ու չես կարող ըմբռնել  
Կարծես բացել են դռներ,  
Ներս առնել չեն ցանկանում:

Գարունն իր պաղ ու տաքուկ  
Ծունչն է օդում տարածել  
— ինչոր ձայն է բեղ կանչում,  
Զայն, որ դու չես ճանաշում  
Ու չես կարող ճանաչել...  
Գուցե հենց այդ են կոչել  
Անմեկնելի զգացում...

13. VII. 53

Նավշալու

### ԱՆԲԱՇԱՆ Է ՔԵԶՆԻՑ

Անբաժան է քեզնից քո թովշանքը,  
Ինչպես գույնը՝ ծաղկից,  
Ինչպես պայծառությունն արեգակից,  
Ինչպես անրջանքը  
Պատանեկան թովիչ այն հասակից,  
Որից ես դուրս եկել  
Ու դեռ դուրս չեմ եկել:

Անբաժան է քեղանից բարությունը,  
Ինչպես կրկին քեղնից մայրությունը,  
Որի դուռն ես եկել  
Ու դեռ ներս չես եկել:

Անբաժան է քեզնից և երջանկությունը,  
Որով լիիթեցուն են իմ սիրտն ու իմ տռւնը,  
Որոնց դուռն ես եկել  
Ու դեռ ներս չես եկել:

Ես կուգեի քեղնից — սա՞ է իմ տենչանքը —  
Միշտ անբաժան լինել՝ ինչպես գույնը ծաղկից,  
Ինչպես պայծառությունն արեգակից,  
Ինչպես անրջանքը  
Պատանեկան թովիչ այն հասակից,  
Որից դուրս եմ եկել,  
Չէ՞ — տեսնում ես ինքը —  
Որ դեռ դուրս չեմ եկել...

15. VIII. 53

Նավշալու

**ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ԼԻՆԵՆ  
ԲՈԼՈՐ ԸՔԵՂ ԿԱՆԱՅՔ**

Ուրիշներին լինեն բոլոր շքեղ կանայք,  
թոլոր շքեղ կանայք շքեղ քաղաքներում:  
Իմըս լինես լոկ դո՛ւ, իմ հայրենի՝ քաղաք.  
Եվ նա՛, ով մտքերիս ու սրտիս է տիրում:

Գիշերն ի լույս նստենք վառարանի գիմաց,  
Դրսում ձմեռ լինի ու ձյուն լինի դրսում.  
Ուրիշ քաղաքներից նրան պատմեմ կամաց,  
Եվ նա այնպե՞ս լսի, կարծես չի էլ լսում:

Պատմեմ, թե ինչպես է իմ ծովահեն հոգին  
Մերթ խորտակվել խութին, մերթ ծովի մեջ սկել,  
Ինձ զեսուղեն ձգել՝ որոնել է մեկին  
Շքեղ քաղաքներում ու կանանց մեջ շքեղ:

Պատմեմ թափառումիս, որոնումիս մասին,  
Իսկ գտածիս մասին... և ոչ մի խոսք շասեմ,  
Իսկ նա կողքիս՝ արթուն, նայի նիրհող Մասսին  
Եվ ինձ այնպե՞ս լսի, կարծես չի էլ լսել...

**26. II. 52**

**Մոսկվա**

**ԻՐԱՐԻՑ ՀԵՌՈՒ**

Մեր տոմար մեկ չէ,  
Մեր տունը մեկ չէ,  
Գնալը՝ տարբեր,  
Բայց գալը մեկ է:  
Թող որ ծիծաղով  
Տարբերվենք մեկ-մեկ,  
Ի՞նչ տարբերություն —  
Մեր լալը մեկ է:

**16. III. 56**

**Մոսկվա**

Ո՞վ էր, — չե՛մ հասկանում, ես շգիտե՛մ, մշտիզ,  
Գիշե՛ր, հանկարծ քեզ պես ողջը մուժով պատվեց...  
Միայն գիտեմ՝ փլվեց մի որբ տանիք դրսում  
Եվ մայթերին, իմ տեղ, անձրևն ուշաթափեց...

ՇՀ. X. 43

Երևան

20. II. 52

Մոսկվա

## ԱՀԱ ՆՈՐԻՑ ԳԻԾԵՐ

Ահա նորից գիշեր, ահա նորից յշուշ,  
Նորից տապից այրված փողոցն է երշանիկ,  
Նորից մանրահատիկ անձրևն է մեղմ իշշում,  
Եվ լուս անրջում է ամեն կիղված տանիք...

... Ես մեղմ էի այնպես, խոնա՞րճ և ընտանի՛,  
Այդ երեկ էր կարծես, դու հիշո՞ւմ ես արդյոք  
Մեղ սպասում էր զեռ շեղած մի ընտանիք,  
Մի համրախոս խրճիթ՝ ծածկված հող ու հարդով:

Բա՞խտ կար քո աշքերում, բախտ կար ամեն ինչում,  
Միայն սե՞ր կար կյանքում, ցավ ու ձանձրույթ չկար,  
Ամեն խոսք ու հայացք խոստումով էր շնչում,  
Երազով էր հարուստ օրն ու դիշերն երկար:

Բայց մեր բախտը այդ ո՞ր, ո՞ր գիշերում մոայլ,  
Ո՞ր անձրևի ներբո և ո՞ւմ ձեռքը թաղեց,  
Ո՞ր զրհորդանն արդյոք բրբջաց մեղ վրա,  
Այդ ո՞ր առուն խնդաց, լամպը քմծիծաղեց:

Այդ ո՞վ ի դ գալիքը՝ քո աշքերի խորքում  
Եվ քո սերը մորթեց իմ ձեռքերի վրա:  
Այդ ո՞վ և ինչո՞ւ էր քաց դուռն իմ զեմ փակում  
Ու դղչման աղ ցանում իմ վերքերի վրա:

## ՍԻՐՏ ԻՄ

Սի՞րտ իմ, դու նույնն ես, ինչպես որ առաջ,  
Երբ խենթ էի ես ու դեռ պատանի:  
Բայց չէ՞ որ հիմա՝ տարիքըս առած,  
Արդեն և՛ խոհեմ, և՛ հասուն դառած,  
Չեմ ուզում թեթև քամին տաստանի  
Այն ծառը, որի հաստ բունք տեղ-տեղ  
Անցած ու շանցած վերքերն անհամար  
Կտցահարել են փայտփորի նման,  
Դարձրել են փշակ, ուր բուն են գտել  
Հիշողություններ, երազներ մեռած...  
Մինչդեռ դու, սի՞րտ իմ, ինչպես և առաջ  
Քո խենթության մեջ ինձ հետը առած,  
Տանում ես այստեղ, այնտեղ ես տանում,  
Օտար տների կտորն ես հանում,  
Մտցընում օստար այգի ու պարտեզ:  
Եվ դու ինձ բնակլ չես խղճում կարծես:  
Դու մոռանում ես, որ իմ տարիքում  
Չիր չեն գողանում օտար տանիքում,  
Օտար ծառերին չեն գցում քարեր...  
Ես խնդրում եմ քեզ՝ ինձ շնանգարել:  
Թույլ տուր մոռանալ, դու քո աստվածը,  
Թոր քազցր է կյանքում՝ ինչ գողացված է...

15. VII. 53  
Նավշալու

## ԻՄՆ Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ

Ես տեսնում եմ՝ չես հավատում ո՞չ իմ. ո՞չ քո անցյալին.  
Մեր հարուստը՝ աշքիդ աղքատ, կեղծ է թվում պանծալին:

Թու կարծում ես, որ ամեն ինչ, ո՞ղջը սուտ էր մեր միջև,  
Ճիշտ էր միայն երկար ճամփան՝ լիքը փշեր ու խճեր:

Ճիշտ էր միայն սպասումը, որ և անցավ ապարդյուն —  
Իզո՞ւր էին մեր սրտերը սպասումից թպրտում:

Ճիշտ էր միայն արբեցումը այն սին բախտով, որ եկավ, —  
Նա ոսկի չեր, այլ ոսկեղօծ, հետո՝ պղինձ, վերջը՝ կավ...

Ես տեսնում եմ՝ չես հավատում դու անցյալին իմ ու քո,  
Չես հավատում ու չես տարվում նաև դու մեր գալիքով:

Չես հավատում, թե նա կգա, թե կլինենք բախտավոր, —  
Թեզ ամեն ինչ փուշ է թվում և ամեն ինչ՝ ախտավոր:

Քեզ թվում է, որ մենք իզո՞ւր հանդիպեցինք մեկմեկու, —  
Մ'չ մեր սրտում՝ երջանկություն, ո՞չ մեր կյանքում՝ մեծ  
բեկում...

Իսկ ի՞նչ անենք, ո՞նց բաժանվենք, երբ սրտերը իմ ու քո  
Թե սիրով էլ չեն շղթայված, գեթ կապված են տանջանքով...

26. X. 55  
Մոսկվա

## ՄԵՐՏՍՈՒ ԿՈՏՐՎԵՅ

Միրտս կոտրվեց սափորի նման,  
Միրտս կոտրվե՞ց:  
Այդ ո՞վ է կտցում փայտփորի նման,—  
Ծառս կտրվե՞ց:  
Օրերս անցնում են թափորի նման,—  
Քո մահվան ծեսը, անխի՞ղն, այս ինչքան  
Երկա՞ր կատարվեց...

ՀՅ. II. 55

Մոսկա

## ՄՆԿԵՂԾ ԱՍԱԾ

Անկեղծ ասած՝ այս ամենից ես հոգնել եմ,  
Ես, սիրելի՛ս, որ քեզ սիրել և օգնել եմ.  
Չեռք եմ պարզել, հույս եմ տվել,  
Վատրդ թողած՝ լավըդ թվել,  
Հավատացրել, հավատացել,  
Թի իմ առաջ գուռ ես բացել՝  
Չտեսնըված, չեղած մի դռւու:  
Մակայն ի՞նչ եմ ես ստացել  
Այդ ամենին ի տրիտուր:

Անկեղծ ասած՝ ոչինչ չկա, և ոչ էլ կար:

Անկեղծ ասած՝ զու բնավ էլ ա'յն շես եղել,  
Ա'յն շես եղել, ինչ որ ես եմ կարծել երկարու:  
Ուր ես, ասա՛, զու ինձ մղել:  
Ճիշտ ճամփից ես միայն շեղել:  
Սուստ խոստումով կապել ես ինձ,  
Մանկան նման խարել ես ինձ,  
Ու շես տվել ոչի՞նչ, ոչի՞նչ:  
Իսկ այն, ինչ որ ինձ ես տվել,  
Արժանի շեր ո՛չ քեզ, ո՛չ ինձ:

Անկեղծ ասած՝ քո տվածից ես հոգնել եմ:

Ինքդ զիտես՝ որքան ձդտել ու տքնել եմ,  
Որ զու... որ դու նման լինես իմ երազին,  
Իսկ զու գիտե՞ս՝ ի՞նչ դուրս եկալ.  
«Տղան հաւավ իր մուրաղին,

Դուք էլ հասնեք ձեր մուրագինու:  
Հեքիաթն, այո, միտքըս ընկավ...  
Դու՝ հեքիաթում հրաշք աղջիկ.  
Այնինչ կյանքում՝ ինչ-որ... շղջիկ,  
Որ ոչ թռչուն, ոչ էլ մուկ է...

Անկեղծ ասած՝ զուր էր ամբողջ այս աղմուկը:

Անկեղծ ասած՝ նեղանում ես, թե լրջանում,  
Մե՛կ է հիմա: Ել չեմ գցի ինձ սար ու ձոր,  
Անկեղծ կասեմ՝ հեքիաթն ինչով է վերջանում.  
Ցած է ընկնում երեք խնձոր —  
Մեկ՝ ասողին,  
Մեկ՝ լսողին,  
Մեկ՝... ինձ պես դիշեր ու զօր  
Հիմարաբար սպասողին...

Անկեղծ ասած՝ հեքիաթներից ես հոգնել եմ...

31. X. 55  
Մոսկվա

## ԲԱՅ ՓԱԿՈՒՂԻ

Միգուցե մեզ էլ այս էր վիճակված.  
Դու՝ քո զղջումի զնդանում փակված,  
Ես՝ իմ զղջումի արջի ճանկերում,  
Թանտարկվածի պես ետ-առաջ քայլել  
Քո ծանոթ անվան երկու վանկերում...

Քո ծանոթ անվան երկու վանկերում  
Թանտարկվածի պես քայլել ետ-առաջ,  
Կրակը կողքիս՝ միշտ մնալ սառած,  
Թաց դուռը գեմըս՝ բանտարկված մնալ,  
Ոչ մի փորձ շանել ու դուրս չգնալ...

20. II. 55  
Մոսկվա

## ԶԵՍ ՀԱՐՑԻ. ԱԲԻՄ

Սչքըս բաց՝  
Բայց էլի խաբեցիր —  
Ոտքերըս-ձեռքերըս  
Կապեցիր:  
Հիմա էլ  
Կտրում ես յոթ անգամ,  
Բայց գոնե  
Մեկ անգամ շավեցի՞ր:

19. III. 58  
Մոսկվա

## ՍԱՐՍԱՓՈՒՄ ԵՄ ԵՍ ԼՈԿ ՀԻՄԱ

Դու ասում ես, թե սառել եմ,  
Բոլո՞ր-բոլո՞ր կրակներըս ես վառել եմ  
Ու հիմա էլ... մթան մեջ եմ ես խարխափում,  
Խոկ ես կառեմ. ես քայլել եմ,  
Երբ որ մութ էր՝ ես փայլել եմ,  
Բայց չեմ խարել ես ոչ ոքի ու չեմ խաբում:

Ես չեմ խարել ո՛չ մի խոսքով,  
Ո՛չ մի երգով կամ ակնարկով.  
Կա՛մ սիրել եմ, կա՛մ ատել եմ. բայց չեմ խարել,  
Երկու հարկով բարձր եմ ապրել,  
Յած եմ իշել երկու հարկով,  
Իշել-ելել, սակայն երբեք չեմ խարխափել:

Թե երբեք խարխափել եմ՝  
Խարխափում եմ ես լոկ հիմա,  
Թե երբեք սարսափել եմ՝  
Սարսափում եմ ես լոկ հիմա,  
Միայն հիմա', երբ չփիտեմ՝  
Դու եղե՞լ ես, կա՞ս, թե չկաս,  
Միայն հիմա', երբ զգո՞ւմ եմ,  
Հասկանո՞ւմ եմ ու սարսափո՞ւմ,  
Թե առանց քեզ, իմ կորա՞ծըս,  
Ոյս աշխարհի ինչն է պակաս...

25. I. 55  
Մոսկվա

## ՏԱՆ ԵՐԱԶԸ

Ես աշքերըս փակում ու տեսնում եմ հստակ՝  
Մեր երազանքն արդեն կերպարանք է առել.  
Խանդութ բարդիների արթուն հսկումի տակ  
Սարավանդի վրա մեր տնակն է թառել:  
Աղյուսից է շինված, միայն հիմքն է քարից,  
Կտրին կանաչ խոտեր՝ հողածածկ է վերից.  
Պատերն աղնըվորեն այնպես շիտակ,  
Սովորական փայտե ներկված հատակ.  
Ո՞չ շատրվան ցայտող, ո՞չ ավազան մարմար,  
Ո՞չ կամարներ շքեղ ու պայտաձեւ:  
Խոյակավոր սյունե՞ր: Սակայն ինչի՞ համար,  
Եթե պատշգամբ կա մի պայտաձեւ,  
Որ լուր գող է տվել սաղարթի տակ,  
Եթե, երակի պես, շենքի ճակատն ի վեր  
Տարածվել է, փուլել մի պատատուկ,  
Ու գեղձին է տվել կանաչ շիվեր...

Իսկ տան շորս կողմ՝ այսի, միշտ էլ ցողոտ-շաղոտ,  
Ածուների թմրով շրջանակված մարգեր,  
Երշանակված՝ ինչպես մի նոր սրբապատկեր,  
Որ կարիք էլ շունի ու շի կորզում աղոթք,—  
Քո հպումն են նրանք լոկ փափառում,  
Քո հպումը, անգի՞ն:

Եվ դու հահախ,

Երբ արել նոր է սարից ծագում,  
Բրդի շալը ուսիդ, ոտքիդ մուճակ,  
Տարածելով շորս կողմ մի հողաբույր ժնկիտ,  
Այցելում ես սիրով ամեն թիթ.

Մոտենում ես զգույշ,  
Անհունորեն քնքուշ  
Չեռք ես տալիս, կարծես բարեւում ես հերթով,  
Կոր ցողունին մեկի՝ խաշափայտ ես տնկում,  
Հիանում ես մեկի փարթամ ծաղկաթերթով,  
Մեկի արմատները փխրում բրշով փայտի,  
Իսկ այն մեկի մասին — հասունովթյան առթիվ —  
Շոյիշ մի խոսք ասում...

Այգու մյուս մասում  
Զեռքիս արծաթ բահով այսօր նորից  
Հորդ անձրեկի բերած տիզմ ու բարից  
Այն առուն եմ մաքրում, որ մանկաբար  
Վախսենալով դիպչել հանկարծ պատին՝  
Սիրով ընկերանում ցանկապատին  
Ու բակ է ներս խուժում ափալ-թափալ...

Բակ եմ մտնում ես էլ:

Այգու ցողով շաղված,  
Փոքր-ինչ հոգնած արդեն՝ բազկաթոռում թաղված,  
Տանու շորբդ հագած, ոտքիդ մաշիկ՝  
Դու սպասում ես ինձ... նախաճաշի...



Դու հարցնում ես հաճախ:

«Ո՞նց ես տանում,  
Անզո՞ւթ, ո՞նց ես ապրում ինձնից բաժան,  
Ո՞նց է, որ ինձ նման շես խենթանում,  
Ո՞նց է, որ շես գժվում անլուր տառապանքից»:

Մի մոռացիր, որ իմ և քո կյանքում դաժան  
Եվ երազ կա, — այսպե՞ս, — բացի անհույս կյանքից...

22. VIII. 48  
Երևան

## ԾԵՐ ԼԻՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ես կուզեի հիմա լինել ծեր ու տկար,  
Ապավինած միայն անցյալների հուշին,  
Լինել ապրա՞ծ, անցա՞ծ, որ սիրոս ալսպես չզգաը  
Ոչ սեփական դարկը, ոչ՝ ուրիշի:

Լինել լո՞ւռ ու պարտված,  
Արդեն հաղթա՞ծ դավին,  
Հուզումներից պարպված  
Եվ անկարող ցավին,  
Եվ ուշացած սիրուց ու կարուտից դաժան,  
Հիշել — ու հասկանալ, զգալ գոնե այնժամ,  
Որ դժվա՞ր չէր այսպես,  
Անհնա՞ր չէր այսպես  
Ապրել առանց իրար և իրարից բաժան...

30. VII. 46

Չանախցի

## ԴՈՒ ԵԿԱՐ

Իր մասին, հայոնի բան է,  
Փորձանքը լուր չի տալիս:  
Դու եկար ճիշտ որ այդպես,  
Բա այդպես հյո՞ւր են գալիս:  
Դու եկար և ամե՞ն ինչ  
Արեցիր տակնուվրաւ:  
Ես հիմա ինչպե՞ս ասեմ,  
Թե՛ փորձա՞նք, զո՞ւր ես գալիս:

17. III. 56

Մուկլա

Հանկարծ, մեր աշքի դեմ, առուն... խելագարվեց՝  
Առուն կորցրեց իրեն — հին ափերից ելավ,

... Առուն խելագարվեց՝ ափից ելավ առուն —  
Աւրիշ ափեր զտավ քո հունն իրեն համար...  
Թե բար տիրությունն է իմ աշքերին թառում,  
Թե թախծում եմ հաճախ՝ միայն դրա՛ համար:

6. 1. 47

Երեան

13—14. III. 56

Մոռկալ

## ԹԵ ՏԻՐՈՒՄ ԵՄ ԿՅԱՆՔՈՒՄ

Թե տիրում եմ կյանքում՝ քեզ համար է միայն,  
Թո կարոտից են դեռ կոպերն իմ թրթըռում,  
Դու՝ երեկով՝ իմ սեր, դու հեռավո՞ր իմ այն,  
Որ գալիս ես հաճախ, ճերմակ թղթին թառում:

Թո թանկ անվան համար դեռ շրթներս են դողում,  
Ու շրջյունը շորիդ հետևում է դեռ ինձ,  
Եվ իմ ասվա՞ծ-շասվա՞ծ յուրաքանչյուր տողում  
Մի ալիք է մնում քո տաք շշուկներից:

Բախտի նման՝ հեռվից դու իշխում ես վրաս,  
Բախտի նման՝ գտած ու զուր ձեռքից գցած,  
Գուցե արդեն գտած ուրիշ բախտ ու երազ,  
Ուրիշի հետ գուցե նույնիսկ երշանկացած...

Ու տիրում եմ եթե՝ քեզ համա՞ր չէ միթե,  
Ախ, թե ծամո՞վ-համո՞վ նույն աղջիկը մնար,  
Որ խելքահան ժպտալ, բայց և շիկնել գիտեր,  
Որ աղջիկ էր այնպես, այնպես կի՞ն չէր, բնա՞վ:

Այն աղջիկը մնար, որ ինձ երգեր տվեց,  
Եվ նույն առո՞ւն մնար, և նույն գարո՞ւնն անբիծ,  
Երբ մեր հանդիպումը այնքա՞ն երկար տեսց,  
Որ հորդ անձրեւ տեղաց գարնանային ամպից:

Տեղաց վարար անձրեւ, երկինքն ասես փլվեց. —  
Դու հիշո՞ւմ ես արդյոք, իմ հեռավո՞ր, իմ լա՞վ, —

## ԱԾՆԱԽԱՅԻՇԵ

Քո քաղցրությունն աշունի վիճակվել է հիմա ինձ,  
Երբ դեռ գարուն է այստեղ՝ իմ կրծքի ներքու  
Աշնանաբույր-դեղնաթույր այս մետաքսի շորը քո  
Այնպես լավ է քեզ սաղում, դարձնում այնպես հմայիչ:

Ինչպե՞ս կոչել՝ չփիտե՞մ, բայց սա ինչ-որ չի կապ չի՝  
Այս քո աշունը շուայլ ու շերմությունն իմ գարնան:  
Ա՞խ, թե անցյալը հանկարծ մի դեղնաթույր շոր դառնա  
Ու վա՛ր սահի, ընկնի՛ ցած, քեզ այլևս չկպշի՛...

Քո անցյա՞լը... Զհիշե՞նք: Եկ աշնան պես եղիր բաց,  
Առատաձեռն՝ աշնան պես, աշնան նման՝ պաղապու.  
Եկ մաճառի՛ց շխոսենք — աշնա՞ն գինու կթվալ տուր,  
Թեպետ արդեն՝ դեռ շըմպած՝ ես գինով եմ ու հարբած:

... Դրսում աշուն է դեղին, տերեաթափ է հիմա, —  
Աշխարհո՞վ մեկ տարածված քո ստվերն է քա կարծես.  
Քե՞զ եմ տեսնում ամենուր, դո՞ւ ես՝ աշո՞ւն ես դարձել,  
Անձայր աշո՞ւն ես դարձել ու քաղցրացն ինձ համար...:

31. VII. 46

Զանախի

## ԵԱ ՔՈ ՄԱՍԻՆ...

Ես քո մասին  
Արդյոք ի՞նչ եմ մտածում:  
Ես քո մասին  
Ախար ի՞նչ չեմ մտածում,  
Բայց թերեւս  
Այնից շատ՝ մտովին  
Կորուստներս է,  
Որ հաշվում եմ գտածում:

22. IV. 56

Մոսկա

## ԴՈՒ ՀԵՇՎԻՑ ԵՍ ՀԱՐԱՉԱՏ

Միւնույն է, թե հիմա որտեղ ես մաշում  
Քո կոշիկները նրբին և քո սիրտը ժանտ,  
Իսկ ես այն օրն եմ միայն անմռաց հիշում,  
Երբ սիրով եմ անվանել քեզ «իմ հարազատ»:

... Մոռացել եմ ամեն բան, ինչ սիրու է մաշում,  
Ինչ կոպտորեն եղծում է պատկերը գերող,  
Ու մտքիս մեջ քեզ նորից անեղծ եմ հիշում,  
Որ մտովին քեզ շոյեմ սիրող ձեռքերով:

Բայց մոտիկից, ես գիտե՞մ, ո՞ղջը կցնդի,  
Ողջն անիմաստ կդառնա խաղով քո հիմար,—  
Գու հեռվի՛ց ես հարազատ սիրող իմ սրտին,  
Ես պատրաստ եմ լոկ հեռվո՛ւմ ապրել քեզ համար...

Գիտեմ՝ այստե՛ղ, ինչ-որ տեղ ինձ մոտ են մաշվում  
Քո կոշիկները նրբին և քո սիրտը ժանտ,  
Բայց և գիտեմ... ու հեռվո՛ւմ, հեռվի՛ց եմ հաշվում  
Քեղ վերստի՛ն սիրելի, նորից հարազա՛տ...

[1946]

## Ո՞ՆՅ ՍՈՒՏ ԱՍԵՄ

Ո՞նց սուտ ասեմ. չէ՛, բարակ չի ու թեփ մեջ  
Ճի առնվի քո իրանը:  
Ինչպե՞ս ասեմ, թե քեզ նյան կին Ճի տեսել  
Հաֆեղների պերճ իրանը:  
Իսկ հագածըդ գործարանի ծաղկուն շիթ է —  
ո՞չ աբրեշում, ո՞չ ծիրանի:  
Ասեմ սակայն. նրա համար, որ իմն ես դու,  
ինքս եմ տալիս ինձ երանի:

18. III. 56

Մոսկվա

## ԴՈՒ ԵԿԵԼ ԵՍ ՂՈՐԻՑ

Դու եկել ես՝ նորից, եկել այնպես հանկարծ,  
ինչպես սիրեցիր ինձ և ինձ հմայեցիր,  
Նույն հասարակ ու պարզ քո զգեստը հագած՝  
Հանկարծ հարց ես տալիս.  
— «Ինչո՞ւ ինձ սիրեցիր»:

Ես շգիտեմ, անգի՞ն: Նրա՛ համար գուցե,  
Որ այդ պահին հանկարծ վառարանում ձեր հին  
Կրակը փող եկել և իր լույսն էր գցել  
Քո մտորուն դեմքին ու կեռ թարթիշներին:

Նրա՛ համար գուցե, որ ծխանում պատի  
Քամին կարծես խոսեց աղջրկական ձայնով,  
Եվ հալոցը մի պաղ, մի անդրանիկ կաթի  
Ջրհորդանից պոկվեց, ընկավ մայթին ծանոթ:

Նրա՛ համար գուցե, որ ձմռանը հանկարծ  
Ամռան բուրմունք առա շրեղ քո վարսերից:  
Նրա՛ համար գուցե, որ քեզ սիրտըս ցանկաց,  
Բայց ինձ թվաց, թե դու... թե դու ինձ չես սիրի...

Ախ չէ՛, նրա՛ համար... Բայց իբրև պարզ զգեստ,  
Նայի՛ր, ձյունն է ծածկել անցած հետքերն հիմա,  
Եվ ուրախ եմ, անգի՞ն, որ սիրում եմ ես քեզ  
Ու չեմ կարող ասել՝ ինչի՞ն համար:

[1946]

## ԱՌԱՆՅԻ ԽՈՍՔԵՐԻ

Ես գիտեմ, որ դու հաճախ ես հիմա  
Մոտենում ձեր տան հայելուն շքեղ,  
Անծանոթ, օտար մի կնոջ նման  
Դիտում ես երկար, զննում ինքը քեզ:

Մաղերդ ես շտկում, հանդուգին մի լիոնչ  
Զեռքով մղելով ականջիդ ետե,  
Մարմարե վիոլը ափերով շփառ  
Ու ժպտում ես քեզ անփույթ ու թեթև:

Հարդարում ես դու հազուստը այրող,  
Որ զրկում է քեզ սիրահարի պես:  
Նայում ես մերթ մեղմ, մերթ՝ հրավիրող,  
Մերթ՝ շարաձնի, մերթ՝ համեստ ու հեզ:

Դառնում ես այս կողմ, զառնում ես այն կողմ,  
Կրնկիդ վրա պտույտ ես տալիս  
Ու նորից ժպտում, ժպտում ինքնագոհ,—  
Ինքըդ շափաղանց քեզ զուր ես զալիս:

Ինքըդ քո աշքում ուրիշ ես դարձել,  
Այնպե՞ս շես քնում, վեր կենում, զնում...  
Ինչոր բան հանկարծ փոխվել է կարծես,  
Թե ի՞նչ է փոխվել, պարզ շես հասկանում:

Թե ի՞նչ է փոխվել, ես գիտեմ, անգի՞ն.  
Մի՛շտ, ամե՞ն անգամ այդպես է լինում,  
Երբ քեզ պես համեստ ու խոնարհ մեկին  
Ինձ նման մի խենթ, ինձ նման մի գիծ  
Առանց խոսքերի իր սիրտն է բանում...

[1946]

## ՄԻՐՏԻ ԻՄ, ԻՆՉՈ՞Ի ԵՍ ՆՈՐԻՑ ԽՌՈՎԵԼ

Սիրտ իմ, ինչո՞ւ ես նորից խռովել,  
Իզուր ինձ ու քեզ ինչո՞ւ ես տանջում.  
Ի՞նչ ես կայեցել, որ քեզ չեմ տվել,  
Ի՞նչ ես պահանջում:

Այս, խռովում ես դու այդպես հաճախ,  
Բայց համբ լեզուդ ես չեմ հասկանում,  
Սիրտ իմ, երեխա՞ քմահաճ ու շար,  
Անլեզո՞ւ մանուկ...

թ6. 11. 47  
Երևան

## ՎԱՂՎԱ ԽՆՁՈՒՅՔԸՈՒՄ

Վաղը խնջույք է լինելու, ու կլինենք մենք միասին:  
Ոմանք՝ գինով, իսկ ես կարեն քո հայացքով պղտոր ու մառ.  
Մինչ իմ հոգին, լի գավի պես, լուս կերաղի լոկ քո մասին՝  
Կի գավերը կդատարկվեն հազար ու մի կենաց համար,

Ու խենթորեն երգեր կասեն՝ երգեր սիրո — զրժման մասին,  
Կմիանան — կրածանվեն պարազույցերն՝ իբր ապացուց:  
Հազար մաղթանք բաժին կընկնի յուրաքանչյուր կենաց  
Բասին,  
Հազար մաղթանք նրանց համար, ինձ՝ լուսթյուն մի  
անպաճույճ:

Հազար նայվածք նրանց համար քո աշքերից մութ ու դերիւ,  
Քո ձեռքերից հազար ալիք մեղմ կշոյի սրան-նրան,  
Եվ միայն մի պատահական մոլորված շող քո աշքերից  
Կիշնի, բայց չի հանգրվանի իմ դառնացած դեմքի վրա:

Քեզ կշոյեն ոմանք ձեռքով, ոմանք ժպտով ու հայացքով,  
Ոմանց համար կին կլինես, այլոց համար՝ աստվածուհի.  
Քեզ կդիմեն, կբարբաշեն թլվատ լեզվով՝ գինու խոսքով,  
Իսկ ես... հեռո՞ւ ինձ կպահեմ այդ խոսքերից ասված ու հին:

Եվ այն պահին, երբ թանկագին քո կենացը հանկարծ զնոս,  
Ու ոսկեզօծ մաղթանքները արծաթ գավով հորդեն տնից,  
Գու այդ արբշիո աղմուկի մեջ չես նկատի ու լես զգա,  
Որ սրտիս մեջ լեցուն մի զավ ճայթեց... զսպած լուսթյունից,

Բայց նստած եմ ևս դեռ մենակ (չէ՞որ վաղն ենք խնջույք  
անում),  
Դեռ առանց քեզ և — առանց քեզ՝ քեզ ավելի մերձ ու մոտիկ,  
Քան թե վաղը, երբ քո կողքին՝ ես ինձ կզգամ օտարոտի,  
Ինչպես երգն այս, որ երբ գրվեց՝ քեզ պես այլոց է  
պատկանում,  
Մինչդեռ իմն էր, երբ սրտիս մեջ ճիշ էր ցավի և կարոտի...»

29. III. 46  
Երևան

### ԳԻՏԵ՞Ս, ՍԻՐԵԼԻՍ...

Գիտե՞ս, սիրելի՞ս,  
Ո՞վ է անխելքը,  
Եվ անբռւժելի՝  
Ո՞ր խոցն ու զերքը.  
— Երբ ո՞չ թե կտրում,  
Այլ համբուրում ես  
Քեզ անխողնորեն  
Հարվածող ձեռքը,

18. III. 56  
Մասկով

## ՀԱՎԵՐԺ. ԵՐԵՒԱՆ

Մու ու և ապա ու ու լետամ!..

Ա. Ս. Պոսկին

Անձիս, տարիքիս վայել չէ, գիտե՞մ...

Ինձ պետք է հիմա հոնքերը կիտել,  
Ինձ պետք է հիմա կարգին լրջանալ,  
Ինձ պետք է հիմա...

պետք է հաղար բան,  
Իսկ ես՝ հիմարս, ես՝ անուղղելիս,  
Խելքս տվել եմ թովանքիդ էլի  
Ու բռնել քեզ հետ խենթության ճամփան:

«Կյանք չի հասկանում», — լսում եմ անվերջ...  
«Ե՞րբ պիտի ախր դուրս գա մարդամեջ»...  
«Ե՞րբ պիտի ախր հասնի սա դիրքի»...  
«Ե՞րբ պիտի կյանքը հասկանա կարգին»...  
Եվ այս ամենը՝ նորից իմ մասին,  
Իսկ դու... խնդո՞ւմ ես, իմ լա՛վ, իմ անսի՛րտ:  
Խնդում ես, այո՛, սակայն ո՞ւմ վրատ:  
Եվ քո կարծիքով սխա՞լ են նրանք:  
Գիտե՛մ, ուզում ես դու նրանց ասել,  
Որ ես մի անհաս դիրքի եմ հասել.  
Որ դու աշխարհ ես մի կախարդական,  
Ու ես եմ այնտեղ քո տերն ու արքան.  
Որ կյանքը գիտեմ ես հիանալի,  
Քանի որ դու ես նրա բանալին.  
Եվ ի՞նչ ասել է սղուրս գալ մարդամեջ,  
Երբ ես մարդկանց մեջ քեզ հետ եմ անվերջ,  
Եվ ի՞նչ ասել է «Ճանապարհ հարթել»,  
Երբ քեզ եմ հասել հարթ ճամփով արդեն...»

Ասում ես այսքանն ու կանգ ես առնում,  
Դու կանգ ես առնում և ինձ ես նայում,  
Ուզում ես տեսնել, թե ես ի՞նչ կասեմ:  
Ես քո կարծիքը խնշպե՞ս շկիսեմ,  
Երբ որ կիսում եմ քեզ հետ կյանքը իմ,  
Ուրախովյունը և տանջանքը իմ:  
Ես քեզ, անզի՞նս, լավ եմ հասկանում.  
Ինձ ոչ մի դեպքում դու չես ցանկանում  
Տեսնել ընտանի կենդանի դառած —  
Կենդանի մեռած...

ԷՅ. VII. 53

ՆԱՎԼԱԼՈՒ

## ԳԱՎԻՍՈ ԵՍ, ԳԱՎԼԻՍՈ...:

Կալի՞ս ես, զալի՞ս...

գաս հաղա՛ր բարով,  
Ի գլխի՝ վրա և իմ աշքերի՛:  
Ա՛յս, եթե պիտի բաժանվենք էլի՝  
Բաժանվենք մի՛ օր, տեսնըվենք տարո՛վ:  
Թե որ գժարվւնք՝ մի՛ օր գժարվենք,  
Մի ամի՞ս զոշանք, տարո՛վ հաշտըվենք,  
Ու թե սիրում ենք՝  
Մեր սրտի բոլոր լարերո՛վ սիրենք,  
Ու թե սիրում ենք՝  
Յոթ տարիս ո՞րն է —

դարերո՞վ սիրենք...

Տ. Դ. 56

Մասկվա

## ԹՈՂ ԼԻՆԻ ԱՅՆՊԵՍ

Թող լինի այնպես,  
Ինչպես հուշում ես.  
Էլ չե՛նք հանգիպի՝  
Ինչպես ուզում ես:  
Ինչ էլ որ լինի՝  
Հիշելու բան կա.  
Քե՛զ մոտ ավարտվեց  
Սիրո ուսումբաւ:

22. IV. 56

Մասկվա

## ՎԵՐԱՌԻԾ

Կրկին անձրւն է տեղում գիշերային մայթերին,  
Քնա՞ծ, խաղաղ քաղաքի տանիքներին երազկուու  
Եվ արթնանում է կրկին մի հին երազ մտերիմ,—  
Ու ես մեր զյուղն եմ ընկնում սովորական հրաշքով:

Այնտեղ ննջում է հիմա տարափի տակ այս վարար  
Մի կալաշեն, հողհատակ ու հարդածածկ լուռ խրձիթ.  
Հանգել է լուսը լամպի, իշել զիշերը խավար,  
Քնել է մայրն իմ պառագ՝ կրողը մեր տան խղձի:

... Ես մի երազ ունեի պատանության օրերում,  
Երբ արթնացել էր հոգիս սիրո նորեկ հովերից.  
Այդ հողաշեն ծածկի տակ, հարսանեկան շորերում  
Տեսնել նրա՛ն, ում համար ես կանցնեի ծովերի՛ց,

Տեսնել նրա՛ն, ում համար շուռ կտայի ես սարե՛ր...  
Ա՛յս, ի՞նչ ծովեր, ի՞նչ սարեր, — միայն ասում են այդպես...  
Տեսնել նրա՛ն, ում համար, փեշըս լցրած խիճքարեր՝  
Ես մեր այգու ծառերին տանջում էի պարզապես.

Ամեն նետված քարիս հետ թե մի խնձոր լընկներ ցած,  
Ուրեմն իզո՞ւր, — վա՛տ նշան, — ես շեմ հասնի մուրազիս...  
Խնձորն ընկներ թե լընկներ՝ թնծաղին կամ դառնացած,  
Քարերն էի ես թողնում ու հետևում երադիս.

— Կապրենք մեկտեղ, բախտավոր: Դաշտից ես տուն  
Արդեն հոգնած ու դադրած, բայց վաստակած, ինքնագոհ,

236

Մայրս, կովկիթը ձեռքին, տուն կմտնի, մինչդեռ նա  
Սուփրեն գետնին բացելիս ինձ կժպտա գողեգող

Մինչ հավաքի Նա սուփրեն՝ սարին, ձորին ու հանդին  
Իրիկունք կիշնի ցած, ու ես մի կողմ կնետեմ  
Իմ մանգաղը հեսանվող կամ իմ սրվող գերանդին,—  
Հո չպիտի մթան մեջ իմ մատները կտրատեմ...

Խոտի գեղը տանիքից, բակից այգին կրուրի,  
Ու ծղրիդի երգի տակ, նվագի տակ այդ վարպետ,  
Մածկված նախշուն վերմակով՝ քուն կմտնենք կտուրին,  
Իսկ կողքներիս՝ մի շեշիմ կամ հնամաշ մի կարպետ,

Որ թե, ինչպես այս պահին, տեղա անձրեւ անհատնում,  
Մածկվենք նաև շերտավոր մեր կարպետով այդ բրդեւ  
... Եվ անձրւի թակոցից խոր քնից ենք մենք զարթնում  
Եւ. մինչ երկինքը պարզվի, (այդ պատճառով իբր թե),

Էլ չենք քնում՝ զրուցում, երազում ենք շշուկով,  
Առատ հնձից ենք խոսում, մրգահասից մեր այգու,  
Եվ ա՛յն մասին, թե արդյոք պիտի գնել ե՞զ, թե կով,  
Եվ ա՛յն մասին, որ պիտի մորըս առնել վերարկու...



Թիգ տարիներ են անցել...

Կրկին անձրւն է երգում,  
Մակայն արդեն քաղաքի գիշերային մայթերին:  
Երգո՞ւմ է նա, ո՛չ, կարծես հին երազն է մորմորում,  
Հին երազը՝ նորացած, բայց և նույնքան մտերիմ:

Փոխվել է ո՞զը հիմա — և դեմքերը գյուղակի,  
Ե՞վ գեապերը, որոնք ինձ օրերի խենթ վազքի հետ  
Գյուղից քաղաք նետեցին ու քաղաքներ՝ քաղաքից,—  
Ողջը փոխվել է հիմա, փոխվել ընդմի՛շտ, առհավե՛տ,  
Նույն է երա՛զը միայն, որ մնացել է հրկեղ.

— Հոկ ունենալ կավաշեն ու հարդածածկ մի, խրճիթ  
եվ այդ համեստ ծածկի տակ ունենալ քե՞ղ, միայն քե՞զ՝  
իրոն բերքի խօստումի,

Տրգահասի

ու խղճի...

25. VIII. 48

Երես

19—20. X. 55

Սոսկվա

### ԱՌԱՋՎԱՆ ՊԵՍ

Ո՞ւր ես՝ չկաս,  
Զէ՞ որ կայիր...  
Ա՞խ, թե մեկ էլ  
Մի օր գայիր  
Ու ժպտայի՞ր  
Առաջվա պես,  
Առաջվա պես,  
Հայատայի՞ր...

ԷԼ. III. 56

Սոսկվա

Թե դու ուզում ես, որ, ինչպես մանուկ,  
Մեր նախահոր պես միտքըս սքողած,  
Իմ հանգստության դրախտը թողած՝  
Ես քո հետքերով ու քո ետևից,  
Ամեն ինչ լքած՝ բռնեմ քո թկից  
Ու գնա՞մ, գնա՞մ, ուր դու կգնաս,  
Մանեմ ա՛յն զոնով, որ դու կրանաս,  
Խմեմ հարբենամ՝ ինչով դու հարբես,  
Տանչվեմ ու տոկամ իմ նախահոր պես,—

## ԱՆԾԱՆՈԹՈՒՅՌԻՆ

Անծանոթ եմ քեզ, բայց գիտեմ վաղո՞ւց...

Այդ քե՞զ համար են ազգերը կովել՝  
Այդ քե՞զ համար է Տրոյան վառվել:  
Այդ դո՞ւ լույս տվիր կույր Հոմերոսին,  
Սփինքսի գալտնիքը ժպտալով առար,  
Ու մարաթոնյան վազքի հերոսին  
Այդ դո՞ւ, թերեւս, թեկրիդ տարար:  
Քե՞զ համար ընկավ մեր շքնաղ Արան,  
Նորից քե՞զ համար  
Մի այրող ամառ  
Մեր Արտավազդին գերության տարան...

Հին ժանոթներ ենք — քեզ գիտեմ վաղո՞ւց:

Դրախտը կորցըրած՝ այդ քեզ է գտնել  
Մեր նախահայր՝ ինձ նման մանուկ...  
Երկար գարերի ճամփիքով բանուկ  
Պու եկել ահա և ինձ ես հասել  
Եվ ստիպում ես ինձ գոռալ՝ ասե՛լ,  
Որ դու այրում ես՝ Տրոյայի՝ պես,  
Ուզում ես գերել՝ մեր Արայի՝ պես,  
Ինչպես Հոմերին՝ դու լույս ես տալիս,  
Բայց շլացուցիչ քո լույս ու փայլից  
Ես կուրանում եմ  
Ու մոռանում եմ,  
Որ դու աշքերով ինձ հույս ես տալիս,  
Ժպտում ես, սակայն և խույս ես տալիս,  
Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, — ես չեմ հասկանում:

Ես համաձայն եմ:

Ի՞նձ ինչ դրախտը,  
Երկի նույնն է և թոռան բախտը...

20. X. 55

Մոսկվա

## ՍԻՐՏՍ ՆՄԱՆ Է

Ա՞խ, սիրտս նաև նման է կարծես...

Նման է կարծես նա մի թռվակի,  
Որ ո՞ղջ ժամանակ նույն բանն է ասում.  
— Ես քեզ եմ ուզում...

Նման է կարծես նա մի շութակի,  
Որ միա՞կ լարով յոթ լարից շատ է  
Ազգում ու հուզում...

Նման է կարծես մի շինչ վտակի,  
Որ տարբե՞ր հունով, բայց դեպի բնու է  
Շարունակ վաղում...

Նման է կարծես մի պատառուկի,  
Որ գոտու նման փաթաթվում է քեզ  
Եվ շա՞տ է սաղում...

Նման է կարծես մի խոր հատակի,  
Որ ուրիշներին փետուրի նման պահում է վերև  
Եվ միայն քե՞զ է իր խորը սուզում...

4. II. 54

Մոսկա

## ԻՆՉ ՄՆԱՅ

Աշքերըս միշտ լույսի սովոր՝  
Ես հիմա տանշվում եմ խավարից.  
Ես՝ վարոված ոստանիկ կլանքի՝  
Զրկված եմ և մոտիկ գավառից:  
Երեկվա իմ վարդավառից  
Ի՞նչ մնաց — այս շապիկըս թաց,  
Կախվելու մի պարան մնաց  
Իմ սիրո հարուստ ավարից:

{1956}

## ՄԻ ՄՈՌԱՅԻՐ

Մի՛ մոռացիր, որ շատ հաճախ, ցանկալի՛ս,  
Երբ հույս ցանում ու հավատ են շաղ տալիս,  
Չի՛ կանաչում:

Հիշի՛ր, որ միշտ ուշանում է ցանկալին,  
Իսկ երբեմն էլ, իր ոտքով է երթ զալիս,  
Չե՞ն ճանաշում...

Յ. XI. 55

Մոսկվա

## ԵՐԱԶՄՆՔԻ ԳԻՆԸ

Մենք ամեն ինչ արեցինք  
Ծտապելով ու փութով,  
Թան շտեսանք, սիրելի՛ս,  
Բայց հուսացինք, թե շուտով  
Սերն ամեն ինչ կհաղթի,  
Լավ կընթանա ամեն ինչ...  
Չէ՛, սնեցինք մեզ սուտով...

Դու տեսնում ես, իմ անգի՞ն,  
Երազանքը մեր փարթամ  
Հիմա դարձել է անշուք,  
Հիմա դարձել է տարտամ,  
Նա մի ստվեր է թվում,  
Բայց մի ստվեր՝ հտկում,  
Որից պրծո՞ւմ էլ չկա —  
Մեզ է անվերջ հետևում...

Յ. XI. 55

Մոսկվա

## ԵՍ ԱՅՆՊԵՍ ՀԵԾՏ ԵՒ ԹԱՐՎՈՒՄ

Ես այնպես հեշտ էի տարվում,  
Ես այնպես հեշտ էի վառվում,—  
Իմ թելած ասեղի վրա  
Հուլունքի պես էին շարդում:  
Եվ հանկարծ... ես՝ վաղո՞ւց հանդայ,  
Վառվեցի և ի՞նչ — քո սառցից...  
Հե՞յ գիտի. ծովերից անցա  
Ու հանկարծ... խեղդվեցի առվում:

17. ԱԼ. 48

Մոռկա

## ԻՆՉՊԵ՞Մ ԶԶԱՐՄԱՆԱՍ

Իմիտ էր մեզ համար՝ խաղալ ջրերում  
Ու երջանկություն՝ ցեխոտել իրար,  
Թեպետես տանը մեզ չէին ներում  
Մեր այդ մանկական հաճույքի համար

Ճիշտ է, մենք իրար ցեխոտում էինք  
Եվ դրա համար ծեծ էինք ուտում  
Բայց նրանք ինչպե՞ս, ո՞նց չգիտեին,  
Որ մեր շորն էինք միայն ցեխոտում:

Հետո, հիշո՞ւմ ես, մաքո՞ւր շապկի տակ  
Պղտորվեց զուլալ մանկական հոգին՝  
Աղարտվեց մեր հին երազը հատակ,  
Չկշտամբեցին սակայն ոչ մեկին...

6. Դ. 46

Երեան

31. ՎԻԷ. 58

Նավշալու

## ՉԵՄ ՈՒԾԱՑԵԼ

Ուշացել եմ: Թո՞ղ որ այդպես, թո՞ղ որ, անդի՞ն,  
Անծանոթ եմ աղջրկական քո նազանքին.

Անտեղյակ եմ, թե ինչպես ես դու ժպտացել,  
Տասնըվեցըդ երբ որ նոր է դեռ լրացել:

Թո՞ղ որ ես չեմ ստացողը քո առաջին  
Աղջրկական ո՞չ համբույրի, այլ լոկ պաշի՞.

Որ չկիտեմ, թե ինչպես ես դու կարոտել,  
Երբ որ քսան-քսանհինգն ես թողել ետեւ:

Թո՞ղ որ, անգի՞ն, հանդիպել եմ ես քեզ այնժամ:  
Երբ դու արդեն անկարող ես ապրել բաժան.

Քո անցյալից, անցած կյանքից, որ առանց ինձ  
Դու ապրել ես կամ այլոց հետ, կամ առանձին:

Թո՞ղ որ այդպես,— ուշացել եմ թող գարունից,  
Բայց ավելի քիչ չի թովում աշունը ինձ:

Ինչո՞վ է լավ արշալույսը մայրամուտից,  
Աշնան հասմիկն ինչո՞վ է վատ գարնան պուտից:

Չէ՞, ավելի՞ն. երբ աշխարհում օրն է մարում,  
Մաղիկները շատ ավելի սուր են բուրում...

24. XII. 53

Մոսկա

## ԵԿ ՀՊԱՄՏ ՄՆԱՆՔ

Մեզ վիճակվեց — և յենք հանդիպեցինք կյանքում,  
Վաղ գարուն էր: Ձնհալ, Կարծես օդն էր զինով,  
Եվ մենք՝ երկու ցավի, երկու դավի ճանկում՝  
Թռնկվեցինք մի նոր, չկրկնվող սիրով:

Ու վիճակվեց... ապրել մեկըս մեկից բաժան,  
Մեկըս մեկի համար, առանց մեկըս մեկի,  
Քեզ՝ շազատվել երբեք այս կարոտից դաժան,  
Ինձ՝ չքայել երբեք ձեռքս տված ձեռքիդ...

Կյանքի՝ հետ ենք կարծես տվել մենք ձեռք-ձեռքի,  
Այդպես ձեռք չեն տալիս, երբ դաշինք են կնքում,  
Այդպես ձեռք են տալիս, երբ բռնում են գրազ...

Արի հպա՛րտ մնանք, դու իմ անա՛նց երազ,  
Արի շտրտնշանք մեր անուրախ կյանքում  
Ո՛չ մեզ, ո՛չ մեր բախտի, ո՛չ աշխարհի վրա —

Եթե վիճակվել է... չվիճակվել իրար...

ԷՅ. VII. 56

Չանախմի

## ԿԱՄ ՀԵՌԱՅԻՐ, ԿԱՄ ԱՐԻ

Ի՞նչ ես տանջում, կամ թույլ եղիք,  
կամ արի'—  
Կամ հեռացի'ր, ընդմիշտ գնա՞՝,  
կամ արի'։  
Թե չէ՝ այդպես գու նման ես  
շփմված,  
Բայց ուր որ է զվահս թափվող  
կամարի։

22. IV. 56

Առարկա

## ԽՈՒԲԿԱՆՆԵՐ

Իրիկունն է իջնում: Արեք հանգչում է,  
Գիշերվա մութ շունչն է խստանում:  
Մթան հետ զալիս ես, հայացքով կանչում ես  
Եվ վալելք ու սեր ես խոստանում:

Լույսերը վառվում են: Դու լույսը մարում ես  
(Ուզում ես, որ նստենք մթան Ճեք),  
Մերթ տալիս անունըս, մերթ կրկին լուս ես,  
Տիրաբար շրջում ես իմ տան մեջ:

Գալիս է գիշերը: Փակում եմ փեղկերը  
(Չմրսես գիշերվա պաղ հովում),  
Կարծես թի մեր հանգեալ իր գործած մեղքերը  
Զզալով՝ ինքը կյանքն է բավում...

Չէ՛, սո՞ւտ է յենա՛կ եմ, առանց քեզ, առանձի՛նց  
Եվ այս էլ խաբկանք է մի ոսկե,  
Որով դու խարվելով ապրում ես առանց ինձ,  
Եվ ես էլ... շեմ մեռնում առանց քեզ:

{1918}

## ԻՆՉՔԱՆ ԵԼ ԹԱՆԿ ԼԻՆԻ

### ՈՐՎ ԳԻՏԻ

Դու այնքան չքնաղ, այնքան սիրուն ես,  
Այնպես գերում ես, այնպես կախարդում։  
Դու խայտանք բերող մատաղ գարուն ես,  
Որ ամեն ինչ է իր ճամփին հարթում։

Չգիտեմ՝ իրոք զո՞ւ ես գեղեցիկ,  
Թե սիրո համար լավ է և վատը,  
Ինչպես որ սուրբ էր հին եկեղեցի՞ն։  
Թե՝ սուրբ է եղել միայն հավատը...»

15. IV. 48

Երևան

Ես գիտեմ. կհանդիպենք դեռ,  
Եվ դու էլ ինձ կանես հարցում.  
«Էլ մի՞թե քո սրտում շկա  
Իմ հանդեպ ոչ մի զգացում»։  
Չեմ զիմել ատամնաբույժի,  
Բայց հարցիդ պատասխանն ունեմ.  
«Ինչքան էլ թանկ բան է ատամը,  
Ցավելիս հանում են — զցում»...»

22. IV. 56

Մոսկվա

## ՉՈՒՐ ԵՍ ՀԱՄԲԵՐՈՒՄ

Նույն աշնան օրն է պղտոր ու խոնավ,  
Նույն մառախուղն է հողը համբուրում,  
Միայն չկա քո պատկերը խոնարհ,  
Եվ օրը այսօր շատ է համբերում:

Տիսուր է օրը բոլորի՝ համար,  
Թե՛ ես եմ այսպես դժվար կարոտել.  
Տերեաթափ է ամենո՞ւր հիմա,  
Թե՛ միայն ես եմ թեաթափ քո դեմ:

Եվ ո՞ւր ես հիմա, տիսո՞ւր ես, տրաո՞ւմ,  
Դո՞ւ էլ ես հիշում այն օրը խոնավ,  
Երբ աշնան ցրտին վառվեց իմ սրտում  
Մի տաքուի արև՝ քո տեսքով խոնարհ.

Երբ բախտը թվաց այնքա՞ն ձեռնասուն,  
Երշանկությունը՝ այնքա՞ն ընտանի,  
Լուսթյունն անգամ երբ դարձավ խոսուն,  
Պահանջե՞ց, խնդրե՞ց, հայցե՞ց ընտանիք...

... Նույն աշնան օրն է պղտոր ու խոնավ,  
Նույն մառախուղն է հողը համբուրում,  
Թայց չկա՛, չկա՞ պատկերը խոնարհ,  
Եվ չի՛ էլ լինի, — զուր եմ համբերում...;

13. VIII. 56  
Զանախչի

## ԶԱՐՄԱՆԱՎԻ ԲԱԽՈՏ

Զարմանավի բախտ էր մեր բախտն այս աշխարհում.  
Կո՞ւյր ասեմ, թե աչքերն ամուր բողով ծածկած...  
Մենք բաց աշքով նայում էինք դեպի հեռուն  
Եվ փակ աշքով հեռու վանում ամեն կասկած:

Խնդության պես մի բան կար միշտ այն խաղերում,  
Որ՝ տանջվելով՝ խաղում էինք ամեն անգամ,  
Երբ բաց աշքով մեզ էր նայում անսիրտ հեռուն  
Եվ սպառնում մեր հրդեհը տեսնել հանգած...

Հիմա արդեն բաժանված ենք: Էլ ո՞չ մի հարց,  
Էլ ո՞չ մի խաղ, ո՞չ մի կասկած մեղ չի տանջում,  
Բաց աշքերով մեզ նայելիս՝ ի՞նչ վերադարձ,  
Բայց աշքը փակ մննք իռառ ենք դեռ անքում...

17. IV. 48  
Երեան  
13. VIII. 58  
Զանախչի

## ԵՐՋԱՆԿՈՒՅԹ ՅՈՒՆ

Երջանկույթյո՛ւն, թող որ նայեմ զինց աշքերիդ,  
Ու թարթիչներդ թող բնավ լթարթրվեն:  
Շատ անդամ եմ ես կամեցել դառնալ գերիդ,  
Իսկ դրա տեղ քո կոնակն ես ինձ ցույց տվել:

Հաղիվ հիմա դու մոտեցել ես քո կամքով, .  
Դու եկել ես և, փոխարկված զույգ ձեռքերի, .  
Վզովս ընկել, փաթաթվել ես ծով քնքշանքով  
Ու ժպտում ես թովի՛ շայնքան, այնքան գերի՛ շ:

Եթե սիրում ես երեալ հանկարծակի,  
Ինչպե՞ս քեզ հետ ժամադրրվել և ի՞նչ ճամփով:  
Երեւլը թե նման է հուր-կայծակի,  
Ինչպե՞ս խնդրել, որ շինի երկինքն ամպոտ:

Եթե թողնում, մեզ լքում ես նրա համար,  
Որ երազված լինի նաև քո այցը նոր,  
Էլ ի՞նչ իմաստ, ինչի՞ համար խնդրել հիմա,  
Որ մի քի: Էլ մնաս ու տաս սեր ու ցնորք:

Գնա-արի, եկ ու գնա, հիշիր սակայն,  
Որ քեզ կարոտ, իրար կարոտ սիրող մի զույգ  
Տառապանքի ու ցավի մեջ ամեն վայրկյան  
Կրկին դարձիդ են սպասում անարտասուր...

20. X. 55

Մովկա

## ՍՊԱՆՑ ՔԵԶ

Ուշ գիշեր է, ու ես՝ անքուն,  
Ու ես՝ նորից քեզնից բաժան,  
Փամացույցն է ինձ հետ տնքում,  
Վայրկյանները թվում են ժամ:  
Թվում է, թե անտես մի ձեռք,  
Սանըր, ինչպես ձուլված կապար,  
Սրտի՛ս, սրտի՛ս, սրտի՛ս իշել  
Ու ճյլում է անգիտաբար,  
Ու ցավում է...

Բայց սպասի՛ր.  
Քեզնից, անգի՛ն, շեմ գանգատվում,  
Լավ է լինել և ցաված սիրտ,  
Բայց ոչ անսեր, անսեր-տրտում:  
Չեմ գանգատվում: Քաղցր է այնպես  
Ժժվար սիրուղ խայտանքն զգալ,  
Սութ բիբերիդ փայլով հարթել,  
Հարթել — և էլ խելքի շգալ.  
Զգալ, որ դու իմն ես հեռվում  
Ցավով, սիրով, կարոտներով,  
Որ նույն հրով դու ես վառվում,  
Հովանում ես նույն հովերով.  
Զգալ, որ ես տրվել եմ քեզ  
Քո ցանկույթյանն իսկ հակառակ.  
Զգալ այնպե՞ս, որ սեր չերգես՝  
Եվ կենդանի սիրտը երբեք  
Զգառնա լավ կամ վատ քառյակ...

{1955}

## ՈՒԹՆՅԱԿՆԵՐ



Տաքն ի՞նչ իմանա,  
 Թե պաղը ինչ է:  
 Վերքը կիմանա,  
 Թե աղը ինչ է:  
 Նա՛, ով շատերին  
 Կոկիծ է տվել,  
 Ինչո՞ս իմանա,  
 Թե զաղը ինչ է:

15. III. 58

Մասկա



Ինչ էլ որ անես — հարյուրը՝ հարյուր,  
 Հազարն էլ հազար է մնում:  
 Հա՛ զույգ փոշտա — մրսելը՝ մրսել:  
 Հազարն էլ հազար է մնում:  
 Ինչքան սիրտըդ տա՛ սաղարթից խոսիր  
 Աւ վարդից խոսիր մայիսյան,—  
 Ախար ի՞նչ օգուտ — աշունը՝ աշուն,  
 Խազան էլ խազալ է մնում:

13. III. 58

Մասկա



Մեղուն ինքն էլ շգիտե,  
 Թե ինայթելիս կսասկի:  
 Ծողունն ինքն էլ շգիտե,  
 Որ կթոշնի՝ թե ծաղկի:  
 Գու, որ ժարդ ես՝ ոչ մեղուն  
 Ջշ էլ ցողուն մի անշունն,  
 Ամեն «սխալ» մի՛ ձաղկիր,  
 Ջմեն «սխալ» մի՛ շտկիր:

22. III. 58

Մասկա



Գու ինքդ քեզ տարանում ես  
 Եվ ինքդ քեզ հաճախ պաղում,  
 Թւ թվում է տեսնողներին,  
 Թե ինքդ քեզ զեր ես խաղում,  
 Քեզ, երկի, կհասկանան  
 Միայն նրանք, որ կաղում են,—  
 Երանի չէ՝ ոտքըդ լիներ,  
 Հոգին էլ է հաճախ կաղում:

(1958)

\* \* \*

Լինում է այսպես էլ կյանքում,  
իրավ են միշտ իրենց կարծում  
եվ այնպես պատժում են դաժան,  
Երբ թեթև զանցանք ես գործում —  
Այնքա՞ն խիստ և այնքա՞ն դաժան,  
Որ, գիտե՞ք, մեղ պատիժ տալով՝  
Շատ թեթև զանցանքի դիմաց  
Շատ ծանր հանցանք են գործում:

18. III. 56

Սոսկվա

\* \* \*

Հեշտ բան չէ, զանըս, ճիշտ ժամանակին  
Զարկել տագնապի սուր ահազանգը:  
Չէ՞ որ երբ չկա գեռ ժողովածոն,  
Չէս կարող կազմել դու նրա ցանկը:  
Հանկարծակի է պայթում վտանգը,  
Քայց նա ուղղում է դանդա՞ղ, աննկա՞տ,  
Գանդա՞ղ, աննկա՞տ՝ մետաղից ծնվում  
Ու նույն մետաղն է կրծոտում ժանկը:

[1856]

\* \* \*

Ի՞նչ անենք,  
Թե առուն բարակել է,  
Բայց չէ՞ որ  
Նա մի օր ոռոգել է,  
Բայց չէ՞ որ  
Ավերված այս դաշտերը  
Նա մի օր՝  
Մեռնելով՝ նորոգել է,

17. III. 56

Սոսկվա

\* \* \*

Սարն ի՞նչ զիտե՞  
Տուժն ինչ է,  
Չշտապողը՝  
Ուշն ինչ է:  
Թե դատարկ է  
Անցյալըդ,  
Ի՞նչ իմանաս՝  
Հուշն ինչ է:

[1856]

\* \* \*

Եթե անգամ այնպես փայլես, ոնց ամենքը,  
Քեզ չե՞ն տեսնի, — ի՞նչ իմանասι  
Եթե անգամ այնպես քայլես, ոնց ամենքը,  
Տեղ չե՞ս հասնի, — ի՞նչ իմանասι  
Տե՛ս, շատերը շեղած դարուց  
Բերք են վերցնում մեկին հազար,  
Իսկ բո ոսկի ցորենից էլ՝ մեկ էլ տեսաբ՝  
Փո՞ւշ կրուսնի, — ի՞նչ իմանասι

23. IV. 56

Մոսկվա

\* \* \*

Իսկ այս ախպը, հապա տեսեք.  
Զվի մեջ էլ մաղ է փնտրում,  
Աչ թե աշքիդ... ակնոցի՞ղ մեջ  
Վտանգավոր խազ է փնտրում:  
Թե սկսես. «Հնում լավ էր...»  
Հո չի ժարցնի, թե ինչն էր լավ, —  
Նույնիսկ կիսատ քո խոսքի մեջ  
Իր դարն ապրած ֆաղ է փնտրում...

15. III. 56

Մոսկվա

\* \* \*

Այս, ինչպե՞ս է, որ չի հոգնում  
Նրա անփակ այս բերանը...  
Նա ուրիշի շյուղն է տեսնում՝  
Մոռանալով իր գերանը.  
Ուրիշներին դեռ մածունից  
Ու պանրից է քարոզ կարգում՝  
Մոռանալով, որ այլնըս  
Չի՞ մակարդում իր մերանը:

18. III. 56

Մոսկվա

\* \* \*

Այս տի՞պը: Քո տանը լակում՝  
Ուրիշի դունն է հաշում,  
Ուտում է իր կուտն այս բակում՝  
Զուն ածում մեկ ուրիշ բուշում:  
Դու, ի՞նչ է, շղիտե՞ս ինչու  
Զգայուն առաղաստ ունի.  
Հասկանում, զգում է իսկոյն,  
Թե բամին ո՞ր կողմն է փշում:

16. III. 56

Մոսկվա

\* \* \*

Թեղերը քեզ քիչ են թվում՝  
Ուզում ես և լինի մորուք.  
Համ ջահիլ մնալ ես ուզում,  
Համ դառնալ իմաստուն ծերուկ:  
Դու շատի ետևից ընկած՝  
Քիչն էլ ես բաց թողնում ձեռքից...  
Ախ, ճիմա՛ր, այդ ո՞վ է բռնել  
Մի ձեռքով երկու ձմեռուկ:

\* \* \*

Սա տուն չի շինել՝  
Գիտի, թե սյունը տան մեջ է բռւնել:  
Նա, որ չի վազել՝  
Անցնել է ուզում, ոչ միայն հասնել:  
— Խոսելը հեշտ է,  
Հոսելն է դժվար —  
Հուն է հարկավոր.  
Սյունը լի բռւնի,  
Ինչքան էլ գոռաս.  
«Տուն է հարկավոր»:

15. III. 56  
Մոսկվա

\* \* \*

Թե նա մի քիչ վատ է զգում՝  
Թեթևակի հիվանդանում,  
Վայնասուն է զցում իսկովն,  
Ո՞նց է սուգ ու շիվան դնում:  
Իսկ դու — կեցցե՞ս. Հրո երկիր,  
Թե Սառուցյալ օվկիան ընկիր՝  
Մինույնն է, զգում ես քեզ  
Բարեհուս հրվանդանում:

[1956]

\* \* \*

Նրա ձեռքը բան չի ընկնում —  
Եվ... չհավան է,  
Սրա գիտում բան չի մնում —  
Ամբարտավան է,  
Տանտիրուհին անշնորհք է —  
Միսն է այրել թեծ կրակին,  
Մեղավորը ո՞ւ թե ինքը,  
Այլ... խեղճ թափան է,

15. III. 56  
Մոսկվա

\* \* \*

Բա՛խտ է հարկավոր, ամեն տղթուից  
Ախար կադրերի բաժկար դուրս չի գա:  
Զգո՞ւյշ քսմավիր, շողոքորթելը  
Բոլոր պետերին, դժվա՞ր, դուր չի գա:  
Ես հասկանում եմ քո շփոթմունքը.  
Ասկե ժիշինն էլ քեզ ձե՛ռք չի տալիս —  
Ասկե միշինը մի սեղմ է հաճախ,  
Որ կանաչութ է, քայլ բե՛րք չի տալիս:

22. IV. 56

Մակավ

\* \* \*

Ուրիշ ես դառնում ամեն օր →  
Իրենն է անում տարիքը,  
Առնելիքդ ուրիշ է թվում,  
Ուրիշ է թվում տալիքը,  
Խստադեմ գալիքն է նայում.  
Քեզանից ի՞նչ պիտի մնա,  
Երբ անցնի օրվա հետ մեկտեղ  
Օրերի փրփուր ալիքը:


18. III. 57

Մակավ

\* \* \*

Նա այնքան ջանել է դեռ,  
Եռանդագին ու խանդավառ է,  
Թլրաշատ այս դաշտը դեռ  
Նրա աշքին մի հարթավայր է,  
Չգիտի, որ ձափարը  
Ճորեն է, բայց ծիլ չի տալիս,  
Եվ, նայի՛ր, ինքնավստահ,  
Հուրց ու ամբարտավան է:

**ЧИРЧЕ ШАГЫ МСК**



## ՆՈՒՅՆ ՀԱՍՑԵՌՎ

~~~~~

### ԳՈՒ

#### ԳՈՒՇ

Երկու տա՛ռ,

#### ԳՈՒՇ

Հասարա՞կ մի դերանուժ,  
Եվ ընդամենն այդ քո երկո՛ւ հատիկ տառով  
Այս բովանդակ աշխարհին ես ինձ տեր անուժ...

#### ԳՈՒՇ

Երկու տա՛ռ,

Ու ես զարնան հողի նման

Քո կենսատու չերմությանն եմ ընտելանում...

#### ԳՈՒՇ

Երկու տա՛ռ,

Եվ ահա ես

Երշանկության համն եմ զգում իմ քերանում,  
Անշատումին ըմբերանում

Եվ թերանում եմ կատարել հրամանը տառապանքի...

#### ԳՈՒՇ

Երկու տա՛ռ,

Ու ես, անգի՞ն,

Ինձանից ինքըս վերանում՝

Փոշիացած հերոսների

Ու ձնվելիք հանձարների

Դասակին եմ ընկերանում...

**Գո՛ւ**

Երկու տա՞ռ,  
Ու երբ հանկարծ  
Թողնում ես ինձ ու հեռանում՝  
Կրված տան պես ճեղք եմ տալիս,  
Սեփս թափում, անտերանում.  
Եվ կսկիծը, ցեցի նման,  
Բույն է դնում իմ սյունի մեջ,  
Զեղունի մեջ ու գերանում...

**Գո՛ւ**

Երկու տա՞ռ,  
**Գո՛ւ**  
Հասարա՞կ մի գերանուն...

2. VII. 58  
Մոսկվա

### ՔՈ ՊԱՏՃԱՌՈՎ

Քո աշքերի՛, քո աշքերի՛, քո աշքերի՛ պատճառով  
իմ աշքերը ամբո՞ղջ գիշեր, ամբո՞ղջ գիշեր չե՞ն փակվում:

Քո մատների՛, քո մատների՛, քո մատների՛ պատճառով  
իմ մատները, իմ մատները լո՞ւս են ուզում խմորել:

Քո թևերի՛, բա՛ց թևերի, մե՛րկ թևերի պատճառով  
իմ աշքերին, իմ աշքերին շրվեծնե՞ր են երկում:

Քո ծիծաղի՛, քո ծիծաղի՛, քո ծիծաղի՛ պատճառով  
իմ ծիծաղը, իմ ծիծաղը պաշտոնաթո՞ղ է դարձել:

Քո քայլվածքի՛, քո քայլվածքի՛, քո քայլվածքի՛ պատճառով  
կողովթյամբ սահմանապա՞հ, սահմանապա՞հ եմ դարձել:

Քեզ այս ձեռվ ունենալու-շունենալու պատճառով  
Կորցրել եմ ունեցածքս՝ հպարտությո՞ւնս հաղթողի...  
23. III. 59  
Մոսկվա

## ՔՈ ԱՆՈՒԻԾ

Ես ատում եմ քո անունը,  
Խնչպես որ զու

քեզ փայփայած  
Իմ ձեռքերն ես ատում գուցեւ

Ես ատում եմ քո անունը,  
Որ խրվել է իմ լեղվի մեջ

Փշատենու փշի նման:

Եվ դու ինչո՞ւ ինձ շես հարցենում,  
Թե քո անունն ի՞նչ գույն ունի:  
Ես ատում եմ և այդ գույնը:

... Եթե աղջիկ ես ունենա՞մ  
Նա կկուվի քո՛ անունով:

Ես ատում եմ քո անունը...

ՏՏ. VII. 61

ՕՐԻՆԱԿ

## ԶԵՂՔԵՐԸ ՆԵՂՈՒՏ

Մեր ձեռքերը միացան,  
Միայն երկու ձեռքերը:

Եվ մեր ձեռքերը կարծես  
Ձեռքեր չէին  
Այ... նեղուց.

Աւ խառնվեցինք մենք իրար,  
Արդես երկու մատիկ ծով,  
Որ անշատված են վազուցաւ

Է. Լ. 59  
Չափախ

## ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

Պե'տք չէ, սիրելի՝ ու  
Զո՞ւր ես երդվում:

Առանց երդման էլ ես հավատում եմ,  
Որ հիմա օրըդ մի դար է ակում,  
Որ փուշ կարոտը քեզ ծվատում է,  
Որ գիշերն ի լույս շես քնում հաճախ,  
Որ իմ անունն ես կոկընում հաճախ,  
Որ աղջըկական քո մաքուր բարձին  
Թերված ես տեսնում մի ծերուկ արծիվ  
(Անգրգ էլ լինի՝ արծիվ է թվում),  
Որ քեզ աշխարհում ոչի՞նչ չի թովում,  
Որ առանց սիրուս կյանքը կորած է,  
Որ...

Գիտե՛մ, ջա՞նըս,  
Զո՞ւր ես կոկընում.

Բայց գիտեմ և այն,  
Ինչ դո՞ւ չգիտես.

Առաջին սերը, ինչպես որ հացը,  
Ի՞նչ էլ որ անես՝ միշտ կուտ է գնում...

20. XII. 58

Մոսկվա

## ԵՐԲ ՄԱՐՄԻ ՎՐԱ ԶԲԱՂՎԱԾ ԷԻ...

Երբ Մարսի վրա զբաղված էի երկրագործությամբ՝  
Թրազկոտ նստած իմ քաղաքային նեղլիկ սենյակում,  
Իմ խեղճ գոնակը հանկարծ ենթարկվեց ահեղ փորձության.  
Դու էիր թակում.

Ես դա զգացի,  
Ինչպես թոշունն է զգում վերահաս փոթորկի շունչը՝  
Թոշունն այս դեսպում բույնն է շտապում,

Իսկ քանի որ ես իմ բնումն էի,  
Էլ ի՞նչ էր մնում,  
Եր ի՞նչ անեի.

Աւ ես փակեցի աշքերըս վախով,  
Թերես ակամա ես հետեւեցի  
Քայլամի հիմար իմաստնությանը,  
Իսկ դու որսորդ ես.  
Եվ շսպասեցիր իմ «համեցեք»-ին,  
Ի՞նքըն ներս մտար.

Աստված իմ,  
Զէ՞ որ մի փոքըր առաջ  
Ես Մարսի վրա  
Զբաղված էի երկրագործությամբ:  
Եվ ահա փէց քամին փորձության,  
Եվ ահա խոփըս դիպավ ժեռ քարին,  
Իսկույն չքացան ցորենն ու գարին,  
Դեմքս լոկ մնաց դեմքն այդ ցորնադույն  
Աւ գարեհատիկ վզնոցը զնգուն,  
Մնացին միայն աշքերը՝

Նրանք,

Որ միշտ կյանքիս մեջ ցանում են վարանք...

Ես չէի նայում աշքերին, դիտմա՛մը,  
Որ կեռ հոնքերի բացմամբ ու կիտմամբ  
Փոխում են և՛ ձեւ,  
Ե՛վ ցոլք ու երանք:  
Ես չէի նայում,  
Բայց զգում էի,  
Որ պիտի նայե՛մ,  
Որ չե՞մ դիմանա,  
Ծվ նայեմ թե չէ՝  
Խսկույն կիմանա,  
Որ իմ կյանքի մեջ ոչի՞նչ չի փոխվել,  
Որ առաջլա պես այդ ինքն է մխվել,  
Մխվել իմ կյանքում,  
Մխվել՝ որպես սեպ,  
Որ ո՛չ ճեղքում է,  
Ո՛չ դուրս է գալիս...

Ես չէի նայում,  
Որ անինքնասեր իմ լեղուն հանկարծ  
Զասի. «Ճանկալի՞ս»,

Եվ իմ ցավատանց զլխի կեսդարձով,  
Առանց նայելու երեսին նրա,  
Սուտ հանդըստություն երեսիս վրա՝  
Նրան եմ դիմում նույն հիմար հարցող.  
— Քեզ ի՞նչն է այսպիս իմ դուռը թերում:

Նա հապաղում է,  
Ես՝ մտաբերում,  
Հիշում եմ հանկարծ  
Եվ... մոայլ ու կարձ  
Պատասխանում եմ ինքս իմ հարցին,  
— Հայտնի է կարծեմ,

Որ հանցագործին

Նրա ոտքերը սիրում են տանել

Այնտեղ, որտեղ նա... մարդ է սպանել...

Ելնում է ոտքին

Հանգիստ է, Վաեմ,

Ասածըս կարծես նույնիսկ շի լսել:

Աւ դուրս է զնում այնպիսի՛ բայցքով,

Ասես ուզում է իր կրունկներով ողջե՛րթ նվագել:

Զնում է,

Թողնում,

Որ... Մարսի վրա կատարած ցանքին  
Բերքը հավաքեմ...

25. X. 59

25. XI. 59

Զանախը

## ՎԵՐՋԻՆ ՍՓՈՓԱՆՔ

Իմ տված ցավից  
Դու լաց ես լինում,  
Իսկ ես՝ ամոթի՛ց՝  
Տաք-պաղ քրտնում եմ,

Ի՞նչ ասեմ հիմա:  
Գեթ մխիթարվի՛ր,  
Որ նույն համն ունեն  
Քրտինք ու արցունք...

19. IV. 59

Մոսկվա

## ԱՆՑԱՆՈԹՈՒՀՈՒՆ

Ես մտածում եմ.  
Կանցնի մի շաբաթ,  
Ու ես վերըստին կտեսնեմ նրան,  
Ում հանդիպեցի առաջի՛ն անգամ,  
Եվ մի-երկու բառ փոխանակեցինք՝  
Չծանոթացած:

Կտեսնեմ նրան  
Ու կասեմ սղութ-ով.

— Թույլ տուր տամ մի հարց,  
Բայց շատ եմ խնդրում,  
Որ դա չհաշվես բնավ հաճո խոսք:  
Անցել է առա ուղիղ մի շաբաթ,  
Եվ ողջ մի շաբաթ ժպտացել ես ինձ,  
Անվե՛րջ-անդադա՛ր ժպտացել  
Ինչո՞ւ

Եվ ի պատասխան ի՞նչ էլ իմանամ,  
Ի՞նչ էլ ինձ ասես՝  
Ես գոհ կմնամ,  
Իսկ եթե շիկնես՝  
Առավե՛լ երս:  
Իսկ եթե շիկնես՝  
Կշարունակեմ.

— Երկու փոսիկը,  
Որ կա երեսիդ,  
Ամբողջ մի շաբաթ լեցուն է եղել  
Հմայքի ծովո՞վ:

Ես նո՞ր հասկացա,  
 Թե ոնք է լինում,  
 Ար հողադընդի կլոր կողերից  
 Ծովերը երբեք չեն թափվում ներքեն,  
 Աւ չեն զատարկվում այն փոսիկները,  
 Ար մենք կոշում ենք ծովերի հատակ...

Եվ ի պատասխան ի՞նչ էլ իմանամ,  
 Ի՞նչ էլ որ ասես՝  
 Ես գոն կմնամ:  
 Միայն... միայն թե զու չնկատես,  
 Ար հանկարծ ես քեզ՝  
 Անձանոթուհուդ,  
 Դիմել եմ «զուառվ»:

Թե չնկատես՝  
 Ես այնժամ կասեմ.  
 — Դե՞, անո՞ւնգ ասա...

29-30. IV. 59

**Մռոկա**

### ՈՒՐ Է ԳԻՇԵՐԸ <ԱԶԱՐՈՂԵԿԲՈՐԴ>

Անձրեն իր հալված երկար մատներով  
 Մատնահարում է լոին մայթերի գորշ ստեղնելը,  
 Եվ ամայացած-քնած քաղաքում  
 Սկիզբ է առնում մի խուզ եղանակ,  
 Որտեղ մաս ունի  
 Աշնան ծառերի դանդաղ դեղնելը,  
 Ե'վ այն ամուրին,  
 Ար պեղ սենյակում քնել է մենակ,  
 Ե'վ այն բողոքը,  
 Ար դատարանում իջուր չի հարգվել,  
 Ե'վ այն կարոտը,  
 Ար սրտի վրա՝  
 Իր տիրո՞ջ վրա,  
 Նոր տեր է կարգվել,  
 Ե'վ այն աղջիկը,  
 Ար գեշ երազից ճշում է անձայն,  
 Ե'վ այն հուշերը,  
 Ար եկան անկուլ,  
 Ես վորնդեցի՝,  
 Թայց էլի՛ շանցան:

Չանցան  
 Եվ հիմա,  
 Ինձ հետ միասին,  
 Ականչ են զնում,  
 Թե անձրեն իր պաղ, երկար մատներով,  
 Իր վատ նվազից չվհատվելով,

Ինչպես է ծեծում  
Համբը մայթերի ստեղնաշարը:

Եվ իմ տխրովթյան,  
Չանցնող կարոտի առատ պաշարը  
Համալրվում է գթոտ խոսքերի նոր մթերումով,

Քո հեռո՞ւ-հեռո՞ւ պաղ մայթերում ո՞վ,  
Ո՞վ կարող է քեզ այն խոսքերն ասեւ  
Ար եկել ահա բկիս են հասել.  
— Իմ սիրտը  
Սիրո հազար գիշեր է ապրել ու տեսել,  
Իսկ ո՞ւր է հապա,  
Ո՞ւր է գիշերը հաղարմեկերորդ:  
Մինչև վերջ պատմել ինչո՞ւ չես ուզում,  
Ինչո՞ւ չես ուզում,  
Իմ Շահրազադե՞ւ

Գու ո՞ւմ ես ուզում մահից ազատել...

14. 3. 59  
Զանախի

### ԱԹԻԼԱՅԱԲԱՐ

Դեռ նոր հանդիպած՝ մենք բաժանվեցինք,  
Իրար նոր գտած՝ կորցըրինք իրար:

Այսպես՝ դանակի սրությունն են միշտ բութ մատով փորձում:  
Այսպես՝ մտովին — անդիտակցարար մեծ մեղք են գործում:

Այսպես՝ տալիս են, բայց ավելի քան թերեքս առնում:  
Այսպես՝ հառնում են, բայց՝ ավելի շուտ՝ թերեքս մեռնում:  
Ուրիշի մարմնով, այսպես, սեփական հոգին են բեռնում  
Ու ծանրանում են, բայց ավելի շատ թեթև են դառնում:

Այսպես՝ մի ժամով «Հավերժ քաղաքը»՝ Հռոմն են առնում:  
Աթիլայարար հասցընում մտնել,  
Բայց չեն հասցընում կրակի մատնել...

ԷՅ. 1. 62  
Երկան

Ի յ գուանդված կյանքի համար վախենալով,  
Կիսե՞ս՝ ինչո՞վ կվերջանար,  
Իմ ցանկալի՞ս:

Գիտե՞ս.

Մահո՞վ է վերջանում,  
Երբ յուսնոտին ձայն են տալիս:

Բայց ես թնա՞վ երկյուղ շունեմ,  
Թե կընկնեմ ցած  
Եվ իմ արյամբ հալեցնելով ձյունը մայթում՝  
Դռնապանին գեթ կազատեմ ձյուն քերելուց.  
Մյոդ ի՞նի,  
Որովհետև ձայն շե՞ս տա գու,  
Եվ դա —

ո՛չ թե բարությունից,  
Այլ... պարզապես չսիրելո՞ւց...

33. III. 59  
Մոսկվա

## ԼՈՒՍՆԱՀԱՐ ԿԱՐՈՏ

Ակսվում է զիշերն արդեն,

Եվ աստղերը,

Որ ողջ ցերեկ խոր քուն մտան,

Հիմա իրենց ճառագայթե

Սուր փշերն են ոզնուն նման նորից ցցում՝  
Էնդիմ մթան,

Եվ անպաշտպան իմ կարուտը,

Որ անցել է խոր ընդհատակ

Աւ չի ուզում նորից տրվել շղթաների ու կապանքի,  
Իմ կարուտը մասնը վում է քո անունից.  
Լրտեսի՛ պես նա մատնում է տառապանքին,

Մեծ քաղաքը լեթարգիական քուն է մտնում,  
Իսկ ես՝

լուսնո՞ւ,

Ես՝

լուսնահա՞ր,

Ծեղ-սայթաքուն կտուրներով

Ու քիվերով ատամնաբաց,

Մինչեւ անգամ շանթարգելով,

Ահա նորից քեզ եմ զալիս՝

Կյանքըս կրկին վուանգելով:

Եթե հանկարծ դու քո հեռվից նկատեիր

Աւ ձայն տայիր՝

Ճշալու պես «ա՞ի» անելով՝

## ԱՆՌԻԴՂԵԼԻՆ

Ես զբաղված եմ քո պակասները լրացընելով,  
Արբունքահասիդ նորից ու նորից վերածրնելով:

Ամենից առաջ՝ անուն եմ փոխում. օտար մի անուն,  
Իսկ ինքը՝ այնքան հայ ու հարազա՛տ եվ շեմ հասկանում,  
Թե այսքան տարի ինչպե՞ս ես եղել դեռ անշափահաս,  
Եթե ես վաղո՞ւց սպասել եմ քեզ ա՛յս տեսքով ահա:

Հետո՝ ուզում եմ ուզածս անես առանց իմ խոսքի:  
Ուզում եմ նաև հանել մի առու մազերիդ հոսքից  
Ու տանե՞լ-տանե՞լ, իմ տանշված-խանձված երեսին կապեր,  
Ուզում եմ նաև մատոներիդ տեսքով նոր մոմեր թափել.  
Այսինքն՝ լամպեր, որ պիտի լույս տան գիտե՞ս մենակ ամ։  
Էռկ սիրողներին, և այն էլ միայն գողտրիկ սենյակում։

Եվ հոնքերիդ եմ կեռություն տալիս,  
Ու սրունքներիդ՝ քիչ իլիկություն,  
Մեղքը թողնում եմ այնպես, ինչպես կա,  
Իսկ ամրող մարմնիդ՝ մի՛ քիչ լիքություն։

Փոխում եմ նաև... Շա՛տ բան եմ փոխում ու սրբագրում.  
Ավելին՝ ջնջում, պակաս-թերատին տալիս եմ լըրում։  
Շա՛տ բան եմ ուղղում, շատ ու շատ բան էլ դեռ ուղղե՛մ  
պիտի,

Բայց ձեռք չեմ տալիս ու ձեռք չեմ տալու... լոկ քո ժահախին,  
Ա՛յս այդ ժպիտը, այդ անուղղելի՛ն, որով ժպտալիս։  
Քո եղած-շեղած պակասներն ես դու մոռանալ տալիս...

## ԳԼԽԱՎՏՈՒՅՑ

Դու իմ վերջի՞նը՝ թյուրիմացաբար,  
Եվ իմ միա՞կը՝ ճակատագրով...

Սիրո բովանդակ կոշականները մանկական են միշտ,  
Մինչդեռ ես արդեն ապրել եմ այնքան,  
Որ իմ տարիքում  
Դեղձին տասն անգամ մեռած կլիներ,  
Իսկ ինչպե՞ս ես դու  
Չէ՞ որ չեմ տեսել քեզ այնքա՞ն տարի,  
Որքան տեսել եմ։  
Եվ աշքերիս մեջ կա անլցելի մի դատարկություն,  
Փանի որ չկաս  
Չո՞ւ —

Իմ վերջի՞նը՝ թյուրիմացաբար,  
Եվ իմ միա՞կը՝ ճակատագրով։

Իմ շրթունքներից  
Կախված է հիմա մի ամբո՞ղջ աշխարհ՝  
Մի գունդուկծի՛կ,  
Բառերի մի պա՛րս,  
Որ իր բզզոցով գիխապտույտ է հարուցում իմ մեջ,  
Եթե երբեմ բառերն այդ պիտի իմ բերնից թոշեն՝  
Թող թոշեն սիրո՞վ,  
Մի՛միայն սիրով  
Եվ մի ճախրանքով աստվածաշնչան,  
Արի մեջ կա գոլ անապատային,  
Ավազների սողը ու մտապատրանք,  
Մի՛թե քո հեռվից՝

Թո անտառների խոնավ օդի մեջ,  
 Անվերջ չես լսում խոսքերս շասվայ:  
 Իսկ թե լսում ես խոսքերը շասվայ  
 Չե՞ս զում արդյոք մի գլխապտույտ,  
 Որ, թվում է ինձ, պիտի որ զգան  
 Սրբութեան հղի դեռահաս կանայք,  
 Որոնցից մեկին,  
 Մի՛միայն մեկին  
 Կարողանայի՞ մտովին ասել.  
 «Դու՝ —  
     իմ վերջի՞նը՝ թյուրիմացաբար,  
 Եվ իմ միա՞կը՝ ճակատագրով»:

Թիշ ենք օգուզկել մենք բարությունից  
 Եվ դրանից չէ, որ հետզհետե  
 Բարի եմ դառնում,  
 Եվ այնքա՞ն բարի,  
 Որ խղճում եմ ես... մենակությանն էլ:  
 Նա էլ է տանջվել ու հոգնելու Մեղք է:  
 Եկ ամեն մեկըս բացենք մեր փեղկը,  
 Որ նա զուրս թոշի իր փակ վանդակից,  
 Եվ կամ հանդիպենք գեթ այնտեղ... այնտեղ,  
 Ուր հանդիպում են այդն ու գիշերը:  
 Իսկ հանդիպո՞ւմ են նրանք երբեք, —  
 Ես ի՞նչ իմանամ: Գուցե գիտես դո՞ւ,  
 Դո՞ւ —  
     իմ վերջի՞նը՝ թյուրիմացաբար,  
 Եվ իմ միա՞կը՝ ճակատագրով»:

Ու ձյուն է զալիս,  
 Ինչ-որ զե՞րմ մի ձյուն.  
 Հյուսիսն է հղում հարավին ողջույն:  
 Եվ ձյան մեջ ինչ-որ բուրմունք կա գարնան,  
 Հեռավո՞ր մի բան,  
 Մի հիշողությո՞ւն,  
 Որի բարությամբ հոգեբուժական

Չեն մեռնում, ճիշտ է, բայց և չեն ապրում,  
 Ինչպես չի մեռնում, բայց և չի ապրում.  
 Մե՛րըս —

Վերջի՞նը՝ թյուրիմացաբար,  
 Բայց և միա՞կը՝ ճակատագրով»

Սրի՝ ինքները մեղնից բարձրանենք՝  
 Խույզ տանք արարքներ ինքնաժմառումի,  
 Փոխազարձարար իրար նեղացնենք  
 Ու վիրավորենք փոխազարձարար,  
 Որ... կարուտն ինքը հաշավի իրեն հետ,  
 Ու տառապանքը ինքն իրեն ների,  
 Ես էլ հավատամ, որ զու չես եղել  
 Ու իմ միակը՝ ճակատագրով՝,  
 Ու իմ վերջինը՝ թյուրիմացաբար...»

26. 1. 62  
 Երեսն

Սավա՞ծ են ուրեմնը.  
Թող ջո՞ղ կախեն մի բիշ  
Եվ աչքերս են սոված.  
Չի կշտացնում լույսը...

## ՆՈՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Սանոթանա՞նք,

Շա՞տ լավ:

Բայց ես անո՞ւն չունեմ:

Թե ուզում ես, խնդրեմ, ռՀոմո Սապիենս» կոչիր  
Եվ ազգանվան տեղ էլ ասա «Հարավ»;

Ես աշքերս եմ փակում,

Ես հոգնած եմ, այո՞ւ

Տիկնիկն էլ է հոգնում, երբ ետևից բեմի

Ինչ-որ թելեր նրան ստիպում են ապրել:

Այդ ապրե՞լ է կոչվում: Ի՞նչ իմանամ:

Սառերը մայթերին բազմակետ են դնում:

Ունեն ինչ-որ գաղտնիք, որ ես չեմ ընդունում:  
Չէ՞, ես սխալվեցի.

Գաղտնիքն ընդունում եմ,

Չեմ ընդունում արգելքն այն անտեղի,

Որ միշտ բազմակետ է բաղմացընում...

Եվ փրփուրը բերնիս ես կարող եմ վիճել,

Որ բերան է տրված ո՞չ ուտելու,

Այլ խոսիլո՞ւ համար:

Եվ ավելին.

Շուրթերո՞վ են խորհում, ո՞չ թե գանգուգեղով:  
Սանոթացա՞նք:

Թեռ ո՞չ:

Հարուկակե՞մ:

Անմահության համար տաղանդ սիետք չէ բնավ.  
Հարկավոր է լինել գոնե մամոնտ կամ խոտ,  
Որ իր տիպն է թողել քարածրիսի շերտում...

Եվ չի պոկվում ինձնից մի անսահման կարուտ,  
Ու զզվել եմ արգեն պարզությունից գծի,  
Թե կեռ-կորությունը շռայլություն է մեծ,  
Գկարուտե՞մ գոնե այն կետ-գծին,  
Որ նեղ նպատա՞կ չէ,  
Այլ երազա՞նք այրող...

Սանոթացա՞նք արդյոք:

Բեթհովենից հարցրու,

Մի՞ մոռացիր, սակայն, որ նա խուլ է մի բիշ  
Եվ կարող է հարցը չհասկանալ:

Իսկ ես ավելացնեմ, — քեզ օգնելու հույսով. —  
Որ ինձ փորբիշատե ճանաչելու համար  
Հարկավոր է զրկվել... նախապաշարմունքից,  
Որ և հեշտ չէ նույնբան,  
Որքան որ ապրելը...

Ի՞չ մի գաղտնիք չունեմ իմ կնոջից անդամ,  
Իսկ թե ստիպված եմ, այսուհանդերձ, ստել՝  
Մեղավորը ե՞ս չեմ,  
Իսկ թե ո՞չ է՝ քե՞զ ինչ,  
Ինչո՞վ պիտի օդնես,  
Ի՞նչ կփոխես:

Անկեղծության համար թե խաչեին,  
Քրիստոսը վաղո՞ւց չեր ունենա պաշտող:

Ա՞յս, այդ պաշտամունքը, որ ձեհը է փոխում,  
ինչպես մոր մեջ սաղմը,  
Թայց ծնվելիս ծնվում միշտ մանուկի նժան՝  
Ուղեղը դեռ անբան և աչքերը դեռ զոց...

Մանոթացա՞նք արդյոք:  
Դու՞ շգիտեմ,  
Իսկ քեղ ճանաշեցի ես իսկապես:  
Քո փոխարեն աշքերդ ասում են լուս,  
Որ ինձ համարում ես ծանրը հիվանդ,  
Եվ զառանցանք՝ խոսրսությունը,  
Թայց հավատաւ։  
Խոսրս զառանցանք չէ,  
Ոչ էլ հիվանդ եմ ես։  
Ես պարզապես վաղուց համոզված եմ,  
Որ զուր զալու ժանոթ առևտորում  
Հարկավոր է լինել շմանրվող դրամ  
Եվ չծախսել իրեն կոպեկ-կոպեկ...

Մանոթացա՞նք արդյոք:  
Անշուշտ, ծանոթացա՞նք:  
Բաժանվելուց առաջ թուզլ տուր ասեմ գոնեն,  
Որ քեզ նմանները, իմ սիրելի՝,  
Գուցե կարողանան ինձ ամեն ինչ անել,  
Թայց չեն կարող խլել լավասեսի  
Իմ ժպիտը, այո՞ւ, իմ ժպի՞տը,  
Նամանավանդ եթե շմոռանանք,  
Որ ժպիտի ինչ-որ մի տեսակն է նաև  
Անժան քմծիծաղը...

Մնաս բարե՛:

ՅՈՒ. ՇՏ.  
ԵՐԻԿԻՆ

## ԳԱՐՈՒՄՆ ՀՐԱՀՐՄԱՆՐ

Երեկ՝ դեռ խոնարհ,  
Երեկ՝ դեռ հլու,  
Իմ սիրտը այսօր  
Իազա՛ղ-անարյո՛ւն ապրստամբության դրոշ է պարզել  
Իշխանության դեմ ա՛յն բռնակալի,  
Որ կոշվում է ենելք  
Ու կոշվում Գլուխու

Արյուն շի՛ թափվի,  
Ճորքեր մի՛ բերեք  
Արյուն շի՛ թափվի,  
Թայց արյան եռքից  
Երակ-զարկերակ  
Խփում են արագ.  
Ապրստամբության թմբուկ են զարկում։

Արյուն շի՛ թափվի:  
Դրա փոխարեն՝  
Արյուն է թափում ծաղկած նոնենին,  
Արյուն են հագել կին ու աղջիկներ,  
Արյուն է հոսում երկնակամարով՝  
Սրյունն արմի՛,  
Որ լերդանալիս դառնում է վառ ամպ,  
Եվ ի՞նչ է ուզում սիրտը ապրստամբ,  
Թե չեք հասկանում՝  
Դուրս եկեք փողո՛ց,

Դուրս եկեք փողո՞ց,  
 Ուր, տեսե՞ք, մարդիկ  
 Լքել են հիմա իրենց տաք մորթին  
 Ու հագել մի բան,  
 Որ հին մի բառով — անշուշտ՝ անհաջող —  
 Մեռաքս է կոչվում,  
 Իսկ նոր մի բառով — նույնքան անհաջող՝  
 Նելոն ու կապրոն,

Անցնում են, տեսե՞ք, կեցվածքներ պես-պես,  
 Զներ բյուրբազում,  
 Բոլորը՝ մսից — տա՞ք ու մարդկային,  
 Կրծքների ներքո ո՛չ թե պաղ մարմար,  
 Այլ մսի կտոր,  
 Որ կոչվում է սի՞րտ,  
 Եվ ամե՞ն սրտում՝  
 Խաղաղ-անարյո՞ւն խռովություն է...

Կանանց աշքերում,  
 Տեսե՞ք,  
 Փլկել է ինքը երկինքը  
 Ու ծիծաղում է...

Շքահանդես է սարքել արբունքը —  
 Պատանիների շուրթերի վրա՝  
 Բեղերի շարքով,  
 Կորություններով՝ նորատիների,  
 Որ դեռ չեն զգում սուրբ կոչումն իրենց...

Մայիսյան արփին,  
 Տեսե՞ք,  
 Բաղմահարկ շենքերի վրա  
 Իր նկարչության դասերն է տալիս,  
 Մի նկարչությո՞ւն,  
 Որ ձանձրացել է իրապաշտներից...

Քամին ձներ է քանդում ու կերտում,  
 Ասես թե կովրի կամ էրմիտաժի  
 Հազարէշանոց ալբոմ է թերթում,  
 Թերթածը կարգին շհասկանալով՝  
 Երեխալի՛ պես...

Ես երեխա չե՞մ.  
 Լա՛վ եմ հասկանում:

Լա՛վ եմ հասկանում,  
 Եվ այդ պատճառով սիրտըս ուղում է  
 Ապրստամբության դրոշը ներկել  
 Արևի՛ հրում,  
 Ժպիտների՛ մեջ,  
 Երանգների՛ մեջ ցոլուն աշքերի,  
 Կանանց հանդերձի գույներով՝ զառ-վառ,  
 Դեռատիների շրկնանքով՝ խռոտուն...

Սիրտըս պարզել է  
 Ի՞նքս էլ շգիտեմ, թե ինչի՞ դրոշ...  
 Տ. III. 59  
 Մոսկա

## ԱՆՁԱՏՈՒՄ

Լոռություն է: Խորհնակ: Խորհրդավոր:  
Ամե՞ն ինչ է լոել: Եվ լոել է այնպես,  
Ինչպես բառարանում բառն է լոռամ:

Եվ զիշերը շունի տասներկու ժամ,  
Այլ կրկնակի: Խոսի թարմ բուրմունք է զալիս  
Այս ասֆալտի՞ց արդյոք,  
Թե՞ այս տրբամվայից,  
Ար ձգվել է հիմա լուս փողոցում՝  
Ինչոր հերիամական թիթուռի պես:  
Արեմն անջատված է հոսանքն էլեկտրական:

«Անջատված է»:

Այս բառն ինձ դարձըրել կշեռք  
Եվ ուզում է իր ճիշտ բաշն իմանալ: Սակայն  
Իմ խեղճ թվացույցին այդքան թվեր չկա՞ն...

ԱՌ ես: Ի՞նչ ես անում: Անջատված ենք:  
Սաղնիսական դա՛շտ կա: Անջատված ենք:  
Խնձորն էլ են քամում — Հյութը հանում միշից:  
Այդպես էլ մենք անա... անջատված ենք...

Ֆուտբոլասեր շեմ ես: Բայց աչքերիս դիմաց  
Ինչոր մի զնդակ է անվերջ կաղում-խաղում:  
Խենթանում են այսպե՞ս: Գնդակն ի՞նչ գործ ունի  
Ի՞նձ հետ, լոռության հետ և մեր անջատման հետ...

Եվ այս սեր կոչվածը գուցե սեր չէ բնավ,  
Այլ շշակի ձայն է, կայարանի աղմուկ,  
Եվ կ սնացի ձեռք է՝ ճյուղի նման ջարդված...

Տեսնես թե աշխարհում կա՞ գեթ մի կենալ լիզու,  
Որ չունենա իր մեջ այս «անջատվել» բայց:  
Թե կա՞ ես փոխում եմ աղդությո՞ւնը...

Կա՞: Պատասխան չկա: Լոռություն է:  
Ճիշտ է, որ պատասխան իրոք չկա,  
Բայց և լոռություն չէ: Համատարած ձի՞ւ է,  
Համատարած կա՞նչ է: Համատարած դոռո՞ց:

Քառահատոր հսկա բառարանը հիմա  
Մե՛կ բառով է լցված՝ «անջատվել»-ով:

Եվ մե՛կ միտք է հիմա մեջըս գոռում-գոշում,  
— Աշխարհում կա՞ արդյոք գոնե մի կե՞նալ լիզու,  
Որ չունենա իր մեջ այս «անջատվել» բայց:  
Թե կա՞ ես փոխում եմ աղդությո՞ւնը...

30. 18. 51

Երևան

## ՔՄԾԻԾԱՂ

Ամենից դժվար բանը սիրելն է:

Իսկ ոտներիցը բարի բա՞ն — չկա՞։  
Իրենց շարժումով, որ քայլ է կռվում,  
Նրանք ուզում են հենց այն կրծառել,  
Ինչի անունը տարածություն է,  
Հեռավորություն,  
Որ և մեր միջն  
Զգվել է իրրե մի մե՞ծ քմծիծաղ։

Խավարի համար պատասխանատուն  
Իմ մտքերը չեն,  
Այլ իմ աշքերը,  
Որ բեզ են ուղում կենդանացընել։

Եվ բույնն ասուղերի ոչ թե երկինքն է,  
Այլ խոտն ու թուփը,  
Եվ իմ քայլերով  
Կրտնեցնում եմ ես նիրհած աստղերին。  
— Իմ շարությունը արդարացի է։

Կա զիշերային ինչ-որ մի թոշուն,  
Որ բրբիջով է միշտ արդարացնում  
Իր գոյությունը և մթան կյանքը:  
Ես, ի՞նչ է, չկամ թոշունի չա՞փ էլ։

Ու տուն եմ զալիս՝  
Իմ բույնն եմ դառնում,  
Որ արդարացնեմ իմ գոյությունը։

Կրտնած աստղերը նորից թառում են խոտին ու թփին,  
Քաղաքավարի ոչնորհակա՞լ եմ ասում ոտքերիս,  
Բարի՛ ոտքերիս,  
Որ ուզում էին սրտանց կրծատել  
Այն,  
Ինչ կոշվում է հեռավորություն,  
Եվ ինչ մեր միջն ձգվում է իբրև մի մե՞ծ քմծիծաղ։

Բայց թոշունի չափ ես չկա՞մ իրոք.  
Ես թե՛ր չունեմ,  
Եվ անկարող եմ նաև քրքջալ  
(Քրքիչի համար ո՞ւժ է հարկավոր),  
Եվ իմ բրբիջը հազիվ դառնում է... նույնպես քմծիծաղ...  
18. X. 61  
Երևան

**ՔՈ ԽԱԿ ԱԵՐԸ ԵՎ  
ԻՄ ՀԱՍՈՒՆ ՏԱՆՉԱՆՔԸ...**

Քո խակ սերը և իմ հասուն տանջանքը  
Հանդիպեցին որպես երկու ուզեռք՝  
Կյանքի ինչ-որ սակավամարդ կածանում  
Եվ, ճարահատ, պիտի քայլեն միասին  
Քո խակ սերը և իմ հասուն տանջանքը:

Ու երբ, հոգնած, մենք պառկում ենք, որ ննջենք,  
Մինչեւ անզամ երբ պառկում ենք կողբ-կողբի,  
Ինչպես հայոց հերիաթներում՝ մեր միշեն  
Լուս դրվում է հերիաթական թրի պես  
Քո խակ սերը և իմ հասուն տանջանքը...

20. III. 59  
Մոսկվա

**ՄԻՋԱՎԱՆԵՏԻ ԿԱՐԻՔ**

Ես՝ հարեշի ու նեղբի պես սկամորթըս,  
Ինձ ժպտացող ատամներիդ փղոսկրի  
Լուսեղ փայլից ճերմակել եմ կարծես հիմա...

Ես՝ բառերի խոշորածախ վաճառորդքս,  
Մնանկացած եմ ինձ զգում քո խոսքերից,  
Որ մանրամաղ անձրեկ պես սողոսկելիս  
Չե՛ն հարցընում թույլտըվություն,  
Տեղ չե՛ն խնդրում իրենց համար:

Իսկ խոսում ես... հազա՞ր ու մի դատարկ բանից.  
Թե չես սիրում ձմեռ ու թութ,  
Թե պաշտում ես լեռ ու ամառ,  
Թե դժգոհ ես քո նոր շորի նեղ գրպանից,  
Թե կինոյում մեկն ինձ շատ է նման եղել,  
Թե ինչ լավ է, որ չեմ պահում կյանքում բեղեր,  
Թե... վերստին ետ ես դառնում շոր ու կարին  
Կամ երաղում, որ ոչորսերըդ դառնան ռհնգեր  
Եվ... չես զգում, որ — հրաշքո՞վ — տասը տարին  
Մե՛կ վայրկյանում ուսերիցըս վայր է ընկել:

Ու չե՞մ զգում...  
Շարունակում ես բլրլալ,  
Միծաղում ես դատարկ բանից,  
Դատարկ բանից պատրաստ ես լալ.  
Հարց ես տալիս,  
Զարմանալի հստակ հարցեր  
Եվ մեջընդմեջ... պաշտում ես,

Պաշտչում ես այնպես, կարծես  
Քո հապշտագ բլրոցն ես կետադրում...

Քո հապշտագ բլրոցն ես կետադրում դու մերթ ընդ մերթ,  
Եվ շփտես, որ անհամբեր միջակետի եմ սպասում՝  
Երկարատե՛ — շարունակվո՞ղ մի համբուլրի  
Եվ շփտես,  
Որովհեան թեպետ արդեն տասը տարին  
Մեկ վայրկյանում ուսերիցըս վայր է ընկել՝  
Դարձել եմ քեզ հասակակից ու դասընկեր,  
Սակայն ունեմ տարիքային մի թուզություն.  
Համբուլրի և պաշի միշե  
Դեռ զնում եմ տարբերություն...

23. VII. 58  
Մոսկա  
23. XII. 59  
Թբիլի

ՄԻ', ՄԻ'...

Մի' շարանա վրաս:  
Եվ իմ մեղքը ի՞նչ է:  
Մովա՞ծ թե կուշտ եմ ես՝  
Կարեռ՝ չէ բնավ:  
Խաշ մեջտեղում չկա',  
Բայց սխտորի հոտը  
Նվաճել է հիմա և աննվաճ օ՛դր:  
Ես փորձում եմ գոնե քիթըս բռնել,  
Եվ իմ մեղքը զա՞ է:  
Մի' շարանա վրաս:

Մի' տանջիր ինձ հարցով:  
Կոկ ա՛յն գիտեմ հիմա,  
Որ լուսոսի համար շարժե՛ սարքել ճահիճ  
Եվ ծով չորացընել՝ ակվարիումի համար...  
Մեծ տուրք կվճարեմ ես լուսթյան դիմաց,  
Միայն թե, խնդրո՞ւմ եմ,  
Մի' տանջիր ինձ հարցով,

Եվ մի' հուսադրիր:  
Ես չե՞մ հուսահատվել,  
Եմ տարիքում, ճիշտ է, էլ չեն առնում հասակ,  
Բայց մարդն էլ է ընձուղտ,  
Եվ իմ վիզը հիմա  
Երկարում է — ձգվում  
Ու բարձրանում  
Այս բաղմահարկ բոլոր շենքերից վեր,  
Որ պաղ հորիզոնից մի բերան մով պոկի

Ու որո՞մա՞ դանդո՞ր  
Ինձ մի հուսագըրիւ

Մի՛ նկատիր նաև:  
Ես այնեց չկա՞մ,  
Ինչպես չկա երկինք  
(Հուրթը խարկանք է լոկ).  
Ինչպես չկա և չո՞ւր  
(Կա «երկու հաշ, մեկ օ»).  
Ինչպես չկա և սե՞ր  
(Դու ապրում ես հեռվում):  
Թող զինի և ա՞չք:  
Մի՛ նկատիր դու ինձ...

Եվ մի՛ փնտրիր իզուր:  
Ես կլինեմ ու կամ:  
Չէ՞ որ հեռք են թողնում մինչև անգամ պորտովէ  
Ես սողալու համար հարժարություն չունեմ,  
Չունեմ նաև թեքր,  
Բայց ունեմ ձեռք մի գույզ,  
Որոնցով ես հիմա իմ աշքերն եմ փակում,  
Քեզ՝ չեմ ուզում տեսնել,  
Իսկ դու ինձ մի՛ փնտրիր...

4. III. 61  
Երևան

## ԶԿԱՍ ՈՒ ԶԵՍ ԼԻՆԵԼՈՒ

Դու չկա՞ս, չկա՞ս...

Եվ առավոտը  
Այնպես աղոտ է,  
Ասես ցավոտ է:

... ու չե՞ս լինելու:

Եվ հորիզոնն է փակվում իմ առջե,  
Նրան փակում է ո՛չ ամպի ճոթը,  
Այլ բո զգեստի ամպեղեն փո՞թը:

Դու չկա՞ս, չկա՞ս...

Եվ օդ է դարձել  
Այս համատարած անտեր կարուաք:

... ու չե՞ս լինելու:

Աւ թվում է, թե լուցկի մոտեցեմ  
Պիտի բռնկի ինքը վառ օդը:

Դու չկա՞ս, չկա՞ս...

Ինչո՞ւ եմ սակայն քեզ զգում այնպի՞ս,  
Այնպի՞ս եմ զգում, ինչպես երեկ  
Ատից նոր զրկվածն զգում է ոտը,

Ար նո՞ւնպես չկա  
Աւ չե՞ս լինելու...

20. III. 59  
Մասկա

Ա'յն, ինչ անվերջ կամեցել և ուզել եմ ո՞ղջ կյանքում.  
Խոսել առանց որեւէ բաղաձայնի՝

զողանշել

Համատարած — համասփյուռ ձայնավորով միմիայն...

## ԿՈՐՅՐԵՑԻ ԵՎ ԳՏԱ

Կորցըրեցի և գտա...

Եվ սկսվում եմ կարծես  
Ու գալիս եմ այնտեղից,  
Ուր շողերը տակավին բաղմագույն են,  
և ուժոեղ  
Քամիներն են գոյանում...

Կորցրեցի և գտա...

Ու ձեռքերըս համբացած  
Սկսում են նորից-նոր հնշեղոսթյուն ստանալ...

Եվ հավատում եմ նորից,  
Որ այս անգամ ես ու դու  
Կկառուցենք վերջնական բարելոնյան աշխարակ  
Միշտ խոսելով նո՞ւյն լեզվով...

Ու շեմ անցնում այլերս քնի կողքով  
Ես հիմա,  
Արդեն հոգնած, բայց հանգիստ՝  
Մե՛կ վայրկյանում կրնեմ արշալույսի ձեռքերին,  
Մանկան նման անխռով...

Ու դեռ եթե շեմ քնում,  
Ապա լոկ այն պատճառով,  
Որ զգում եմ, թե հիմա ես կարող եմ և կանեմ

Ու ժպտում եմ ես կրկին,

Ու բարի եմ ես այնքան,

Որ կարող եմ նմանվել այն արագիլ թոշունին,

Որին հարց են երբ տվել,

Թե ինչո՞ւ է նա կանգնում իր մի ոտին շարունակ,

Պատասխանել է այնպես,

Կարծես թե ես եմ հուշել.

— «Որպեսզի բեռն աշխարհի թեթևանա գեթ մի քիշ...

Եվ այս բոլորը՝

միայն

Երկու բառի շնորհիվ.

— «Կորցըրեցի» և սղտառ...

16. IV. 61

Մոսկա

## ԵՐԲ ԱՉՔԵՐԻ, ԵՐՆ ՍԱՌՈՒՄ...

Մենակություն բառից դողդողում է օդը իմ սենյակին:  
Ու ես հասկանում եմ,  
Որ աշքերն են մարդու ամենաթաց տեղը...

... Երբ աշքերն են սառում՝  
Ասում են, թե՞ ա՛յ-ա՛յ՝ մարդ է գալու  
Բայց դա եթե սուտ չէ,  
Ապա բարություն է,  
Որ ձնվել է միայն խեղճությունից,  
Իմոնք էլ են սառում։  
Սակայն դու չե՞ս զալու։  
Դու չե՞ս կարող է դիտե՞մ։  
Եվ օդը սենյակին  
Պիտի շարունակի մենակություն բառից անվերջ դողաւ։  
Հարուցելով իմ մեջ այն միտքը հին,  
Թե վիճերը դուցե նրա համար են լոկ,  
Որ մարդ ներքեւ նետվի։

Իսկ թե վիճերն իրոք նրա համար են լոկ,  
Որ մարդ ներքեւ նետվի՝  
Այդ դեպքում ես  
Ինչպե՞ս անեմ,  
Կո՛ւծ չեմ,  
Կուժկոտրո՞ւկ եմ,  
Զե՞մ կոտրրվում, միայն վետրրվո՞ւմ եմ,  
Եվ դրանից արդեն ես հոգնել եմ,  
Ինչպես թուղթն է հոգնել իմ շանքերից՝

Հեռվից-հեռու ասել քեզ երկու րառ,  
Որ կարող է նույնքան ինձ թարգմանել,  
Արքան թարգմանում է ինքնաթիռին հավը...

Սուտ կա, որ ճիշտ արժեն,  
Ու ես հավատում եմ մեր հնարած ստին,  
Թե չենք կորցնի իրար։

Վախ կա, որ մահ արժեն,  
Ու ես վախենում եմ, թե կհաղթի կյանքը,  
Եվ կյանամ ցավի խեղճ պատմաբան միայն։

Ու, վերջապես, քայլ կա, որ հենց թոփշը արժեն,  
Եվ ինձ դուրս եմ քաշում իմ մտքերի միջից,  
Ինչպես առողջ ակոան բերանից են քաշում։

Բայց հոգնել եմ արդեն  
Եվ հոգնել եմ այնքան,  
Որ չեմ զգում ոչի՞նչ,  
Յա՞վ չեմ զգում անզամ։

Ա՛յ թե հնար լիներ շզգալ նաև,  
Որ աշքերն են մարդու ամենաթաց տեղը...

Տ. Խ. 61  
Երևան

## ՆԱՄԱԿ

Նա՞ է գրում ինձ,  
Թե՞ ես եմ գրում իմ հարազատին,—  
Ինքս էլ չգիտեմ.  
«Արդյոք քեզ ե՞րբ եմ, ե՞րբ եմ տեսնելու...  
Չմե՛ռ ու ամա՞ռ,  
Աշո՞ւն ու գարո՞ւն...  
Իսկ ո՞ւր է տարվա մե՛ր եղ սնակը,  
Այն հինգերորդը...»

Նա՞ է գրում ինձ,  
Թե՞ ես եմ գրում իմ հարազատին,—  
Ինքս էլ չգիտեմ.  
«Դու նկատե՞լ ես, ձմեռ ժամանակ  
Անհնարին է անցնել անտարի այն ծանոթ տեղով,  
Արով անցել ես ամպան օրերին,  
Քանի որ ցրաից սաստիկ կուշ գալով  
Ու ձյան բեռան տակ ճկվելով խղճուկ՝  
Ոստ ու ճյուղերը փակում են ճամփաղ,  
Իսկ մթնշաղին կամ աղջամուղջին՝  
Ճանկում են գեմքըդ,  
Աչքիդ սպառնում։  
Ես քայլում էի աղջամուղջի մեջ  
Ու քայլում էի նաև... մտացիր։  
Մտացի՞ր արդյոք, մտամփո՞փ արդյոք, —  
Մի՞թե նույնը չէ։  
Ու ես հասկացա,  
Ար երբ հուզված ենք՝  
Մենք թաքցընում ենք մեր խեղճ ձեռքերը,

Երբ անվստահ ենք՝  
Մենք թաքցընում ենք մեր խեղճ ոտքերը։  
Իսկ ե՞րբ են մարդիկ թաքցընում դեմքը։  
Գուցե ամոթի՞ց  
(Ես չե՞մ ամաշում իմ սիրո համար)։  
Գուցե կարոտի՞ց  
(Ես ուզում եմ քեզ տեսնել բա՛ց աշրով)։  
Գուցե ճանկըռտող ճյուղերի՞ց այս չար,  
Գուցե այս ցրտի՞ց, որ ճկում է ինձ  
Եվ ստիպում է կուշ գալ խեղճորեն  
(Կուշ գալ եմ ուզում քո՛ թերի տակ)։...

Նա՞ է ավարտում, թե՞ ես նրա տեղ, —  
Ինքս էլ չգիտեմ.  
«Իմ այս հարցերին մի՛ պատասխանիր,  
Բայց պատասխանիր լոկ իմ մե՛կ հարցին։  
Գարունը անցավ՝  
    ես քեզ շտեսա,  
Ամառը անցավ՝  
    ես քեզ շտեսա,  
Աշունը անցավ՝  
    շտեսա ես քեզ,  
Զմեռն էլ կանցնի՝  
    շեմ տեսնի ես քեզ,  
Իսկ ո՞ւր է տարվա մե՛ր եղանակը,  
Այն հինգերորդը... մի՞թե չի գալու»։

Տ. Ա. 63  
Երկան

## ՄԱՔՍԱՆԵՆԳՈՐԵՆ

Դու լսովմ ես ինձ այնպե՞ս սիրալիր,  
Թայց նաև այնպե՞ս-այնպե՞ս անտարբեր,  
Ինչպես լսում են աղմուկն անձրեի:  
Խոսքերըս ցածր են՝  
աղոթքի նման,  
Խոսքերըս բարձր են՝  
աղոթքի նման,  
Որ չի հասում տեղ  
Թի չի կատարվում:  
Ծաղված աշքերիդ ժայիտի վրա  
Գնում-գալիս է քնած մի ասոված,  
Շուրթերիդ երկու մեծ փակազգըծում  
Մի մեծ առեղծված, որ լուծում շունի...  
Իսկ ես խոսում եմ, խոսում եմ, խոսում,  
Թայց հիմա ես էլ... ե՞ս ինձ շեմ լուծ.  
Աշքերիդ շաղված ժպիտի վրա  
Արթնացնում եմ մի քնած ասործու,  
Շուրթերիդ երկու մեծ փակազգըծում  
Մի հին առեղծված առանց քեզ լուծում:  
Իսկ դու՝ անտեղյակ, ժպտում ես կրկին  
Սիրալի՞ր այնպիս,  
Թայց և... անտարբե՞ր:

28. II. 63

Երևան

## ՀԱՆԳՍՏԱՑՐՈՒ ԻՆՉ

Հանգստացրո՞ւ ինձ,  
Հանգստացրո՞ւ...  
Օգնի՞ր, որ ցավըս...  
Զի՞ անցնի ցավըս:  
Դուցե պետք էլ չէ, որ անցնի ցավը:  
Նա էլ է ծնունդ,  
Ինչ-որ երեխա  
Եվ... իր ապրելու իրավունքն ունի...  
Օգնի՞ր, որ ցավիս ետևո՞ւմ պահվիմ.  
Հանգստացրո՞ւ ինձ,  
Հանգստացրո՞ւ...

Ինչի՞ համար է այս երկմատանքը:  
Զէ՞ որ տանցին եմ ես ազնվորե՞ն,  
Թո՞ղ որ ամեն բան բաց պատկերված չէ,  
Սակայն ամե՞ն բան պատկերացված է:  
Ինչ-որ հնարքով կողպի՞ր մտքերըս.  
Հանգստացրո՞ւ ինձ,  
Հանգստացրո՞ւ...

Անշափ կարոտ եմ շատ պարզ խոսքերի՝  
Տափակ-կրկընված,  
Շատ գործածվելուց ողո՞րկ-լպրծո՞ւն,  
Թայց նաև միա'կ — չփոխարինվո՞ղ  
Շատ պարզ խոսքերի:  
Թո՞ղ որ այցելեն ինձ այդ խոսքերը:  
Եվ այնժամ գուցե ես ժպտամ նորից

Եվ իմ ժպիտով ինձ հանգստացնեմ,  
Սակայն մինչև այդ ի՞նչ խոսքով կուղես  
Հանգստացրո՞ւ ինձ՝  
Հանգստացրո՞ւ...

Հանգստացրո՞ւ ինձ՝  
Չգիտե՞մ ինչով:  
Կուցե՞ռ ոչնչով:  
Էլ չկա՞ հրաշք:  
Իսկ դու կարող ես հրաշք ստեղծել  
Թարուն երազված կետկետուն քայլիդ հնչուն նաղանքով՝  
Իմ շրջակայքում,  
Փոշով խավապատ հայելու վրա՝  
Քո փորագրիլ — նկարիլ մատի մի խզբզանքով,  
Որ նման լինի անհայտ մի լեզվի նշանագրի,  
Իսկ սա մի՞շտ ունի թալիսմանի ուժ...

Տո՛ւր ինձ մի խորհուրդ,  
Խորհուրդ այնպիսի՞։  
Որ ո՛չ մի բառով չի բռնադատվում:  
Էլեկտրագրի՛ր մի զալարագիծ կամ մի լուսալիք,  
Ինչպես անում են ձգրիտ կոչված սարքերը միայն:  
Թարգմանությունը մի՞շտ սպանում է:  
Քեզ մի թարգմանիր.  
Ի՞նձ հանգստացրու,  
Հանգստացրո՞ւ...

Տիեզերքի մեջ բոլոր մարմիններն ունեն գնդի ձև՝  
Եվ հիմա շունեմ ես իմ մեջ ոչի՞նչ  
Որք լինի հանգույցի՞ նման,  
Կոճակի՞ նման,  
Նաև կորիզի՞.  
Սե՛րը,  
Տանջա՞նքը,  
Մտքերը՝ս բոլոր՝  
Հանգույցի՞ նման,

Կոճակի՞ նման,  
Նաև կորիզի՞:  
Տափակացրո՞ւ,  
Ինձ հանգստացրո՞ւ...

Ասա. «Հերի՞ք է»:  
Եվ ասա. «Կա՞նդ առօտ  
Ու ես կանգ կառնեմ,  
Ինչպես կանգնում են  
Տրամվայների մոտեցող-հասնող շնչառությունից,  
Ինչպես կանգնում են փակ դռան հանդեպ:  
Ու ես չե՞մ ուզում ոչի՞նչ ուզենալ.  
Ո՛չ այն պատճառով,  
Որ ուզենալը վիրավորիլ է,  
Այլ ա՛յն պատճառով,  
Որ պատճա՞ռ չկա բան ուզենալու  
Բայց, այսուհանդերձ, ինձնից էլ թաքուն,  
Գուցե կուզեի մի պահ կանգ առնել,  
Ինչպես կանգնում են  
Ո՛չ թե մոտեցող տրամվայների շնչառությունից,  
Փակ գուան առջն,  
Այլ այնպես,  
Ինչպես կանգնում են նաև ծաղկի՞ հանդիման...

Գու այնպե՞ս ուզիր,  
Որ ես շուղենա՞մ.  
Հանգստացրո՞ւ ինձ,  
Հանգստացրո՞ւ...  
4.5. IV. 61  
Մոսկվա

## ԹՐՈՒԻՑԻԿ ԵՐԳԵՐ

### ՊԱՏԱՀԱԲԱՐ ԵՆ ՊԱՏԱՀՈՒՄ ԿՅԱՆՔՈՒՄ

Միշտ էլ սիրածին պատահաբար են պատահում կյանքում  
Ու հրաժեշտ են տալիս սիրածին անհրաժեշտաբաղ...

Թե կուզես՝ լոի՞ր։  
Թե կուզես՝ ոռնա՞,  
Թե կուզես՝ ծամիր սեփական լեղուդ,  
Թե կուզես՝ խցիր բերանըդ բարձով,  
Թե կուզես՝ ոտքով հարվածիր բարձին.  
Հավատացյալ ես՝ հայհոյիր աստծուն,  
Հավատացյալ չես՝ աստծուն հավատա.  
Թե կուզես՝ ուզիր է՛լ շտակել — իդո՞ւր,  
Թե կուզես՝ ուզիր է՛լ շապրել — իզո՞ւր...  
Ու, եթե կուզես, ապրելն այս է հենց,  
Եվ սերն իսկական հենց այս է որ կա.

— Պատահաբար ես պատահում կյանքում,  
Անհրաժեշտաբար հրաժեշտ տալիս...

26. 1. 62

Երևան

### ԱՆՊԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆ

Մտքեր խա՞կ, թե՞ հասուն,—  
Ում է պետք երգի մեջ

(Մի կտոր հանածո ոգի է հարկավոր,  
Մի պատառ կախարդանք,  
Մոգության մի պճեղ,  
Մի բացվող փակագիծ,  
Անհայտի մի լուծում)...

Շրջում են ոինչուս-ներ՝ էակներ սապառված,  
Որ չունեն օթևան ու չունեն դեռ անուն,  
Հոգու մեջ տալ անկյուն ու լեզվով մկրտել  
Սապառված մի ոինչու —  
Ու երգը կհնչի...

Հույզեր մե՞ծ, թե՞ ձղձիմ,—  
Իսկ ո՞վ է վճռելու

(Մի կտոր արնածոր տաք միս է հարկավոր՝  
Սիփական ձեռքերով իրենից պոկոտած,  
Մի սարսուռ օդեղեն,  
Մի սարսում ընդերքի)...

Միության երանգներն առաջ են ավելի,  
Քան բոլոր մնացած գույները գումարված,  
Խուսափուկ խլիրտի քղանցրից գեթ կառշել,

Ստվերի վետվետուն քայլվածքը ճանաչել, —  
Ու երգը շի՛ կարող լհնչել ինքնակամ...

Ի՞նչ անել և ինչպե՞ս.  
Հա՞ստ մանել, թե՞ բարակ:

(Կի օրվա երակին պատվաստել կիրակի՞,  
Վեճ մղել ծովի՛ հետ,  
Այալել կրակի՛ց,  
Չուշանա՛լ, շշապե՞լ), —  
Եվ այնժամ, օ, հարկավ  
Իր պոշին կտնկվի ձվածե առարկան,  
Եվ արփին ափիդ մեջ կդառնա ձվածեղ...

7. Տ. 61  
Սրբան

## ԱՐՎԵՍՏ

Քամին է երգում ինչ-որ եղանակ,  
Որ թեթևովենին պատիվ կբերեր:

Մութ հորիզոնին աղոտ այգալույս՝  
Մի ոեմբրանդյան նորահայտ նկար:

Եեքսպիրին է կյանքը ձեռ առնում՝  
Իր ողբերգական դըրամաներով...

Իսկ մե՛նք՝ ե՛ս ու դո՛ւ... արվեստ ենք խաղում՝  
Եվ... մի այնպիսի՛ համոզվածությամբ,

Որ Սերվանտեսի հերոսն էլ շուներ...  
20. III, 59  
Մոսկվա

Իսկ թե չեն լսում՝ մե՞կ է, չե՞ն լոխ,  
Կխոսեն նույնիսկ իրենց կոշկի՝ հետ,

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝  
Հայարարվում է և օրենքից դուրս:  
Բայց չե՞ն վախենում նրանք շար մահից.  
Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ...

Զ. Է. 62  
Երես

## ՎԱՐՔ ՄԵԾԱՅ

Ա՛զ-ո՛ւշ են զալիս, բայց ո՛չ ուշացած,  
Ծնվում են նրանք ճի՛շտ ժամանակին,  
Եվ ժամանակից առաջ են ընկնում,  
Դրա համար էլ չեն ներում նրանց:

Անտոհմ չեն նրանք կամ անհայրենիք.  
Հասարակ հորից ու մորից ծնված՝  
Սերում են նրանք և ա՛յն վայրենուց,  
Որ էլ չէ՛ր կարող ապրել քարայրում:

Սերում են նրանք և ա՛յն ծերուկից,  
Որ նախընտրում էր քնել տակառում:  
Սերում են նրանք և ա՛յն պատանուց,  
Որ սիրահարվեց իր իսկ սկատկերին:

Սերում են նրանք բոլո՞ր նրանցից,  
Որ սատանային հոգին են ծախում,  
Միայն թե անե՛ն մտածածն իրենց,  
Ի՞նչ փուլիթ թե սատկեն ժամանակից շուտ:

Անվտանգ՝ ինչպես հրդեհն արկի,  
Անվնաս՝ ինչպես օգտակար լորտուն,  
Վախ են ներշնչում պետություններին  
Մինչեւ իսկ իրենց կամքի հակառակ:

Արքաների հետ խոսում են «զուա-ով»,  
Եթե, իհարկե, լսում են նրանց,

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԿՅԱՂԻՔԸ

Արարատի պես —

Ոտքերը՝ հովտի շերմությամբ վառած,  
Կատարը՝ սառած.

Տիեզերական հրթիռի նման —

Բոցը՝ դեպի ետ,  
Գլուխը՝ առաջ:

Շրթերի վրա՝ համրածայն բառեր,

Իսկ սրտում՝ դղիրդ,  
Իսկ հոգում՝ շառաշ...

• • • • • • •

Թո՛ղ նրա կյանքը մինչև իսկ լինի

Մի շուտասելուկ և կամ հանելուկ,  
Միայն թե դառնան խոսքերն էլ... առած...

16. III. 59

Մոսկա

ԻՆՉՊԵ՞Ր ԹԵ ԲԱԽՏ ԶԱԱ...

Առանց հայելու էլ ես ինձ տեսնել գիտեմ  
Մառաբնի' վրա, քո ափի' մեջ,  
Եվ այդ վայրկյաններին ես ինձ դուր եմ գալիս,  
Ինչպես դուր է գալիս ինձ իմ տղան:

Դատեցնում եմ մասրս և... փոխարեն թելի  
Մատիս փաթաթվում է երկուի կապույտն ինքը:  
Ուներիս հետ հողն է սիրաբանում,  
Եվ խաղողի վազն է ընձյուղ տալիս  
Վառվող ծխամորձիս կրակի մեջ...

Ինչպե՞ս թե բախտ չկա, էլ նա ո՞նց է լինում...

Եվ սխալ է, որ մենք վայրկյաններով  
Ժամն ենք շափում: Ճիշտը հակառակն է գուցե՝  
Կարճ ժամերով շափել վայրկյանները երկար...

Ա՛խ այդ վայրկյանները, որ գալիս են ուշ-ուշ,  
Ինչպես մարդարեներն ու հերոսներն այն կհնոտ,  
Որ մի ազգ են փրկում բաղկով և կամ խոսքով...

Ու ես մտածում եմ, որ հիրավի  
Ժամացույցից պիտի շինել շաքար  
Ու լուծելով շրում՝ ըմպել կում-կում,  
Բրրկ անքնություն փարատող դեղի

Եվ հայելուց... պիտի կոշի՛կ կարել,  
Որ ոտնատակն անդամ հողը արտացոլի...

Իսկ սեփական անձի արտացոլման համար  
Զեղ հայելի պե՞տք է:  
Ինձ հայելի պետք չէ:  
Ռեսինի պես ձգվող վայրկյաններ կան,  
Երբ ինձ տեսնում եմ ես առանց հայելու էլ՝  
Սառաբնի՛ վրա,  
Քո ափի՛ մեջ,  
Նաև ինքնահավան ինքնահոսիս ծայրի՛ն...

Յօ. 1X. 61

Երեան

## ԱՐԾԱԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋ

Արշալույսից առաջ քունն ավելի խորն է,

Նահանջած են լինում մղձավանջներն արդեն,  
Օդը երազներ է տեղափոխում,  
Դեռ ձեւ ու կերպ շառած նոր երազներ պես-պես՝  
Մնված տըրամվայի զրընգոցից մրսկան,  
Ողջույնի տեղ հնչող երեխայի լացից,  
Թարմ բուրմունքից հացի,  
Որ լուռ թեավորվում  
Եվ փակ մերենայում էլ չի՛ տեղավորվում:

Հիմա հավատում են երազներին  
Շատ քշերը կյանքում:  
Ես նրանց մեջ չկամ:  
Եվ բանի որ չկա՞յ:  
Ինձ խղճում եմ  
(Նախանձելի բան չէ խելքի դալը)...

... Արշալույսից առաջ քունն ավելի խորն է,  
Բայց մոտիկ է նաև արթնացումը:  
— Կբացվի նոր մի օր՝  
Ինչպես աշքակապը  
(Մանուկ հասակում են պահմոցի խաղում),  
Կբացվի նոր մի օր՝  
Ինչպես վիրակապը  
(Երեկուած վերբն է սովորել արդեն),

Ու եթե խոր վերքն է սպիացել արդեն,  
Արժի՝ արդյոք հիմա,  
Արժի՝ ասել արդյոք,  
Որ վերքերը, ճիշտ է, լավանում են,  
Բայց դրանից միշտ էլ կրծատվում է մաշկը...»

13. XI. 61  
Երևան

### ՄԻԱՅՆԱԿ ԾԱՌԸ

Պոկված անտառից՝  
Մենակ ու մռայլ,  
Մի ժառ է ցցվել բարձունքի վրա:

Ինչպես չի սիրում անտառը նրան,  
Ինչպես է ծաղրում,  
Քրքջում վրան,  
Ի՞նչ է թե հսկան  
Այս թզուկների

կամքին

ու

կյանքին

Չի՝ կարողանում իրեն ենթարկել,  
Ի՞նչ է թե նրանք չեն կարողանում  
Իրենց նեղվածքում սրան բանտարկել...»

Ել չի՝ հասկանում անտառը հիմար,  
Թե ժառն այդ ինչ է անտառի համար.

Կաղնին՝  
Անտառի կանաչ շանթարգել...

21. IV. 59  
Մոսկվա

Ինչպես ոսկին է հիմա,  
Որով առ ու ծախ արդեն չեն անում,  
Սակայն դրանից ոսկին ո՛չ մի տեղ  
Երբեք չի դարձել ժանգոտած թիթեղ.

## ՈՍԿԻՆ ՎԵՐՍՏԻՆ ՈՍԿԻ Է ՄՆՈՒՄ

Երթերիս վրա խոսքեր են դողում՝  
Խոսքեր արտառո՞ց,  
Խմաստաղրկվա՞ծ,  
Հնացա՞ծ խոսքեր,  
Հին-հին գրքերի, մատյանների մեջ,  
Բառարաններո՞ւմ մնացած խոսքեր:

Ուզում եմ ասել.  
— Գիտակի՞րտ եղեք,  
Եղեք ողորմա՞ծ,  
Մարդու նկատմամբ մա՛րդ եղեք, մարդի՞կ:

Ու երբ չդորժած մեղքերի համար  
Մարդը հայցում է մեղքի թողովիուն  
Ու ներողություն՝  
Ոչնչի՞ համար,—  
Դոնե գիտակիրտ-ողորմած եղեք,  
Անսրտության մեջ մի՛ եղեք համառ...

Երթերիս վրա խոսքեր են դողում՝  
Խոսքեր արտառո՞ց,  
Խմաստաղրկվա՞ծ,  
Հնացա՞ծ խոսքեր,  
Հին-հին գրքերի, մատյանների մեջ,  
Բառարաններո՞ւմ մնացած խոսքեր:  
Հնացա՞ծ խոսքեր,  
Հնացա՞ծ,

Ոսկին վերըստին ոսկի՞ է մնում...

2. XI. 58  
Սոսկվա

## ԱՐՄԱՏՆԵՐԸ ՈՒ ՄԱՏՆԵՐԸ

Ա՞յ թե ճանաշել,  
Ա՞յ թե իմանալ ընդերքն ու հողը,  
Բայց ո՞չ թե ինչ-որ երկրաբանի պես՝  
Մակելով հողի կողը  
կամ ողը.  
Եվ ո՞չ էլ իբրև ինչ-որ հնաբան՝  
Գործի դնելով բրիլ, բահ ու բան.  
Եվ ո՞չ էլ անգամ՝  
Ինչպես ես գիտեմ իմ հինգ մատները:

Ա՞յ թե ճանաշել ընդերքն ու հողը,  
Ինչպես, երեխ, հողն են ճանաշում  
Լոկ արմատները:

28. IV. 59

Մոսկվա

## ՄԻԱՆԳԱՄԻՅՑ

Ասում են, թե միանգամից կյանքում ոչի՞նչ չի կատարվում,  
Միանգամից ո՞չ մի կարաետ և ո՞չ մի գորգ չի պատրավում,  
Միանգամից բերդ չի շինվում ու չի քանդվում միանգամից,  
Միանգամից ձյուն չի գալիս և չի փշում անգամ քամին:

Մի՛րգ չի հասնում միանգամից, ո՞ւր մնաց թե՛ խելոքանան,  
Զո՛ւզ չեն կազմում միանգամից, ո՞ւր մնաց թե՛ երեքանան.  
Միանգամից չեն կշտանում և չեն զգում զրի կարիք,  
Ո՛չ այսօրն է անցյալ դառնում, ո՞չ էլ վաղն է դառնում գալիք:

Այս ամենը ճիշտ է, հարկա՛վ,  
Հենց այսպես է, ինչպես որ կատ  
Սակայն եթե իմ կյանքի մեջ գեթ հարցնեին մի՛ անգամ ինձ,  
Թե ես ի՞նչ եմ գերադասում,  
Ի՞նչ եմ ուզում  
Ու երազում,  
Ես կասեի.  
— Ինչ լինում է՝ թող որ լինի միանգամի՞ց...

28. I. 68

Երևան

## ԵՎ ՈՒՐԻԾ ՈՉԻ՞ՆՉ

Զորից թռչելիս,  
Ժայռից ցատկելիս,  
Որպես կենդանի — շնչող արարած,  
Նա խեղանդամվում  
Ու տնքտնբոցով քարշ տալով ոտք՝  
Փոշի է հանում ճանապարհներին...

— Իսկ մենք պարզապես կոչում ենք... քայի՛,  
Եվ ուրիշ ոչի՛նչ!

Նա էլ, մարդու պես,  
Անի ամոթի զգացումը նույն,  
Թրա համար էլ  
Հազուստ է գործում խոտից ու թփից,  
Որպեսզի ծածկի իր մերկությունը...

— Մենք ընդամենք կոչում ենք... առօ՛ւ,  
Եվ ուրիշ ոչի՛նչ!

Առասպելական հսկա մարջաններ,  
Որ վզնոց դարձած՝  
Զուզում են վիդը պատըշգամբների,  
Մի քան էլ ավե՛լ —  
Անեն համ ու հոտ...

— Իսկ մենք կոչում ենք... սլուգե՛ղ կամ աարդե՛ղ.  
Եվ ուրիշ ոչի՛նչ!

Զուզած ավազի գեղին կապրոնով  
Եվ անձեռազործ նեյլոնով կանաչ՝  
Հնչեցնում է նաև իր ջինջ սոպրանոն...

— Իսկ մենք պարզապես կոչում ենք... աղբյո՛ւր.  
Եվ ուրիշ ոչի՛նչ!

Մի մե՛ծ երիներանդ յուղաներկ կտավ,  
Որ ժամեր հետո փոխվում է հանկարծ  
Սև ու միազույն խորանկարի...

— Իսկ մենք կոչում ենք լոկ... օ՛ր ու զիշե՛ր.  
Եվ ուրիշ ոչի՛նչ!

Հրաշշը իսկպկան,  
Կոշում ենք... գլուխ:

Լեցուն գաղտնարան.  
Անվանում ենք... սիրու:

Մի քայլող աշխատին,  
Մարդ ենք հորջորջում...

Եվ... վաշի ինձ ու ձեզ.  
Այսքանից հետո  
Մենք մեղ կոչում ենք նաև... բանաստեղծ...

18. XII. 59  
Թիֆլու

## ԴԻՄԱՆԿԱՐԻ ԱՌՉԵՎ

Քո կյանքը ապարդյուն անցավ.—  
Անօգո՞ւտ, իզո՞ւր տեղ կորար,  
ինչպես որ բաց ծովի վրա  
Տեղացող անձրևը վարար.  
Ծահեցիր լոկ ծաղը ու ծանակ՝  
Միայնակ ցուցարարի պես.  
Ո՛չ հասար, ո՛չ էլ ես դարձար՝  
Անհասցե փակ ծրարի պես...

[1956]

## ԼԱՅ ԷԼ ԿԱ, ԼԱՅ ԷԼ

Մեկը լալիս է նորածընի պես՝  
Ճշում է, սակայն... արցունքներ չկան,

Մեկն էլ բերանից ծալտուն չի հանում,  
Բայց արցունքներն են շիթ-շիթ լճանում:

Մեկն էլ, ինձ նման (գուցե նաև՝ քե՞զ).  
Բարձր ճշալու սովոր չէ բնավ,  
Եվ արցունքներն էլ աշքից չեն հորդում,  
Այլ հոսում են ներս  
Ու կիտվում դանդաղ  
Զեշաքարի պես ծակծկված սրտում:

14. I. 59  
Զանախչի

## ՅԱՎՆ Է ՀԱՃԱԽ ԱՌԱՋ ՄՂՈՒՄ

Անհարմար է քպիկ քայլել,  
Այս կոշիկն էլ շատ է նեղում։  
Ինչպե՞ս քայլել առանց ուղու։  
Այս ճամփան էլ շատ է շեղում։  
Դոփիկ տեղո՞ւմ։ Բայց դրանից  
Ո՞չ կոշիկը կլայնանա,  
Ո՞չ էլ ցավը կմեղմանա...  
Ցա՛վն է ճաճախ առաջ մղում։

[1956]

## ՍԵՎ ԿԱՏՈՒ

Իմ սեռլթյան համար զու արեկ'ն դիմիր,  
Պայծառության համար՝ ի՞նձ միմիայն,  
Իսկ ես պիտի դիմեմ այն հորթ-արջառներին,  
Որ չեն դարձել գեռ եզ,  
Սակայն պիտի՝ դառնան։  
Եվ ասածիս վրա շատ էլ միտք արա,  
Միտք անելու համար ճակատ չեն համբուրում,  
Ճակատն առհասարակ հո համբույրի տեղ չէ.  
Մի փորձադաշտ է նա, ուր ցանում են կնճիռ։

Ու երբ միտք եմ անում, որ բյուր դարեր առաջ  
Ես քայլեր եմ փոխել շա՞տ ավելի հարմար՝  
Չորս թաթերի'ն վրա,  
Պոչի'ս ուղեկցությալք,  
Ու չեմ փնարել բառե՞ր —  
այդ պահերին  
Ինձ ողբում եմ՝ օտար մեռելի պես,  
Հետո էլեկտրական ածելիով  
Սափրվում եմ մաքուր ու դուրս գալիս,  
Որ հմայքը չափեմ օտար կանանց.  
Խոտի աճման համար հարկ վճարել աշքով,  
Փողոցները կտրեմ՝ առանց ռանցումներու-ի,  
Ինքնազլուս — աշատ սև կատվի' պես։

Խեղճ սև կատուները ունեն շա՞տ վատ համբավ.  
Մարդ ու մեքենավար նրանց հայնոյում են:  
Շատ կուզեի գոնե շնավատալ,  
Թե իմ կատվանման անցումներից  
Պատահել է գեթ մի ավտովթար...

30. /X. 61

Երևան

## ԱՆՏԱՌԻ ՎԵՊԸ

Սերունի թեղին ու չահել թղկին.  
Թեքելով իրար  
Եվ արև տալով  
Իրենց ստվերում դողացող ծաղկին՝  
Ջրույց են անում,  
Մի զրույց անծա՞յր:

Կանալ բացատից,  
Ուր տաք է, պայծառ,  
Ոտներս ինձ կրկին թավուտ են տանում:

Ականջս անտառի խոսք ու զրույցին՝  
Ես բարանում եմ,  
Օ, ո՞չ... կոճղանո՞ւմ:

Դարավոր կաղնին  
Ասես մի ինչ-որ երգ է մոմոռում կանալ բթի տակ,  
Մի նախնադարյան՝  
Բոլորի՝ կողմից մոռացված մի երգ,  
Մի ե'րգ,  
Որ գուցե չեր էլ հասցրել կոշվել երգ,  
Մի ե'րգ՝  
Նախամարդկային ինչ-որ բառերով,  
Որ տաշված էին,  
Բայց ընդամենը բարե կացնի չափ,  
Որ տաշված էին,  
Եվ բնա՞վ մաշված...

Վիպասանում է անտառը կարծես,  
Ասքեր է հիշում,  
Որոնք աշխարհում  
Երբեք չեն հազել բառե նեղ շապիկ  
Ու բայլ չեն փոխել տառե ոտքերով:

Վիպասանում է անտառը կարծես,  
Մի վեպ է պատմում,  
Մի վեպ հնօրյա՛,  
Մի վաղընջակա՞ն՝ անհա՛յտ առասպեկտ  
Մի ավանդությո՞ւն՝  
Արշավի մասին սառցադաշտերի,  
Նրանց սահտակ ահեղ վաշտերի  
Նահանջի մասին,  
Նահա՞նջ,  
Որ անշուշտ նահանջ չէր կոչվում.  
Կար ուրիշ մի բառ,  
Որ ջրհեղեղի հին փմասան ուներ...

Ու լուս լսում են անտառի որդիք,  
Լսում են պատին՝  
Աչքերը չուած,  
Դունչերը ծուած,  
Եվ մամոնտների ահեղ ոտքի տակ  
Չեն տեսնում նրա՞ն,  
Որ մինչև անդամ դեռ չունի անուն,  
Եվ հետո՛,  
Հետո՛,  
Ծա՞տ ու շա՞տ հետո  
Պիտի «մա՛րդ» կոչվի...

Խռոված քամին՝  
Հետաքրքրված կաղնու վիպումով,  
Խռովածությունն արդեն մոռացած,

Բերնին մի տերև՝  
Հիմա քարացած  
Ականջ է գնում:

Իսկ իմ հոգու մեջ  
Զարթնում է հանկարծ անհա՛յտ մի թախիծ,  
Մի հազարամյա անհո՞ւն կարոտ,  
Որ բազո՞ւմ դարեր քնած է եղել,  
Ինչպես մետաղը՝  
Որձաքարի մեջ,  
Ինչպես կրակը՝  
Ատոմի գրկում...

Ու թվում է ինձ.  
Սառերի խորունկ ճեղքերն էլ արդեն  
Ճեղքեր չեն բնավ,  
Այլ սեպագըրեր անհայտ մի լեզվի:

Ու թվում է ինձ.  
Այնտեղ, ուր շուրից  
Գետակի ջուրն է ասես սեանում,  
Իրենց ոտերն են հիմա լվանում  
Ո՛չ ժայռեր փոշոտ,  
Այլ վայրենինե՛ր,  
Այն էլ՝ մի ցեղից,  
Որ շունի անդամ վերջին մոհիկան:

Ու թվում է ինձ.  
Այս լիճը փոքրիկ  
Ո՛չ թե պարզապես լճակ է որ կա,  
Այլ հենց մոհիկա՞ն՝  
Վերջին մոհիկանն այն սառցադաշտի,  
Որ դարեր առաջ եղել է այսոեղ...

Ու թվում է ինձ,  
Որ այսպես՝  
Կանգնած կանաչ բացատում,  
Որ որ է ես էլ, ուժով մի կախարդ,  
Արմա՛տ կծփեմ,  
Կհագնեմ սաղա՛րթ...

29. IV. 59

Մոսկվա

#### ԳԻԾԵՐՆ ՈՒ ԵՍ

Գիշերն ունի ամեն բանի թույլտրվություն:  
Իսկ ես շունե՞մ:

... Ու ջնջում եմ  
Էլեկտրական լամպագրի ալն խորհուրդը,  
Թե «Շահավետ, հուսատու է փողը պահել դրամարկղում»  
(Փող ունենամ՝  
Կհասկանամ  
Առանց և այդ լամպագրի)...

... Ու բացում եմ  
Փակ գռները գիշերային խանութների.  
Հնդամենը հարկավոր է ծխելու բան,  
Որ կուղեի ինձ վաճառեր  
Այն աղջիկը,  
Որի աշքերն ունեն ինչ-որ անորոշ զույն,  
Որի անունն անհայտ է ինձ,  
Որի սիրտը փակ է իմ գեմ՝  
Ինչպես խանութն այս լեփլեցուն,  
Եվ ի՞նչ ճաշակ ունի արդյոք,  
Ես շգիտեմ,  
Բայց կուղեի,  
Շա՛տ կուղեի,  
Որ նա սիրել կարողանար  
Նաև... տգեղ տղամարդու...

Գիշերն ունի ամեն բանի թույլտրվություն:  
Իսկ ես շունե՞մ:

... Եվ ասում եմ ա'յն խոսքերը,  
Որ երբեք չէի կարող ասել կյանքում...

... Բաց եմ անում

Եվ արգելված — հայհոյական բառերն ամեն  
Իրենց թաքուն պոեղիայով,  
Որ կուտակվել է դարեղար...

... Ներս եմ մտնում ա'յն դռներից,  
Որ միշտ փակ են եղել իմ դեմ  
Ու միշտ բաց են նրանց առաջ,  
Որոնց եղածն ու չեղածը ես լա՛վ գիտեմ,  
Բայց չեմ ասի նաև այսօր,  
Այսօ՛ր,  
Երբ ես կարծես ունեմ թույլտըվություն...

... Ներս եմ մտնում  
Եվ խոսքերիս ա'յն իրավունքն եմ ես տալիս,  
Որ կինն ունի՝  
Երբ այդ կինը  
Ոչ թե արդեն էլ չի սիրում իր ամուսնուն,  
Այլև շա՞տ լավ է հասկացել,  
Թե չի սիրում ինչի՞ համար:  
Ա'յն կինը, որ գիտի մի բան  
Եվ չգիտե եղս մի բան.  
Նա չզիտի,  
Որ աշխարհում  
Կարելի է ապրել նաև առանց սիրու,  
Եվ լա՛վ գիտի,  
Որ երբեք,  
Ի՞նչ էլ լինի ու չլինի՝  
Անկարող է դավաճանել...

Գիշերն ունի ամե՞ն բանի թույլտըվություն:  
Իսկ ես չունե՞մ...

26. V. 59

Մոսկավա

14. X. 59

Զանախլի

## ՄԱՐԴԸ ԱՓԻ ՄԵԶ

### ԻՐԻԵՎ ԱԿԻԶԲ

Իբրև սկիզբ ընդամենը ես այս կառեմ.

Աշխարհում կա չահելությո՞ւն,  
Կա կյա՞նք,  
Կա սե՛ր,  
Կան տղաներ և աղջիկնե՞ր.  
Կա շե՛կ, կա սե՛:

Եվ մի աղջիկ՝  
Սև աշքերով, սև մազերով,  
Ինձ գերել է, խելքից հանել իր նազերով:

Գալիս է նա և շատ հաճախ  
Չեռքըս բռնում, ափըս բացում,  
Սև աշքերը մերթ՝ կկոցում,  
Մերթ՝ լայն բացում,  
Մերթ փակում է,—  
Սկըսվում է... գուշակո՞ւմը:

— «Ակպ՛ւ-ապո՛ւ, կապո՛ւ-կապո՛ւ...  
Եկ մի տեսնենք՝ ի՞նչ կա ափում...»:

— «Աթո՛ւ-աթո՛ւ, հա՛ թուհ-հա՛ թուհ...  
Տեսնենք՝ տղան ի՞նչ է ատում...»:

— «Անա՞մ-փերո՛ւ, շանա՞մ-փերո՛ւ...»:

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՄ

Եվ մի օր էլ շեմ համբերում.  
— Գիտե՞մ, գիտե՞մ,  
Գուշակ է՛լ ես, կախարդ է՛լ ես,  
Զէ՞ որ զու ինձ ոտով-զլխով կախարդել ես:  
Բայց իմ ափը ի՞նչ է տալիս:  
Ինքը գիտես, որ մի ափը  
Մինչկ անգամ ծա՛փ չի տալիս:  
Ախար ի՞նչ կա այդ ափի մեջ:  
**Կուզե՞ս**  
գառնամ  
մարդ՝ ափի մեջ...

**Մարդկանց առաջ և քո առաջ**  
Ահավասիկ ինքս եմ բացում  
Ինչ որ ունեմ — ինչ որ չունեմ  
Իմ հոգո՛ւ մեջ.  
**Մարդկանց առաջ և քո առաջ**  
Ահավասիկ ինքս եմ բացվում,  
Ինչպես մանուկն օրորոցում՝  
Երբ շոգում է...

30. V. 57

**Մոսկվա**

Ես հոգնել եմ մանրաքանդակ պաղ խոսքերից:  
Լավ է լինել հմուտ դարբին, քան ոսկերիւ...»

5. V. 57

**Մոսկվա**

Նրանց սպասող լավ մանկությունից,  
Առահով կյանքից, երջանկությունից:

Եվ լինել անհոգ, և անդարդ լինել,  
Պարզապես սիրո՞ղ — ապրո՞ղ մարդ լինել,

Քեզնով զոհանալ, քեզնով հիանալ,  
Քեզնով լիանալ  
Ու քեզ միանալ...

26. IV. 57  
Մասկվա

## ՀԱՆԳԱՏԱՆՈՒՄ ԵՄ

Ուզում եմ այսօր մի պահ մոռանալ  
Հոգսը, խորհուրդը, գործը աշխարհի.

Ուզում եմ այսօր մի պահ հեռանալ  
Խոր սահանքներից այս ահեղ դարի:

Ուզում եմ այսօր լինել եսասեր.  
Քեզ քնքուշ, շոյիշ, պարդ խոսքեր ասել,

Խոսել գարունի՛ց, պատանությունի՛ց,  
Քո աղջրկական սատանությունի՛ց՝

Քո սուս վանումից ու խուսափումից  
Եվ, մի պահ հետո, քո ճիշտ հպումից:

Եվ կահավորել այն տունը գուցե,  
Որ քաղսովետից չենք էլ ստացել,

Եվ չավանել այն վարագույրդ,  
Որ չի նվիրել դեռ մորաքույրդ:

Տեսնել այն շորըդ, որ դեռ չես կարել,  
Հուղվել այն երգից, որ դեռ չեն գրել:

Խոսել գեղեցիկ ու թանկ բաներից՝  
Մաղկի՛ց, պարտեղի՛ց, երեխաների՛ց,

## ՈՒԶՈՒՄ ԵՄ

Ես ուզում եմ, որ պարապը լցվի լացով,  
բայց ոչ թե մոր, այլ մանուկի:

Ես ուզում եմ, որ կարապը ոչ թե մեռնի,  
որ կարապը ապրի՝ երգով:

Ես ուզում եմ, որ տարափը տեղա արտի,  
ոչ թե՝ իզուր՝ ծովի վրա:

Ես ուզում եմ, որ քարափը քարայժ պահի,  
ոչ թե օձեր և մողեսներ:

Ու թե մահը անխուսափ է՝  
Թող նա տանի ո՛չ հերոսին, այլ մարդուկին:  
Թե կորվը անխուսափ է՝  
Թող շկովեն երկու երկիր, այլ մարդ ու կին:  
Թե արդուկելն անխուսափ է՝  
Ահա շո՛րը — սի՞րտ մի հանձնեք տաք արդուկին:

Թաղե՞լ է պետք —  
պառավ մորը որդին թաղի,  
ոչ թե մայրը շահել որդուն:

Եթե երգել՝  
Այնպե՞ս երգել, որ մտքի մեջ շմտածեն. «Հոգի հանեց»:  
Եթե գրկել՝  
Այնպե՞ս գրկել, որ նվազեք իրար գրկում:  
Եթե հարգել՝  
Այնպե՞ս հարգել, որ քծնանքի շվերածվի:  
Եթե փրկել՝

Այնպե՞ս փրկել, որ փրկվածը երախտիքի խոսքեր չասի:  
Ու թե պառկել՝  
Այնպե՞ս պառկել, որ խափանվի տանկի՝ ճամփան,  
ոչ թե հրշեց մեքենայի:

Մի անգամ էլ թողեք ուզեմ.

Ես ուզում եմ՝

ինչպես մարդու նախահայրը իր օթևան քարանձավից՝  
շար նախանձի կերպարանքով հին գաղանն էլ  
առանց ցավի մարդու սիրութ թողած՝ գնա՝ ...

Ես ուզում եմ.

Եթե գերվել՝

ոչ թշնամուց,  
այլ խելքահան աղջիկներից:

Եթե մերվել՝

ապա երբեք շթթվելով:

Եթե լարվել՝

ապա միայն ստեղծելիս:

Եթե ճարվել՝

ապա փրկել մահամերձին:

Եթե ներվել՝

էլ շվիճե՞լ, էլ շկովե՞լ:

Եթե սիրվել՝

միայն մեկի՞ց և մե՞կ անգամ ...

Ես ուզում եմ, ձեր կարծիքով անհնա՞րը:

Թո՛ղ, այդ դեպքում, կանայք ծնեն առանց ցավի՝,  
երկըրները պատերազմեն, սակայն առանց արյան ծովի՝,  
Հրդեհները առանց հրի՝ թող ճարակեն,  
Մարդիկ իրար առողջությա՞մբ թող վարակեն:  
Թե բարակել է հարկավոր՝

Թող բարակի մե՛ջը կանանց,  
Թե տառակեր է հարկավոր՝

Թող նա մնա մեկ անձանա՛ց:

Պատարագե՞լ է հարկավոր՝

Համերգային մեծ բեմերից պատարագվի,

ոչ թե երգով դագաղ փակվի:

Կոտորակվե՞լ է հարկավոր՝

դպրոցական տեսրակներում կոտորակվի,

ոչ թե մարդկանց սիրտը ծակվի:

Ի՞նչ, տրաքվե՞լ է հարկավոր.

Թող տրաքվի մանկան փուլիկ-խաղալիքը,

այն էլ եթե անորակ է,

ոչ թե արդար և մեղավոր

մեր մարդկային մոլորակը...

Ես ուզում եմ...

Այն եմ ուզում՝ ինչ ամենքը...

25, 26. v. 57

Մասկվա

Պողավորումն այգու, արտի փոշոտումը  
փառարանեմ կրքո՞վ,  
Ազնիվ թթիւմորով հունցված ցորեն հացը  
մեր սեղանի վրա,  
Մեր անխարդախ գինին, որ մեր սիրտն է լցնում  
մի անբարրառ երգով  
Եվ կյանքը դարձնում է... հնարավոր հրաշք...

Դառնամ փառարանեմ մանուկների խաղը՝  
այնքան ինքնամոռաց

Եվ մտասո՞ւյզ այնքան, ասես որտեղ որ է  
հսկա մի գյուտ կանեն;

Դառնամ փառարանեմ նրանց թաթիկները  
ցեխաշրից սառած,

Իրենց սրտակտուր ու փութանցիկ լացը  
ցավո՞վ փառարանեմ:

Դառնամ փառարանեմ ջահել աղջիկների  
ծիծաղն աննպատակ,

## ՓԱՌԱԲԱՆՈՒՄ ԵՄ

Դառնամ փառարանեմ ձկնորսներին ծովում՝  
փողորկի թունդ պահին,  
Սերմնացանին՝ արտում, երբ է՛լ չի սպասում  
նա տաք օրերու:

Դառնամ փառարանեմ ձորից կաքավ թոցնող  
զրնկացը բահի,  
Գերանդու խուլ երգը, որ դժվար է անգամ  
նոտագըրել...

Պողավորումն այգու, արտի փոշոտումը  
փառարանեմ կրքո՞վ,  
Ազնիվ թթիւմորով հունցված ցորեն հացը  
մեր սեղանի վրա,  
Մեր անխարդախ գինին, որ մեր սիրտն է լցնում  
մի անբարրառ երգով  
Եվ կյանքը դարձնում է... հնարավոր հրաշք...

Դառնամ փառարանեմ մանուկների խաղը՝  
այնքան ինքնամոռաց

Եվ մտասո՞ւյզ այնքան, ասես որտեղ որ է  
հսկա մի գյուտ կանեն;

Դառնամ փառարանեմ նրանց թաթիկները  
ցեխաշրից սառած,

Իրենց սրտակտուր ու փութանցիկ լացը  
ցավո՞վ փառարանեմ:

Նրանց կանչող ե՛րգը, նրանց անցնող վե՛րը  
սիրո՞վ փառաբանեմ:  
Վախո՞վ փառաբանեմ այն պատանու ձեռքը  
և՛ դողացող, և՛ տաք,  
Որն առաջին անգամ սիրու է անում... դեպի  
սիրած կուրծքը տանել...

Սե՞րը փառաբանեմ և՛ պառավ մո՞ր հանդեպ,  
և՛ զառամյալ տատի՞,  
Որոնց սուրբ փեշերից անցած քո ողջ կյանքի  
ծով բուրմունքն ես առնում.  
Սերը՝ որդու հանդեպ, առանց որի ի՞նչ ես —  
մարդ ես մի աղքատիկ,  
Մինչ գներն էլ շուրջըդ բարձրանում են անվերջ —  
կյանքը թանկ է դառնում:

Դառնամ փառաբանեմ... փառաբանեմ մարդուն՝  
ա՛յն էակին միակ,  
Որ ծիծաղել գիտի, որ արտասվել գիտի,  
երգել գիտի,  
Թո՞ղ որ գիտի նաև իր նմանին դարձնել  
անշնչացած գիակ,  
Բայց և գիտի գրկել, գիտի գրել գրքե՛ր,  
Հերկել գիտի:

Նրա տքնությունը, բայց առավել ևս  
հրաշք հուր-կայծակի  
Այն բոց բռնկումը՝ այն ներշնչման պահը  
փառաբանեմ ցնծո՞ւն,  
Որ մեր աշքից ծածկված հազա՞ր ճանապարհ է  
բացում հանկարծակի  
Ու դարձնում է մարդուն... հավասար է դարձնում  
իր ստեղծած աստծուն...

15. VIII. 54

Նարկալու

5-6. V. 57

Մոսկվա

## ԿԱՐԾՈՒԽ ԵՄ

Ես կարծում եմ. երբ խոր վերքից  
Մարդ ժամանում է համառությամբ,  
Այդ ժպիտը վերջ ի վերջո  
Փոխարկվում է ծամածոռության...

Ես կարծում եմ, երբ որ ջուրը  
Վարարում է, ելնում ափից,  
Թույլտրվություն չի վերցընում  
իրեն հսկող նեղ բարափից...

Ես կարծում եմ. պաղն ավելի  
լավ ես զգում ամռան շոգին,  
Ֆողն ավելի լավ ես զգում  
Զմռան բրին...

Հողն ավելի լավ ես զգում  
Այն ժամանակ,  
Երբ նա հանկարծ տատանվում է  
Քո ոտքի տակ...

20. V. 57

Մասկվա

## ՆԱԽԱՆՁՈՒՄ ԵՄ

Ես նախանձում եմ նրանց բռլորին,  
Ովքեր ապրում են հավատով խորին,  
Ովքեր լավ գիտեն, թե ուր են քայլում,  
Ում դեմ են ենում, ում համար փայլում,  
Թե տրտնջում են՝ ինչ բանի վրա,  
Թե բրբջում են՝ ինչ բանի վրա,  
Ինչո՞ւ են նետվում, ի՞նչ թոհուբոնում,  
Հանուն ի՞նչ բանի կյանքերն են զոհում...

Բարի նախանձով նրան եմ հիշում,  
Ով չի մոլորվում անթափանց մուժում,  
Ով չի վհատվում երկար վերելքից,  
Չի հուսահատվում վայրի տարերքից,  
Ով ստի հանդեպ բերան չի փակում,  
Ով հոտած ջրում ռւռկան չի ձգում,  
Չի նայում կյանքին իբրև բռստանի,  
Որտեղից պիտի շաղ բաժին տանի...  
  
Ես նախանձում եմ նրան, վերջապես,  
Անհուն նախանձով նրան եմ հիշում,  
Ով հոգում չունի նախանձի նշում.  
Ով աշք չի տնկում սուտ փառք ու պատվին  
(ինչպե՞ս նախանձես այն ճարպիկ կատվին),  
Որ մի շաղ պատառ միս է թոցըրել)...

Իսկ ով հատիկն իր հասկ է դարձըրել,  
Ով սերմ է ցանել ու բերք է հնձում,  
Անբանն է միայն նրան նախանձում...  
  
Բանից պարզվում է, — ես ու իմ հոգին, —  
Որ չեմ նախանձում կյանքում ո՞չ ոքի...

Տ. 77

Մոսկվա

## ԻՆՔՍ ԻՆՉ ՀԵՐՔՈՒՄ ԵՄ

Նույն հարցն եմ հաճախ ինքըս ինձ տալիս,  
— ի՞նչ ես աշխարհի ցավերը լալիս,  
Աշխարհի դարդը հո՞ք բել չեն տվել,  
Եվ ի՞նչդ է պակաս կամ ի՞նչդ է ալել.  
Ամենքի նման մի մարդ ես, հոգի՛ս,  
Ամենքի պես էլ աշխարհով գեա...»

Խսկապե՛ս,

Կարդին հագուստ կա հազիս,  
Թե վաստակածը դրագանըս մնար՝  
Անտեղի տեղը չհալվեր-կորչեր,  
Ինձ կարող էին և հարուստ կոշել,  
Ես գուր եմ գալիս սրան ու նրան,  
Ինձ շատերն անգամ սիրում են կարգին,  
Ծուտով կստանամ և բնակարան,  
Եվըս երկու մանշ՝ կազատվեմ հարկից,  
Եվըս երկու գիրք՝ անուն եմ հարդի, —  
Ումի՞ց եմ պակաս, ումի՞ց եմ ավել,  
Ի՞նչ եմ աշխարհի ցավերը լալիս,  
Աշխարհի դարդը հո՞ք ինձ չեն տվել, —

Այս հարցն եմ հաճախ ինքըս ինձ տալիս,  
Ինքըս ինձ վիճում, առնում ու տալիս,  
Սոսկայն իմ հախից ինքս էլ չեմ զալիս,  
Ինչպե՞ս աշխարհի ցավը մոռանամ,  
Աշխարհի վատը, լավը մոռանամ,  
Ես հո՞չ նստել աշխարհի վզին,  
Որ չմտածեմ աշխարհի մասին:

Ի՞նչ է, աշխարհը իմ բո՞ւն եմ առել,  
Որ ճմբոթելով գրպանս խրեմ...

Ինչպե՞ս չհոգամ աշխարհի մասին.  
Եթե նա իմն է, ի՞մն է, իմ պեսի՞ն,  
Թե նրա վատը նաև իմ վատն է,  
Նրա հավատը և իմ հավատն է:  
Նա իմն է եղել և իմն է մնում.  
Նա էր մոր նման ինձ երեկ սնում,  
Նա է ինձ տվել քնքշանք ու գորով,  
Նա է ներշնչել ինձ ուժ ու կորով,  
Նա է ինձ ազնիվ-անաղնիվ դարձնում...  
Եվ հիմա ինչպե՞ս, ես ձեզ եմ հարցնում,  
Աշխարհի մասին ինչպե՞ս մոռանամ,  
Աշխարհի հոգսից ինչպե՞ս հեռանամ,  
Մայրը միշտ մայր է, որդիքն են տարբեր,  
Մեկը կարող է լինել անտարբեր,  
Մյուսի սրտից արյուն է կաթում,  
Երբ նա մոր դեմքին ցավ է նկատում...»

22. IV. 57

Մոսկա

## ՇԽՎԵԼ ԵՄ

Ես ծնվել եմ նրա համար,  
Որ մոր սրտում կարոտ գառնամ  
Եվ սպասվող որդու նման  
Հեռուներից վերադառնամ.

Ես ծնվել եմ նրա համար,  
Որ ցավածին մխիթարեմ.  
Ջահելների հարսանիքին  
Զեռքիս գինի զվարթ պարեմ.

Նորածընի բերնով ճշամ  
Ու մոր բերնով ասեմ «նանիկ».  
Տուն երազող զույգի համար  
Թառնամ սիրո համեստ տանիք.

Եթե շուրջըս խավար լինի՝  
Մարդկանց համար փայլատակեմ,  
Հասակով մեկ փովեմ գետին  
Վհատության ճամփան փակեմ...

5. V. 57

Մոսկա

## ՄԵՌՆԵԼ

Եթե մեռնե՞լ...

Թո՞ղ որ մեռնեմ.

Հաւոյ-կայծակից՝

Միանգամի՛ց,

Իի վայրկյանո՞ւմ,

Հանկարծակի՛,

Այնքա՞ն արդար,

Խղճիս ձայնին մի՛շտ ունկընդիր,

Որ՝ համաձայն բիբլիական հին լեզենդին՝

Հանգիստ անցնեմ և ասեղի նեղլիկ ծակից...

Եթե մեռնե՞լ...

Թող սպանվե՞մ,

Թող կարծանվե՞մ

Այնպես ապրած և բան արած,

Որ նորածին մանուկների տեսքով նորից

Վերածնվեմ՝

Իմ անունո՞վ կնքեն նրանց...

Եթե գամվել՝

Փարոսի՛ պես,

Արնաքամվել՝

Հերոսի՛ պես,

Ու քրքրվել՝

Դրոշի՛ պես...

Եթե մեռնե՞լ...

Բայց առայժմ ապրե՞լ է պետք:

26. v. 57

Մոռկա

## ԵՐԱԶՈՒՄ ԵՄ

Հասակս առած, խոհեմ դառած մարդ եմ արդեն,  
Բայց, արի տես, դեռ գցում եմ ինձ դեսուդեն...

Ինձ թվում է, թե դեռ պիտի քեզ փախցընեմ  
Ու հետս առած՝ դաշաղ դառած՝ քեզ թոցընեմ  
Անտակ ձորից, գարնանային զիժ գետակից,  
Եվ ինչ ուզես՝ գտնեմ անգամ քարի՛ տակից.  
Թե սոված ես՝

Կերակրեմ եղնիկների համեղ մսով,  
Թե ծարավ ես՝

Քեզ մոտենամ ցողով լեցուն ծաղկե թասով,  
Թե դրսում ես՝

Պալատ դառնամ հանկարծակի,  
Թե մրսում ես՝

Կրակ խլեմ և կայծակից,  
Խփված արջի ոսկերներից խարոյկ վառեմ,  
Խարույկի մոտ քո պաղ խոսքից իսկույն սառեմ,  
Սառցի մեջ էլ կրակ կտրեմ խոսքից քո ջերմ...

Բայց ես հիմա այն պատանի տղան հո՞ շեմ:  
Հասակս առած, խոհեմ դառած մարդ եմ արդեն,  
Բայց, արի տես, դեռ գցում եմ ինձ դեսուդեն,

Ինձ թվում է, թե դեռ պիտի մի օր աշխարհ զարմացընեմ.  
Հին ջովակի յոթ լարի մեջ մի ութերորդ լար մտցընեմ  
Ու նվազեմ:

Չնվագե՞մ, այլ սար ու քա՛ր լացացընեմ,  
Եթե ինչ-որ տեղդ է ցավում,  
Իսկույն բուժեմ՝ լոկ հայացքո՞վ...

Մի հինավուրց քարանձավույ,  
Աստված գիտի ինչ հրաշքով,  
Բոլոր մեռած լեզուներով գրքեր ճարեմ  
Եվ բոլորը... ե՛ս փերծանեմ...

Գնամ մտնեմ Վանա լճի խորքերն անտակ  
Եվ ի՞նչ — գտնեմ հին հայկական հաղար քանդակ...  
Մի օր հանկարծ ջղայնանամ ու վերցընեմ  
Մթնոլորտը մեկ այլ օդով թարմացընեմ...

Արեգակի, լուսնի լույսով պատեր ծեփեմ,  
Խարույկների հոսուն բոցից սարքեմ սեպեր,  
Դրեմ վեպե՞ր,  
Եվ ի՞նչ վեպեր...

Հասակս առած, խոհեմ դառած մարդ եմ արդեն,  
Բայց, արի տես, դեռ գցում եմ ինձ դեսուդեն...

Ինձ թվում է, թե դեռ պիտի  
Ես վերստին դառնամ շահել՝  
Իբրև հայտնի մարմնամարդիկ,  
Մրցանակներ անվերջ շահեմ.  
Թե դեռ պիտի շեմպիոն դառնամ ես շախմատի  
Եվ, համաձայն պատվիրանին սուրբ Մահմադի,  
Թերան շառնեմ օղու, գինու ոչ մի կաթիլ.  
Սխախոտով էլ շպիտի թունավորվեմ՝  
Իմ իսկ ձեռքով էլ շպիտի տնավերվեմ,  
Էլ շպիտի ուրիշներով տարվեմ — գերվեմ...  
Միայն պիտի մեկին սիրեմ, մեկից սիրվեմ...

Այս հմայիշ երազներից գեթ երկուսը կկատարվե՞ն:  
Ես կարող եմ պատասխանել այդ հարցի՞ն էլ.

— Միայն մեկը  
և — վերջինը...

## ԱՊՐԵԼ

Ապրե՞լ, ապրե՞լ, այնպե՞ս ապրել,  
Որ սուրբ հողը երբեք չզգա քո ավելորդ ժանրությունը:  
Ապրե՞լ, ապրե՞լ, այնպե՞ս ապրել,  
Որ դու ինքդ էլ երբեք չզգաս քո սեփական մանրությունը:  
Ու թե հանկարծ անպետքություն քեզ համարես,  
Թե ինքը քեզ արհամարհս  
ու համառես,  
քեզ հետ վիճի՛,  
քեզ չպիշի՛,  
Համբերատար քեզ հետ խոսի՛,  
Հակառակում քեզ համոզի  
ինքը... հզոր Հանրությունը...

Ապրե՞լ, ապրե՞լ, այնպե՞ս ապրել,  
Որ ուրիշի խինդով խնդաս,  
Որ ուրիշի ցնծությունով  
ինքդ էլ ցնծաս, ինքդ էլ թնդաս,

Իինես, մնաս ամենքի հետ,  
Նրանց կամքին հպատակվես,  
«Ես-ըդ խառնես մեծ ռմենք»-ի հետ,  
Նրանց ցավով լուռ տապակվես:

Տրվես նրանց լույսի նման  
Եվ չխարես՝ հույսի նման:  
Արշալույսի նման բացվես  
նրա՞նց համար,

Վերջալույսի նյան բացվես  
 նրա՞նց համար;  
 Թե լաց լինես՝ նրանց համար,  
 Թե բաց լինես՝ նրանց համար,  
 Եվ հա՞ց լինես նրանց համար՝  
 հոգեռ հա՞ց,  
 Քեզ նրանցով կյանքում զինես  
 Եվ նրանցով կյանքում լինես  
 ողերպա՞ծ:  
 Եվ նրանցով կյանքում լինես  
 թույլ կամ ուժեղ,  
 Եվ նրանցով կյանքում լինես  
 թույլ կամ մժեղ,  
 Թշվառ՝ ինչպես անապաստան,  
 Հարուստ՝ ինչպես լայն տափաստան...

Ապրե՞լ, ապրե՞լ, ապրել այնպէ՞ս,  
 Որ նրանց հետ մթնես — ամպես  
 Եվ նրանց հետ շանթարձակվես,  
 Մեկտեղ հանկարծ ընդարձակվես,  
 Մեկտեղ դառնաս գունդուկծիկ,  
 Մեկտեղ բացվես, մեկտեղ փակվես  
 Ինչպես նամակ և կամ բացիկ...

Ապրե՞լ, ապրե՞լ, ապրել մեկտեղ,  
 Կյանքդ խառնել նրանց կյանքին,  
 Տառապանքդ՝ տառապանքին,  
 Քանքդ՝ շանքին,  
 Ցանքդ՝ ցանքին,  
 Եվ ենթարկվել նթանց կամքին,  
 Նրանց կամքն էլ քեզ ենթարկել, —  
 Դառնալ և՛ շանթ, և՛ շանթարդել...

27. 7. 57  
 Մոսկվա

## ԵՐԳԵԼ

Ա՞խ, թե երգելիս  
 Ջրընզալ, ինչպես բահը շրտութի,  
 Ինչպես մանզազը ցորենի արտում,  
 Դղոդալ, ինչպես ջաղացի շրտուն,  
 Եվ լուել, ինչպես ստվերը շոգին:

Իսկ դուք լսե՞լ եք՝  
 Ինչպես է երգում քամին նեղ ձորում,  
 Մեղրի կաթիլը ինչպես է ծորում,  
 Ինչպես է խոտը կրծում ճագարը,  
 Ինչպես է լիզում հորթն աղաքարը,  
 Ինչպես է երգում կաքավն իր «կղա»-ն,  
 Ինչպես է երգում խաղացող տղան...

Դուք չե՞ք մտածել.  
 Կարծես էլլյան մի նոր քնար է  
 Սյունից-սյուն ձգվող հեռագրի լարը,  
 Ա՞խ, եթե գտնել  
 Այդպես երգելու դյուրին հնարը...  
 Ա՞խ, եթե երգով լալ այնպես, ինչպես ծառերը խեժով, —  
 արցունքո՞վ բուժող, —  
 Եվ սպիանալ, ինչպես ջրերը կանալ ջրմուռով, —  
 անցած մրմռո՞վ...  
 Երգել ջրի պես՝ մերթ գահավիժող,  
 Նեղլիկ քարափից բաց հովիտ խուժող՝  
 Անգիտակ իր իսկ ահեղ մռունչին,  
 Մերթ էլ փոխարկված տարտամ մրմռնչի

դանդաղ նեղվելով  
 ու ներս մղվելով  
 իրենի՛ց ծնված,  
 իրենո՛վ սնված  
 խարդախ սառուցից.—  
 երգիլ ջրի պես  
 Մերթ էսիկական մանրամասնությամբ,  
 ու մերթ թռուցիկ...

Իսկ եթե երգել  
 ինչպես ալիքը փոթորկված ծովո՞ւմ,  
 եվ նվազակցել,  
 ինչպես կաթիլը մութ քարանձավո՞ւմ:

Իսկ դուք լսե՞լ եք՝  
 լցված սափորից ի՞նչ նվազով է  
 պաղ ջուրը շռում.  
 Ի՞նչ անկրկնելի եղանակով է  
 թեյնիկը եռում...

Ա՞խ, եթե հնչել գովերգի նման՝  
 Երբ մանուկների բորիկ ոտներից թեկուզ պղտորված՝  
 Բարի առուն է գոհունակ ճողիում.  
 Ա՞խ, եթե հնչել եղերգի նման՝  
 Երբ սիրած կինը իր հանկարծ զոհված մարդուն է ողբում:  
 Ա՞խ, եթե երգել եղեգնի նման՝  
 Երբ վեր է կենում քունն առած քամին—  
 ցանկացած ժամին...

Իսկ թե տրորվել՝  
 ավագի՛ նման,  
 և ոչ թե վազի:  
 Իսկ թե օրորվել՝  
 օրորոցի՛ պես և ոչ թե պատի,  
 և այն ծոցի՛ պես,

որ ուռճանում է մայրական կաթից:  
 Եթե գալարվել՝  
 ոչ թե օձի՛ պես,  
 այլ շեկ բոցի՛ պես:  
 Եթե գալարվել՝  
 աղջըկա ճկուն իրանի նման:  
 Եթե խելառվել՝  
 ավելի լավ է անհաջող սիրուց:  
 Եթե ոլորվել՝  
 այն թելի նման,  
 որ շուշալվում է կախարդի կնոջ  
 վզի կոճակում:  
 Եթե գլորվել՝  
 այն լուրի նման,  
 որ գերված երկրին  
 սեփական բախտի տեր է հուակում:  
 Եթե մոլորվել՝  
 այն տուղտի նման,  
 որ կանաչում է ծառի փշակում...  
 Եթե ենթարկվել՝  
 ինչպես երակը արյան մղումին.  
 Եթե սղարկվել՝  
 աստղերից եկած պայծառ լույսի՛ պես,  
 Եթե քողարկվել՝  
 ապա հույսի՛ պես,  
 Եթե ընդգրկվել՝  
 զորասյունի մեջ, որ ստրկացած երկիր է փրկում  
 և ոչ թե մարդկանց լեզվից է զրկում:  
 Եթե վիճարկվել՝  
 վիճարկվել իրու խոր ճշմարտություն,  
 Ու եթե զարկվել՝  
 տաղնապի ժամին ահազանգի պես,  
 Ու եթե զրկվել՝  
 ապա սուտ փառքից, ոչ թե ամոթից.

Ու եթե Ակվել՝  
     բաժանման ցավից, ոչ թե թշնամուց.  
 Ու եթե լակվել՝  
     արհամարհանքից և ոչ թե վախից.  
 Ու եթե ծլկվել՝  
     ինչպես անձրեզ ճաքճըքած արտում.  
  
 Իսկ թե իմանալ՝  
     ինչպես արեք իր ծագման պահը.  
 Ու թե զարմանալ՝  
     ո՛չ թե լավ բանից, այլ միայն վատից.  
 Թե ընդարձանալ՝  
     որպեսզի նորից, կրկին թարժանալ.  
 Թե ընդդիմանալ՝  
     նաև անցողիկ հաջողությանը.  
 Ու թե դիմանալ՝  
     ապա դիմանալ  
     ժամանակների խիստ քննությանը...  
  
     Երգելու... մեռնել,  
 Ու եթե մի օր կասկած հարուցել,  
     Ապա բուրավետ այն հոտերի՝ պես,  
     Որ մի ժամանակ սուր են զգացվել,  
     Դրա համար էլ արդ չեն զգացվում.  
 Ու եթե մի օր դժվար հասկացվել՝  
     Ապա հինավորց այն տոտեմի՝ պես,  
     Որ մի ժամանակ լավ էր հասկացվում:  
     Ու եթե մաշվել՝  
     Ապա հետանվազ մի դանակի՝ պես.  
     Եթե ետ քաշվել՝  
     Հաղթանակ տարած մի բանակի՝ պես.  
     Եթե չհշվել՝  
     Չքնաղ լեզենդի հեղինակի՝ պես...  
     Ու եթե հիշվել՝  
     Ժողովրդական եղանակի՝ պես...

## ՄԻ ՊԱՀ ԶՂՋՈՒՄ ԵՄ

Ես օգնեցի բոլորին, ես ինձ միալն չօգնեցի,  
     Կորով տվի ամենքին, միայն ինքս հոգնեցի:  
  
 Խորհուրդներով իմ խելոք խելք հավաքած գնացին  
     Քանի՛-քանի՛ սը կյանքում — ես էլի գիծ մնացի:  
  
 Ով հանդիպեց՝ ստացավ մի թաս գինի ինձանից,  
     Լոկ ես գինի շըմպեցի իմ սեփական հնձանից:  
  
 Ի՞նչ եմ եղել ողջ կյանքում՝ հարսանքավոր ու քավոր,  
     Մինչ ամենքից ավելի ինձ էր օչախ հարկավոր:  
  
 Վստահեցին ոմանք ինձ — հոգիս գարձավ գաղտնաբան,  
     Վստահեցի շատերին — գաղտնիքս առան ու տարան:  
  
 Ու զզում եմ ես մի պահ. սեր ու բարիք եմ ցրել,  
     Մինչդեռ պետք էր սեր հայցել, իսկ բարիքը՝ վաճառել...  
 20. IV. 57  
Մոսկա

Գովերգում եմ այն երաշտը, որ մղում է ջրանցք շինել,  
Այն շրանցը, որ չինվում արյան գնով,  
Այն արյունը, որ թափվելիս զուր չի թափվում,  
Այն թափվելը, որ վերստին հավաքվելու հնար ունի,  
Այն հնարը, որ չի խարում,  
Այն խարելը, որ մղում է շեղած ճիշտը որոնելու,  
Որոնումը, որ ի վերջո չի հասցընում մոլորումի,  
Մոլորումը, որ ակամա վերջանում է մի նոր գյուտով...

... Եվ, վերջապես, գովերգում եմ գովերգումը:  
Թող բան լինի գովերգելու...

20, 25. 7. 57

Մակա

## ԳՈՎԵՐԳՈՒՄ ԵՄ

Գովերգում եմ այն խարույկը, որ բնավ չի մտահոգում,  
թե իր մահն է իր իսկ բացը:

Գովերգում եմ ես այն մորը,

որը

ձնում ե չի հոգում,  
թե ո՞ւր պիտի տեղափորի առանց այն էլ նեղ սենյակում  
նորածընի օրորոցը:

Գովերգում եմ ես այն օրը,

որը

գալիս

ու տալիս է,

ինչ երաղել — տենչացել են ձիգ տարիներ:

Գովերգում եմ ես այն նորը,

որը

ու որ չի հորինել...

Գովերգում եմ ես այն լավը,

Որ մեռնում է նրա մասին շցավելուց,

Եվ այն ցավը,

Որ ծնվում է շատ սիրելուց.

Եվ այն սերը, որ ո՞չ կույր է,

Ո՞չ էլ՝ զիտմամբ՝ ակնոցավոր.

Գովերգում եմ և այն լուսե գաղափարը,

Որ չի դառնում նեղ կաղապար.

Այն կասկածը, որ ծնվում է հեզնող ցավով,

Հետո դառնում մի անկասկած հշմարտություն

Ու բաց անում նոր ճանապարհ...

## ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒՄ ԵՄ

Հյուրասիրում եմ  
Զմռան վերջերին՝ խաղողի ճութով,  
Եթե չեք ճաշել՝ կաքավի ճուտով,  
Որին, հավատա, ևս չեմ սպանել  
Պատիվ եմ անում,  
Ո՞վ բաշ սպաներ,  
Չեզ՝ արձակուրդով,  
Մեր պատմաբանից՝ այնպիսի նյութով,  
Որ կնախանձեր և Հերոդոտը:

Թե հին տանձենին հյութի կարոտ է՝  
Հյուրասիրում եմ անարատ հյութով,

Թե աշխատանքից հողնել ես, խնդրե՛մ,  
Հյուրասիրում եմ կենարար ճութով:

Եթե փող չունես և առիթ չունես՝  
Չղիտես ինչպես ուրախացընես  
Կնոջդ սիրած,  
ի՞նչ է հարկավոր,  
Ինձ համար հեշտ է, խնդրե՛մ ի՞նչ կո որ՝  
Հյուրասիրում եմ բեղ... մարտի ութով:

Ով առանց այն էլ շատ է սպասել՝  
Հյուրասիրում եմ վերահաս «շուտ»-ով:  
Հյուրասիրում եմ արտերին սպուտով,  
Արտերին... վա՞յ, չէ՛... ծովին՝ կարկուտով,

Եվ ի՞նչ կարկուտով.  
Որ նա չհալվի՝ դառնա մարգարիտ,  
Եվ ողջը հասնի ծովի արքային՝  
Հողածին մարդուն...

Քեզ ի՞նչ տամ, ասա՛, խռոված բալիկ.  
Կուզես՝ պաղ ալիք,  
Կուզես՝ խաղալիք:

Չէ՛, հյուրասիրեմ ես քեզ խտուտով,  
Խսկ խոռվ զույգին՝ ձիտով-խտիտով,  
Լուակյաց ձորին՝

Երգող արտուտով,  
Հոգնած հնձվորին՝

արևամբւտով,

Ջրով՝ ծարավին,  
Սառած հյուսիսին՝ օղով հարավի,  
Պառավին՝

Երկար ու անվիշտ կյանքով,  
Կյանքին՝ խնդությամբ և ուրախությամբ,  
Ուրախությանը ոչ թե թուշքով,

այլ տեսպահամբ,  
Կախյալ լաւանյակին՝ սեփական լուսով,  
Կախյալ գաղութին՝ փրկվելու հույսով,  
Հույսին՝ կատարմամբ...  
Հյուրասիրում եմ

Անգավակ մարդուն՝ երազած որդով,  
Ով շունի և տոհմ՝ քառասուն պորտով,  
Փոքը աշխարհին՝ մեծ ժողովրդով,  
Ցորենի արտին՝ աննշան հարդով,  
Շալ դարձած բրդով՝

գառնուկին անծին,  
Առաջին վարդով՝

Ժամադրվածին,  
Զախորդ ձկնորսին՝ հաջողակ կարթով,  
Զախորդ որսորդին՝

լեցուն թակարդով,

Պառակ օրիորդին՝  
Հոյակապ՝ մարդով,  
Թունդ խաղամոլին՝  
Երկրի քարտեզով և ոչ թե քարտով.  
Այն բաղաձայնին,  
Որ զեթ մի անգամ երգել է ուզում՝  
ուժեղ կոկորդով.

Այն պառակ տատին, որ վերջին անգամ  
Կով է երազում՝  
Խորոտիկ հորթով.  
Այն կիրջ կրիային, որ գիտի իրեն  
Փշեր չեն սազում՝  
Չըարջի մորթով...

Հյուրասիրում եմ մի վերջին անգամ  
Գաղտնիք պահ տվող հուզված սրտերին  
Ինձ նման ձրի ու թանկ լոմբարդով,  
Իսկ գեղեցկուհուն՝ ինձ նման ճորտով,  
Ինձ նման Ճորտին՝ մի շոայլությամբ,  
Որ չունի և վերջ,  
Վերջին՝ սկիզբով,  
Սկզբին՝ հարմար շարունակությամբ,  
Որ ունի նաև... շափի զգացում:

Հյուրասիրում եմ ես ինձ էլ նույնով՝  
շափի զգացմամբ...

27. 7. 52  
Մոսկվա

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՄ

Օդում լավ ձե՞ռք է մնացել կախված՝  
սիրո՞վ կսեղմեմ.  
Անարատ մի սի՞րտ է զուր տեղը դաղված՝  
ցա՛վը կմեղմեմ.  
Սրբատաշ քա՞ր է լուս ընկած գետին՝  
կղնեմ պատի՛ն.  
Թե հալոցք է պետք՝ սառուց էլ լինեմ  
կդառնամ կաթիլ.  
Թե թանաք է պետք փրկարար գործին՝  
Ի՞նչ թանաք, կտամ արյո՛ւնըս անգամ.  
Թե նոր զո՞ւ է պետք ընդհանուր գործին՝  
Այդ ո՞ւմ եք փնտրում, ես արդեն հո կամ:

## Նաև ասում եմ.

Գերադասում եմ կրակից հեռու մի փոքր մրսել,  
Քան այրվել նրա մոտիկովյունից,  
Եվ Հրաժարվել հյուրասիրվելու սուր ցանկությունից,  
Քան դժվարությամբ կերածս մարսել...

## Հայտարարում եմ.

Միայն ընդհանուր հայտարարում են  
Ճշտվում — ճշգրտվում տրված թվերը,  
Թոփշքի մեջ են փորձվում թերը,  
Մարմնի ձեերը՝  
լոկ մերկանալիս,  
Անգին նվերը՝  
լոկ ստանալիս,

Լոկ ճուտ հանելիս՝

Թռչունի առողջ կամ լակ ձգնորդ,

Թռչուններն իրենք՝

Երբ սկսվում է նրանց շվելը...

Հայտարարում եմ,

Չե՞մ պրծնի երբեք կնոջ նազանքից,

Իսկ նազուտուզից հոգնել եմ վաղուց...

Չե՞մ ելնի երբեք խորունկ ակոսից,

Խորամանկ փոսից զզվել եմ վաղուց...

Չե՞մ հոգնի երբեք մարմնի մարդանքից,

Մտքի յարդանքից հոգնել եմ վաղուց...

Հայտարարում եմ,

Իմ փորձված մետրը երբեք չեմ փոխի  
անորոշ թիզով,

Փորձված բանշարն իսկ երբեք չեմ փոխի  
անծանօթ մսով։

Միջնադար ընկնեմ,

Թե բռնակալ է իմ շահնշահը՝  
չեմ դառնա վեղիր,

Ես նրա համար ոչ թե շրեղ գործ —

Չեմ դառնա անզամ և մաշված խսի՞ր...

Ապագա ընկնեմ՝

Եթե հանդիսեմ զայլ ու աղվեսի,  
տուգի և տղի,

Գործուղում կառնեմ, կվերադառնամ

Քսաներորդի այս ժանոթ կեսին...

Հայտարարում եմ, օ ո՞ւ, խնդրում եմ.

— Գործուղում տվեք ապագա զնամ...

29. Տ. 57

Սասկը

## ԱՏՈՒՄ ԵՄ

Ատում եմ ձյունը՝

Թե նա տեղում է ամառվա կեսին,  
Եվ մահն եմ ատում՝

Թե հյուր է գալիս աղջրկատեսին,  
Մահից ոչ պակաս՝

Եվ այն բողարկված մենատընտեսին,—  
Նրան ու նրանց.

Ովքեր ուրիշի շեն տունն են բանդում՝

Իրենց պետք եկած գերանի համար,

Ովքեր ուրիշի ծառերն են ջարդում՝

Մի բուռ շնասած ծիրանի համար,

Ովքեր համայնքի ծովից են խոսում,

Բայց գեպի իրենց լհակն են հոսում...

Ատում եմ նաև այն խելոք սուսիկ-փուսիկությունը,

Արտեղ դժվար է տարբերել անզամ երեսն աստաղից,  
Եվ այն հարկադիր, ոչ թե ի ձնե կուգիկությունը,

Որ ստացվում է... ցած առաստաղից:

Ատում եմ նաև այն նեղ կոշիկը,

Որ աքցանի պես ոտքերդ է բռնում,

Իսկ հոգուդ վրա կոշտուկ է դառնում...

Այն գործն եմ առում,

Որ ոչ թե գործ է, այլ ժանըր հանցանը,

Այն փորձն եմ առում,

Որ մարդկանց գլխին դառնում է փորձանը,  
 Ա'յն դավանանքը,  
 Որ վերջ ի վերջո փոխվում է դավի,  
 Գլխացավանքը,  
 Որ փոխարկվում է սուր գլխացավի...

Խավարն եմ ատում, եթե խավարում  
 Ա'լ միտք է ծնվում, և ո'չ էլ զավակ:  
 Եվ լույսն եմ ատում, թեկուզն պայծառ,  
 Թե չի հանդուրժում մինչև իսկ շվաք...

Ինչ խոսքեր ասեմ այն ձեռադրին,  
 Որ չի հասկացվում, բայց կարդացվում է,  
 Ատե՞մ, թե խղճամ այն տարեգրին,  
 Որ նյութ է սարքում,  
 Ոչ թե հավաքում:

Կղճա՞մ, թե ատեմ այն տարագրին,  
 Որ միշտ ապրում է... իր հայրենիքում...  
 Փո՞ւհ, ինչքա՞ն բան կա կյանքում ատելի, —  
 Ես շգիտեի...

25-26. Վ. 57

Մոսկվա

## ԶԵՄ ՀԱՐԳՈՒՄ

Մինչ տարին ունի տասներկու ամիս ու չորս եղանակ,  
 Տասներկու անգամ սա եղանակ է մի օրում փոխում:  
 Եթե դուք պետք եք և, դիցուք, նույնիսկ հաշիշ էք ծխում,  
 Նա էլ է ծխում, որպեսզի հանկարծ... դուք չնեղանաք:  
 Ի՞նչ էլ նվագեն՝ նա է պարողը,  
 Ի՞նչ էլ կարել տան՝ նա է կարողը,  
 Ո՞ր ծառն էլ ցույց տան՝ նա է քարողը:  
 Հարգո՞ւմ եք նրան:

Իսկ հապա սրա՞ն,  
 Որ ասես լինի առածի պարան.  
 Հապա փո՞րձ արա ու ցա՞խ դիր վրան...

Չեմ հարգում շանն էլ, որին շար տերը  
 Անտեղի տեղը որքան ծեծում է,  
 Սյնքան նա լիզում տիրոջ ոտերը՝  
 Իրեն տրորո՞ղ-շարդո՞ղ ոտերը,  
 Եվ կծելու տեղ լոկ կաղկանձում է...

Եկեք միասին շհարգենք նրա՞նց,  
 Ովքեր սերտում են և ոչ թե դատում,  
 Ճառո՞ւմ են — բնավ չե՞ն կշոադատում,  
 Ովքեր չեն ջոկում ո'չ թացը շորից,  
 Ո'չ էլ տարբերում անդունդը ձորից,  
 Ովքեր գրածի տառն են ընթերցում,  
 Ովքեր քնածին մեռած են կարծում,

**Ավքեր կարծում են**

Սուխը՝ հըրաբուխ,  
իսկ լացը՝ հարբուխ...

Զեմ հարզում նաև ա'յն նորությունը,  
Ավ վաղեմության նոր տարբերակն է,  
Ա'յն շորությունը,  
Որ չի տարբերվում անգթությունից,  
Անհուն թվացող ա'յն խորությունը,  
Որտեղ աճում է եղեգն ու ջրմուռ,  
Եվ հիմարավուն ա'յն բարությունը,  
Որ մոռանում է կսկիծ ու մրմուռ...

Հարզած չունենամ ա'յն ծերությունն էլ,  
Որ իմաստնության նույնիսկ բո՞ւյր չունի  
Հարզած չունենամ ա'յն ծռությունն էլ,  
Որ Սասնա ծոփից մի նշո՞ւյլ չունի,  
Եվ հնարավոր ա'յն հարությունը,  
Որ ավարտվում է լոկ... համբարձումո՞վ,  
Ու թե մարդկանց մեջ վերադարձումով...

Ե՛վս մի անգամ չհարզեմ նրանց,  
Ավքեր մտնում են հոտած զաղց անկյուն,  
Երբ կարող էին թարմ օդում մնալ,  
Թեկուզն այնտեղ մի փոքրը մրսել

(Սյոտեղ եմ հասել

Երբեմըն ես է՛լ)...

Ավքեր մթնում են,

Երբ կարող էին միշտ մնալ լուսեն,  
(Ինձ էլ երբեմըն խավարն է գրկում)...

Ովքեր վատնում են

Իրենց ուժերը փսփըսութի մնջ,

Մինչ կարող էին բարձրածայն խոսել  
(Երբեմըն նաև ես ի՞նձ չեմ հարզում)...

Երբեմըն նաև ես ի՞նձ չեմ հարզում...

25, 27. 7. 57

Մասկա

## ՎԻՃՈՒՄ ԵՄ

Ես վիճում եմ,  
մե՛կ է՛ ո՛ւմ հետ,  
ինքս ի՞նձ հետ,  
Թե՞ ուրիշի,  
իսկ դու մի պահ ակա՞նչ արա  
Ու լա՞վ հիշիր:

Ես վիճում եմ և ասողերից լավերի՛ հետ,  
Եթե նրանք տալիս են մեզ աղո՞տ մի լույս  
Բայց ո՛չ կրակ...

Ես վիճում եմ կանաչների ծովերի՛ հետ,  
Եթե նրանք դաշտում փտում,  
Բայց չեն մտնում  
Ո՛չ մի մարագ:

Ես վիճում եմ զավակի հետ,  
Ա'յն զավակի,  
Որ իր մորը փող է տալիս դատարանով...

Ես վիճում եմ ավագի հետ,  
Ա'յն ավագի,  
Որ կրտսերից ինքը պիտի խելք հավաքի,  
Մինչդեռ նրան իր ետևից  
Քարշ է տալիս հաստ պարանով...

Ես վիճում եմ շվաքի հետ,  
Ա'յն շվաքի,  
Որ արմից թունդ է վասում:

Ես վիճում եմ նվագի հետ,  
Այն նվագի,  
Որ բոլորին զզվացըրել  
Բայց և այնպես չի դադարում...

Պիտի վիճեմ  
Եվ երգի՝ դեմ,  
Թե բռնի են երգել տալիս խեղճ երգողին.  
Եվ բերքի՝ դեմ,  
Թե չի սնում բերք ու բարիք հավաքողին.  
Եվ վերքի՝ դեմ,  
Թե չի բուժվում, այլ վարակում,  
Եվ ներկի՝ դեմ,  
Թե ծածկում է, չի՝ նորոգում...

Ես չվիճեմ  
Այն կրքի դեմ,  
Որ չի ծնում մի նոր որդի,  
Այլ պարզապես զուր վատնում է.  
Այն գրկի դեմ՝ հուղայական,  
Որ մատնում է...

Ասե՛ք, ինչպե՞ս դեմ շխոսեմ  
Այն պիտակին,  
Որ չի սաղում, բայց կպշում է և չի պոկվում.  
Այն շիտակին,  
Որ դիմակներ փոխելով է մտահոգվում.  
Այն դիտակին,  
Որ քնած է,  
Այն կտակին,  
Որ գնված է...

Նորի՛ց վիճեմ՝  
այն բախտի հետ,  
Որ գալիս է, գալը բարի՛,  
Սակայն ո՞ւր է առ տեղն է պարապ:

Նորի՛ց վիճեմ՝  
այն թխպի հետ,  
Որ կուտակվում բոլոր տարին,  
Բայց չի դառնում տեղատարափ...

Վիճեմ նաև այն մութի դեմ,  
Որ կուրացնո՞ւմ — աշք չի շոյում, —  
Մինա՞ծ վիճեմ,  
Այն բութի դեմ,  
Որ կարծում է՝ շեշտ է դարձել, —  
Շեշտվա՞ծ վիճեմ.  
Այն կուտի դեմ,  
Որ ցորեն էր մի ժամանակ,  
Մրսո՞ւ ցորեն, —  
Վիճեմ լացո՞վ.  
Այն ճութի դեմ,  
Որ չի ուտվում,  
Ոչ էլ դառնում արդար գինի, —  
Հարբա՞ծ վիճեմ.  
Այն փուտի դեմ,  
Որ ինքն իրեն սերտ է կարծում, —  
Իզո՞ւր վիճեմ.  
Այն տուտի դեմ,  
Որ տո՞ւտ չունի՝  
Որ անծայր է այս վեճի՛ պես, —  
Վիճեմ անվե՞րջ...

Վիճեմ նաև այն վեճի դեմ,  
Որի բերած օգո՞ւտն է շատ, թե՝ վնասը՝  
Ես չգիտե՞մ...

20. 26. 7. 57  
Մոռկըա

## ՍԱՐՍՈՒԹ ԵՄ

### Սարսուռում եմ

Հալվող-հալվող քո հպումից

Ու պաղ քամուց,

Եվ այն մտքից,

Թե կարող եմ քեզ կորցընել...

### Թրթըռում եմ

Բաց աշքերով խարխափումից,

Փակ թշնամուց

Եվ այն մտքից,

Որ կարող եմ շատ շոյելուց

Թոշնակի պես քեզ մեռցընել...

### Դողդողում եմ

Որդո՞ւս վրա,

Եվ քո սիրո՞ւ,

Բախտի՞ վրա իմ տարագիր ժաղովըրդի...

### Թփըրտում եմ

Սրտի՞ նման...

10. IX. 57

14. XI. 57

Մոսկվա

## ՀԻԱՆՈՒՄ—ՀՐՃՎՈՒՄ ԵՄ

### Ես հիանում — հրճվում եմ՝

Ե՛վ քուն մտած քարափով,

Ե՛վ արթնացնող տարափով,

Մանուկների և խաղով,

Ե՛վ կրկրան ծիծաղով,

Որից նրանք ո՛չ հոգնում,

Ո՛չ կարող են հաղենալ:

### Ես հիանում — հրճվում եմ՝

Մինչև անգամ և անհամբույր մետաղով,

Եթե արդեն առյուծ կրտրած՝

Հալոցքի մեջ շեկ է նա,

Բայց և գիտես, մեկ է, նա

Այս-այս պիսի՞ կատու դարձած՝ լուս հոսի,

Դառնա կալսիլ,

Տպագրիչ մեքենա,

Ինչպես նաև շրանշան հերոսի,

Նույնպես կնոջ ու հարսի

Կրրու վզնոց,

Փառավորվող լանջափակ,

Խանդոտ գոտու փակ ճարմանդ...

### Ես հիանում — հրճվում եմ՝

Տարբեր վարքի

Ու բարքի տեր գետերի

Խելացնոր ու մարմանդ,

Լուրջ ու կայտառ հոսանքով՝

Ինչպես կանանց ոտերի  
Կտկտացող նազանքով,  
Որոնց հետքը փոշեթաթավ մայթերին  
Շատ է նման ծանոթ կախման կետերի...»

Ես հիանում — հրճվում եմ՝  
Երկինք մաքրող որոտով,  
Գառնուկների նոր հոտով  
Կարկատանված արոտով,  
Մինչև անգամ և սերմնաթափ առէջբով —  
Միայն՝ տակը հող լինի,  
Մինչև անգամ նաև լվի թոփլքով —  
Միայն՝ թռի՛չք թող լինի...»

Թե չեք հաշվի անհամեստ  
Ու չեք գտնի անհարմար՝  
Ինքըս ինձնից անշատվում  
Ու հրճվում եմ մի քիչ նաև ինձանով՝  
Երբ որ ինքըս ինձանից  
Հոտն եմ առնում ինքնայրման,՝  
Սուրբ քրտինքի՛,  
Եռեփ եկող հնձանի՛...»

27. V. 57  
23. XI. 57  
Մոսկվա

## ԵՆԹԱՂՐՈՒՄ ԵՄ

Ես կարող եմ ենթադրել,  
Թե այս ջուրը ոչ թե պղտոր, այլ վճիտ է:  
Ես կարող եմ ենթադրել,  
Թե հոյակապ ապարանք է այս իրձիթը:

Ես կարող եմ ենթադրել,  
Թե այս ծուխը

Գոլորշացող քարածուխ է,

Եվ այս կարմիր ճոթը բարակ  
Ոչ թե լաթ է, այլ բոց-կրակ...»

Ես կարող եմ ենթադրել, թե ինձ մոտ ես,  
Թեպես և մեզ սար ու ձորեր են անշատում:  
Ես կարող եմ ենթադրել,  
Թե դու համեստ-ամաչկոտ ես,  
Մինչդեռ իրոք՝  
Ինձ պարզապես չե՞ս նկատում...

Ես կարող եմ ենթադրել,

Թե այս քունը արթնություն է,

Եվ այն ծանըր պարտությունը

Չտեսնըված հաղթություն է.

Թե այս տանձը... մեծ սափոր է,

Եվ հանդես է այս... թափորը.

Թե այս լեռը... մի շուր տրված հոկա փոս է

Եվ մի փոքրիկ ինքնահոս է

Իմ այն մատը,

Որ կոշվում է, կարծես, ճկույթ...

Ես կարող եմ ենթադրել,

Բայց ի՞նչ օգուտ...

25. V. 57

Մոսկվա

Ինչի՞ համար,  
Էլի՞ պատը կմնա պատ,  
Կողակասի մի լավ ճակատ:

## ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՄ

Խոստանում եմ  
Լինել ո՛չ թե հարկհավաքը,  
Այլ զավա՞կը  
Դժվար դարի,  
Ինչպես նրան՝ և ինքըս ինձ  
Հավի՞տ մնալ հավատարիմ.—  
Թեկուզ կրել և մահացու ցավը դարի,  
Թեկուզ նույնիսկ կյանք արժենա դավը դարի,  
Մեռնելիս էլ ո՛չ թե տանել,  
Այլ կտակե՞լ լավը դարի.  
Լինել բոցը նրա հրի,  
Բերը հասցընող նրա սոթը,  
Ո՛չ թե նրա անցնող բամին ու մոխիրը.  
Լինել նրա ո՛չ չորացած,  
Ո՛չ էլ անգամ կանաչ խոտը,  
Որով սնվում,  
Որին նաև կոխկըրտում է հոծ նախիրը,  
Լինել նրա բույրը, հո՞տը,  
Հոտը,  
որին  
Ո՛չ մի սմբակ,  
Ո՛չ մի կձղակ  
Կամենա էլ չի՞ տրորի...

Խոստանում եմ  
Բաց ճակատով զուր շխփվել հաստ պատերին:

Խոստանում եմ  
Գրաբրանալ ու չքայլել ձիգ տարիներ  
Իմ ոտերի  
Խեղճ թաթերին,  
Ինչի՞ համար,  
Այն, որ չկա՞  
Չի՞ երեա...:

Համաձայն եմ, որ սագերը նկատելի  
Ինչոր բանով ազդակից են և բաղերին:  
Բայց սազը՝ սաղ,  
Բաղը բաղ է:  
Ինչո՞ւ խփվել պատեպատ էլ.  
Մի՞թե աչքի արձակուրդ է  
Կամ ուղեղի հանգստյան օր...

Լավ չէ՞ արդյոք ապաստանել հին լաթերին,  
Քան նորաձեւ հագուստ կոշված այն անտերին,  
Երբ որ մարդուն բարձրահասակ  
Հագցընում են մանկան թասակ,  
Մի համառոտ անդրավարտիկ,  
Քաղվածքի պես նեղ է գալիս և շապիկը,—  
Այշ շան որդիք,  
Մա՞րդ ենք կոշվում,  
Թի՞ կապիկ ենք...

Կարդ ու կանոն պահպանելու մտքից մղված՝  
Ընդդեմ գոռող-անկարգապահ անհատների՝  
Չե՞մ ստիպի ճնճղուկներին ու ծտերին  
Աշնան վերջին շվել հարավ,—

էհ, ի՞նչ դառավ.  
Միտք ես եմ՝ չեմ կամենում...

Նաև պիտի ձեզ խոստանամ  
Երբեք հոգով, ձեռքի նման, շկոշտանալ.  
Թե շատ թանկ եմ ու շատ դժվար՝  
Չէժանանալ ու հեշտանալ.  
Խարվածության խումից հետո  
Ինչպես պետք է զգաստանալ  
Ու դրանից շվշտանալ.  
Չխստանալ հնազանդի, խոնարհի դեմ.  
Հանգստանալ,  
Բայց ոչ երբեք այլոց մեջքին.  
Ճամփա՛ բանալ  
Եվ հույսի դո՛ւռ,  
Դավադրությո՛ւն  
Ու փակ աշքե՛ր.  
Տքնել-շանալ՝  
Ո՛չ թե փողով կամ պատվերով,  
Այլ ակամա ինքն իրենից անջատվելով՝  
Ինչպես հրից շերմությունը...

Ի՞նչ խոստանամ,  
Եթե լեռ եմ՝ դա՛շտ շեմ դառնա,  
Ոխերիմ եմ՝ հա՛շտ շեմ դառնա,  
Թե սրբության ավագան եմ՝  
Ի՞նչ լվացքի — և խմորի՝ տաշտ շեմ դառնա...

Չեմ խոստանում,  
Որովհետեւ համոզված եմ, հաստա՛տ գիտեմ,  
Որ երբեք կոխ շեմ բռնի կամ շեմ պարի  
Ուրիշների դեռ նոր թաղած  
Կամ լքաղած  
Մարգերի մեջ ու բոստանում...

Չեմ խոստանում,  
Որովհետեւ համոզված եմ, հաստա՛տ գիտեմ,  
Որ ինձ նման մարդը երթեք  
Զի զրպարտում — ամբաստանում  
Անմեղ տեղը և ո՛չ մեկին,  
Մինչև անգամ... մարդանման գինու տկի՞ն...

Թայց, ա՞յ, խնդրե՛մ.  
Խոստանում եմ պարապ մնալ  
Եվ կամ տրվել խաղ ու պարի,  
Քան թե դառնալ ագիտատոր  
Վնասակար գաղափարի:

Խոստանում եմ զրկվել նաև  
Սուրբ անունից ուղղափառի,  
Քան թե կորցնել ոտքերիս տակ  
Մարդկայնության հողը բարի:

Եթե անգամ դառնալ թռչուն՝  
Բուի՛ նման, շղչիկի՛ պես  
Ապրել թեկուզ մթին որջում,  
Քան թե դառնալ սիրված... թութակ:

Ո՛չ մեղ դրեք,  
Ո՛չ համարեք հիմար կատակ.  
Որովհետեւ շա՛տ են խարել միամիտիս  
(Լավերն անգամ վատացել են),  
Որովհետեւ երկրի վրա  
Դրամանենգ մարդիկ այնքա՞ն շատացել են՝  
Ստիպված եմ ոսկին փորձել,  
Առամերո՛վ ոսկին կրծել,  
Նույնիսկ ոսկի՞ն,  
Էլ ո՞ւր մնաց թե հավատամ  
Գեռ ոսկու տեղ ծախվող խոսրին...

Հանդիսավոր խոսք եմ տալիս  
Քեզ ուրաղե՞լ  
Ու կացինե՞լ,

Տմարդությո՞ւն,  
Իսկ քեզանով, ճշմարտությո՞ւն,  
Իսկ քեզանով սի՞րտ վարակել,  
Անձրև ու չուր թե բարակեն՝  
Եվ իմ արյամբը քեզ ոռոգել —  
Վերստեղծել ու նորոգել...

Խոստանում եմ  
Ոմանց նման իզուր տեղը շխոստանալ...

20-21. VI. 57

Մասկա

## ԿԱՐԴՈՒՄ ԵՄ

Ես կարդում եմ և... հասկանում:  
Որ թեպետ և ինձ հերոսի տեղ եմ գնաւմ,  
Թայց շատ հաճախ նրա ճամփից շեղ եմ գնաւմ,  
Նա խիզախ է, իսկ ես՝ զգույշ,  
Նա գործում է, ես՝ լոկ զգում,  
Նա կարող է, թե տեղը գա,  
Եվ զո՞հ գնալ, անվախ մեռնե՞լ  
Իսկ ես՝ նրան... լա՞վ ըմբռնել,  
Թայց ո՛չ նրա ճամփան բռնել...

Հեշտ է, զուցե, գրքեր գրե՞լ՝ ո՛չ թե կարգական

17. VI. 57

Մասկա

## ԾԱԽՈՒՄ-ԱՌՆՈՒՄ-ԲԱՇԽՈՒՄ ԵՄ

**Թե** ավելորդ գորով ունեք՝

Տարեք շուկա՝.

**Ես** ծախո՞ղ եմ, ո՞չ թե առնող:

**Թե** ավելորդ կորով ունեք՝

Ես կամ ու կամ,

**Էլ** ինձնից էլ լավ ձեռք բռնո՞ղ:

**Խե՞լք** եք ծախում՝

Առնողը չեմ,

**Թե** գինն անգամ զրի գին է, —

Հաջողության համն եմ անգամ ևս մոռացել:

Ահա թե ի՞նչ:

**Ելք** չե՞ք ծախում՝

Հազա՞ր ափսոս,

**Թե** չէ մուտքը իմ կողքին է,

Չի պահանջվում և մուտքի տոմս —

**Քիչ** է մնում քաշեն թերց:

**Ինչի՞ն** է պետք և ձեր երգը,

Առնող ճարեք՝ ինքըս ծախեմ:

Դահլիճ լինի կամ լսարան՝

Այդ ուրիշ բան,

Կառնեմ ե՞ս էլ:

Ինչի՞ն է պետք ձեր տարերքը,  
Փոխող բերեք՝ ինքըս փոխեմ:  
Հանգի՞ստ փոխեմ իմ տարերքի գոնե կեսը:

Ո՞վ է այնտեղ համարյա թե ձրի ծախում նահանջ, Ունե՞մ:  
Ինձ հարձակման թափ էլ պետք չէ, —  
Ճարպը կության պահանջ ունեմ...

Ո՞վ է այնտեղ ներկեր ծախում, —  
Ներկարա՞ր եմ ու նախշո՞ւմ եմ...

... Եվ շատ բաներ,  
Որ շեն ծախվում ու շեն առնում,  
Ես բաշխո՞ւմ եմ:

Ես բաշխում եմ ազնը վության անցագորեք,  
Սակայն ո՞չ թե «մի անգամ վա»,  
Այլ «մշտական»՝ միանգամայն:

Ես բաշխում եմ հանդգնությո՞ն,  
Ո՞չ ճգնություն  
Անզորության փակ շրջանում,  
Եվ ո՞չ մտքի մթագնություն,  
Այլ տքնությո՞ն,  
Որ թոհշով է վերջանում:

Գութ ու խղճից զրկվածներին՝  
Մինչեւ անգամ ո՞չ խղճի խայթ,  
Ողորմաբար խի՞ղճ եմ տալիս.

Ո՞չ թե գեմքի ծամածը ունք,  
Այլ օգնություն աղերսելու ճիշ եմ տալիս՝  
Ցավածներին,  
Զոհվածներին,  
Ծլարձակում՝

Բովածներին,  
 Անդավաճան ընկերություն՝  
 դավածներին՝  
 Բարի գալուստ՝  
 շվածներին...

Համակրություն է հարկավոր բարի զործին,  
 Եվ մաքրություն է հարկավոր միտք ու հոգու. —  
 Թեկուզ մտքո՞վ, նույնիսկ հոգա՛վ լոկ կամեցեք  
 Եվ... մի՛ բաշվեք-կարկամեցեք,

Մո՞տ համեցեք...  
 Ես ծախում եմ, նաև առնում  
 Եվ, նույս ունեմ, ինձ չեք խառնում  
 Չարաշահող շարշիներին,  
 Թե լէ, գիտե՞ք, ո՞չ թե աստված,  
 Չարշինե՞րն էլ ձեզ չեն ների...

4-5. VI. 57

**Մասկա**

### ԳԺՎՈՒՄ ԵՄ

Եվ ինձ լսելով՝  
 Կարող են ասել.  
 «Գժվե՞լ է, ի՞նչ է»:  
 Իսկ ես էլ կասիմ.  
 «Այո՛, գժվե՞լ եմ,  
 Ինչո՞ւ չգժվել»:

Իսկ գժվելով չե՞ն սիրում ու ատում,  
 Իսկ գժվելուց չե՞ փայտը ճարճատում:  
 Առանց գժվելու՝ չկա՛ շահած մարտ:  
 Առանց գժվելու՝ չե՞ն ծնի նոր մարդ:  
 Մինչեւ շգժի՞ ջուրը չի՛ եռա,  
 Կե՞զե չի պատոի հատիկը նոան:  
 Մառե՞րն են փթթում՝  
 Գժվա՞ծ են անշուշտ:  
 Երկի՞րն է պատում՝  
 Գժվա՞ծ է անշուշտ...

Սերմերը մինչեւ կարգին չգժվեն՝  
 Բն' ոք չեն դառնալու:  
 Թաթերը մինչեւ կարգին չգժվեն՝  
 Զե՛ոք չեն դառնալու:

Բառերն էլ մինչեւ կարգին չգժվեն՝  
 Ե՛րգ չեն դառնալու...

Ա՛խ, ուր էր թե ես միշտ գի՛ծ լինեի...

1. Է. 61  
Երևան

## ԴԻՄՈՒՄ ԵՄ ՊԱՀԱՆՁԵԼՈՒ ՊԵՍ

Դո՛ւ, որ գալիս ես մեր մանուկների արդար պահանջով,  
իբրև պատասխան նրանց սրսրգիուն ակնկալիքի.  
Դո՛ւ, որ գալիս ես մրսկան արտերի դողդոշուն կանչով.  
իբրև պատասխան նրանց կարիքի.  
Դո՛ւ, որ ոսները իճողել ես դեռ անցյալի ցանցով,  
Մինչդեռ ձեռքերը մեկնել ես արդեն կանչող գալիքին,—  
Արի՛, նո՞ր Տարի,  
Գալուստը բարի՛,

Արի՛, նո՞ր Տարի,  
Բայց... այնպե՛ս արի,  
Որ ատոմական այս ահեղ զարի  
Գոռ ժամացույցը ինքն իրեն լարի  
Մայրացած հարսի սրտատրոփի համաշափությամբ,  
Եվ նրա անտես սլաքները զույգ  
Իրենց վիրավոր թևաթափությամբ  
Ոչ թե յեզ կրկին  
Քարանձավների անաշ խոռոշը մատնացույց անեն,  
Այլ Տիեզերքի անկոխ դաշտերին  
Մեր զույգ աշքերի հայացքը տանեն...

Արի՛, նո՞ր Տարի,  
Բայց... այնպե՛ս արի,  
Որ ավելանա աշխարհի բարին,  
Եվ այդ աշխարհի բախտի վրայով  
Խեռնեն ձգված մետաղալարին  
Լարախաղցի ծպտըված տեսրով Զա՛ռը շպարի՛  
Ողջ մարդկությանը դնելով ծանոթ ծաղրածուի տեղի...

Ջյունն է վար իշնում  
Ու ծածկում մայթեր, ծառեր ու թիթեղ,  
Իսկ ուրիշ մի տեղ  
Անձրկն է կրկին  
Երկինք ու երկիր մեկմեկու հինում,  
Կարծես թե հակա տավիդ է շինում,  
Որի հոսանուտ լարերի վրա  
Իրիկնամուտի տավղահար քամին  
Մրսած մատներով  
Պիտի նվագի հինավուրց տաղեր՝  
Ի վերա սիրո,  
Վասն խնդության,  
Վասն մարդկային ոգու խենթության,  
Անձրկի տեսքով,  
Ջյան կերպարանքով  
Այդ գու ես գալիս:  
Արի՛, նո՞ր Տարի,  
Գալուստդ բարի՛:  
Բայց... այնպե՛ս արի,  
Որ անձրեր հորդ սրբելով տանի  
Ոչ միայն կեղտը հոգնած մայթերի,  
Այլ նաև փոշին ու մուրը հոգու,  
Այլև խավար խոհ ու խարդախ խոկում,  
Եվ ձյունը իշնի որոգայթների՛,  
Մանըր ամօթից շիկնած այտերի՛,  
Աւրացումներից դիղնած-ժանգուտած սրտերի՛ վրա  
Եվ իր այդ ճերմակ բարությամբ շուայլ  
Մարդուն մարդու դեմ պարզերե՛ս անի...»

Արի՛, նո՞ր Տարի,  
Բայց այսպե՛ս արի,  
Եվ ոչ թե այնպե՛ս, որ ձյունը ճերմակ  
Թառնա վարակի սավան ու վերմակ,  
Եվ որ անձրկի շուրն աստվածածին  
Մարդու արյունը զրի վերածի,  
Ու ճառագայթը, ճառագայթն անբիծ

Մկրտչի իբրև մի ահեղ ու պիղծ  
Նոր հիվանդության գիվային անռւն,  
Որից մինչեւ իսկ մահն է մահանում...

Արի՝, նո՞ր Տարի,  
Գալուստ բարի՝,  
Եվ արթնացը քո թնդուն քայլուկ  
Ուշ մնացածին,  
Քնով տարվածին.

Տո՞ւր ապաքինում հոգով ցավածին,  
Հիասթափածին՝ նոր մի հիացում,  
Սիրասթափածին՝ մի նոր միացում.  
Չեռից հավատը փախուստ տվածին,  
Իբրև նոր Տարվա բաղձալի նվեր,  
Տո՞ւր նոր հավատի կապակուն թեր,  
Մանկանը՝ մեծի մտքի լիացում,  
Մեծին՝ մանուկի անարատություն,  
Տափարակներին՝ Արարատություն,  
Իսկ երկրագնդին՝ մի առատություն,  
Որ նրա վրա Քաղցը այսուհետ  
Չունենա ո՞չ մի կայսրություն ու գաճ,  
Ու Սարսափն իրեն թագակիր չզգա.

Որ Աղատությունն իր բառե գունեղ շապիկը ճեղքած  
Տրվի ճախրանքի,  
Ու Մարդն աղատվի իր հին գերության նոր հաճախանքից,  
Ու Մարդն այսուհետ ո՞չ մի տեղ երբեք չգունավորվի.  
Եվ որ այլեւս ո՞չ մի ժողովուրդ,  
Ո՞չ մի աղջ ու ցեղ  
Պատմության բափից ու սև մրուցից շթունավորվի,  
Դառնա լիազո՞ր, զառնա լիիրա՞վ,—  
Ու մենք, վերջապե՞ս, հասկանա՞նք իրար,  
Ամենքըս, բա՞վ է, հասկանա՞նք իրար,  
Նաև հասկանա՞նք,  
Որ մեր իսկ արյան գնդիկը մանրը  
Այս երկիր կոշված զնդից ավելի ճեծ է ոչ ծանը...

5. 1. 63

Երեան

402

## ԱՐԴԱՐԱՑՆՈՒՄ ԵՄ

Արդարացնում եմ  
Այս երկինք կոշված հրա՛շք սիրունի,  
Հրա՛շք սիրունի  
Հիմար թվացող անտերությունը  
Եվ ա՛յն,  
Որ աստղե իր խալերի հետ  
Նա դեմքը ծածկող սև ամպեր ունի:

Արդարացնում եմ  
Եվ անծիր ծովի ա՛յն թերությունը,  
Որ... ափեր ունի:

20. VI. 52.

20. XI. 52.

Մասկա

## ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ

Հաճախ տիրում եմ,  
Երբ մարդկայնորեն սիրուս դերում են:

Հաճախ լռում եմ,  
Երբ ձիշտ ասածըս դիտմամբ ծռում են:

Նաև խղճում եմ,  
Եթե զղջում են:

Հիասթափվում եմ,  
Եթե խարվում եմ:

Նաև ստում եմ,  
Եթե ստում են:

Բայց այնից խոր  
Ես հավատո՞ւմ եմ:

Ո՛չ միայն գիտեմ,  
Ես հավատո՞ւմ եմ  
Երկնի բացխուփիկ քողարկությանը,  
Օվկիանոսների հավերժ կրկնվող խաղարկությանը,  
Հավը ու թռչունի անբեկանելի ձվարկությանը:

Ո՛չ միայն գիտեմ,  
Ես հավատո՞ւմ եմ,  
Որ անհնար է արեք բանտել,

Երկնակամարի զարդերը քանդել,  
Խմորի նման հունցել ու գնդել  
Կապույտը ծովի,  
Ատելի լուսնին բռնել վռնդել  
Երկրնքից ծավի...

Ինչո՞ւ թաքցրնեմ.  
Ես ձանաշում եմ ու գիտեմ մարդուն:  
Ի՞նչ ասես չկա նրա փակ սրտում:

Գիտի կործանել,  
Բայց և... գո՞րծ անել,  
Մատնություն գրած նո՞ւյն իր ձեռքերով՝  
Աղմարհը լցնել շռայլ բերքերով՝

Նո՞ւյն այդ ձեռքերով՝  
Ե'վ ճրագ մարել,  
Ե'վ խարոյիկ վառել:

Նո՞ւյն այդ ձեռքերով՝  
Ե'վ գանակ խրել,  
Ե'վ վեպեր գրել:

Նա գիտի զարկել  
Ու զրկել գիտի,  
Բայց գիտի զրկել  
Ու փրկել գիտի:

Նա գիտի կեղծել  
Ու սրբապղծել,  
Առավել երս՝  
Գիտի ստեղծել:  
Ես նրան հաճախ դատափետում եմ,  
Երբեմըն նրան նույնիսկ ատում եմ,  
Բայց, ամենից շատ, խոր հավատո՞ւմ եմ:

Ես հավատում եմ նրա բնաւթյան ո՛չ թերությանը՝  
Ստորությանը  
Ու շարությանը,  
Այլ խորությանը  
Ու բարությանը.  
Ո՛չ ծերությանը,  
Այլ նորությանը  
Զավակի տեսքով անզերջ կրկնվող այդ հարությանը. —

Ես հավատում եմ կենդանի մարդուն,  
Առավել՝ նրա ձնվելիք որդուն:

Ես հավատում եմ նրա անուրջին.  
Նա որտեղ որ է Մարս էլ կթոշի, —  
Նոր է սկըսում տիեզերական ճամփորդությունը,  
Ել Վեներայի լանջին կկառչի, —  
Ես գիտեմ նրա տղամարդկային շանորդությունը...

Ես հավատում եմ նրա ծով խելքին  
Եվ նույնիսկ՝ նրա հոտառությանը,  
Ամեն ինչ տեսնող աշքերի ցոլքին  
Եվ նույնիսկ՝ նրանց մթարությանը:  
Ես հավատում եմ նրա մատների

Հար անհատնելի  
ճարտարությանը,  
Նրա ոտների  
արդարությանը.  
Մինչև խոկ եթե ճամփից լլ հանեն՝  
էլի՞ ճար կանեն,  
Տե՛ղ կհասցընեն...

Ես հավատում եմ հավատի՞ն մարդու՝  
Ի՞չ ա՛յս հավատին...

## ՏԽՐՈՒՄ ԵՄ

Հոգուս վրա տիրություն է հաճախ թառում,  
Երբ թաց աշնան չոր խաշամն է ծածկում առուն,  
Չոր խոտի հետ երբ այրվում է թռափը կանաչ,  
Երբ մենք՝ հիմար տղամարդիկ, շենք նկատում ազնիվ  
կանանց,

Աւ երբ գուսան — շալ կարավն է ընկնում վանդակ,  
Իսկ երգ ատող,  
Նվազ հատող  
Մարդը դառնում... մեկենասի ձուլված քանդակ...

Ես, սրտիս տեղ, իմ կրծքի տակ  
Տխորաչյա մի կաքավ եմ հաճախ զգաւմ...

27. V. 57  
Մասկա

## ՄԽԵԹԱՐՈՒՄ ԵՄ

### Մխիթարեմ՝

Թե ինքնատիպ ու շընդունված բանաստեղծին  
Երախտապարտ որդիներով ու թոռներով  
Եվ հետմահու հատորներով,  
Ասկա տափակ ու միջակին,  
Ե՛կս առավել պատեհապաշտ բութ գրչակին՝  
Ա՛յն պարտադիր հաջողությամբ,  
Որ և՛ ունի, և՛ կունենա  
Ողջ է քանի  
Ու կենդանի:

Եվ ծերացած այն ամուրուն,  
Որին ոչ ոք օր ծերության  
Չի փայփայում ու գուրգուրում,  
Խարեմ ես այն սփոփանքով,  
Որ... չի կապվել նա երբեք  
Լաշառ կնոջ պինդ կապանքով...

Ուն մերժել է իր դրացի  
Հոգի հանող  
Ու խելք տանող  
                        աղջիկը շար,  
Ես այն մտքով չեմ սփոփում,  
Թե չի վարվել այդ դրացին  
                        արդարացի.  
Ես մերժվածին սփոփում եմ լոկ այն դողով,  
Որ... չի ապրել նա առավել ահավոր,  
                        Գիտե՞ք որը.  
Դավաճանելն ու խաբելը իր սիրածի...

Անբա՛խտ իմ քույր,  
Ո՛վ լքեր կին,  
Անբուժելի քո այդ վերքին  
Ես ո՞րտեղից, ի՞նչ գեղ ճարեմ,  
Ես քեզ ինչո՞վ մխիթարեմ:  
Մխիթարեմ ա՛յն սարսափով,  
Որ շե ապրել որդեկորուս մոր կոկիծը,  
Երբ պոկում են կարծես սիրտը խեղճ կրծքացը...

Նաև մի քիչ լինեմ բարի  
Եվ սարն ի վար ցած գլորվող-ջարդվող քարին  
Մխիթարեմ այն թոփշով և անկումով,  
Որ վայել է և... հանճարին:

Ընդհատակում, հոգու խորքում  
Զգույշ տարվող թույլ պայքարին  
Մխիթարեմ նոր ուժերի հավաքումով:

Հարքուխ ընկած — մրսած շարին  
Մխիթարեմ և... թոքերի բորբոքումով:

Արձագանքով մխիթարեմ համըր սարին:

Գոլորշացող-ցնդող ջրին,  
Մարող հրին  
Մխիթարեմ այն օրենքով, որ բարությամբ  
Սահմանել է ինչ-որ ծերուկ կառւազե.  
Հարատենել ա՛յլ դրությամբ,  
Ո՛չ մի շափով չնվազել...

Ուղղագրական նոր օրենքով  
Գործածումից հանված տառին  
Մխիթարեմ այն տանշանքով,  
Որ տարիներ, ձի՞գ տարիներ  
Պատճառել է ծեր ու մանկան:

Մխիթարեմ հատվող լարին  
Այն ճնգոցով, որ կարող է նա արձակել,  
Ուրիշ և ո՞չ, և ո՞չ մի լար՝ թե նվազեն  
Վարպետ-ճարտար մատներն անդայ... .

Իզուր անցած գոռ պայքարին  
Մխիթարեմ իրեն ծնող  
Ռե կործանող  
պատճառներով:

Հերքված աստծուն խեղճ ու բարի՝  
Հազար ու մի շեն ու ավեր տաճարներով,  
Եվ, վերջապես,  
Սով արյունով թրջված դարին  
Մխիթարեմ  
Այն հավատի ավետիքով (թե՝ շար բոթով),  
Որ արյունն այդ կցամաքի  
Թղթերի մեջ, թանաքի հետ... .

Իսկ ի՞նձ...  
Ինչով ի՞նձ սփոփեմ,  
Մխիթարեմ, ո՞չ թե խարեմ:  
Այն կնո՞շ պես ինձ սփոփեմ,  
Որին  
Միշտ էլ երբ օրհնում են ավանդաբար,  
Նույն հին բարի խոսքն են ասում,  
«Աստված պահի գլխավորիդա»:  
Իսկ խեղճ կինը, թե շամաշեր,  
Երինչի պես կրառաշեր.  
«Թաղեմ էզպես գլխավորին»,  
Որովհետեւ գլխավորը՝  
Այդ անհողի բեղավորը,  
Նրան ձեծում ու տանջում է ամեն վայրկան՝  
Զարցնելով անմե՞զ է, թե՝ մեղավոր է:  
Այն էլ այնպե՞ս,

որ անհոգի

Ճիպոտը միշտ կամրջվում է  
Իր մի ծայրով կնոջ այտին, մեկով՝ հոնքին, —  
Եվ խեղճ կինը ցալից լալիս,  
Թայց և աստծուն փառք է տալիս,  
Որ... զեթ ա՞շքը չկուրացավ ծեծ ուտելիս... .

Մխիթարվեմ այն հավաստի իրողությամբ,  
Որ ես ինքըս տղամարդ եմ և ոչ թե կին,  
Եվ իմ ապրած ժամանակը՝  
Արտասովո՞ր  
Եվ

Լուսավո՞ր՝  
Ո՞չ մի բանով չի նմանվում  
Այդ նզովյալ ժամանակին... .

19, 21-22. VI. 57

Սուկվա

## ԽԱՆԴՈՒՄ ԵՄ

Ես խանդո՞ւմ եմ,

Անկեղծ ասած, թե ամոթ չէ,  
Ինձ շատ ծանոթ և շատ մոտ չէ  
Այդ ահավոր խանդ կոչվածը.  
Իմ մեջ, գուցե, բնությունից  
Ինչո՞ր մի բան անտեսված է,  
Ուրիշ մի բան՝ տնտեսված է:

Ընդամենը գիտեմ լոկ այն,  
Որ ես այնտեղ, որտեղ մարդիկ  
Հավանաբար և խանդում են.  
Բարկանում եմ — ոչ տեական,  
Քածիծաղում — անբավական,  
Կամ ծիծաղում — անբնական,  
Եվ... եղածը ես քանդում եմ.

Մեր խորտակված սերը վկա...

19. XI. 57

Մասկա

## ԴԱՌՆՈՒՄ ԵՄ

Եթե դառնայի նույնիսկ մրցարան՝  
Ես չէի թողնի,  
Որ կեղծավորը հաղթի շիտակին,  
Ճառող թերուսը՝ խորհուն գիտակին:

Եթե դառնայի նույնիսկ թրծարան  
Ու սուս թրծեի հարկադրաբար՝  
Բոլո՞ր ստերը մեկ-մեկ ճաքեին,  
Հակառակ դեպքում՝ գուրըս փակեի:

Ու եթե նույնիսկ գիահերձարան՝  
Վերստի՞ն սուսը,  
Մե՞ծ հաջողությամբ տարածվող սուսը,  
Ես կհերձեի,  
Որ մի փորձեի՝  
Ինչպես խելացի երեխան ինքը  
Քանդում-զարդում է իր խաղալիքը,  
Որպեսզի տեսնի, նաև հասկանա՝  
Ինչո՞ւն է բանը և բանալիքը...  
Ու երանի՝ թե  
Խաղալիքի պես սուսն էլ փշանար,  
Եվ չգտնըվեր ո՛չ սարքող վարպետ,  
Ո՛չ էլ գործարան...

## ԴԱՌՆԱՅԻ ՄԱՌՈԱՆ՝

Չէի ցանկանա մի խորշում պահել  
Քծնանքի թթու և կամ թե քացախ,  
Որ ախորժակ են գրգռում հաճախ,

Շատերիս նույնիսկ շատ դուր են զալիս,  
Բայց ստամոքսը աղնիվ է եթե՝  
Միշտ ետ է տալիս...

Ու եթե պարան՝  
Ես չէի չնչփի այն սուտ-սուրբ աշից,  
Ար բոլոր նրանց գամում է խալի,  
Ովքեր մտքի մեջ,  
Մաքի՞ մեջ անգամ  
Ուզում են խուս տալ հարկադիր պաշից...

Ու եթե շարան՝  
Չզառնամ շարան  
Կեղծ հարցադրման,  
Այլ մեղադրման.  
Եվ ոչ թե ինչ-որ հիմար ցույցնի,  
Այլ մեղադրման ապացույցերի...

Ու եթե բերան՝  
Ո՞չ խաբերայի,  
Այլ երեխայի.  
Ո՞չ թե անտարբեր մի դասախոսի,  
Այլ դատախաղի.  
Ո՞չ թե աղոթող մի խեղճ տառիկի,  
Այլ մունետիկի...

Դառնայի պարան՝  
Եթե ոչ լաստի  
Կամ առագաստի,  
Եթե ոչ պարզվող սուրբ դրոշակի,  
Ապա ոչ ձեռքում և հրասակի,  
Որ նա դրանով ոտք ու ձեռք կծկի:  
Ակելի լավ է այդ դեպքում արդեն  
Գեթ պարան դառնալ... թեկուղ լվացքի ...

Ու եթե իրան՝  
Ո՞չ թե աչ ու ձախ անվերջ ձկվողի,

Այլ պատվախնդիր հպարտ աղջըկա՝  
Եվ այն կորիճի, որին՝ բարդու պես՝  
Հատկել-փռվել կա,  
Բայց ծովել չկա՞...

Ու եթե կուան՝  
Ո՞չ մարդկանց գլխին,  
Այլ դարբնի՞ ձեռքում...

Ու եթե դուան հուսալի կողպեք՝  
Պահեստի՞ վրա,  
Եվ ո՞չ թե լեզվի...

Դիցուք, թե նաև դառնում եմ մի օր  
Բանաստեղծության օրենսդիր մի նոր  
Եվ... գիտե՞ք արդյոք, թե ինչ եմ անում.  
Այս եժ հավանում,  
Այն չե՞մ հավանում:  
Զէ՞, թույլ եմ տալիս,  
Երբ տեղն է զալիս,  
Բանաստեղծները բանաստեղծելիս  
(Ու զիզի-բիզի բան ստեղծելիս)  
Զափածո խոսքում երբեք չդրված,

Կոպիտ համարվող,  
Նույնիսկ արդելված  
Բառեր ու խոսքեր թող օգտագործե՞ն,  
Թո՞ղ չկարկամեն, թո՞ղ վստահ փորձեն,

— Օրենքներ չկա՞ն, կա լոկ իրավո՞ւնք...  
Տ5. VI. 57  
Սոսկա

## ԶԱՐՄԱՑՆՈՒՄ ԵՄ

Ահավասիկ այս խնձորը՝  
Մեղրածորը,  
Կամ այս դեղձը՝  
Անձուակերտ — անստեղծը...»

Սա մի պատառ կերպափոխված արեգակ է.  
Չովություն է այստեղ զարձել նրա տաքը,  
Հոսուն հորը ստացել է մի հստակ ձեւ,  
Շողի ու լուկը փոխվել գույնի, համ ստացել:  
Եվ այս՝ գիտե՞ք ինչի՝ համար,  
Միայն նրա՝ որ մեզ համար  
Արեգակը գառնա հարմար,  
Որ այս դեղձը պոկենք հիմա,  
Աղվամազոտ դունչը շոյենք,  
Այս խնձորով նախ հիանանք՝  
Ա՛յս կողմ շուռ տանք,  
Ա՛յն կողմ շրջենք  
Եվ — թե հանկարծ սրտներս ուզի —  
Ու այս — ոչ այն՝ բռնենք կրծենք,

Տարօրինակ բան շեք կարծո՞ւմ,  
Որ արև է մարդը կրծում...

20. XI. 57  
Մոռկլա

## ԱՂԱՋՈՒՄ ԵՄ

Աղաշում եմ. —  
Մի՛ վրդովեք, եթե ասեն  
Փառասերին հենց փառասե՞ր,  
Ո՛չ թե համեստ.  
Մրիկային՝ հենց սրիկա՞ւ  
Ո՛չ թե ազնիվ.  
Հեռակային՝ հենց հեռակա՞ւ,  
Ո՛չ թե ներկա...

Աղաշում եմ. —  
Մի՛ վախեցեք անկեղծ խոսքից.  
Անկեղծ խոսքը չի սպանում,  
Փակ խոցեր է միայն բանում:  
Թե սոված եք և երեխա՝  
Մի՛ վախեցեք լաց լինելուց.  
Գե՞հ, քանի դեռ նա չի լալիս՝  
Միծ չե՞ն տալիս:  
Մի՛ վախեցեք  
Ժանգոտ թասից ժանդ քերելուց.  
Նա դրանից չի փշանա:  
Մի՛ վախեցեք  
Կեղծի մասին ճիշտ գրելուց.  
Նա դրանից կըշանա:

Աղաշում եմ. —  
Եվ թվաբա՞ն եղեք մի քիչ,  
Բայց պայմանով այս ամոքիչ.

Ո՛չ թե ճշտին սուս գումարեք,  
Այլ բաժանեք սուտը ճշտին.

Ո՛չ թե վշտին գութ գումարեք,  
Այլ բաժանեք գութը վշտին:  
Եվ պարծեցեք ո՛չ թե հարցով.  
Հպարտացեք լոկ լուծումով՝  
Փակադը ճիշտ բացումով,  
Մնացորդով  
Ու բանորդով...

Աղաշում եմ.—

Եղեք նաև քիչ հոգեքան.

Եթե որդին տրտում երգով  
Իր ծնողի մահն է սգում,  
Ազաշում եմ, մի՛ քնդհատեք,  
Ի՞նչ է թե նա... լա՛վ չի երգում...

Աղաշում եմ.—

Այս և նման այլ հարցերում  
Երբեցե ինձ շաղաշե՛լ...

9.10. VI. 57

Մոսկա

## ԵՐԿՄՏԵԼՈՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

— «Ղինե՛լ-լինե՛լ,— այս է խնդիրը»...  
Եթե գառվում է մորը թոնդիրը,  
Հայրենի ծովսը երգից փնջում է,  
Էլ ի՞նչ խնդիր է.  
Ուրեմբն՝ լինե՛լ:

Թե ստաղմալվում է շար հարձակումը,  
Թե անխուսափ է ծլարձակումը,  
Թե հարկավոր է նոր աղաց շինել.  
Ուրեմբն՝ լինե՛լ:  
Եթե բազմադան,  
Թեկուղե դաժան

Գաղաններն անդամ մնում են զավան,  
Ոչ թե օրեցօր դառնում ընտանի.  
Եթե վերստին աղջիկ-պատանի  
Ի՞նչ էլ որ լինի՝ սիրահարվում են,  
Իրար ձեռք բռնում, իրար փարվում են,  
Կաղմում ընտանիք.

Եթե մայրական կաթից ուռչում են  
Նորահարսների կանգուն ծոցերը,  
Եվ կենդանության կայտառ բոցերը  
Ու կյանքի ծովմբ նորից փնջում են,  
Էլ ինչո՞ւ ինչ-որ խնդիր հորինել,  
Նախորոշված է երբ նախընտիրը:

Ի՞նչ էլ որ լինի, անպատճառ լինե՛լ.—  
Եթե խնդիր կա՝ այս է խնդիրը»...

28. V. 57

26. XI. 57

Մոսկա

Դշտարտության քղամիդ ունես.  
Եվ քե՞զ, բղամի՞դ,  
Թե ուս ես ծածկում և ոչ թե քամակ...

## ՊՂԲՈՒՄ ԵՄ

Ողբամ վաղամեռ մինումար որդուն,  
Առավել՝ նրա խեղճ մորը տրտում,  
Եվ որդեկորույս մորից առավել՝  
Վա՛յ տամ ու ողբամ այն թշվառ մարդուն,  
Որ հավա՛տ ուներ — և ծովածավա՛յ  
Եվ հիմա չունի՛,  
Մի՛ կաթիլ չունի...

Ստիպողական ժպիտը ողբամ,  
Հարգանքը ողբամ, թե հարկադիր է,  
Թե աղբյուրի պես սրտից չի բխում,  
Այլ լիմոնի պես քամվում է վախից...

Եվ դողը ողբամ,  
Եթե չի ծնվում նա ակնածանքից  
Եվ կամ թե սրտում այն դեռահասի,  
Որ իր կյանքի մեջ առաջի՛ն անգամ  
Մրար է բացում՝  
Սիրային նամա՛կ,  
Ա՛յն դողը ողբամ,  
Որ զոռով-շառով որդեգրվում է,  
Եվ կնքահայր է դառնում Երկյուղը,  
Եվ կնքամայր է դառնում Սարսափը...

Քե՞զ ողբամ, աստվա՛ծ,  
Եթե սուտ ես դու,  
Ողբամ, սո՛ւտ, և քե՞զ,  
Եթե քո հագին

Հիասթափությո՛ւն, քե՞զ ողբամ նաև,  
Եթե գալիս ես և էլ չես զնում,  
Ինչպես չի զնում հյուրը աներես:  
Ողբամ և հյուրին, որ տանն օտարի  
Իրեն պահում է տանտիրոց նման,  
Եվ տանտիրոջը՝ թե չի վոքնում,  
Նրան թողնում է կնոջ հետ մենակ,  
Աշը դո՛ւրս կնոջ,  
Որ շատ է սիրում արցունքով զինվել՝  
Արցունքն էլ ողբամ,  
Եթե արցունքը՝ ցավը մեղմելով՝  
Եվ քենն է փոխում հնազանդության.  
Թող քենը գործե՞ր...

Վայ տամ ա՛յն դանդին,  
Ուր ձմեռում է խելքը՝ արջի պես,  
Նաև ա՛յն զանգին,  
Որ ուսին դրված կաղամբ է ասես,  
Եվ այդ կաղամբը այնտեղ է հասել,  
Որ՝ օգտըկելով նմանությունից՝  
Իրեն վիթխարի վարդ է հոչակում  
Ու դեռ սոխա՛կ է պահանջում նաև,  
Եվ հարցնող շկա,  
Թե ո՞ւր է գույնըդ,  
Բուրմո՞ւնքդ ուր է...,

Ճիշտ այսպիս՝  
Նաև վայ տամ տականքի՛ն,  
Որ իրեն յուղից թանկ է համարում  
Լոկ այն պատճառով,  
Որ... ծանր է յուղից.

ԱՇԽՆ արձագանքին,  
ՈՐ ՀՈԳՆԱԾ «ՃԵՌԱ»-Ն  
Դարձնում է «ԿՈՎՈՎԱ»...

ՃԻՉՄ Այսպես՝  
ՊԻՄԻ այն ցա՞նկը ողբամ,  
ՈՐ միայն ինքն է մնացել զրբից.  
Այն վա՞նքը ողբամ.  
ՈՐ վեր է ածվել բողկի պահեստի.  
Այն վա՞նկը ողբամ, այն վա՞նկը, որին  
ԶՐԿՈՒՄ են միա՞կ իր ձայնավորից.  
Նաև հավանգը,  
ԹԵ հավանգի մեջ լոկ չուր են ծեծում,  
Նաև սահանքը,  
Եթե սահանքը... խելագարվել է՝  
ԹՈՆԵԼ է գրազ  
Նույնիսկ ձկներին խեղդամահ անել,  
ԹՈՆԵԼ է գրազ  
ԵՎ մտադիր է գրազը տանե՞լ...  
ԵՎ ողբամ նաև...  
Ինքըս ի՞նձ ողբամ,  
ԹԵ այսպես պիտի ողբամ — վայ կանչեմ  
ԵՎ իզուր տեղը ինքըս ի՞նձ տանշեմ...

3. VI. 57  
Մոսկվա

## ՀՐԱՎԻՐՈՒՄ — ՈՒՐԱԽԱՆՈՒՄ ԵՄ

ԵԿԵՇՔ, խնդրեմ, եկե՛ք այսօր ու դարձեք ինձ սեղանակեց՝  
ՕԳՄՈՎԵԼՈՎ իմ այսօրվա բարենպաստ եղանակից՝  
ԵԿԵ՛Ք այսօր ուղածի պես ուրախանածք, ուտենք-իւմենք,  
ԶԷ՞ որ նորից  
ԷԼ մեր մորից  
Զենք ծնվի մենք,

ԹՈՂ զան, խնդրե՛մ, բոլո՞ր նրանք, ովքեր դիտեն  
Փայլատակել կարմիր գինու թնդությունից.  
Ուրախանալ և օտարի' խնդությունից,  
Ովքեր զիտեն վիշտ ու ցավը ետ վանելու,  
Կյանքում լավը և առողջը հավանելու,  
Գեղեցիկը ու վսեմը զավանելու  
Հարգն  
ու  
կարգը.

Ովքեր զիտեն նաև իրենց բերնի համը,  
ԹՈՂ շուշանա՞ն, թող շտապե՞ն, քանի որ դեռ  
Գինի-օղին փակ շշերից դուրս չի հորդել,  
ԵՎ չի հասել խորովածի  
Ժայն

ու  
դամը:

ԹՈՂ Ճոտենա իմ սեղանին  
Նա՛, ում ձեռքը կոշտացել է  
Մուրճից, բահից ու եղանից.

Ով տանջանքից կշտացել է  
Ու փնտրում է սպեղանի.  
Ով կրում է խոցերն անանց  
Աղջիկների ու գեղանի  
Հարս ու կանանց:

Նա կգտնի այստեղ նրա՞նց,  
Ովքեր գիտեն երգել-պարել,  
Գրկել-փարել,  
Գերել-սիրել,  
Ինչպես նաև հյուրասիրել՝  
Ունեցածը լավ ծախսելով,  
Ու թե կիտված կոպեկներին  
Հավի նման լուս թխսելով:

Բայց ո՞չ.

այսօր

Ես կանչում եմ նաև նրա՞նց՝  
Եվ այդ կիսատ-պուտներին,  
Այդ ձեռը փակ-ժլատներին:  
Թող գան, մարդկանց շարրը դասվեն.  
Թե կարող են՝  
Իրենց հիմար արատներից  
Թող ամաշեն ու ետ քաշվեն.  
Թե չեն կարող՝  
Իրենց մտքում մեզպեսներին  
Թող պարզապես հիմա՞ր հաշվեն...

Մի՛ ուշացեք, դե՛հ, ձեզ մատաղ,  
Թոլորվեցեք այս կանաչին,  
Այս վիզը ծուռ ուռենու տակ,  
Եվ բաժակով այս առաջին  
Նախ և առաջ ոբարով տեսանք» իրար ասենք,  
Ինչպես խիել ու խմել են լուսահողի մեր պապերը՝  
Եկեք այսօր մենք էլ, առանց ամաշելու,

Նրանց նման որկորներըս լավ կարասենք  
Ու նախապես թուզացընենք մեր ձիգ տված մեջկապերը,—  
Այսօր մի լավ, ուզածի՛ս պես ուրախանանք, ուտենք-խմենք.  
Չէ՞ որ նորից  
Էլ մեր մորից  
Չենք ծնվի մենք...

Մինչ նազ անող խորովածի համ-դամը զա՞  
Ես, տանտիրոջ իրավունքով, ձեզ թամադա:

Դե՛հ, խմողաց խո՛ւմը անուշ,  
Եռեփ գինու կո՛ւմը անուշ,  
Խորովածի հո՛ւմը անուշ...

Այս մի թասն էլ նրա՞նց կենաց, ովքեր կյանքում  
Թեկուղ ծանըր կարիքի մեջ ու զրկանքում  
Հնդունում են  
Ու տանում են  
Ամե՛ն հարված,  
Բայց մնում են  
Էլի կյանքին ակրահարված:

Դե՛հ, վերցընենք,  
Բաժակները շախով-շուխով շխկացնենք,  
Խմենք, հետո այս կենացը ծաղկացնենք.  
Ով որ երգի՛ ձայնն անսպառ,  
Մատաղը՝ գառ,  
Ճրագը՝ վառ...

Տեսնեմ այդ ո՞վ այս բաժակը չի պարպելու,  
Տեսնեմ այդ ո՞վ այս բաժակից չի հարբելու...  
Այս բաժակն էլ մեր սրտից վեր բարձրացընենք,  
Քամենք այնպե՛ս, կարծես լի է... երեխերի դառը լացով,  
Խմենք, հետո բերաններըս քաղցրացընենք

Նրանց թշուիկի թուշիկների անուշ պաշով,

Թողոքը որ նրանք ծիլի նման

Քարն էլ ճեղքեն,

Թարով ծաղկեն

Հեր ու մերով,

Քույր-ախաղերով:

Մեր հին զինով՝ Ա՛լս մի հին ու նոր կենաց.  
Կենացն ըմպենք հավատարիմ բոլո՞ր կանանց,  
Որոնց հաձախ ցավ ենք տալիս, բայց որբան անց,  
Այնքան՝ ցավով՝ խելքի զալիս,  
Տարբերում ենք մամուռ-կանաչ,  
Էժան և թանկ,  
Մեր և դյութանք,

Եկեք փութանք,  
Որ չսպառնա նրանց սիրուն ո՛չ մի վտանգ,  
Եվ հավատա՞նք,  
Որ մենք կյանքում  
Բախտի նման նրանց գտանք...

Խմենք կենացն անդավաճան ընկերության,  
Ընկերների այն սերության,  
Որ մինչև իսկ չի ընդհատվում  
Աքսորի մեջ ու գերության:

Ընկե՛ր լինենք  
Նույն հուզմունքի,  
Համոզմունքի',  
Նույն ճաշակի',  
Դրոշակի',  
Ո՛չ թե ընկեր լոկ բաժակի...

Եկեք նաև մեղ չզրկենք, — առանց այն էլ  
Թիշ զրկաները հո շենք կրել աշխարհում մենք:  
Այս թասով էլ մե՞ր կենացը եկեք իմենք:

Այս թասով էլ տրտմությունը,  
Ցավը,

Դավը եկեք քամենք,

Որ այսուհետ ուրախ ապրենք՝

Կարաս բանանք, տկնոր կպրենք.

Երբեք շզգանք մեզ մենմենակ,

Անթկթիկունք և անհենակ:

Մեր վատ օրը հենց այս լինի,

Հետո էլ գան դեռ լավե՞րը...

Դե՛ — հա՛, քամե՞նք մեր գավերք,  
Եռու տանք պաշենք թասի տակը...

Այս զավով էլ եկեք հարդենք  
Եվ անթառամ հիշատակը

Կամար-կամուրջ քաշողների,

Սյուն ու խաչքար տաշողների,

Սանդ ու երկանք կտրողների,

Ելք ու ճամփա փնտրողների,

Վանք ու պալատ շինողների,

Կտրիճ զավակ ծնողների,

Աղբյուր-առու սարքողների,

Փող ու թմբուկ զարկողների,

Ինչպես նաև հիշատակը

Նրանց հիշող-հարգողների...

Հպարտությամբ և անհատույց երախտիքով

Հիշենք բոլոր ընկածներին՝

Հերոսարար հանգածներին

Հանուն լույսի

Եվ մեղ համար.

Հիշենք նաև նրանց ծնող,

Նրանց սնող,

Նրանց զինող

Հայրենիքը հերոսամայր:

Ակնածանքով շուր տանք հողին

Այս մեկ բաժակ մաքուր օղին,  
Այս մի բաժակ անխառն գինին.  
Թող յայր հողը նրանց վրա թևթե՛ լինի...

Տեսե՛ք, տեսե՛ք, ո՞ւս, վերջապես,  
Խորովածը մեջտեղ մտավ,

Հիմա ընտրենք մեզ իսկական մի թամադա,  
Որ, հավատա՛,  
Արդեն խմած կենացներին չի հակասի,  
Այնպես, ինչպես որ մեղ նման  
Քեֆ անողի քեֆն էլ երբե՛ք չի պակասի...

27. 29. Ա. 57.

Մոսկվա

Այս մեկ բաժակ մաքուր օղին,  
Այս մի բաժակ անխառն գինին.  
Թող յայր հողը նրանց վրա թևթե՛ լինի...

Տեսե՛ք, տեսե՛ք, ո՞ւս, վերջապես,  
Խորովածը մեջտեղ մտավ,

Հիմա ընտրենք մեզ իսկական մի թամադա,  
Որ, հավատա՛,  
Արդեն խմած կենացներին չի հակասի,  
Այնպես, ինչպես որ մեղ նման  
Քեֆ անողի քեֆն էլ երբե՛ք չի պակասի...

27. 29. Ա. 57.

Մոսկվա

### ՄԻ ՊԱՀ ՄԵԾԱՄՏՏՈՒՄ ԵՄ

Ա'խ, ի՞նչ բախստ է կյանքում լինել  
Ամենքի պես,  
Ամենքի հետ,  
Գիշերները հանգիստ քնել՝  
Ամենքի պես,  
Ամենքի հետ,  
Լինել անդա՛րդ,  
Լինել հանդա՛րտ՝  
Ամենքի պես,  
Ամենքի հետ,  
Կյանքին նայել պա՛ղ ու անթա՛ղթ՝  
Ամենքի պես,  
Ամենքի հետ,  
Զմուածե՛լ վաղվա մասին՝  
Ամենքի պես,  
Ամենքի հետ,  
Կյանքը մատնե՛լ ինքնահոսի՝  
Ամենքի պես,  
Ամենքի հետ...

27. IV. 57

Մոսկվա

## ԽՈՒՍԱՓՈՒՄ ԵՄ

**Ես խուսափում եմ**

Թեթև դերերից,

Էժան սերերից

**Եվ ա'յն նորերից,**

Որ հաստատվելիս

Ու թուխս նստելիս

Միշտ հինն են ծնում,

**Եվ ա'յն օրորից,**

Որ քոն չի բերում,

Այլ ավելի շուտ, քուն է փախցընու՞մ...

Միշտ խուսափելով,

Ճիշտ խուսափելով՝

Պիտի չհասնեմ և ա'յն դրության,

Երբ փափուկ քանի հեշտ կորվելը

Վերազըրվում է թրի սրության.

Լողալ չիմացող մարդու խեղդվելը՝  
և ձի խորության.

Ստիպողարար կովում հաղթվելը՝

Սրտի քարության.

Օժտված մարդու հաջողությունը՝

Քաջնազարության.

Իր սկզբունքին հաստատ մնալը՝

Մտքի քարության...

**Ես խուսափում եմ դեռ շատ քաներից:**

**Ես խուսափում եմ տալիս**

**Թեթև քաներից վիրավորվելուց.—**

Նատ եմ ինքնասեր.

**Եվ անպատասիան սիրահարվելուց.—**

Սիրառատ եմ շատ.

Եվ շիլ դառնալուց՝

**Իմ խեղճ աշքերի անվերջ չովելուց.—**

Զարմանում եմ դեռ.

**Ամեն կշեռքի թաթին դրվելուց.—**

Իմ քաշը գիտեմ.

**Ամեն առիթով իսկույն սրվելուց.—**

Եվ ի՞նչ եմ տաշում,

Լոկ ի՞նձ եմ մաշում...

**Չե՛մ ուզում տրվել ամեն մի կրքի,**

**Չե՛մ ուզում տրվել.—**

Ես շատ եմ կրքոտ.

**Չե՛մ ուզում կովել հիմարների հետ,**

**Չե՛մ ուզում կովել.—**

Ել չիղ շմնաց.

**Ուզույ եմ ծովել՝ բա՛ն չի ստացվում**

**Եվ չի՛ ստացվի.՝**

**Բունս է հաստացել...**

**Գուցե վտարվե՞լ ուրախ շրջանից.—**

Հաճախ եմ տիրում.

**Գուցե վթարվե՞լ՝ մեքենայի պես.—**

Մաշվում եմ անվերջ.

**Գուցե կտրրվե՞լ այս խոկումներից.—**

Ես էլ եմ հոգնում...

**Ես խույս եմ տալիս և զուր այրվելուց.—**

Ուր եք, մրսողնե՛ր,

Մո՞տ եկեք գոնե,

**Ես խույս եմ տալիս և զուր լարվելուց.—**

Դեռ շատ զործ ունեմ,

Որ շարվի՛ գուցե...

**Ես խույս եմ տալիս  
Ամեն քամոցով իսկույն թորվելուց...  
Ճուր եմ հանքային,**

**Ես խույս եմ տալիս,  
Թայց չեմ վախենում շուտ պղտորվելու...  
Ազրյուր եմ լեռան.**

**Ես խույս եմ տալիս,  
Թայց չեմ սարսափում և խոտորվելուց...  
Ճամփա կգոնեմ...**

**...ԵՎ շնուսափե՞լ այն դրությունից,  
Որ լոկ գալիս է մեր խլությունից,  
Խովին ասում են.  
— «Ճուրտ է, չես մրսո՞ւմ»:  
Խովին էլ ասվածը խլաբար լսում  
Եվ ի պատասխան իրենն է ասում.  
— «Հա՞՛, ճիշտ եք լսել. մեր անտեր ցուլը  
Կա-կա կարծեց, թե փորոտիք է՝  
Զարկեց ու պատռեց մեր գինու տիկը...»:**

**Ես խույս եմ տալիս ո՛չ թե խուկերից,  
Այլ կարաս ջարդող  
Ու տկնօր պատռող  
Թոլո՞ր անհակդիր նման ցուկերից...**

**14-15. VI. 57.**

**Մոսկա**

**Ամեն քամոցով իսկույն թորվելուց...  
Ճուր եմ հանքային,**

**Ես խույս եմ տալիս,  
Թայց չեմ վախենում շուտ պղտորվելու...  
Ազրյուր եմ լեռան.**

**Ես խույս եմ տալիս,  
Թայց չեմ սարսափում և խոտորվելուց...  
Ճամփա կգոնեմ...**

**...ԵՎ շնուսափե՞լ այն դրությունից,  
Որ լոկ գալիս է մեր խլությունից,  
Խովին ասում են.  
— «Ճուրտ է, չես մրսո՞ւմ»:  
Խովին էլ ասվածը խլաբար լսում  
Եվ ի պատասխան իրենն է ասում.  
— «Հա՞՛, ճիշտ եք լսել. մեր անտեր ցուլը  
Կա-կա կարծեց, թե փորոտիք է՝  
Զարկեց ու պատռեց մեր գինու տիկը...»:**

**Ես խույս եմ տալիս ո՛չ թե խուկերից,  
Այլ կարաս ջարդող  
Ու տկնօր պատռող  
Թոլո՞ր անհակդիր նման ցուկերից...**

**14-15. VI. 57.**

**Մոսկա**

#### **ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՄ**

**Ես մտածո՞ւմ եմ:  
Թա՞ն չեմ մտածում...  
Լեռնային գետն է թավալվում ցածում,  
Ինչոր մրջյուն է  
Կծում իմ ոտը.  
Ինչոր թռչուն է  
Թրատում օդը.**

**Սառուցն է զողում լեռան կատարին,  
Ինչպես որ երեկ ու բոլոր տարին...  
Վիճաբանո՞ւմ են խոտերն ու քամին,  
Թե՞ դատապարտում սուտ քարեկամին...  
Ինչպե՞ս չեն փլզում այս լեռ քարերը,  
Թե կտրատվել են նրանց կարերը...  
Ինչո՞ւ քարն է պինդ, իսկ զուրը՝ հեղուկ  
Եվ պառաժը՝ անձայն ու համը,  
Իսկ այս տատրակը անվերջ գեղգեղում՝  
Շատախոսելով հանում է համը...**

**Ես մտածո՞ւմ եմ:  
Թա՞ն չեմ մտածում:**

**Ես նույնն եմ անում, ինչ գետը ցածում,  
Ինչ այս մրջյունը  
Եվ այս թռչունը,  
Այս խոտն ու քամին  
Եվ սարն ու քարը.—**

**Շարունակում եմ իմ գոյությունը...**

**25. V. 57.**

**Մոսկա**

Ինչ ես շեմ զրել՝  
Նա՝ պիտի զրի...

Սակայն նա գոնե պատկերացնո՞ւմ է  
Կյանքը,  
Տանջանքը,  
Ջանքը պապերի...

25. 7 57  
Մասկվա

## ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ

Պատկերացնում եմ նորի՛ց ու նորի՛ց,

Ինչ որ տեղ մի օր ծնվում է մորից  
Շա՛տ սովորական  
Մանուկ մի լալկան։

Ինչ որ ես գիտեմ՝ նա դեռ չզիտի,  
Իր դասագրքից իմանա պիտի.  
Ինչ որ եղել է ինձ համար հանգաւց,  
Որ պիտի քանդել կամ թրով հատել,  
Նա գիտի՝ արդեն  
Եվ գիտի — մանկո՞ւց.  
Ինչի վրա ես գլուխ եմ ջարդել  
Եվ տառապելով տառապել սաստիկ,  
Նա ստացել է արդեն... պատրաստի՛։  
Ինչ ես ատել եմ, ինչ ես առում եմ՝  
Նա նույնիսկ իր շուրջ շի նկատո՞ւմ էլ.  
Ինչ շեն ներել ինձ՝ նրան ներուժ են,  
Ինչ ես եմ սիրել՝ դրան տիրում է.  
Ինչին ձգտել եմ, ինչ երազել եմ՝  
Նա դրան արդեն վաղա՛ւց հասել է, —  
Եվ շի՛ հասկանում իմ տենչանքը նա,  
Եվ շի՛ հասկանում իմ տանջանքը...»

Ինչ ես եմ կրել՝  
Նա էլ շի՛ կրի,

## ՀՊԱՐՏԱՆՈՒՄ ԵՄ

Ես հպարտ եմ իմ ճյուղերով ու սաղարթով,  
Բայց առավել՝ իմ արմատով  
Եվ իմ բնի վաղեմությամբ.  
Ժողովրդիս ծերունական  
Խիստ բնական  
Խոհեմությամբ,  
Բայց ավելի՝  
Նոր շիվերի  
Դալարությամբ —  
Նրա ջահել որդիներից հենց լավերի  
Խելառությամբ...

Ես հպարտ եմ մի բուռ հողով,  
Թե աճում է այնտեղ խաղող:  
Ես հպարտ եմ ջրով մի կուց,  
Թե նա մեկին տասն է տալիս  
Մի թիզ արտից և կամ այգուց...

Անշահաղետ օգնություն եք թե ցույց տալիս՝  
Ես հպարտ եմ ձեր օգնությամբ.  
Թե չեք թողնում հանգստանալ մարդավարի՝  
Ես հպարտ եմ իմ հոգնությամբ.  
Ստիպում եք մի կո՞ղմ քաշվել առարեղից՝  
Ես հպարտ եմ իմ ճգնությամբ...

Եթե պետք է լավ հասկացվել,  
Եթե պետք է խոր զգացվել

Լոկ եղածի նոր կրկնությամբ՝  
Ես հպարտ եմ  
Զհասկացվող  
Եվ չզգացվող  
Իմ ինքնությամբ.  
Ծատ-շատերից չկարդացվող՝  
Բայց և այնպես իմ սեփակա'ն ձեռագրով.  
Այլոց կողմից շարդարացվող՝  
Բայց և այնպես իմ սեփակա'ն ծրագըրով.  
Արդիշների խնչույքի մեջ  
Թող ո՛չ մի դեր չխաղացած՝  
Բայց և այնպես իմ հնձանով.  
Թեկուզ խռպոտ ու բաղաձայն՝  
Բայց իմ ձայնով.  
Թո՞ղ որ անզոր՝  
Սակայն արդա՛ր իմ ցասումով.  
Թո՞ղ որ իզուր՝  
Բայց բնակա՛ն իմ հոսումով.  
Եվ անտարբեր լրջությա՛ն դեմ՝  
Թո՞ղ որ գուցեց անհետեանք և ապարդյուն,  
Բայց և այնպես միտք խմորող իմ տաք վեճո՞վ.  
Անփառունակ-երկարատես կյանքի դիմաց՝  
Իմ մկրատված կյանքի վերջո՞վ...

## Հպարտ եմ ես

Իմ փայփայած նպատակով,  
Թեկուզ նրան շհասնե՞մ էլ  
(Մեղքը կընկնի ո՛չ իմ վզին).  
Թեկուզ նույնիսկ իզուր անցած  
Արախ ու նուրբ իմ կատակով  
(Տափակները շհասկացա՞ն).  
Իմ կտակով՝  
Թեկուզ գիտեմ,  
Որ երբեք չի կատարվի  
(Մեռածի՞ն էլ քիչ են հարգում).  
Իմ զտարյուն հովատակով,

Եմե շտա նույնիսկ սերունդ  
(նա ի՞նչ անի — մատա՛կ չկա)...  
Եվ, վերջապես, հպարտ եմ ես,  
Հպարտ եմ ես իմ... գդակո՞վ,  
Թեպետ և նա վաղո՞ւց ծակ է  
(Ճիշտ խոսողի խեղճ գդակը,  
Ինչպես զիտեք, ծակ է լինում)...

Ինձ թույլ տվեք հպարտանալ  
Եվ կարծեցյալ իմ բարզությամբ՝  
Թե լուս զին են տալիս միայն պարզունակին  
Ա, պարծենում այն պարզությամբ,  
Որին անգամ շի պղտորում  
Ոչ արյոնը,  
Ոչ սմբակը,  
Ոչ էլ կեղտը...

Ինձ թույլ տվեք, վերջի՞ն անգամ,  
Խիղախի պես հպարտ զգող  
Հնարավոր իմ պարտությամբ,  
Ինչպես նաև... նաև իմ այս հպարտությամբ,  
Որ թերևս անտեղի է...

21, 23. VI. 57

Մոսկվա

## ԱԿԱՆՁԻ ԲԵՐ ԱԼԵՄ

Ժամ կ դու եմ, ես չկամ...»  
«. ՏԵՐՅԱՆ

### ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

(Նախերգանի փոխարեն)

Թոլոր օրերից զուցե առավել անգույն — տարտամը  
Այս օրն էր որ կար,  
Իսկական միջակ ու տափակ մի օր,  
Բայց նա ինձ համար  
Մի արքիմեդյան օր զարձավ հանկարծ.  
Ոչ այն է կարծես նորից ծնվեցի,  
Ոչ այն է հանկարծ  
(Առաջի՞ն անգամ).  
Գտա ինքս ինձ.—  
Խորամուխ եղա  
Ստվերի բազում երանդների մեջ,  
Եվ լույսի բոլոր զգայարաններն ինքս զգացի.  
Եվ ծաղիկների ներկերի հյութը ինձ հայտնի զարձավ.  
Դարձա ընդերքի մրափող ապար.  
Ժայռի բարաքոս, որ արթուն է միշտ.  
Դարձա երազկոտ՝ ջրհորի նման.  
Եվ մտահոլոր՝ որպես արահետ.  
Ես ըմբռնեցի,  
Որ եթե ունես թոցնող թեր՝  
Չես զզա երբեք ծանրությունը քո.  
Եվ այն հասկացա,  
Որ դրամի պես  
Մաշվել են արդեն բառերը բոլոր.  
Հասկացա նաև,  
Որ մինչև անգամ լավ է ավելի.

Բառերն իրար հնոտ կապ իսկ շունենան,  
Քան թե շունենան կշիռ ու արժեք...

Հիշեցի նաև այն խոսքը հայտնի.  
Որ եթե մեկից կոչվես մեծամիտ  
Եվ կամ անհեթեթ,  
Եվ կամ խելազար,  
Դու հակառակը չե՞ս ապացուցի՝  
Որքա՞ն էլ ջանաս...

14. X. 59  
Զանախիկ

### ՀԱՆՐԱՆԵՍ ԱՍԵԼ

Կարող եմ կյանքում ես շա՛տ բան անել,  
Բայց անկարող եմ ինձանից վանել  
Իմ երկվորյակին՝  
Անկեղծությունը:

Ուրեմըն ասեմ ամենից առաջ,  
Հանդցնե՞մ ասել, որ ես աշխարհում  
Անխտրական եմ՝ նվազի նման,  
Անձրկի նման՝ հավասարատես,  
Բայց և կան բաներ,  
Բայց և կան մարդիկ,  
Որոնց նկատմամբ միտումնավոր եմ  
Չորր ճարակող լար կրակի պես,  
Եվ ծխի նման անտարբեր եմ ես՝  
Նրանց ճարմատում — ճիշերի հանգիպ...

15. XI. 60  
Զանախիկ

**ՔԱՅԼՈՂ ՀՐԾՈՂՈՒԹՅԱԽՆ  
ԿԱՄ  
ՎԱՌՎՈՂ ԱՐՅՈՒՆ**

Ես, որ կարող եմ ինքըս ինձ կոշել  
Եկած ապագա,  
Ես նաև բայլող հիշողություն եմ՝  
Ապքա՞ղ պատմություններ  
Թող ներվի ասել,  
Որ իմ արյունք  
Հենց համարյա թե նույն ձագումն առնել  
Ինչ ունենավթ.  
Հյութն ու ավիշն է բյութ սկրունդների,  
Մարդ ու կենդանու,  
Ու թե արյանքս լուցեկի մոտեցնես՝  
Արյունը նույնպես կարող է... վառվե՞լ»

18. XI. 59  
Զանախյի

**ՍԻՐՈՒՄ ԵՄ ՍԻՐԵԼ**

Քիչ է պատահում, որ ինքըս ինձնից  
Փոքր-ինչ զոհ լինեմ։  
Դժգոհ եմ հաճախ,  
Ուրեմն՝ մարդ եմ ու զեռ ապրում եմ։

Բայց ես սիրում եմ ինքըս ինձ սիրել։

Իսկ սիրում եմ ինձ, երբ սիրում են ինձ։  
Ես ինձ այդ պահին այնպես եմ ժպտում,  
Ինչպես ժպտում եմ այն կոր գերանին,  
Որ գետի վրա դարձել է կամուրջ։  
Եվ այն մանուկին, որ ոտաքորիկ  
Մտել է առուն և — թա՞ց վարտիկով —  
Կավ է զուրս հանում,  
Որ նավակ շինի։

18. XI. 59  
Զանախյի

## ՎԱՌԱՐԱՆԻ ԱՌԱՋ

### ԱՆՀԱՐՅ ՊԱՏԱՍԽԱՆԱՆ

Ես վերծանողն եմ խորին լոռության  
Եվ թարգմանիշը անորոտ շանթի.  
Գարնան աշկերտ եմ  
Ու սիրո վարպետ.  
Իմ կաթնեղբայրն է երաժիշտ քամին,  
Եվ ազգականը՝ խորհող անձավը.  
Ես վստահության մերձ-մտերիմն եմ,  
Բարեկի ծանոթ՝ հաջողությանը.  
Ու ճամփորդական կարճ ծանոթությամբ  
Սիրուհիս դարձավ խոհեմությունը՝  
Կոկլիկ ու սոկլիկ, միշտ շրջահայաց,  
Ամեն ինչ կշորդ խոհեմությունը,  
Բայց, փա՛ռք աստղծու, բանը շհասով  
Ո՛չ ամուսնության,  
Ո՛չ էլ զավակի,  
Որ եթե ծնվեր՝ անուն փնտրելիս  
Պիտի, ստիպված, խեղճ մատըս դրվեր  
Եղկելու վրա կամ Ողորմելու...

18. XII. 59  
Զանախիք

Իսկ քարածո՞ւխը...

Երբ նա վառվում է  
Զմեռվա ցրտին,  
Հին վառարանում,  
Եվ ձյունն է դրսում կրկնում ինքն իրեն, —  
Լինում է այնպես,  
Որ՝ մեկ էլ տեսար՝  
Սոսակին եմ լսում այն անտառների,  
Որոնք բյուրհազար տարիներ հետո  
Այս քարածուխին պիտի վերածվեն.  
Եվ գազանների ոռնոցն եմ լսում  
Այդ անտառների անեղորության մեջ.  
Եվ ձայնը նաև  
Իմ նախա-նախա-նախապապերի,  
Որ որս են անում այդ անտառներում,  
Որ մերկանդամ են  
Եվ ունեն դեռ պոչ,  
Բայց անկարող են այլներս ապրել  
Լոին խավարում կույր անձավների,  
Ինչքան էլ դրանք թվան ապահով:

Ու հասկանում եմ,  
Որ սերվել եմ ես  
Դե՛ռ այն ժամանակ, հե՛նց այն ժամանակ...

15. XIII. 59  
Երեան

## ԱՆՄԵԿՆԵԼԻ ԶԳԱՅՈՒՄ

Մտքովը հաճախ բաներ են անցնում,  
Որ շատ է նման խելազարության.

Երբ որ տավարն է ծագիկ արածում՝  
Չեմ զգում ո՛չ ցավ,  
Ո՛չ էլ ափսոսանք.  
Իսկ երբ որ մարդն է պոկում ծաղիկներ՝  
Միշտ ինչ-որ մի ցավ,  
Ինչ-որ ափսոսանք  
Մագում է հանկարծ  
Ու ծակում հոգիս...

18. XII. 59  
Չանախչի

## ՀԱՓԾՏԱԿԵԼՄ

Հափշշտակվե՞լս...

Այնքա՞ն նման է ռազաթափության.  
Շատ կարճ է տևում,  
Թվում է երկար.

18. XII. 59  
Բիթլիս

## ԶԳԱՅԱԽԱԲՈՒԹՅՈՒՆ

Ինձ մեկ-մեկ նույնիսկ այնպես է թվում,  
թե ես քնել եմ այն թագուհու հետ,  
Որին կոչում են Կլեոպատրա:

Քնել եմ, հետո... առավոտ ծեղին  
Գլխատվել նրա՝ ինձ շոյած՝ ձեռքով:

18. XI. 59  
Զանախչի

## ԱՆՎԵԼԱՍ ԽՈՐՀՈՒՐԴ

Այնտեղ, որտեղ ինձ դուք չեք համըգգա,  
Այնտեղ, որտեղ ինձ չեք համաձայնի,  
Չշտապեք, խնդրեմ, իսկույն համարել

Ուղեղի քաղհան  
Կամ սրտի բորբոս:

Մտածեք նաև ձեր որդո՞ւ մասին.  
Խոսում եմ նաև նրա՝ անոնից:  
Դուք զնալու եք,  
Իսկ նա զալո՞ւ է:

18. XI. 59  
Զանախչի

## ՆԱՀԱՆՁ ՏԱՐՎԱ ՊԵՍ

### ՈՒՐՈՒՅՆ ՀՆԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

Չեմ սիրում արխիվ ու գերեզմանոց:

Բայց երբ ճամփամերձ ծառեր եմ տեսնում,  
Թփեր ու խոտեր՝

Փոշու մեջ կորած,

Այդ վայրկյաններին ես ինձ զղում եմ  
Հնությունների մոլի սիրահար:

19. XI. 59

Զանախչի

Երբ շահելությունս անցնում է արդեն,  
Ես նո՞ր հասկացաւ,  
Որ շատ եմ նման փետրվար ամսին.  
Գիտեմ կարճանալ ու երկարանակ —  
Նայած թե՛ սեր կա՞:

18. XI. 59

Գանախչի

## ՄՐՏԻ ՑԱՎՈՎ

Թոշունի երամ խրտնեցընելիս  
Ինձ ամեն անգամ այնպես է թվում,  
Թե փախցրեցի մի խոմբ... հղացում:

19. XI. 59  
Զանախլի

## ԱՆՇՆՈՐՀԱԿԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ամեն մեկն ունի մասնագիտություն:

Հացթուխն ալյուրից ու մաքուր ջրից  
Հրի օգնությամբ տաք հաց է թխում,  
Տաք՝ սիրահարի ափերի նման:

Ամեն առավոտ նա հաց է թխում,  
Եվ ամեն անդամ, ուտելուց հետո,  
Երբ մենք ասում ենք «Չնորհակալ եմ»,  
Ոչ միայն մորն է դա վերաբերում  
Կամ տանտիրուհուն մեզ հյուրընկալող,  
Այլ նաև նրա՞ն՝  
Անհայտ հացթուխին:

Հավաքարարը շենքերն է մաքրում,  
Գոնապանները՝ բակեր ու փողոց:  
Ասենք, թե շասենք՝  
Շնորհակալ ենք:

Ամեն առավոտ,  
Ամեն երեկո  
Գործի է անցնում զրցան մեքենան,  
Որ շատ է նման փոքրացած փղի,  
Թեպետ շարժվում է նրանից արագ  
Եվ փղի կարծըր ժանիքների տեղ  
Ժանիքներ ունի փղոսկրե ջրի,  
Որ կարծր-անշարժ շեն,  
Այլ հարահոսուն:

Ասենք թե շասենք՝  
Ծնորհակալ ենք  
Մեքենավարից  
Ու մեքենայից:

Գործում է նաև նրա եղբայրը —  
Մեկ այլ մեքենա՝  
Փոշեհավաքը:  
Սա էլ իր հերթին նման է մի շան,  
Որի ետևի թաթերը կարծես  
Ճարդված-սղկված են,  
Եվ այդ պատճառով  
Նա քարշ է տալիս  
Ու... մաքրում փոշին...  
  
Ծնորհակալ ենք՝  
Առանց խոսքերի:

Ամեն մեկն ունի մասնագիտություն՝  
Դե՛մ, ես էլ մարդ եմ,  
Պիտի ունենամ:  
Եվ ունեցածըս այդ արհեստներից  
Քիչ է տարրերվում:

Ես էլ քառերի լվացարար եմ.  
Մաքրում եմ նրանց փոշին դարավոր,  
Ազատում նրանց կեզտ ու բորբոսից,  
Բառակեր ժանդից ու բառաբռսից,  
Ճանում, որ նրանք չունենան զրմուռ,  
Եվ... չնորհակալ խոսքի փոխարեն  
Ստանում եմ ես շատ հաճախ... մրմուռ  
Եվ գիտե՞ք.  
Արդեն չե՞մ էլ նեղանում:  
Եվ իմ արհեստն էլ գուցե հենց այս է՝  
Մարդկանցից բնավ չնեղանալլու...:

18. XII. 59  
Թիֆլիս

## ՄԱՏՆԻՉ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ դառնա՞մ:

### Գառնամ

Ոչ միայն խորոշի հանքահորերում  
Օղափոխություն,  
Շքանշանի գունեղ ժապավեն՝  
Իմ հողը փրկող հերոսի կրծքին,  
Այլ նաև դառնամ զերհզոր թևեր՝  
Սիրամարգերին,  
Որ երկի՞նք սուրան  
Եվ ո՛չ թե քայլեն լոկ հողի վրա:

18. XII. 59  
Զահարյակ

## ԳԱՂՏՆԱԲԱՑՈՒԹՅՈՒՆ

Մտերմուհիս է նաև... գիշերը:

Երբ նա՝ լանջարաց նեգրուհու նման,  
ինձ է հանձնըվում  
Ու տիրում է ինձ՝  
Անվերջանալի գրկախառնումից  
Ծնվում է ինքը՝ մեր արշալույսը,  
Որ թուխ ու շեկ է՝  
Որպես խառնածին:

Եվ օրը գրկած, որպես մանուկի,  
Երբ քայլում եմ ես հոր հպարտությամբ,  
Ասես լեռները, դաշտերն ու մարդիկ  
Լուս նայում են ինձ  
Ու միտք են անում.  
Թե այսքան տղեղ-այլանդակ հորից  
Ինչպե՞ս է ծնվել մանուկն այս հրաշք...

19. XI. 59

Չանալիի

18. XII. 59

Թիֆլիս

## ԹԱՔՈՒՆ ԵՐԱԶՄՆՔ

Արտառո՞ց եմ ես,

Անհասկանալի՞ւ

Ոչի՞նչ.

Քեզ կօգնեն,

Եվ կհասկանաս:

Հավատա՛, կօգնե՞ն:

Զէ՞ որ ամեն ծառ

Իմ արմատաշատ բացատրումն է  
Եվ իմ ճյուղառատ լուսաբանումը:

Ամե՞ն արարած,

Նույնիսկ բզեզը

Իմ բնագըրի մեկնությունն է հենց.

Ամե՞ն մի կացին

Ամե՞ն բահ ու մուրճ,

Սարից թավալվող ամե՞ն քարաժայռ,

Ափերը թակող ու ետ ընկըրկող

Ամե՞ն մի ալիք

Իմ իսկ խոսքերի արձագանքումն են,

Ո՛չ,

Իմ խոսքերն են արձագանքումը

նրանց բոլորի...

Այնպես որ՝ կօգնե՞ն,

Ու կհասկանաս:

20. XII. 59

Թիֆլիս

## ՀԻԱՍԹԱՓՎԵԼՈ

Հիասթափվելուս...  
Ի՞նչ ասեմ, ինչպե՞ս:  
Չէ՞ որ այդ մասին խոսելու համար  
Ստիպված պիտի ես վերապատմեմ  
Իմ ամբողջ կյանքը՝  
Այն պահից, երբ ես  
Չեռքս մեկնեցի կրակի բոցին՝  
Կարծելով, թե դա լաշակն է իմ մոր,  
Կարմի՛ր լաշակը, —  
Այդ պահից մինչև երեկ իրիկուն,  
Երբ...  
Սակայն արժե՞  
Աղ ցանել վերքին...

18. XII. 58

Թիֆլս

## ՎԱՐԴԵՐԻ ԿԱՐՄԻՐ ՃԻՉՆ ԵՄ ԵՍ ԼՍՈՒՄ

Վարդերի կարմիր ճիշն եմ ես լսում  
Իմ ծխամորճի դառն ծխի միջից  
Ու ձմռան ճերմակ սառն ծխի միջից:

Փոքրիկ մի թռչուն,  
Որի անունը չգիտեմ ցայսօր,  
Որ ուշ է շվում — ետ գալիս շատ շուտ,  
Ընկճվածության ժանրը ժամերիս  
Համակըրանքի խոսք է ինձ ասում  
Իմ ծխամորճի դառն ծխի միջից  
Ու ձմռան ճերմակ սառն ծխի միջից:  
Ու թվում է ինձ,  
Թե վիստատարը երջանկացըրեց  
Երկու սպասված ու թանկ նամակով,  
Մինչդեռ բերել էր լոկ... լրագըրեր...

18. XII. 59

Թիֆլս

Ու շթողեցիր երբեք ինձ մենակ-  
երք տատանվեցի՝  
Գարձար ինձ նեցուկ,  
Խեղանդամվեցի՝  
Գարձար դու հենակ...

Ու դեռ քայլում ենք:

## ԻՄ ԿԱԹՆԵՂԲԱՅՐՈ

Ես եղբայր շունեմ,  
Մայրս էլ մեղք շունի.  
Մնել է,  
Սակայն ծնելը քիչ է.  
Մնելն է դժվար,  
Քանի որ հաճախ  
Ե՛կ սովէ է լինում  
Ե՛կ գաղթ,  
Ե՛կ ավեր:

Ես եղբայր շունեմ:  
Ու եղբայրացար  
Ինձ եղբայր դարձար,  
Ա՛կ համբերություն:

Ես շատ եմ քայլել քեզ հետ միասին,  
Դու իմ մանկության միա՞կ խաղընկեր,  
Իմ պատանության միա՞կ զաղտնարան,  
Իմ ջահելության լո՞ւ խորհրդակից:

Փոքր էիր այնքան՝  
Երբ փոքր էի ես,  
Ինչքան մեծացա  
Դու էլ մեծացար,  
Երկվորյակի պես  
Ետ լմնացիր

Իմ Համբիկ... Համբերությո՞ւն,  
Դու էլ ես հոգնել,  
Հոգնել ես, սակայն ծպտո՞ւն չես հանում,  
Թե տրտընջում ես՝  
Միայն ականջիս,  
Որ շատ է լեցուն քո շշուկներով,  
Ինչպես փշակը՝ շնչով հոգերի  
Եվ այն լոռությամբ,  
Որ քիչ է լինում,  
Եվ այն լոռությամբ,  
Որ հասավ թե չէ՝  
Ես վեր եմ թռչում,  
Ասես խոցեցին,  
Ինչպես այն քնած շրադացուանը,  
Որ իր աղացի խոլ աղմուկի մեջ  
Կարող է քնել մեռածի նման  
Եվ խայթվածի պես խսկույն արթնանալ,  
Երբ որ իջնում է մի պահ լոռություն՝  
Երբ չի աղմրկում իր ջրաղացը...

Իմ Համբիկ... Համբերությո՞ւն...

18. XII. 58

Բիֆլու

## ԵՐԿՈՒԻՆՔԻ ՄԵԶ

Մնալով նույնը,  
նույնը լինելով  
Մեծանո՞ւմ եմ ես,  
Շարունակվո՞ւմ եմ,  
Ինչպես... սենյակը մեծ հայելու մեջ...

23. III. 59

Մռկա

## ՆԵՐԾՆՉՄԱՆ ՊԱՀՐՆ

Միաժամանակ և՝ բազմամարդ է  
Եղանակմտկ է իմ հոգին:  
**Այդպես**  
Կինում է միայն համըր կինոյում  
Ու... թանգարանում:

19. XI. 59

Զանախցի

## ԱՆՄԵԴ-ՄԵՂԱՎՈՐ

Խակությունից է ատամը, առնում:  
Մշ միայն ատամն, այլ նաև հոգի՝ նու  
եվ մի՞թե, մի՞թե ես եմ մեղավոր:  
Ար խակն ու թթուն շատ է աշխարհում:

19. Հ. 1. 59

Չանախչի

## ՓՈՍՏԱՅԻՆ ԼԵԶՎԱԿ

Սո մարդ եմ կոչվում, եթե ոչ — ասե՞մ —  
Պիսի կոչվեի հեռագրատուն,  
Որ ունի... լոկ մե՛կ հեռագըրավար:

Աշխարհի բոլո՞ր-բոլո՞ր ծայրերից  
Անծանոթ-անհայտ մարդիկ բյուրավոր:  
Դարձրել են ինձ զաղտնարանն իրենց.  
Առանց ավելորդ որեւէ բարի.  
Մինչն իսկ առանց կհտազրության,  
Դաղտնիքներն իրենց ինձ են վստահում.  
Հայտնում ե՛ վիշտը,  
Ե՛կ ինդությունը:

Լոին վկան եմ ես նրանց սիրո,  
Նրանց բաժանման ականատեսը,  
Նրանց կարոտի խոսքերը զիտեմ  
Եվ տառապանքի շնչին եմ ծանոթ:  
Թե հարսանիք է՝  
Նրանց բոլորի հյուրն եմ առաջին.  
Եթե ձնունդ է՝  
Իմն է առաջին բառն աշքալուսի.  
Ու եթե թաղում՝  
Ես եմ առաջին հուղարկավորը...

Տեղյակ եմ նրանց հաջողությանը,  
Տեղյակ եմ նրանց ձախորդությանը,  
Դատարկ առիթով ուրախանալուն,

Դատարկ բաներից տխրելուն նաև,  
Որ միշտ ջանում ու ծզոռում են ասել  
Առանց ավելորդ ո՞րևէ բառի  
Եվ նույնիսկ առանց կետաղըրության,  
Եվ այս պատճառով  
Երբեմբն կակագ-թլվատ են թվում...

Ես մարդ եմ կոչվում, եթե ոչ... կյանքում  
Հեռագրատուն պիտի կոչվեի:

Եվ այդտեղից է գալիս երե՛ք բան.  
— Ուրիշների ցավն ու խնդությունը  
Իմ սրտին այնքա՞ն մոտ ընդունելու:  
— Սով գաղտնիքներըս,  
Որոնց մի չնշի՞ն մասն եմ բաց անում:  
— Եվ երրորդ՝  
Նաև... թլվատությունըս...

### ԱՌԱՆՑ ԱՍՏԱՌԻ

Ես ուրախության գործակատար եմ  
Եվ խոր խնդության վաճառորդ եմ ես,  
Բաց կրպակ ունեմ առողջ ծիծաղի,  
Աւ ժպիտների կիսափակ խանութի,  
Եվ երջանկության հաղորդիչներ են  
Իմ զույգ ափերը  
Ու մատներն իմ տաս:  
Բերանըս սիրո մի սերտարան է,  
Իմ զույգ ոտները՝  
Ժամադրավայր տանող ինքնաշարժ,  
Իսկ իմ թերը՝  
Գիրկ ու խտիտի խելացի զործիք:  
Կուրծքըս պաստառ է շքանշանի,  
Մի շքանշա՞ն, որ կոչվում է սի՞րտ,  
Եվ որ պաստառի ներսից են կրում...

Այսքանից հետո՝  
Էլ ի՞նչ կարիք կաւ,  
Էլ ինչո՞ւ եմ ես ինքըս իմ մասին  
Ինչ-որ շափածու տեղեկանք գրում:

Աշխարհին ուղղված մի բացիկ եմ ես.  
Մի՛ ծրարեք ինձ  
Եվ մի՛ սոսընձեք...

19. XI. 59  
Զանախչի

## ՈՒՂՏԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Ես ուղտի նման սակավապետ եմ,  
Բայց ոչ ուղտի պես քենը միշտ պահող,  
Նման եմ ուղտի եղս մի բանով.

ԷՇ, մեկ էլ տեսար՝  
Պար գալըս բռնեց  
Խարխով ու ճոճկան կամըրջի վրաւ.

15. XII. 59  
Երեակ

## ԱԼԱԶՅ ՀՈՎՈՅ

Ես նա եմ նաև,  
Ով հասկանում է,  
Թե ինչու է միշտ ավազը լոռում:

Նա հիշում է այն ջրհեղեղները  
Նախապատմական,  
Որոնց լուս վկան նույն ինքն է որ կատ  
Իսկ երբ չար քամին  
Խաղում է նրա խեղճ ջղերի հետ՝  
Հիշեցընելով  
Նրա փառավոր անցյալը կորած  
Ու նրա ներկան աննախանձելի,  
Ավազը հանկարծ հովագ է դառնում՝  
Ճանկըրտում քամու  
Ու նաև մարդկանց  
Լողիրշ աշքերը:

Ու նաև մարդկա՞նց,  
Որ մոռանում են իրենց անցյալը:

15. XII. 59  
Երեակ

## ԻՄ ԱՆԵԼԻՔԸ

Ես նա եմ նաև,  
Որ տարբերում է պաշլ համբույրից,  
Ինչպես սիրողին՝ սիրահարվածից,  
Եվ մահացումը՝ մեռնելուց:  
Իրոք.  
Ի՞նչ է իմ գործը,  
Եթե ոչ չոկել  
Ոչ թե կեղծիքը ճշմարտությունից,  
Այլև տարբերել սուտը կեղծիքից,  
Ճիշտը՝ ճշմարտից և ճշգրիտից,  
Գութը՝ խղճալուց...  
.

Իսկ երբ ես շատ եմ ինքըս ինձ նման,  
Այսինքն՝ բարձր ինքըս ինձանից.  
Ես տարբերում եմ մուժը մշուշից.  
Ու մառախուղից մեզն եմ տարբերում:  
Տարբերում նաև  
Բախտավորություն ու երջանկություն,  
Ոճիր ու հանցանք:

Ու երբ ես շատ եմ ինքըս ինձ նման,  
Այսինքն՝ բարձր ինքըս ինձանից,  
Զարմանալի՛ բան —  
Ես՝ Տարբերողը,  
Բնա՛վ ամենքից ինձ չեմ տարբերում...

15. XII. 59  
Երևան

## ԱՐԹՈՒՅՆՈՂ ԺԱՄԱՅՈՒՅՑ

Եվ, վերջ ի վերջո, ես ի՞նչ եմ, գիտե՞ք:  
Ես արթնացընող մի ժամացույց եմ՝  
Էտո ձե՛ր ցանկության,  
Ձե՛ր ձեռքով լարված:  
Ու երբ պետք է ձեզ՝  
Սրտաճաք ճիշով  
Արթնացնում եմ ձեզ,  
Որ քնով չընկնեք:  
  
Եվ հաճախ,  
Երբև շնորհակալիք,  
Գլխիս եք բամփում,  
Որ ձայնըս կտրեմ...

99.-17. 59  
Մասկա

## ԱՄԵՆԻՑ ԽՈՍՉ ԵՍ ՀԱՅՐ ԵՄ

Երբ անլուսընկա ու պարզ երկընքում  
Աստղաբներ են երեսում նորից՝  
Բնակալիներով իրենց հատ ու կենա  
Կամ թխսկան հայցող ձկակույտերով.  
Երբ իր սև կաթով զիշերը բարի  
Ծեկ լուսաբացն է մայրաբար սնում, —  
Կրկին խոսում է հայրությունն իմ մեջ:

Աշխարհի բոլո՞ր որբ մանուկներին  
Որդեգրելու այն միտքը կպշուն,  
Որ սոսընձվել է իմ հիմար սրտին  
Ու գարձել նրա թաղանթը երկրորդ,  
Այդ միտքը նորից — կրկի՞ն — վերըստի՞ն  
Ճշում է իմ փակ երակների մեջ,  
Ուզում եմ, որ ինձ ռհայրիկ զա՞նս կանչեն  
Աշխարհի բոլո՞ր-բոլո՞ր ծայրերից:  
Ուզում եմ, որ գան,  
Թղթերըս խառնեն,  
Քաշեն մաղերըս,  
Նստեն ծնկներիս,  
Պաշպըշվենք ամուր,  
Եվ պարզ նկատեմ  
Իմ իսկ սեփական նմանությունը  
Բոլորի՝ զեմքին,  
Շարժուձեմի մեջ —  
Ծեկ լինեն թե թուխ,  
Աղջիկ թե տղա...

Ես կասկած չունեմ,  
Որ եթե հանկարծ գա մի հարցասեր  
Եվ ինձ՝ քնածիս,  
Ինչպես որ հարկն է զեռ շարթնացըրած՝  
Հարց տա.  
— Ի՞նչ ես զու ամենից առաջ, —

Ես կասկած չունեմ,  
Որ զեռ չզարթնած,  
Գեռ քունը գլխիս.  
— Ամենից առաջ ես հա՛յը եմ, — կասեմ...»

19. III. 59  
Քիչմի

## ՈՉ ԱՌԱՆՅ ՑԱՎԻ

Այն էլ զգացի, ցավո՞վ զգացի,  
Որ կտրպվելուց հետո է միազն  
Երկում ծառի բուն հաստությունը:

15. XII. 59  
Երևան

## ՀԱՄԲԻՉ ԵՄ ԴԱՐՁԵԼ

Համբիչ եմ դարձել ես ձեր մատներին.  
Քաշում — ետ աալիս.  
Հաշիվ եք անում  
Ու դեռ ուզում եք,  
Որ մինչև անգամ ձա՞յնըս գուրս Հզաւ,  
Որ չըխկչըխկա՞մ...

15. XII. 59  
Երևան

## ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Եվ ա'յն հասկացա,  
Ռ'վ Ազատություն,  
Որ կարծեմ շատ ես դու նման աղի.

Երբ քեզ պեղում են՝  
Հանում ընդերքից,  
**Իրենց** ձեռքերն են մարդիկ կտրամառմ,  
Ինչպես ապակուց...  
Ու երբ լուծվում ես՝  
Ճիշտ աղի նման  
Դու չես երևում.  
Դու համ ես զառնում...  
Իսկ եթե չկաս՝  
Անհամություն է,  
Որ և կարող է կոչվել բռնություն...  
Իսկ եթե չկաս՝  
Կարող է հոտել  
Ե'վ թանկ սնունդը,  
Որ հոգեռ է...

Իսկապես, որ դու նման ես աղի:

18. XII. 59  
Քիջլս

## ԵՍ ԶԵՄ ԾՏԱՊՈՒՄ

Ես չեմ շտապում:  
Շտապում է նա,  
Ով ուշանում է:  
  
Ես չեմ ուշանում:  
Ու թե տանջլում եմ՝  
Ուշացողների երեսից միայն,  
Ուշացողների՝,  
Որ հաճախ նույնիսկ կարող են կոչվել  
Ե'վ առաջավոր,  
Ե'վ առաջատար:

18. XII. 59  
Քիջլս

## ԵՍ ՉԵՄ ՈՐՈՇՈՒՄ

Ես չեմ որոնում:  
Որոնում է նա,  
Ով կամենում է ինչ-որ բան զանել  
իսկ ես... չդիտեմ, թե ինչպե՞ս գտնեմ

Իմ ունեցածը ցույց տալու հնարյա

19. XII. 59  
Թիֆլս

## ՌԵՏԻՆ ՉԵՄ—ԹՈՒՂԹ ԵՑ

Ա՛խ, դժբախտաբար, ուստինից չեմ ես,  
Որ ձգես՝ ձգվեմ,  
Թողնես՝ կարճանամ,  
Ինչքան ճմբրթես՝  
Թողնելուց հետո  
Եռութերը ստանամ իմ տեսքը նախկին:

Ես, ավելի շուտ, թղթի եմ նման.  
Քաշես՝ կպատռես,  
Ճմբրթես՝ պրծան՝ վ—  
Իմ նախկին տեսքը չի՝ վերականգնի  
Եվ ո՛չ մի արդուկ:

Կյանքի հետքերը վրաս են մնում  
Եվ անց չեն կենում,  
Ինչպես տառերը՝ մամըլված թղթից...

29. XII. 59.  
Թիֆլս

## ՀԱՎԱՏՈ ՀԱՌԳԱՎԱԼԿ

Ես էլ հավատո հանգանակ ունեմ,  
Որ կարճ լինելով՝  
Դյուրին է հիշվում:

— Լավ է չունենալ կյանքում տուն ու տեղ,  
Քան թե արվեստում լինել... տնիկնա...

28. XII. 59  
ԹԻՖԻՆ

## ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԳՐՈՑՎԱԾ ԵՄ

Եվ ամբողջովին գրոտված եմ ես,  
Այնպիս եմ պատված սոսինձ բառերով,  
Ինչպիս հնձվորի ոտք ու ծնկերը  
Փշոտ սերմերով այն լափիրշ բույսի.  
Որ հենց այդպիս էլ կոչվում է կպչուկ:

Ոտիցըս-զլուխ գրոտված եմ ես,  
Ու եթե վրաս լուսանցք է մնում,  
Դա էլ՝ ձե՛զ համար,  
Որ զրի առնեք  
Զեր հազա՞ր ու մի դիտողությունը.

— Մի «կեցցես»-ի հետ՝ հազար «բա եղա՛վ»:

29. XII. 59  
ԹԻՖԻՆ

## ՄԻ ԽՈՐՈՒՆԿ ԳՅՂՏՌԻՔ

Եա՝տ խարազան է շաշել իմ գլխին,  
Ես՝տ մտրակ՝ մեղքին հասցեազրովել,  
Եվ հարվածների, զարկերի թիվը  
Համրելու համար ինձ պետք է հիմա  
Սի պատկառելի հաշվապահություն,  
Բայց...

Այսօր բացեմ զաղտնիք մի խորունկ,  
Ար անշուշտ պիտի խիստ ցավ պատճառի  
Ինձ ցավ պատճառել ցանկացող մարդկանց:  
Նրանք զարկե՞լ են, հարվածե՞լ, ծեծե՞լ,  
Բայց ինձ ո՞չ մի զարկ չի հասել բնավ,  
Ինձ ո՞չ մի հարված չի դիպել եղբեք,  
Աւ ես ո՞չ մի ծեծ չեմ կերել կյանքում:

Նրանք զարկե՞լ են, հարվածե՞լ, ծեծե՞լ  
Ո՞չ թե ինձ,  
Այլ լոկ այն տեղը, ուր ես  
Կանգնած եմ եղել մի վայրկյան առաջ.  
Սի վայրկյան առաջ... առաջ եմ անցել:

Եվ, այնուհանդերձ, եթե ինձ նրանք  
Ցավ են պատճառել,  
Ապա այն փոշով,  
Որ բարձրացել է նրանց հարվածից  
Եվ ինձ հասնելով լոկ հեռվից-հեռու  
Լցվել է իրենց, իրենց աշքերը...

[1959]

## ՊԻՏԻ ԾԱՆԱԿԱԵՄ

Կիտեմ, վերըստին պիտի ծանակվեմ,  
Սակայն ի՞նչ արած,  
Չասել չե՞մ կարող,  
Որ լոռվթյունը նույնպե՞ս գույն ունի.  
Սպիտակ է նա,  
Այնքան սպիտակ,  
Որ աշք է շաղվում...

Փառքը համ ունի՝  
Թիվաշ ու տտիպ,  
Որ ախորժակ է գրգռում միայն՝  
Չտալով հազորդ...

Իանդը հոտ ունի՝  
Այն հոտը արյան,  
Որ ցուլերին է կատաղեցընում...

Եվ արյուն ունի նաև նախանձը,  
Արյունն այդ սկ է,  
Ինչպես արյունը միջատ-մրջունի...

19. ՀԻ. 59

ԲԻԳԻԱ

## ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՌԵՐ

Հուսահատության պահե՞ր  
ինչպե՞ս չէ.

Լինում են, լինո՞ւմ,  
Նույնիսկ ավելի՛, քան հարկավոր է:

Հուսահատվում եմ ինքըս ինձանից.

— Երբ շատ լավ գիտեմ,  
Որ պետք է ասել «այո»,  
Մինչդեռ ես «ոչ» եմ բղավում...

— Երբ ես՝ խելահաս ու հասում արդեն,  
Երեխայի պես այն եմ դուրս տալիս,  
Ինչ տան գաղտնիք է.  
Փո՞քը տան թե մեծ, —  
Մի՞թե նույնը չէ...

— Երբ իմ սիրածից չհասթափված,  
Ավելին՝ նրան դարձյալ սիրելով  
Հափշշտակվում եմ նորահայտ մեկով..

— Երբ ես հենց այսպե՞ս անկեղծանում եմ՝  
Ինքս էլ, ա՞յս, ի՞նքս էլ լավ հասկանալով,  
Որ արդեն այսշափ անկեղծանալուց  
Մինչև երջանիկ հիմարությունը  
Կես քայլ է միայն...

— Հուսահատվում եմ նաև ա՛յն բանից,  
Քե որքա՞ն պիտի դեռ հուսահատվեմ  
Ինքըս ինձանից...

26. XII. 59

Թիֆլս

## ԶՐԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Զրերի լեզուն ասես ինձ համար  
Կիսով սովորած օտար լեզու է.  
Ի՞նչ էլ որ ասեն՝  
Հասկանում եմ լավ,  
Բայց պատասխանե՞լ  
Չե՞մ կարողանում...

19. XII. 59

Թիֆլս

## ԱՆԿՈՉ ՀԱՅՐԸ

Անհանդստություն,  
Հաճախ է լինում,  
Որ կամենում եմ քեզ «Հայրիկ» կոչելու  
  
Ո՞վ էլ շիմանա՝  
Ինքը լա՞վ գիտեմ,  
Թե ոնց եմ ուզում  
Մտքով ու հոգով  
Մի տեղից այլ տեղ,  
Սրտից-սիրտ քոչելու  
  
Ախար որտեղի՞ց  
Այս վաշկատունի արյունը իմ մեջ,  
Եթե նախնիքըս,  
Հի՞նգ հազար տարի,  
Ապրել են անվերջ նստակյաց կյանքով:

19. XII. 59  
Թիֆլիս

## ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Եվ ի՞նչ ենք ախար մենք անում, գիտե՞ք:  
Կասեք՝ ապօռմ ենք,  
Այնինչ ես կասեմ.  
Որ մենք նստել ենք մի մե՛ծ կարուսել՝  
Նույն ուղեծիրով անվերջ պատըտվող  
Այս երկրի վրա:  
  
Եվ դուք դրանից ձեզ վատ չե՞ք զգում:  
Իսկ ես, ճիշտն ասած. այդ կարուսելից  
Գլխապառված եմ ունենում հաճախ...

20. XII. 59  
Թիֆլիս

## ԱՆՁՐԵՎԱՅԻՆ ՍՈՂԱՏԸ

(Հինգ նվազով՝ մինոր նեշականությամբ)

### Ա. ԽՎԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա  
Կամ քաղաքային գորշ փողոցներում՝  
Ամենքի կողմից գուցե մոռացված  
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն,  
Երբ տիրությունն է ներս մտնում իմ տուն  
Ու դառնում տանտեր,—

Կիսախելազար մտքեր են գալիս  
Ու խտանում են իմ խեղճ գանգի մեջ,  
Խտանում, ինչպես սերմերը՝ հասկում:

Ես միտք եմ անում,  
Այս, եթե մեռնելն այնպես հեշտ լիներ,  
Ինչպես ծնվելը...  
Բայց մինչեւ անզամ թե այդպես լիներ,  
Կշահեինք մե՛նք,  
Դարձյա՛լ-վերստի՛ն-կրկի՛ն-նորի՛ց մե՛նք,  
Բայց ո՛չ մայրերը:

Բա մեղք չե՛ն նրանք...

### Բ. ԽՎԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա  
Կամ քաղաքային գորշ փողոցներում՝  
Ամենքի կողմից իզո՞ւր մոռացված  
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն,  
Երբ տիրությունն է ներս մտնում իմ տուն  
Ու դառնում տանտեր,—

Պարապ քայլերով պատից մինչև պատ՝  
Կոշիկիս մոթով ու կրունկներով  
Խով նվազում եմ հատակի վրա,  
Որ տանտիրուհու ձեռքի է կարուտ,  
Եվ այդ նվազին ունկ շդնելով՝  
Հանկարծ միտք անում,  
Թե շոնն ինչո՞ւ է հաշում լուսնյակի,  
Սակայն ոչ երբեք Արեի վրա:

Եվ շգանելով հարմար պատասխան,  
Ավելին՝ նույնիսկ շըորոնելով,  
Զգում եմ, թե ես ո՞նց եմ կարոտել  
Այս ավազակին,  
Որ կոշվում է շոգ:

### Գ. ԽՎԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա  
Կամ քաղաքային գորշ փողոցներում՝  
Ամենքի կողմից արդե՛ն մոռացված  
Ինչ-որ անձրև է թախծում ինքն իրեն,  
Երբ տիրությունն է ներս մտնում իմ տուն  
Ու դառնում տանտեր,—  
Աշքըս, ակամա,  
Ճամփորդության է դուրս գալիս հանկարծ,

Դիմացի շենքի  
Ջարդաքանդակված քիվի երկայնքով,  
Ճամփորդում այնպե՞ս զգույշ ու դանդաղ,

Ասես մրջյուն է  
Եվ ոչ թե հայացք,  
Ճամփորդում է նա քիվի երկայնքով,  
Եվ հասկանում եմ ես լուսնոտներին,  
Ու հանկարծ —  
Կյանքումս առաջի՛ն անգամ,—

Հուս միտք եմ անում,  
Հուսանային ախտով հրվանդներ թե կան,  
Իսկ ինչո՞ւ չկան  
Արեի ախտով տառապող մարդիկ,  
Եվ դա չի՝ կապվում այն առեղծվածին,  
Թե շուն ինչո՞ւ է հաշում լուսնյակի,  
Սակայն ոչ երբեք Արեի վրա...

#### Դ. ՆԱԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա  
Կամ քաղաքային գորշ փողոցներում  
Ամենքի կողմից վաղո՞ւց մոռացված  
Նույն այդ անձրևն է ինքն իրեն թախծում,  
Երբ տիրությունը դարձյա՛լ իմ տան մեջ  
Իրեն պահում է տանտիրոջ նման,—  
Գուսեղանից մի դիրք եմ վերցնում,  
Որ՝ հիտապընդպած իմ իսկ մտքերից՝  
Գեթ ապավինեմ էցերին նրա:

Վերցնում եմ և — ի՞նչ.  
Խորհում ակամա,  
Որ նույնիւկ գիրքը... նա էլ է նեղվում՝  
Ըսդմիշտ սեղմըլած ամուր կազմի մեջ...

#### Ե. ՆԱԱԳ

Երբ աշնանային դաշտերի վրա  
Կամ քաղաքային գորշ փողոցներում  
Ամենքի կողմից ընդմի՛շտ մոռացված  
Նույն հին անձրևն է թախծում ինքն իրեն,  
Եվ տիրությունը իմ ներկայությամբ  
Տանը մեջ իրեն տանտեր է զգում,—  
Էլ ի՞նչ է մնում,  
Որ ես ինչ անեմ.—  
Պլուխս եմ կոզպում

Ու բաց եմ անում փակված բերանըս.  
— է՛յ, ընկեր երկինք,  
Մի՛ խովիզանիր,  
Թե չէ՝ միւլիցիա կզանգահարեմ:

Չայնըս չի՝ հասնում հեռու երկընքին,  
Թե՝ միւլիցիայից նա չի երկյուղում,  
Եվ բաց չի անում իր դեմքը ամպած  
Ամենքի կողմից իզո՞ւր մոռացված  
Այդ նույն անձրևն է թախծում ինքն իրեն,  
Իմ տուն ներս եկած տիրությունն անկոչ  
Տանտիրությունն է դեռ շարունակում,  
Ու ես, զայրագի՞ն,  
Ու ես, ճարահա՛տ,  
Քենըս թափում եմ իմ խոհանոցի ծարակի վրա,  
Որ բաց է եղել.  
Ես խեղելո՞ւ պես ծորակն եմ փակում:

Եթե անզոր եմ երկընքի հանդեպ,  
Այս լիրը ծորա՛կը թող լոի գոնե,  
Որ... շատեմ շուրջ  
Ու շկարոտեմ ա՛յն ավաղակին,  
Որ շոգ է կոշվում:

19. XII. 59  
Թիֆլիս

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՁՈՒՄ

### I

Ճանապարհների փոշիների մեջ  
Դնում են կնիք նախարարական,  
Մի կնիք,  
Որին հաշվի չի առնում  
Լոկ օրինազանց, քրեագործ քամին...

Սրտի տրոփի ու բարախ են բաշխում  
Մայթերին անկյանք...

Վստահություն են ներշնչում հողին,  
ԱՇԽ վաղընջական — հինավուրց հողին,  
Որ չի կորցնի վստահությունը...

— Այդ... իմ քայլե՞րն են:

18. III. 59  
Քիչուն

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՁՈՒՄ

### II

Մի քիչ զարմանք են պատճառում մարդկանց,  
Բայց ավելի շատ՝ անախորժություն...

Փակ դուռ բացելու սուր ճոխնչ ունեն,  
Հին դուռ փակելու ցավալի թակոց...

Ուրիշի շրթին պաղած են թվում,  
Մինչդեռ այրում են իմ բերանը՝ միշտ...

— Այդ... իմ խոսքե՞րն են:

18. XII. 59  
Քիչուն

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

### III

Կանաչ մամուռից արցունք է ծորում,  
Ծորում է գանգա՛ղ,  
Ծորում է անձա՛յն  
Ու մեղմիկ ձթում  
Այն քարածայոի փոքրիկ սանդի մեջ,  
Որ ինքն և փորել  
  
Ճթում է մեղմի՞կ,  
Իսկ իմ ականջում  
Դա փոխարկվում է ահեղ դղիբողի՞...  
  
— Անքնությո՞ւնս է,

18. XII. 59  
ԲԻՖԻՒ

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

### IV

Հանկարծ զգում եմ ինձ ազատ — այնպե՛ս,  
Ինչպես հովատակն՝ արոտում արձակ,  
Ինչպես կրակը՝ վառվող անտառում...  
  
Խվում է կյանքում ամե՞նքն են խելոք,  
Ամե՞նքն են իրոք ամե՞ն ինչ զգում...  
  
— Այդ... ես եմ երգում՝  
Միայն ի՞նձ համար:

18. XII. 59  
ԲԻՖԻՒ

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

V

Քայլում եմ գարնան լեցուն փողոցով  
Ու չեմ նկատում մինչև իսկ կանանց,  
Որ գեղեցիկ են՝ բարկացնելո՛ւ շափ...

Քայլում եմ այնպես դանդա՞ղ-զիխիկո՞ր,  
Ասես փողոցն է հանգուցվել ոտիս  
Ու խճողում է քայլքըս, խճընում...

Արփին շողերի ցած մեկնած ճանկով  
Գոռոզ մազերս է թերելըս քաշում,  
Որ վառի-ցնցի և ուշքի թերի,  
Բայց ես չեմ զգում ո՛չ ցավ,  
Ո՛չ այրուցք...

Արյունըս այնպես դանդաղ է հոսում,  
Ինչպես հարթ հովտում գետը ծավալվում,  
Երբ չեմ էլ կարող հասկանալ կարգին,  
Թե նա ո՞ր կողմից ո՞ր կողմն է հոսում...

Մի բան եմ հիշում  
Եկ կիսատ թողած՝

Մտքով կառչում եմ մեկ ուրիշ բանի...  
Ինքըս ինձ խղճում.  
Ուզում եմ, որ ինձ  
Մի փո՞քը սիրեն՝  
Թեկուզ նոպաստով...

— Այդ... ես եմ թախծում...

18. XII. 59

Թիֆլս

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

VI

Ետ-ետ են գնում պատերը հանկարծ,  
Անլիրջ հեռանում,  
Դառնում հորիզոն,  
Քի հորիզոնն է այնքան մոտենում,  
Որ եթե ուզեմ,  
Որպես նոր կախարդ.  
Իմ զույգ ձեռքերով կարող եմ հունցել  
Նրա կապույտը՝  
Խմորի նման...

Աղմուկ ու ժխոր ողողում են ինձ,  
Բայց ինձ չեն կպչում,  
Ինչպես ձկանը՝ չուրը օվկիանի...

— Իմ... լռությո՛մն է:

18. XII. 59

Թիֆլս

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՉՈՒՄ

### VII

Հոին շրթերըս մի բույն ևն դառնում,  
Ուր թուխս է նսառամ քմծիծաղն ինքը...

Նայում եմ, սակայն ոչինչ չեմ տեսնում,  
Ու թե տեսնում եմ  
Միայն ինքըս ինձ...

Կաղուց այր հասուն՝  
Ճղում եմ հանկարծ,  
Որ ես տակավին հասակ եմ առնում,  
Ինքըս մի զլխով բարձրանում ինձնից...

Վստահությունը ստվերս է դառնում  
Կամ առաջնորդըս:

— Արհամարհանքս է:

31. XII. 59  
Թիգիս

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՉՈՒՄ

### VIII

Երդիկի նման՝ բաց են աշբերըս,  
Թերանս է բացվում՝ մի լայն գոան պես,  
Բայց նա — ծխի պես — մնում է ներսում  
Ու խեղդում տան մեջ բնակվող խեղճիս...

Ճշում է, սակայն... ինչպես քնի մեջ,  
Ճիշը դառնում է մի խուլ փնթինթոց...

Եվ ի՞նչ թափով էլ ինձնից վեր նետեմ՝  
Նա — քարի նման — ներքեւ է ընկնում...

Ու նմանվում է մի չեղա՛ծ թվի,  
Որ չի բաժանվում այլ թվի վրա...

— Այդ... իմ տանշա՞նքն է:

31. XIII. 59  
Թիգիս

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

### IX

Հանգիստ շեն տալիս ինձ օր ու զիշեր,  
Իմ հոգսը թողած՝  
Հոգում ձե՛ր համար...

Էկուցարարի տենդով են այրվում.  
Ուզում են մաքրել աշխա՞րհը համայն...

Որքան քշում եմ, որ ինձնից վանեմ,  
Այնքան զազազում ու պոկ չեն զաւիս՝  
Մեղրի հոտ առած մեղուների պես...

Սիաժամանակ պահակ են ու զող,  
Սիաժամանակ ծառա են ու տեր,  
Սիաժամանակ իմն են ու ձերը...

— Այդ... իմ խոհե՛րն են:

18.-XII. 59  
Թիֆլիս

## ՎԵՐՆԱԳԻՐԸ ՎԵՐՋՈՒՄ

### X

Խնձուս խարուցկը լույս է շաղ տաշիս  
Եվ անշատում է գույն ու շերմաթյուն,  
Այդպես էլ ինձնից պոկվում է ծիծաղ,  
Թափվում է ժպիտ,  
Եվ բարություն է կաթկրթում անվերջ  
Իմ զեմքից,  
Նաև հագուստի՞ց անզամ...

Ինքըս վերըստին ինձ եմ նմանվում  
Ու ճանաշում եմ կրկին ինքըս ինձ.  
Զգում եմ, որ ես իմ հորն եմ բաշել,  
Եվ ինձ չի եղծել կյանքը ոչնչով...

Որտեղ էլ լինեմ՝  
Իմ տանն եմ զզում,  
Եվ բաց է սիրտը՝  
Հեռագրատան դռների նման...

Համբուլը պես է նայվածքըս շերմին,  
Խոսքըս՝ համբուլը շարունակություն,  
Որից կարող են... մանուկնե՞ր ծնվել...

— Այդ... ես եմ ուրա՛խ:

31. XII. 59  
Թիֆլիս

## ՀԱՐԿ ՀՈԳԵԿԱՆ

### ՎԵՐՆՍԳԻՐԸ ՎԵՐԶՈՒՄ

ХІ

Նա թարգմանիյն է ձեր այն (ինչերի՝),  
Որ չեն հասցըրել անգամ մի՛տք գառնաւ,  
Այլ ընդամենը շարժում են հոգու,  
Խաղ են մկանի  
Կամ արյունի եռք...

Նույն ինքը նա է,  
Որ լաց է լինում  
Խաղալիք ուզող ձեր երեխայի  
Անմեղ աշքերով,  
Եվ ժպիս գառնում  
Ձեր նորածինի երեսի վրա...

Թեպետ շղիտի ճամփան էլ ձեր տան  
Եվ ո՛չ մի անգամ չի եղել այնտեղ,  
Բայց ձեզ այնքան է բարեկամ ներքուստ,  
Որ նրա վրա նույնիսկ չի հաշի  
Ձեր զգոն շունը...

Նա ձեր փոխարեն  
Ձեր երազներն է տեսնում քնի մեջ...

— Այդ... ե՞ս եմ որ կամ:

Տ1. XIII. 59  
Թիֆլիս

### ԵՐԳ ԵՌԱՋԱՅՑՆ

#### ԱՌԱՋԻՆ ԶԱՅՆ

Ախ, իմ հայրենիք...

Իմ ամբողջ կյանքում լեզուղ եմ սերտում  
Եվ չեմ սովորել անսխալ խոսել,  
Անսխալ խոսել քո մասին քեզ հետ.  
Շփոթվում եմ միշտ անանց հուզմունքից...

Երբ վաղ գարնանը կկուղ է կվաւում,  
Ինձ ամեն անգամ այնպես է թվում,  
Թե թարգմանում է իր թլվատ լեզով  
Շնորհավորման իմ խոսքը կակազ.  
Նա քո գարունն է շնորհավորում  
Եվ իմ փոխարեն...

Քո ամառային ստվերներն անգամ  
Իրենց լուսիյամբ ինձ են թարգմանում՝  
Երգելով հիմնը արեիդ լույսի.  
Ելեչչում են յուրահատկորեն՝  
Երկարանալով ու կարճանալով  
Մենք բոցերի պես:  
Աշնան կաթուկը այդիներիդ մեջ  
Բերք ու բարիքիդ օրհներգումն է իմ՝  
Համաշխարհային — մատշելի լեզվով...  
Եվ նույնիսկ այնժամ,  
Երբ խոսում եմ ես քո մասին քեզ հետ,

Մինչեմ սկ այնժամ  
Այլ բան չեմ անում,  
Կան թե խոսքերով շափում եմ միայն իմ լոռոթյունը,  
Որպեսզի կրկին հասկանամ ցավո՞վ,  
Թե այդ լոռոթյան համեմատությամբ  
Խոսքերն այդ որքա՞ն փոքր են ու լնջին...

Ա՛խ, իմ հայրենի՞ք...

Գու՝

Հազարամյա իմ ազգանո՞ւնը,  
Ես —

այնպե՞ս ապրել կարողանայի,  
Որ ինձ ազգանուն բաշխելուդ համար  
Դու երբեից անհարմար զզաս...

Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է:  
Ա՛խ, երանի՞ թե ես այնպե՞ս մեռնեմ,  
Որ դու... ինձ սզաս:

ԵՐԿՐՈՐԴ ԶԱՅՆ

Ա՛խ, իմ հայրենի՞ք...

Ես ոչի՞նչ, ոչի՞նչ բեզ տալ չեմ կարող,  
Ինչ էլ տամ՝ կրկին տվածդ եմ տալիս:

Մինչեսկ չունեմ պարտքի զզացում.  
Ես ոտից-զլո՞ւխ քո պարտքն եմ որ կամ:

Հավաստիացման խոսք նա է առում,  
Ավ ուզում է, որ հավատան իրեն:

Իսկ ես միտք չունեմ հավատացնելու.

Ես հավատն եմ քո,  
Քայլո՞ղ հավատը...

Ա՛խ, իմ հայրենի՞ք...  
Ինձ կոչ են անում կյանքը ճանաշել,—  
Ավելո՞րդ ձգտում.  
Ես մասն եմ կյանքիդ:

Ես քո մամուռն եմ՝  
Հինավուրց ու նոր քո կամուրջների քարերի վրա,  
Քո աղբյուրների գուռերի կողին:

Եվ քո մրմուռն եմ,  
Որ չի թարգմանվում ուրիշ մի լեզվի...

Ծուխն եմ երեկվա քո երդիկների  
Եվ քո այսօրվա ծխնելույզների ծուխն եմ միմիայն՝  
Քո թեժ կրակից թերեւս անմաս,  
Բայց ծնված այդ նույն կրակից քո թեժ:  
Քո ծուխն եմ միայն,  
Եվ մթնոլորտին քո շունչն եմ խառնում՝  
Այդ ծխի տեսքով:  
Քո ծուխն եմ միայն.  
Խոսել չեմ կարող,  
Բայց նկարում եմ կենդանությունը՝  
Երկնի կտավին...

Քո հավերժական ու մշտափոփոխ բնանկարի  
Երանգներից եմ այնպե՞ս ներկոտված,  
Ինչպես երկինքը՝ արևմտոցին:  
Զեռքիդ հետքերից դաշված եմ այնպե՞ս,  
Ինչպես գիշերվա երկինք՝ աստղերով...

**Ա'խ, իմ հայրենի՞ք...**

Ես կյանքիդ համար կյանքըս չեմ տվել՝  
Ես չեմ մասնակցել և ո՛չ մի մարտիդ,  
Բայց կես քայլ անգամ չեմ արել կյանքում,  
Որ քեզ չբերի.  
Քեզնից սկսվում ու քեզ եմ հանգում՝  
Շըշագծի պես...

Վերեկց ցած են ջրերըդ հոսում,  
Իսկ ես իմ ցածից  
Հուռ մագրլցում եմ դեպի բարձունքը՝  
Քո շոգի՝ նման...

Ու երբ գարունդ է նորից կրկընվում  
Մի հրաշալի էպիգոնությամբ,  
Զոր ցողունիդ պես ծաղկում է իմ մեջ  
Նույն միտքը միայն.  
— Թեկուզ անանուն՝  
Ինչպես խոտերըդ սարերիդ լանջին,  
Եթե ես օգնեմ կանաչությանըդ,  
Կարող եմ ասել.  
«Ե՞ս էլ ապրեցի»...

Խոսքերն այդ իմ մեջ և կան, և չկան՝  
Ստորերկըրյա քո ջրերի պես:  
Կարող են այրվել, նաև այրում են՝  
Ինչպես խաղողիդ անխառըն օղին:

Մոտիկ են նրանք, բայց նաև անհաս,  
Ինչպես այն լեռը,  
Որ գերբդ է դարձել...

3. I. 60

Քիչլիս

## ԵՐՐՈՐԴ ԶԱՅՆ

**Ա'խ, իմ հայրենի՞ք...**

Ես խոսքեր ունեմ քեզ համար պահված,  
Որ չի գտնելու ո՛չ մեկն աշխարհում,  
Եվ որ առայժըմ ինքս էլ չեմ գտել:

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Դու մեր մեծ երթի գավազանակիր  
Եվ մեր պատմության մեծագույն դիվան,  
Մեր ազնըլության գովասանագիր,  
Մեր մտքի պահեստ, հոգու օթևան,  
Անցյալին պարզված դու մեր լսափող,  
Եվ մեր խոսափող՝ գալիքին ուղղված:  
Դու մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով,  
Նարեկացիով օծված ու յուղված:

Դաժան դարերի ամեն մի ժամին  
Շատ բան է խլել մեզնից թշնամին:

Բարդելով վերքին վերք ու անարգանք,  
Հեծության վրա մի նոր հեծություն՝  
Խլել է մեզնից հանգիստ ու հարգանք,  
Խլել է մեզնից փառք ու մեծություն,  
Խլել կյանքը մեր և... կյանքից էլ թանկ  
Մեր հողը, հողը,  
Մեր սուրբ հայրենին:

Շատ բանից է մեզ զրկել վայրենին:  
Մեր կերած հացին քսել է նա ժանդ,  
Բայց և... դարավոր բնիկ վայրերի  
Կորըստի լեղի կարուտն է քսել,  
Մեր խումին խառնել մեր սուրբ մայրերի  
Արցո՞նքը, սակայն... և արյո՞ւնը սև,  
Բայց մենք չենք զրկվել... մեր բերնի համից.

— Քաղցրացել ենք մենք... մեր քաղցր բառով,  
Մեր հայրենահամ անուշ բարբառով:

Շատ բանից է մեզ զրկել թշնամին:  
Իր ձեռքով նա մեր ձեռքերն է հատել,  
Հատել է ականջ ու ոտնաթաթեր,  
Աշքեր է հանել դաշույնով իր սուր,  
Կտրել է նաև արմատից լեզուն,  
Եվ սակայն... իզո՞ւր.  
Զի՞ հատվել լեզուն,  
Մնացել է նա՝ հատվելո՞վ անգամ...

Քե՞զ՝ մեր հայկական և արամական,  
Զկարողացան քեզ խլել մեզնից  
Ո՞չ խարդավանքով արամեական,  
Ո՞չ բյուզանդական սիրով անազնիվ,  
Ո՞չ Ահրիմանի ահեղ նետերով,  
Ո՞չ Քրիստոսի մարդ-շմարդությամբ,  
Ո՞չ Սուհամեդի ճմլիլ ոտերով.  
Ո՞չ Ճշմարտությամբ,  
Ո՞չ էլ ստերով:

Զկարողացան քեզ մեզնից խլել:  
Եվ պարզ է հիմա, հստակ ու որոշ,  
Որ չե՞ն էլ կարող քեզ մեզնից խլել,  
Ինչպես չեն կարող խլել մի դրոշ,  
Որ հազարամյա դաժան մարտերում  
Փողփողացել է միշտ էլ... սրտերում:

Ո՞չ, քեզ ո՞չ մեկը կուլ տալ չի՝ կարող.  
Ազահ կոկորդում դու խոր ես խրվում:  
Ո՞չ, քեզ ո՞չ մեկը փուլ տալ չի՝ կարող,  
Ինչպես երկինքը երբեք չի փլվում:  
Չե՞ս խլվի երբեք,  
Չե՞ս փլվի երբեք,  
Ինչպես արյունից գույնը չի խլվում...

Եվ ի՞նչ խաշագող դեռ պիտի հասնի,  
Որ քեզ կամենա գողանալ մեզնից.  
(Մի՛ ասա «մեզնից», «աշխարհից» ասա)  
Չէ՞ որ դու հիմա ո՛չ միայն լեզու,  
Այլև մասո՞ւնք ես,  
Մասո՞ւնք ես մի սուրբ,  
Անկողպտելի մասո՞ւնք սրբազան՝  
Դարերի խորքից դարերին հասած:

Մասո՞ւնք: Ինչպե՞ս թե: Մասունքըս ո՞րն է:  
Մասունքի տեղը տուփն է կամ հորն է:  
Իսկ դու՝ գարավոր, բայց և առույգ ես,  
Գիսավոր ծուխ ես, բայց և խարույկ ես,  
Ինչքան պարզ՝ նույնքան ասպետական ես:  
Շատերի մեջ ես, բայց պետական ես,  
Եվ դրանով իսկ դու պետքական ես  
Այն պետությանը, որ վաղը պիտի  
Լուսնից ու Մարսից ինքն իրեն դիտի... .

29. I. 62  
Երեան

## ԽՈՍՔ ՀԱՎԱՍՏԻՔԻ

Մ. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առիվ:

«Ոչ միայն որ գործնն պարտական են, այն  
որ յահձն տանուն»:

## Ա

Քեզ հետ այս պահին զրուցել էր պետք  
Միայն նախդըրիվ-ոսկեղենիկով  
Եվ պետք էր զրել այն երկաթագիր տառերով միայն,  
Որոնց կերպը դու առել ես գուցե  
Հին գործիքներից մեր դարբինների  
Եվ այն կեռերից ամենատարբեր,  
Որոնցից զին ու զարդ էին կախում...

Բայց Գյուտարարիդ համեմատությամբ  
Ես՝ Դանիելյան թերատ այբուբեն,  
Զուրկ յոթնազողանց ձայնավորներից,  
Չեմ կարող զնգալ  
Ու չեմ էլ զնգում,  
Այլ պիտի հիմա լոկ բաղաձայնեմ,  
Թե պե՞տք է արդյոք, որ Քո անունով  
Մտքի մի օշախ կամ մի մայրուղի կոչվի աշխարհում,  
Եթե Քո անվամբ մի ամբո՞ղջ ազգ է կոշում ինքն իրեն,  
Ա'զդ,  
Որ ապրելու մտադրությամբ մեռել է հաճախ,  
Սակայն մեռնելու մտադրությամբ չի ապրել երբե՞ք՝  
Թեկուզն մի օր...

Եվ պե՞տք է արդյոք,  
Որ արձաններըդ հառնեն աստ ու անդ,  
Եթե ինքըդ Քեզ — քանի՛ դար արդեն —  
Քանդակում ես միշտ  
Մեր մանկաշխարհի պարզ հոգիներին  
Երեսունևվեց կերպերով անքանդ:

Պե՞տք է ուրեմջն...  
Ու պետք է եթե՝  
Քե՛զ... Պետք չէ բնա՛վ,  
Պետք է... միայն մե՛զ:

Բայց... իբրև նպաստ  
Եվ ոչ մուրածո ողորմաբաժին...

#### Գ

Աշխարհզբոսիդ համեմատությամբ  
Ես մինչև անգամ Արաքս շտեսած տնաբնակը,  
Ի լրո՛ գիտեմ,  
Որ քեզ ծին տված բնիկ գավառում  
Կար մի մենաստան՝  
«Սուրբն Կարապետ»,  
Որի դռները փակ էին ընդմիշտ կանանց սեռի դեմ,

Գո՛ւ, որ անվարան բնաբարձեցիր կուապաշտներին,  
Վերաքննությամբ պիտի մեզ ներես,  
Եթե խոսում ենք քանդակ-արձանից,  
Զի կան արձաններ, որ կուռք չեն դառնուա,  
Եվ միաստվածներ կան նոր ու նորեկ,  
Որ չեն տարբերվում կուապաշտներից:  
Եվ այն պատճառով պիտի մեզ ներես,  
Որ հնուց անտի սովոր լինելով  
Հարկի և տուրքի,  
Բաժի և սակի

Ու վճարելով միշտ ճարահատյալ,  
Մենք հոգով լոկ մե՛կ հարկ ենք ընդունել՝  
Հարկը հոգեկա՞ն:  
Եվ Դու՛ եղակի մի հարկահավաք,  
Որ ընտըրված է — ոչ նշանակված,  
Ա՛ռ ու մթերի՛ր,  
Ա՛ռ ու պաշարի՛ր  
Տասնըվեցդարյա հարկը մեր հոգու,  
Որպեսզի կրկին վերաբաժանես՝  
Մեր նեղ օրերին,

Մենք կին շենք,  
Այր ենք,  
Տղամարդ ենք մենք,  
Սակայն անօրեն մի նոր օրենքով  
Փակ է մեր առջև  
Ո՛չ միայն դուռն ու գավիթը վանքի,  
Այլ գավա՞ռն ամբողջ  
Եվ ո՞ղջ մի երկիր,  
Որի անունից զրկված է նույնիսկ քարտեզը հիմա:

Մենք կին շենք,  
Այր ենք,  
Տղամարդ ենք մենք,  
Եվ ընդդեմ այս բաց անարդարության  
Առայժըմ մենք մեր աշքերն ենք փակում,  
Բայց փակում այնպես,  
Ինչպես փակում են մարդիկ մատները,  
Եվ ստացվում է դրանից... բռունցք:

Ուստի իզուր է խոսքը երդումի:  
Բնիկ գավառըդ հենց որ ոտք գնենք՝  
Քո Հացեկացը կպեղենք բրչով,  
Եվ տարոնական պարզած երկնի տակ

Սրբատաշ վեմը սուրբ թանգարանի ձևակերպ կառնի,  
Եվ դա կդառնա նո՞ր էջմիածին...

## Դ

Սակայն... Եվ սակայն  
Կա սուրբ Օշական,  
Որ ազգի համար մի շատ վաղեմի  
Հավասար է նոր երուսաղեմի:

Աշուն է հիմա:

Եվ սրբատեղի տանող ծուռումուռ ճանապարհներին  
Խաղողի վազն է իր տերևները փռել ամենուր,  
Իր տերևները, որ շատ են նման  
Անհայտ ձիերի սմբակից պոկված ժանգուտ պայտերի:

Այս հողի վրա օտար սմբակներ չեն դոփում հիմա:  
Եվ եթե կաղնու անտառն է սակավ այս հողի վրա,  
Ապա խաղողի և կաղնու տերևն իսկապես անշափ նման  
Են իրար:

Գաղտնասացության համար շեմ ծնվել,  
Ես գիտեմ սակայն,  
Որ օշականյան բանուկ այս ճամփով քայլող ամեն ոք  
Անխոս-լուելլայն երդում է տալիս  
Միշտ զուգաշավիղ ընթանալ Քեզ հետ,  
Անձնադատորեն նա հանձն է առնում  
Արդյունավորվել մի՛միայն այնպես,  
Որ հողագնդի բյուր լեզուներից  
Անարտաքսելի մնա հավիտյան  
Մեր այն բարբառը,  
Որի գրերից կարելի է սուր եղաններ կռել,  
Բայց մեխե՞ր նաև՝  
Գամելու համար հին ու նորօրյա պիղատոսներին:

Կանխասացության համար շեմ ծնվել,

Ես գիտեմ սակայն,  
Եր սրբատեղի տանող այս ճամփով քայլող ամեն ոք  
Եվ վա՛ղը պիտի դառնա մասնակից  
Քո անկշուղի որբանությանը,  
Իր հոգում զգա Քո մշտակայուն ներկայությունը,  
Քո իսկության հետ ինքն իրեն ձուլի՝  
Փոխելով քայլն իր մոլորագընաց,  
Բեռնակիր դառնա մեր բեռ ու բարձին,  
Գասալիք լինի բանակից վարձու:  
Հայոց աշխարհի փափկասոն տիկնայք  
Ավանդակորույս իրենց վանքի դեմ  
Վերստին պիտի աշքերը բանան:  
Հայոց աշխարհի այրերից նրանք,  
Ովքեր հուլաբար ճամփա են ընկել  
Ու դեռ ծովաբար դեգերում են լուռ՝  
Օտար հովերի ապտակին հլու,  
Պիտի դառնորեն դարձի գան դարձյալ՝  
Խորհե՞ն հայերեն,  
Ապրե՞ն հայօրեն...

## Ե

Հոռետեսության համար շեմ ծնվել  
Եվ դեմ հիմար լավատեսության,  
Սակայն շատերից մեկն էլ ես՝ զիտե՛մ.  
Դու էիր, որ մեզ անըստոյուտ գյուտովդ ուսուցանեցիր,  
Որ անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար:  
Ուստի հավատա, ո՞վ Հնարավոր:  
Որ եթե մի օր — աստված շարասցե —  
Գտած հնարքդ գառնա գործազուրկ,  
Ասպարեզ կիշնի մեկն էլ, անկասկած,  
Որ սկիզբ կտա մի նո՞ր սիրանքի:

Թե ձիշտ է, որ Դու հայր ունենալով  
Զունեցար որդի,  
Ճիշտ է առավել,

Որ զավակի տեղ ժառանգներ ունեն՝  
Սերո՞նդ ու սերո՞ւցք,  
Որոնք անըստպյուտ գյուտովը դիտեն,  
Որ անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար...

Ննջի՞ր ուրեմըն սուրբ շիրիմիդ տակ,  
Քանզի արթուն ես մեր հոգիներում:

Զէ՞ որ ինչ-որ տեղ փոքրերս ու Մեծըդ  
Հավասարվում ենք, դառնում աշակից.  
— Դու... գործն ես արել,  
Մենք... հանձն ենք առել...

12. IX, 17. IX. 61  
Երևան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Պարույր Սևակի ստեղծագործությունը

#### ԱՆՄԱՀՆԵՐԸ ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆ

|                                       |    |
|---------------------------------------|----|
| Անմահները հրամայում են . . . . .      | 5  |
| Մերոնք . . . . .                      | 8  |
| Հարազատներ . . . . .                  | 9  |
| Լեզենդը . . . . .                     | 11 |
| Որդին . . . . .                       | 13 |
| Հրդեհների լեզուն . . . . .            | 14 |
| Դարը . . . . .                        | 16 |
| Խաղաղություն և հաղթանակ . . . . .     | 17 |
| Գարնանային . . . . .                  | 18 |
| Կանցնեն օրերն այս . . . . .           | 22 |
| Խոհ շահելության մասին . . . . .       | 24 |
| <b>Մեր բախտը</b> . . . . .            | 32 |
| Տունը . . . . .                       | 35 |
| Մասիսները . . . . .                   | 41 |
| Վերջին փոստից . . . . .               | 44 |
| Քարտեզի առաջ . . . . .                | 48 |
| Իրիկնային . . . . .                   | 53 |
| <b>Անձնական հարցաթերթիկ</b> . . . . . |    |

## ՍԻՐՈ ՃԱՆԱՊԱՌ

### Պատերազմ և խաղաղություն

#### Փառքի պատվանդան

#### Ռազիունդունիչի առաջ

#### Օրվա երգը

#### Ընկերուհուս

#### Աշխարհագրության դասին

#### Խաղաղություն

#### Հայրենիքիս

#### Դարակեսի երգը

59

62

64

68

70

72

75

77

78

517

|                                      |     |
|--------------------------------------|-----|
| Սպիտակ                               |     |
| Գուղան                               | 81  |
| Զոհվածք                              | 82  |
| Պատերազմի հաշմանդամը                 | 83  |
| Անհետ կորածը                         | 86  |
| Ընկածները                            | 87  |
| Մայրը                                | 89  |
| Սպիտակ                               | 90  |
| Մոսկվայից                            |     |
| Երգ Մոսկվայի մասին                   | 92  |
| Մոսկվայից                            | 93  |
| Մոսկովցին                            | 95  |
| Մոսկվան—նախաճանգիստ                  | 98  |
| Իմ հայ ժողովուրդ                     | 101 |
| Դու քո խաղողի նման ես եղել           | 103 |
| Ինչ լավ է, որ դու աշխարհի մեջ կաս    | 104 |
| Ախ, ինչպես եմ սիրում                 | 105 |
| Երևանին                              | 106 |
| ա. Նա փոխում է ամեն վայրկյան         | 106 |
| բ. Սա պատմելու բան չէ                | 107 |
| գ. Քաղաքամերձ անտառն իր կանաչին      | 109 |
| Ճարտարապետական ցուցահանդեսում        | 112 |
| Հանրապետության հասակակիցները         | 114 |
| Սիրա նանապարհը                       |     |
| Նախերգանքի փոխարեն                   | 118 |
| Ա. Անմոռուկներ մանկությանց           |     |
| I. Ժայռերն ի վեր դանդաղ              | 119 |
| II. Չոր մասրենու մի հին շափար        | 120 |
| III. Խաղաղ-խաղաղ իրիկունն էր         | 121 |
| IV. Մեզ ստիպում են                   | 122 |
| V. Ա՛խ, ես զիտեմ, չէի՞ր սիրում       | 123 |
| VI. Այս առուն, որ ձեր բակով է հոսում | 124 |
| Բ. Պատանության ծաղիկները             |     |
| I. Ես զիտեի, որ դա չէր կարելի        | 125 |
| II. Աշնան եղյամն է իշել ձորերին      | 126 |
| III. Մեր թոնիրն այսօր բորբոքում է    | 127 |
| IV. Ինձ թվում էր նա գեղեցիկ          | 128 |
| V. Սաղկանկար շալը ուսիդ              | 129 |
| VI. Իմ արցոնքները թեպետ չեն հոսում   | 130 |
| VII. Սառերն են բացիկ                 | 132 |
| VIII. Մեր տնից ձեր տուն              | 133 |
| IX. Հիմա ողջն ասես մի հերիաթ լինի    | 135 |

|                                   |     |
|-----------------------------------|-----|
| Գ. Երիտասարդ սիրություն           |     |
| I. Իմ օրորանն էր հեռու մի գյուղակ | 136 |
| II. Թե ողջն այս էր նույնիսկ       | 138 |
| III. Քուն եմ մտնում և արթնանում   | 139 |
| IV. Ողջը այս է                    | 140 |
| V. Խոստովանանք լինի               | 141 |
| VI. Զմեռ է                        | 142 |
| VII. Ոչինչ, ոչինչ լի պատահել      | 143 |
| VIII. Ա՛խ, քեզ ինչպես ասել        | 144 |
| IX. Անժանովներ ենք մենք իրար      | 145 |
| X. Հիմա, երբ ողջը անցած է թվում   | 147 |

### ՆՈՐԻՑ ՔԵԶ ՀԵՏ

|                       |     |
|-----------------------|-----|
| Նախերգանք             | 151 |
| Սխանի ծալի            | 152 |
| Հայաստան              | 154 |
| Իմ ժողովրդին          | 156 |
| Գու այսպես ես եղել    | 157 |
| Հպարտ եմ ես           | 158 |
| Անքնություն           | 160 |
| Հանդիպում             | 165 |
| Կարոտ                 | 167 |
| Մայր ու որդի          | 169 |
| Մոր ձեռքերը           | 171 |
| Շատ բան է պետք արդյոք | 172 |
| Որդուս                | 175 |
| Մարդ էլ կա, մարդ էլ   | 178 |
| Զեռքեր                | 180 |
| Մեր երշանկությունը    | 182 |
| Բալլար լուսի մասին    | 185 |
| Հերոսները             | 187 |
| «Հեքիաթը»             | 189 |
| Գարնանային            | 190 |
| Զյունը                | 192 |
| Բնանկար               | 193 |
| Լեռնային գիշեր        | 194 |
| Լեռնաշարհում          | 195 |
| Արտերն են ծփում       | 196 |
| Ինքն իրեն հետ         | 198 |
| Մեր լուսերը           | 199 |
| Հպարտություն          | 519 |

|                                    |     |                      |     |
|------------------------------------|-----|----------------------|-----|
| Ներշնչման պահերին                  | 200 | Կամ հեռացիր, կամ արի | 250 |
| Նորից երգում, մորմոքում է          | 201 | Խարկանք              | 251 |
| Նույն նամփավ                       |     | Ո՞վ զիտի             | 252 |
| Անվերնագիր                         | 202 | Ինչքան էլ թանկ լինի  | 253 |
| Անբաժան է քեզնից                   | 203 | Չուր եմ համբերում    | 254 |
| Ուրիշներին լինեն բոլոր շքեղ կանայք | 204 | Ջարմանալի բախտ       | 255 |
| Իրարից հեռու                       | 205 | Երշանկություն        | 256 |
| Ահա նորից զիշեր                    | 206 | Առանց քեզ            | 257 |
| Սիրտ իմ                            | 208 |                      |     |
| Իսկ ի՞նչ անենք                     | 209 |                      |     |
| Սիրտս կոտրվեց                      | 210 |                      |     |
| Անկեղծ ասած                        | 211 |                      |     |
| Բաց փակուղի                        | 213 |                      |     |
| Չես հարցնում                       | 214 |                      |     |
| Սարսափում եմ ես լոկ հիմա           | 215 |                      |     |
| Տան երազը                          | 216 |                      |     |
| Սեր լինելու ցանկություն            | 218 |                      |     |
| Դու եկար                           | 219 |                      |     |
| Թե տիրում եմ կյանքում              | 220 |                      |     |
| Աշնանային                          | 222 |                      |     |
| Ես քո մասին                        | 223 |                      |     |
| Դու հեռվից ես հարազատ              | 224 |                      |     |
| Ո՞նց սուս ասեմ                     | 225 |                      |     |
| Դու եկել ես նորից                  | 226 |                      |     |
| Առանց խոսքերի                      | 227 |                      |     |
| Սիրտ իմ, ինչո՞ւ ես նորից խոռվել    | 228 |                      |     |
| Վաղվա խնջույքում                   | 229 |                      |     |
| Գիտե՞ս, սիրելիս                    | 231 |                      |     |
| Հավերժ երեխա                       | 232 |                      |     |
| Գալի՞ս ես, գալի՞ս                  | 234 |                      |     |
| Թող լինի այնպես                    | 235 |                      |     |
| Վերհուց                            | 236 |                      |     |
| Առաջվա պես                         | 239 |                      |     |
| Անծանոթունուն                      | 240 |                      |     |
| Սիրտս նման է                       | 242 |                      |     |
| Ինչ մնաց                           | 243 |                      |     |
| Մի մոռացիր                         | 244 |                      |     |
| Երազնքի գինը                       | 245 |                      |     |
| Ես այնպես հեշտ էի տարվում          | 246 |                      |     |
| Ինչպես շզարմանաս                   | 247 |                      |     |
| Չեմ ուշացել                        | 248 |                      |     |
| Եկ հպարտ մնանք                     | 249 |                      |     |

## ՄԱՐԴԸ ԱՓԻ ՄԵԶ

|                             |     |  |  |
|-----------------------------|-----|--|--|
| Նույն հասցենվ               |     |  |  |
| Դու                         | 273 |  |  |
| Քո պատճառով                 | 274 |  |  |
| Քո անոնը                    | 275 |  |  |
| Զեռքերը նեղուց              | 276 |  |  |
| Առաջին սերը                 | 277 |  |  |
| Երբ Մարսի վրա զբաղված էի    | 280 |  |  |
| Վերջին սփոփանք              | 281 |  |  |
| Անծանոթունուն               | 283 |  |  |
| Ո՞ւր է զիշերը հազարմեկերորդ | 521 |  |  |

|                                  |     |
|----------------------------------|-----|
| Աթիւաբար                         | 285 |
| Լուսնահար կարոտ                  | 286 |
| Անուղղելին                       | 288 |
| Դիմապուլուս                      | 289 |
| Նոր ժանոթովյուն                  | 292 |
| Գարնան հրահրմամբ                 | 295 |
| Անշատում                         | 298 |
| Քմծիծաղ                          | 300 |
| Քո խակ սեղը և իմ հասուն տանշանքը | 302 |
| Միջակետի կարիք                   | 303 |
| Մի՛, մի՛...                      | 305 |
| Չկաս ու չես լինելու              | 307 |
| Կորցրեցի և գտա                   | 308 |
| Երբ աշքերն են սառում...          | 310 |
| Նամակ                            | 312 |
| Մաքսանենգորեն                    | 314 |
| Հանգստացրու ինձ                  | 215 |
| Պատահաբար են պատահում կյանքում   | 318 |
| Թուզիկ երգեր                     |     |
| Անպայման պայման                  | 219 |
| Արվեստ                           | 321 |
| Վարք մեծաց                       | 322 |
| Բանաստեղծի կյանքը                | 324 |
| Ինչպէս թե բախտը չկա...           | 325 |
| Արշալույսից առաջ                 | 327 |
| Միայնակ ծառը                     | 329 |
| Ոսկին վերստին ոսկի է մնում       | 330 |
| Արմատները ու մատները             | 332 |
| Միանդամից                        | 333 |
| Եվ որիշ ոչի՞նչ                   | 334 |
| Դիմանկարի առջև                   | 336 |
| Լաց էլ կա, լաց էլ                | 337 |
| Յալն է հաճախ առաջ մղում          | 338 |
| Սև կատու                         | 339 |
| Անտափ վեպը                       | 341 |
| Գիշերն ու ես                     | 345 |
| Մարդը ափի մեջ                    |     |
| Երբեք սկիզբ                      | 347 |
| Խոստովանում եմ                   | 349 |
| Հանգստանում եմ                   | 350 |
| Ուղում եմ                        | 352 |
| Փառաբանում եմ                    | 355 |

|                          |     |
|--------------------------|-----|
| Կարծում եմ               | 352 |
| Նախանձում եմ             | 353 |
| Ինքս ինձ հերքում եմ      | 359 |
| Ծնվել եմ                 | 361 |
| Մեռնել                   | 362 |
| Երունել                  | 363 |
| Երազում եմ               | 365 |
| Ապրել                    | 367 |
| Երգել                    | 371 |
| Մի պահ զշշում եմ         | 372 |
| Գովերգում եմ             | 374 |
| Հյուրասիրում եմ          | 377 |
| Հայտարարում եմ           | 379 |
| Ատում եմ                 | 381 |
| Զեմ հարգում              | 383 |
| Վիճում եմ                | 386 |
| Մարսում եմ               | 387 |
| Հիանում-հրճվում եմ       | 389 |
| Ենթադրում եմ             | 390 |
| Խոստանում եմ             | 395 |
| Կարդում եմ               | 396 |
| Մախում-առնում-բաշխում եմ | 399 |
| Գժվում եմ                | 400 |
| Դիմում եմ պահանջելու պես | 403 |
| Արդարացնում եմ           | 404 |
| Հավատում եմ              | 407 |
| Տիրում եմ                | 408 |
| Միինարում եմ             | 412 |
| Խանդում եմ               | 413 |
| Դառնում եմ               | 416 |
| Զարմացնում եմ            | 417 |
| Աղաչում եմ               | 419 |
| Երկմտելով հաստատում եմ   | 420 |
| Ողբում եմ                | 423 |
| Հրավիրում-ուրախանում եմ  | 429 |
| Մի պահ մեծամտում եմ      | 430 |
| Խուսափում եմ             | 433 |
| Գոյություն ունեմ         | 434 |
| Պատկերացնում եմ          | 436 |
| Հպարտանում եմ            |     |
| Ականջդ քեր ասել          | 439 |
| Հայտնություն             | 441 |
| Հանդինեմ ասել            | 523 |

|                                 |     |
|---------------------------------|-----|
| Քայլող հիշողություն...          | 442 |
| Սիրում եմ սիրել                 | 443 |
| Անհարց պատասխան                 | 444 |
| Վառարանի առաջ                   | 445 |
| Անմեկնելի զգացում               | 446 |
| Հափշտակվելս                     | 447 |
| Զգայախաբություն                 | 448 |
| Անվնաս խորհուրդ                 | 449 |
| Ուրույն հնամուրություն          | 450 |
| Նահանջ տարվա պես                | 451 |
| Մրտի ցավով                      | 452 |
| Անշնորհակալ մասնագիտություն     | 453 |
| Մատնիլ ցանկություն              | 455 |
| Գաղտնաբացություն                | 456 |
| Թաքուն երազանք                  | 457 |
| Հիասթափվելս                     | 458 |
| Վարդերի կարմիր ճիշն եմ ես լսում | 459 |
| Իմ կաթնեղբայրը                  | 460 |
| Երկունքի մեջ                    | 462 |
| Ներշնչման պահին                 | 463 |
| Անմեղ-մեղավոր                   | 464 |
| Փոստային լեզվով                 | 465 |
| Առանց աստառի                    | 467 |
| Ուղտի օրինակով                  | 468 |
| Ավազը՝ հովազ                    | 469 |
| Իմ անելիքը                      | 470 |
| Արթնացնող ժամացուց              | 471 |
| Ամենից առաջ ես հայր եմ          | 472 |
| Ոչ առանց ցավի                   | 474 |
| Համբիլ եմ դարձել                | 475 |
| Ազատությունը                    | 476 |
| Խս շեմ շտապում                  | 477 |
| Ես շեմ որոնում                  | 478 |
| Ռետին շեմ—թուղթ եմ              | 479 |
| Հավատու հանգանակ                | 480 |
| Ամբողջովին գրոտված եմ           | 481 |
| Մի խորոնկ գաղտնիք               | 482 |
| Պիտի ծանակվեմ                   | 483 |
| Հուսահատության պահեր            | 484 |
| Զրերի լեզուն                    | 485 |
| Անկոշ հայրը                     | 486 |
| Անվերնագիր                      | 488 |
| Անձրևային սոնատ                 | 488 |
| Ա. նվագ                         | 488 |
| Բ. նվագ                         | 489 |
| Գ. նվագ                         | 490 |
| Դ. նվագ                         | 490 |
| Ե. նվագ                         | 492 |
| Վերնագիրը վերջում               | 492 |
| I.                              | 493 |
| II.                             | 494 |
| III.                            | 495 |
| IV.                             | 496 |
| V.                              | 497 |
| VI.                             | 498 |
| VII.                            | 499 |
| VIII.                           | 500 |
| IX.                             | 501 |
| X.                              | 502 |
| XI.                             | 503 |
| Հարկ հոգեկան                    | 503 |
| Երգ եռաձայն                     | 503 |
| Առաջին ձայն                     | 504 |
| Երկրորդ ձայն                    | 506 |
| Երրորդ ձայն                     | 508 |
| Մայրենի լեզու                   | 511 |
| Կոոք հավաստիքի                  |     |

ՊԱՐՈՒՅՐ ՌԱՏԱՅԵԼԻ ՄԵՎԱԿ

Երկերի ժողովածու վեց հատորով

ՀԱՏՈՐ I

Բանաստեղծություններ

Հրատ. Խմբագիր՝ Ա. Ս. Քիշոյան  
Նկարիչ՝ Ֆ. Գ. Աֆրիկյան  
Գեղ. Խմբագիր՝ Մ. Ռ. Սոսոյան  
Տեխ. Խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Է. Պ. Պողոսյան

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| <i>Էլ</i> | <i>Տող</i> | <i>Տպված է</i>                                                       | <i>Պետք է լինի</i>                    |
|-----------|------------|----------------------------------------------------------------------|---------------------------------------|
| 69        | ն. 3       | կանքով                                                               | կամքով                                |
| 79        | վ. 6       | Արդեն                                                                | Արդ                                   |
| 91        | վ. 2       | նրան                                                                 | նշան                                  |
| 116       | վ. 10      | Վերածվում գինու չգալարվող բոցի Մեր մրգերն են հանում<br>արեգակից բացի | Մեր մրգերն են հանում<br>արեգակից բացի |
| 157       | վ. 11      | Հպրատ                                                                | Հպարտ                                 |
| 162       | ն. 10      | Մայն                                                                 | Միայն                                 |

Էլ 73-ի վերջում դրված [1950], Երևան նշումը պետք է լինի Էլ 74-ի  
տեքստի վերջում

Հանձնված է արտադրության 2/VI 1972 թ.:

Ստորագրված է տպագրության 4/IX 1972 թ.:

Թուղթ՝ տպագրական Նե 1,  $84 \times 108^{1/32}$  տպագ. 17,75

մամ. = 29,82 պայմ. մամ., հրատ. 16,8 մամ. + 1 ներդիր:

Պատվեր 1221: Տպաքանակ 50000: Գինը՝ 1 ռ. 99 կ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9,

Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության վարչության հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմինատ,

Երևան, Տերյան 91: